



ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(2012թ. եւ 2013թ.)

Գիրք 6

Խմբագրությունը՝ ՏՆՏ. ԳԻՏ. ԹԵԿՆԱԾՈՒ
ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ

«ՎԵՆ ԱՐՅԵՆ»
2015

Սույն գիրքը հրատարակվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ՀՏԴ 352.075(479.25)
ԳՄԴ 67.401 (53)
S 300

S 300 **Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2012թ. և 2013թ.),**
Գիրք 6/խմբ. Դավիթ Թումանյանի - Եր., 2015, 392 էջ:

Գիրքը պարունակում է Հայաստանի տեղական ինքնակառավարման վիճակի մշտադիտարկման 2012 և 2013 թվականների զեկույցները:

Գիրքը նախատեսված է ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման բնագավառներում քաղաքականություն մշակողների ու որոշումներ ընդունող պաշտոնյաների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, այդ բնագավառներով հետաքրքրվող հասարակության լայն խավերի համար:

ՀՏԴ 352.075(479.25)
ԳՄԴ 67.401 (53)

©Համայնքների ֆինանսիստների միավորում
© Դավիթ Թումանյան

ISBN 978-9939-70-122-6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7

ՁԵԿՈՒՅՑ

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2012թ.)..... 9

1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատումը 10

1.1 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական գնահատումը 10

1.2 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրային գնահատումը 13

1.3 Արտաքին պարտավորությունների կատարումը 17

2. Վարչատարածքային բարեփոխումները և միջհամայնքային համագործակցությունը..... 20

2.1 Վարչատարածքային բարեփոխումները 20

2.2 Միջհամայնքային համագործակցությունը 24

3. ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը, քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը 28

3.1 ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը 28

3.2 Քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը..... 34

4. Համայնքների սեփականությունը, զարգացման ծրագրերը և ֆինանսական անկախությունը..... 38

4.1 Համայնքների սեփականությունը..... 38

4.2 Համայնքների զարգացման ծրագրերը և բյուջետավարումը 41

4.3 Համայնքի բյուջեի եկամուտները 43

4.4 Պարտքի կառավարումը 48

4.5 Ֆինանսական հաշվետվողականությունը..... 49

5. ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքի ֆինանսական միջոցների համապատասխանությունը 50

6. Համայնքի խնդիրներին վարչական կառուցվածքների, մարդկային և տեղեկատվական ռեսուրսների համապատասխանությունը, միջազգային աջակցությունը 68

6.1 ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի ընդհանուր կառուցվածքները..... 68

6.2 Համայնքային ծառայությունը 79

6.3. Համայնքային ծառայողների վերապատրաստումը. Համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի գնահատումը 81

6.4 Միջազգային աջակցությունը 83

7. Համայնքային ծառայությունների մատուցումը 88

7.1 Համայնքների կողմից մատուցվող հանրային ծառայությունները 88

7.2 Համայնքային ծառայությունների կառավարում 101

Եզրակացություններ և առաջարկություններ 103

Գրականություն 113

ՉԵԿՈՒՅՑ

| | |
|--|-----|
| Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2013թ.)..... | 115 |
| 1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատումը..... | 116 |
| 1.1 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական գնահատումը | 116 |
| 1.2 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրային գնահատումը..... | 118 |
| 1.3 Արտաքին պարտավորությունների կատարումը | 122 |
| 2. Վարչատարածքային բարեփոխումները և միջհամայնային համագործակցությունը | 124 |
| 2.1 Վարչատարածքային բարեփոխումները..... | 124 |
| 2.2 Միջհամայնային համագործակցությունը | 128 |
| 3. ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը, քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը..... | 129 |
| 3.1 ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը | 129 |
| 3.2 Քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը | 137 |
| 4. Համայնքների սեփականությունը, զարգացման ծրագրերը և ֆինանսական անկախությունը | 140 |
| 4.1 Համայնքների սեփականությունը | 140 |
| 4.2 Համայնքների զարգացման ծրագիրը և բյուջետավարումը..... | 145 |
| 4.3 Համայնքի բյուջեի եկամուտները | 147 |
| 4.4 Պարտքի կառավարումը | 152 |
| 4.5 Ֆինանսական հաշվետվողականությունը | 153 |
| 5. ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքի ֆինանսական միջոցների համապատասխանությունը | 154 |
| 6. Համայնքի խնդիրներին վարչական կառուցվածքների, մարդկային և տեղեկատվական ռեսուրսների համապատասխանությունը, միջազգային աջակցությունը..... | 169 |
| 6.1 ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի ընդհանուր կարողությունները..... | 169 |
| 6.2 Համայնքային ծառայությունը | 177 |
| 6.3. Համայնքային ծառայողների վերապատրաստումը. համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի գնահատումը..... | 180 |
| 6.4 Միջազգային աջակցությունը..... | 182 |
| 7. Համայնքային ծառայությունների մատուցումը..... | 188 |
| 7.1 Համայնքների կողմից մատուցվող հանրային ծառայությունները | 188 |
| 7.2 Համայնքային ծառայությունների կառավարում | 200 |
| Եզրակացություններ և առաջարկություններ | 201 |
| Գրականություն | 211 |

Հաղավումների ցանկ

- ԱԱՊԿ** - առողջության առաջնային պահպանման կենտրոն
ԱԻՄ - Ազգային ինքնորոշում միավորում
ԱՄՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ - Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային
զարգացման գործակալություն
ԱՊՀ - Անկախ պետությունների համագործակցություն
ԱՎԾ - Ազգային վիճակագրական ծառայություն
ԲԿ - բժշկական կենտրոն
ԲՀԿ - Բարգավաճ Հայաստան կուսակցություն
ԳՄՀԸ - Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
ԵՀԶ - Եվրոպական հարևանության քաղաքականություն
ԵՄ - Եվրոպական միություն
ԺԱԿ - Ժողովրդավարություն և աշխատանք կուսակցություն
ԾՎԿԳ - Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի
վերլուծության և կառավարման գրասենյակ
ԿԶԾ - Կայուն զարգացման ծրագիր
ՀԱԱ - Հայաստանի ավագանիների ասոցացիա
ՀԵՆԱ - Համայնքային երիտասարդական
նախաձեռնությունների ակումբներ
ՀԿՏՀ - համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ՀՀԴ - հայկական դրամ
ՀՀԿ - Հայաստանի հանրապետական կուսակցություն
ՀՀՇ - Հայոց համազգային շարժում
ՀՀ ՏԿՆ - Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման նախարարություն
ՀՄ - համայնքների միություն
ՀՄՀ - Հայաստանի Մարտահրավերներ –Հայաստան
ՀՅԴ - Հայ յեղավիոխական դաշնակցություն
ՀՆԱ - համախառն ներքին արդյունք
ՀՈԱԿ - համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՀՄՆՀ - Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ

ՀՖՄ - Համայնքների ֆինանսիստների միավորում

ՄԱԶԾ - Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր

ՄԱԶԿ - Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպություն

ՄԲԿ - Միջազգային բարեգործական կազմակերպություն

ՄՀԿ - միջհամայնքային կառույց

ՊՀ - պետական հիմնարկ

ՌԴ - Ռուսաստանի Դաշնություն

ՏԻՄ - տեղական ինքնակառավարման մարմիններ

ՏՀ - տեղեկատվական համակարգեր

ՏՀԶՎԿ - Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն

ՓԲԸ - փակ բաժնետիրական ընկերություն

ՓՄՉ ԶԱԿ - Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն կազմակերպություն

ՔԶՊ - քաղաքային զարգացման պլան

ՕԵԿ - Օրինաց երկիր կուսակցություն

ԱՌԱՋԱԲԱՆ

Այս գիրքը նվիրված է Հայաստանում տեղական ինքնակառավարման 2012 և 2013 թվականների բարեփոխումների գնահատմանը, որը կատարվել է Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) փորձագետների մշակած մեթոդաբանության հիման վրա: Բարեփոխումների գնահատման համար հիմք են ընդունվել ՀՀ կառավարության ծրագրերի՝ տեղական ինքնակառավարմանը վերաբերող դրույթների կատարումը, տեղական ինքնակառավարման համակարգի վիճակը բնութագրող ցուցանիշները, ՏԻՄ-երի կատարած աշխատանքները և միջազգային կազմակերպություններում Հայաստանի ստանձնած՝ տեղական ինքնակառավարմանը վերաբերող պարտավորությունների կատարումը:

ՀՖՄ-ն մասնակցում և հետևում է Հայաստանում տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացքին այդ համակարգի ներդրման սկզբից՝ 1996 թվականից: Անցած տարիների ընթացքում ՀՖՄ-ն հրատարակել է հինգ գիրք, որոնցում տրվել է բարեփոխումների ընթացքի գնահատականը, ինչպես նաև՝ արվել են բարեփոխումների շարունակմանը վերաբերող բազմաթիվ առաջարկություններ: Առաջին՝ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում. Քաղաքականության տարբերակներ և ուղիներ» (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) գիրքը հրատարակվել է 2004-ին: Այդ հրատարակությունում տեղ են գտել 1996-ից մինչև 2004 թվականն ընկած ժամանակահատվածի տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացքը լուսաբանող հոդվածներ:

Երկրորդը՝ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2004–2006 թթ.)», գիրք 2 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2008-ին: Սա վերաբերում է 2004-2006 թթ. տեղական ինքնակառավարման բարեփոխումների գնահատականին:

Երրորդը՝ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2007 և 2008թթ.)», գիրք 3 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2009-ին: 2007 թվականից սկսած ՀՖՄ-ն տեղական ինքնակառավարման բարեփոխումների գնահատումը կատարում և հանրությանն է ներկայացնում զեկույցների ձևով: Դրանք կազմված են նույն ձևաչափով և պարունակում են բարեփոխումների գնահատականներն՝ ըստ տեղական ինքնակառավարման առանձին բնագավառների. վարչատարածքային բաժանում և միջհամայնքային համագործակցություն,

համայնքային սեփականություն, ֆինանսներ, ՏԻՄ-երի ընտրություններ և գործունեություն, տեղական ժողովրդավարություն, վարչական կառուցվածքներ և համայնքային ծառայությունների մատուցում:

Չորրորդը՝ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009 և 2010թթ.)», գիրք 4 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2011-ին:

Հինգերորդը՝ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2011թ.)», գիրք 5 (տնտ. գիտ. թեկնածու Դ. Ս. Թումանյանի խմբագրությամբ) վերնագրով հրատարակվել է 2012-ին:

Այս գիրքը Հայաստանում տեղական ինքնակառավարման բարեփոխումների վերաբերյալ ՀՖՄ-ի վեցերորդ հրատարակությունն է:

Գրքում, բացի Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների ընթացքի լուսաբանումից, տեղ են գտել նաև այդ ոլորտում առկա հիմնախնդիրները և արվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

ՁԵԿՈՒՅՉ

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում
(2012թ.)

Ձեկույցը պատրաստել են ՀՖՄ-ի փորձագիտական խմբի անդամներ
Դավիթ Թումանյանը, Վահրամ Շահբազյանը,
Զնարիկ Այվազովան (Արարյանը), Լևոն Թումանյանը,
Վահե Սարգսյանը և Գրիշա Գապոյանը

1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատումը

1.1 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական գնահատումը

Սահմանադրական դրույթների օրենսդրական արձագանքումը

2005 թվականի սահմանադրական փոփոխություններում տեղ գտած տեղական ինքնակառավարմանը վերաբերող դրույթներին գործող օրենքները պետք է համապատասխանեցվեին ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ժամկետում (Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում՝ մինչև 2007 թվականի դեկտեմբերի 6-ը): Սակայն, մինչև 2012 թվականի սկիզբը որոշ դրույթներին համապատասխան օրենսդրական փոփոխություններ չէին կատարվել կամ կատարվել էին մասնակիորեն: Դրանց թվում էին՝

- ա) Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով սահմանում է տեղական հարկեր (հոդված 107):
- բ) Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է օրենքով (հոդված 107):
- գ) Համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները, կարգը, ինչպես նաև նոր ձևավորված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամկետները սահմանվում են օրենքով (հոդված 110):
- դ) Օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել միջհամայնքային միավորումներ (հոդված 110):

2012 թվականին էլ հնարավորություն չի տրվել համայնքների ավագանիներին սահմանել տեղական հարկեր: Ըստ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ 2011-ին տեղական հարկեր էին սահմանված գույքահարկը, հողի հարկը և հյուրանոցային հարկը¹: «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքները գործում են վաղուց, և դրանցով են սահմանված այդ հարկերի դրույքաչափերը, չնայած դրանք անվանվել են տեղական հարկեր, իսկ համաձայն Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի՝ դրանց «...դրույքաչափերը տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են սահմանել օրենքով նախատեսված շրջանակներում»²: Այս առումով, վերը նշված օրենքների որոշ դրույթներ հակասում են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային, քանի որ տեղական հարկ անվանված գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերի սահմանման իրավունքը չի տրվել ՏԻՄ-երին: Համայնքի ավագանուն է տրվել միայն հյուրանոցա-

¹ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 23.06.2011թ., սակայն «Տեղական ինքնակառավարման մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներում, 01.01.2013թ. դրությամբ, դեռևս համապատասխան փոփոխություններ չէին կատարվել, և տեղական հարկերի ցանկում պահպանվում էր տրանսպորտային միջոցների կայանատեղի հարկը:

² Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, հոդված 9.3:

յին հարկի դրույքաչափի սահմանման իրավունքը, սակայն 2012-ի ընթացքում էլ չընդունվեց «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքը³, որը հնարավորություն կտար համայնքների ավագանիներին՝ գործնականում իրացնել այդ իրավունքը:

Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման կարգերն՝ այդ թվում, պարտադիր և պատվիրակված լիազորությունների մասով, օրենքով սահմանելու հետ կապված՝ 2012-ին զարգացումներ չեն գրանցվել: Չնայած որոշվել էր, որ համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման կարգերին կանդրադառնան 2012թ.⁴ ցուցաբերելով միասնական մոտեցում⁴, սակայն անդրադարձ չի կատարվել:

ՀՖՄ-ի մշակած և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացրած «Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման կարգի մասին» շրջանակային օրենքի նախագիծն ընդգրկվել էր ՀՀ կառավարության 2012թ. գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում և նախատեսված էր ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից այդ օրինագիծը ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը⁵, սակայն չի ներկայացվել:

2012թ. որևէ էական քայլ չարվեց համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման ուղղությամբ: Չընդունվեց նաև օրենք կամ գործող օրենքներում չկատարվեցին լրացումներ համայնքների միավորման⁶ կամ բաժանման սկզբունքների և կարգի վերաբերյալ: Չընդունվեց նաև միջհամայնքային միավորումների մասին օրինագիծը:

Այսպիսով, սահմանադրական փոփոխություններով նախատեսված օրենսդրական փոփոխությունների իրականացման աշխատանքները 2012-ին գրեթե չեն շարունակվել, և արդյունքներ չեն արձանագրվել:

2012-ին չի ընդունվել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (հոդված 59) և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով (հոդված 30) նախատեսված համայնքային արժեթղթերի մասին օրենքը:

³ Դեռևս 2009-ի տարեվերջին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը ՀՀ կառավարություն էր ներկայացրել ՀՖՄ-ի մշակած «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը: 2010-ին ՀՀ կառավարությունը դա հետ էր ուղարկել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն՝ շահագրգիռ կողմերի հետ լրացուցիչ քննարկելու համար: Քննարկումների արդյունքում, չնչին փոփոխություններով, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նախագիծը տարվա վերջին կրկին ներկայացրել էր ՀՀ կառավարություն, սակայն օրինագիծն ընթացք չի տրվել:

⁴ www.mta.gov.am ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2011թ. գործունեության հաշվետվություն, հավելված 3:

⁵ Նույնը:

⁶ Այնուհանդերձ, համայնքների միավորման սկզբունքները տրված են «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգում»:

Տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենքների փոփոխությունները և լրացումները

2012 թվականին տեղական ինքնակառավարմանը վերաբերող նոր օրենքներ չեն ընդունվել, գործող օրենքներում կատարվել են մի շարք փոփոխություններ ու լրացումներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ Ազգային ժողովի կողմից ընդունված չորս օրենքներով: Դրանցից երկուսում կատարվել են միայն խմբագրական բնույթի փոփոխություններ: 2012թ. սեպտեմբերի 11-ին ընդունված օրենքով համայնքի ղեկավարին տրվել է նոր լիազորություն, այն է՝ «տալիս է համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն», իսկ ղեկ-տենքերի 6-ին ընդունված օրենքով համայնքի ղեկավարին տրվել են ևս երկու՝ համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու և համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվությունների տրամադրման լիազորություններ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով և լրացումներով պայմանավորված՝ համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում՝ երեք ընդունված օրենքներով:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ Ազգային ժողովի ընդունած երեք օրենքներով: Դրանցից երկուսում կատարվել են խմբագրական բնույթի փոփոխություններ, իսկ երրորդում համայնքի ղեկավարին տրվել է համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն տրամադրելու լիազորություն (ընդունվել է 06.12.2012):

Դեռևս 2009թ. առաջին ընթերցմամբ ընդունված «Ֆինանսական համահարթեցման մասին» նոր օրինագիծը (29.04.2009) 2012-ին ևս չդրվեց երկրորդ ընթերցման:

ՀՀ Ազգային ժողովը 2011թ. հունիսի 23-ին ընդունել էր «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում են տվյալ տեղական տուրքի վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանվում են տուրք վճարողները, տուրքի դրույքաչափերը և այլն: Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում ՀՀ կառավարությունը պետք է հաստատեր ՀՀ տարածքում ավտոկայանատեղի կազմակերպման կարգը և ավտոկայանատեղի գետնանշման ձևը, սակայն մինչև տարվա վերջը դրանք չէին հաստատվել: ՀՀ կառավարությունը միայն 2012թ. հոկտեմբերի 10-ի N1293-Ն «ՀՀ տարածքում ավտոկայանատեղի կազմակերպման կարգը սահմանելու մասին» որոշմամբ ընդունեց այդ կարգը, որում տրված են ավտոկայանատեղի կազմակերպման հիմնական չափորոշիչները, դրա կահավորմանը և շահագործմանը ներկայացվող պահանջները:

1.2 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրային գնահատումը

2012-ին շարունակել է գործել 2008թ. ապրիլի 30-ին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության ծրագիրը (տեղական ինքնակառավարմանը վերաբերող մասը տրված է «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009թ.)» զեկույցի ներդիր 1-ում): Տեղական ինքնակառավարման մասով այդ ծրագրի շատ դրույթներ չկատարվեցին նաև 2012 թվականին: Մասնավորապես, չեն սահմանվել ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացման կարգերը⁷, նորմատիվները և չափորոշիչները, ՏԻՄ-երին պետության կողմից պատվիրակված լիազորությունների, իրականացման կարգն ու ֆինանսավորման մեխանիզմները⁸, չեն շարունակվել միջհամայնքային միավորումների ստեղծմանն աջակցելու աշխատանքները և գործնական քայլեր չեն կատարվել համայնքների խոշորացման ուղղությամբ, չի կատարելագործվել համայնքների ֆինանսական համահարթեցման մեխանիզմը, չեն կատարվել համայնքների ավագանիների կայացմանը նպաստող քայլեր:

2012թ. հունիսի 21-ին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն է արժանացել ՀՀ կառավարության նոր ծրագիրը, որի տեղական ինքնակառավարմանը նվիրված բաժինը տրված է ներդիր 1-ում:

Ներդիր 1. Հատված ՀՀ կառավարության 2012-ին ընդունված ծրագրից (3.3.1.2. Տեղական ինքնակառավարումը)

Տեղական ինքնակառավարման համակարգի բարելավումը միտված է զարգացնել պետության բոլոր մակարդակներում արդյունավետ կառավարման ներուժը: Ըստ այդմ կառավարությունը նախատեսում է՝

- ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների և ֆինանսական ռեսուրսների միջև համապատասխանությունը՝ հետևողականորեն ավելացնելով համայնքների ինքնակազմակերպման հնարավորությունները,
- ավելացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների տեսականին՝ միաժամանակ բարձրացնելով դրանց որակը բոլոր համայնքներում,
- ստեղծել դեպի համայնքներ ներդրումների հոսքի և համայնքներում նոր աշխատատեղերի ստեղծման խթաններ,
- ապահովել համայնքի ղեկավարի կողմից ընդունվող որոշումների ու գործունեության արդյունավետ վերահսկողության մեխանիզմներ,
- բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկությունը,
- իրականացնել համատիրությունների լիարժեք կայացման ռազմավարություն,
- բնակչությանը սրբակցային սկզբունքով կոմունալ ծառայությունների մատուցման և որակի բարձրացման ուղղությամբ մշակել և իրականացնել պիլոտային ծրագրեր,
- համայնքներում առկա կարողությունների ավելացման և արդյունավետ օգտագործման նպատակով խրախուսել միջհամայնքային միավորումների ձևավորումը, համայնքների խոշորացումը և համայնքային նախաձեռնությունների իրականացումը,
- իրականացնել հատուկ օժանդակության ծրագրեր՝ սահմանամերձ և սահմանափակ ռեսուրս ու կարողություն ունեցող համայնքների համար,
- Երևանին վերադարձնել իր ճարտարապետական շունչը՝ օրենքով բացառելով Երևանի կենտրոնում մայրաքաղաքային պատմությանն ու նկարագրին անհարիր կառուցապատումը:

⁷ Մինչև 2012թ. սահմանվել են միայն աղբահանության, սանիտարական մաքրման և քաղաքաշինության բնագավառներում ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման կարգերը:

⁸ Մինչև 2012թ. և նաև 2012-ին սահմանվել են միայն համայնքի ղեկավարին պատվիրակված սոցիալական ծառայությունների, ԶԿԱԳ-ի և անասնաբուժական ծառայության իրականացման ծախսերի նորմատիվները:

Նոր ծրագրում տեղ են գտել նախորդ ծրագրից չիրականացված որոշ դրույթներ՝ մասնավորապես, միջհամայնքային միավորումների ձևավորումը և համայնքների խոշորացումը, ինչպես նաև նոր դրույթներ (օրինակ, ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների տեսականու ավելացումը, ՏԻՄ-երի իրավասությունների և ֆինանսական ռեսուրսների միջև համապատասխանության ապահովումը և այլն): Սակայն մինչև տարվա վերջը միայն կատարվել են առանձին ուսումնասիրություններ (օրինակ, ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակի) և մշակվել է օրենքի նախագիծ ՏԻՄ-երի գործունեության քափանցիկության և հրապարակայնության բարձրացման, ինչպես նաև տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակչության մասնակցության օրենսդրական ապահովման ուղղությամբ: Կառավարության ծրագրի վերջնական արդյունքների մասով ձեռքբերումներ չեն եղել:

ՀՀ կառավարության հաջորդ ծրագիրը 2009թ. ընդունված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրն է: Այդ ծրագիրը, տեղական ինքնակառավարման մասով, ընդգրկում է Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի գրեթե բոլոր հիմնախնդիրները: Ծրագրի 2012թ. միջոցառումների կատարման առումով ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը որոշակի աշխատանքներ է տարել (տես՝ սույն զեկույցի «Տեղական ինքնակառավարման ոլորտի զարգացման համար պատասխանատու պետական մարմինների գործունեության գնահատում» բաժինը):

ՀՀ կառավարության սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր երկարաժամկետ ծրագիրը 2008 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունված Կայուն զարգացման ծրագիրն է (տեղական ինքնակառավարմանը վերաբերող մասը տրված է «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009թ.)» զեկույցի ներդիր 2-ում), որը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում դեռևս 2009-ից գտնվում էր վերանայման գործընթացում: Սակայն, ինչպես նախորդ տարում, այնպես էլ 2012-ին, ծրագրում չարտացոլվեցին տարբեր ոլորտների, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման ոլորտի քաղաքականությունների հիմնական ուղղությունները: ԿԶԾ-ի տեղական ինքնակառավարմանը վերաբերող դրույթները գրեթե նույնությամբ կրկնում են ՀՀ կառավարության վերը նշված ծրագրի դրույթները:

2012-ին Համայնքների ֆինանսիստների միավորումը, Հայաստանի համայնքների միությունը, Հայաստանի ավագանիների ասոցիացիան, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, Տեղեկատվական համակարգերի զարգացման և ուսուցման կենտրոնը և «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ մշակեցին և ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը տրամադրեցին «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ» ռազմավարական փաստաթուղթը, որում փորձ է արված ներկայացնել ապակենտրոնացմամբ պայմանավորված պետության և ՏԻՄ-երի իրավասությունների հստակ տարանջատման, տեղական

ժողովրդավարության մշակույթի ձևավորման իրական մեխանիզմները, տեղական ինքնակառավարման բնագավառը կարգավորող հրատապ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը, ՏԻՄ-երի ընտրական համակարգի հետագա կատարելագործման, վարչական և ֆինանսական ապակենտրոնացման մի շարք առանցքային հարցերի լուծումներ:

Տեղական ինքնակառավարման ոլորտի զարգացման համար պատասխանատու տեղական մարմինների գործունեության գնահատումը

Տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումների ու զարգացման համար պատասխանատու են երկու պետական մարմիններ՝ ՀՀ Ազգային ժողովը և կառավարությունը:

ՀՀ Ազգային ժողովի Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովը 2012 թվականի ընթացքում կազմակերպել է օրենքների լուծումներ, գումարել նիստեր և Ազգային ժողովի լիազույժարման նիստերի օրակարգերում ընդգրկելու համար հավանություն է տվել տեղական ինքնակառավարմանը վերաբերող մի շարք օրինագծերի: Սակայն հանձնաժողովը, նախորդ տարվա մասն, բավարարվել է հիմնականում ՀՀ կառավարության ներկայացրած օրինագծերի քննարկումների կազմակերպմամբ ու դրանց ընթացք տալով և նախաձեռնություն չի ցուցաբերել տեղական ինքնակառավարման վերաբերյալ օրինագծերի մշակման ուղղությամբ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը՝ տեղական ինքնակառավարման ոլորտի պետական լիազորված մարմինը, 2012 թվականին շարունակել է աշխատանքներ տանել մշակված օրենքների նախագծերի քննարկումներ կազմակերպելու, լրամշակելու և սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելու ուղղությամբ (տես նաև սույն զեկույցի 1.1 բաժինը): Նախարարությունը շարունակել է կայուն համագործակցությունը ՀՖՄ-ի հետ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը 2011-ին ավարտել էր համայնքների համար գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական միասնական բանկի ստեղծմանն ուղղված աշխատանքները⁹: 2012-ին, պայմանավորված «Հողի հարկի և գույքահարկի գծով առաջացած ապառքների մասին», «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների փաթեթի ընդունմամբ, համապատասխան փոփոխություններ կատարվեցին հողի հարկի և գույքահարկի շտեմարաններում, ինչպես նաև՝ միասնական տեղեկատվական համակարգում: «Վեկտոր Պլյուս» կազմակերպության կողմից մշակվեց նոր ծրագրային փաթեթ և ներդրվեց ՀՀ համայնքներում ու մարզպետարաններում: Նախատեսվում է վերջինս ներդնել նաև

⁹ www.mta.gov.am ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2011թ. գործունեության հաշվետվություն:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում՝ արդյունքում ձևավորելով միասնական տեղեկատվական համակարգ¹⁰:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության պատվերով «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ն մշակել է ՏԻՄ-երի կողմից իրականացվող ծախսերի ուսումնասիրություն և դրա հիման վրա, ըստ համայնքների մեծության, մշակվել է «Համայնքի ծախսային քաղաքականության մեթոդաբանությունը», որը մարզպետարանների միջոցով իջեցվել է Հայաստանի բոլոր համայնքներին: Այդ մեթոդաբանության մշակման համար նախ՝ ՀՀ համայնքները դասակարգվել են առանձին խմբերի՝ ըստ համայնքի բյուջետային կարողությունների: Այնուհետ մշակվել է ծախսային քաղաքականության մեթոդաբանություն՝ ըստ առանձին խմբերի: Մեթոդաբանությունը ՏԻՄ-երին հնարավորություն կընձեռի իրենց համայնքը հեշտությամբ համապատասխանեցնելու համայնքների խմբերից մեկին և դրան համապատասխան՝ մշակելու և իրականացնելու իրենց ծախսային քաղաքականությունը. այն ուղեցույց կհանդիսանա ՏԻՄ-ի համար, ծախսային քաղաքականության միասնականություն կապահովի համայնքների խմբերի մեջ և համայնքային բյուջեների կազմման ժամանակ խորհրդատվական և կողմնորոշիչ բազա կհանդիսանա:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը որոշակի աշխատանքներ է կատարել նաև ՏԻՄ-երում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, համայնքների բյուջեների եկամուտների ու ծախսերի վերաբերյալ օրական կտրվածքով տեղեկատվության ստացման, տեղական մակարդակում գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ: Շարունակվել է նախարարության հրապարակային և թափանցիկ աշխատանքի բարելավումը: Տարվա ընթացքում նախարարությունը շարունակել է ՏԻՄ-երի հետ գործնական աշխատանքները, իսկ օրենսդրության բարելավման ուղղությամբ գործունեությունը տվել է հիմնականում միջանկյալ արդյունքներ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման՝ ՀՀ ՏԿՆ-ի մասով միջոցառումների ծրագրի առումով կատարել է հետևյալ աշխատանքները. իրականացրել է համայնքների բյուջեների ծախսերի եռամսյա և եկամուտների ամենամսյա մոնիթորինգ, մշակել և ՀՀ մոտ 340 համայնքներում ներդրել է համայնքի սեփականություն համարվող գույքի (հողի, շենքերի և շինությունների) կառավարման համակարգը, համայնքների բյուջեների և դրանց կատարման հաշվետվությունների հրապարակայնության ապահովման գործընթացը վերահսկվել է. իրականացվել է եռամսյակային մոնիթորինգ, շարունակվել է համայնքի սեփականություն համարվող գույքի արդյունավետ կառավարման միասնական տեղեկատվական համակարգերի ներդրումը՝ համակարգը շահագործող ներդրված համայնքների քանակը հասել է մոտ 340-ի:

¹⁰ www.mta.gov.am ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2012թ. գործունեության հաշվետվություն:

1.3. Արժանատիության դրսևակրությունների կասարումը

Հայաստանը, որպես Եվրոպայի խորհրդի անդամ երկիր, որոշ պարտավորություններ ունի այդ կազմակերպության առջև՝ այդ թվում նաև տեղական ինքնակառավարման հարցերում: Այդ պարտավորությունները վերաբերում են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքները (խարտիան Հայաստանի օրենսդրության մաս է կազմում 2002թ. մայիսի 1-ից) և Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հանձնարարականները Հայաստանի օրենսդրությունում ներառելուն և դրանց համապատասխան մեխանիզմները փաստացի կիրարկելուն: Եթե օրենսդրական պարտավորությունների կատարումն ընթանում է, սակայն՝ դանդաղ տեմպերով (տես՝ սույն զեկույցի 1.1 կետը), ապա Հայաստանը դեռևս շատ է հետ մնում Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքների գործնական կիրարկման հարցում:

Հայաստանը միացել է նաև Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությանը, որն ընդունվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից՝ 2009թ. սեպտեմբերի 9-ին, և որը ստորագրման համար բացվել է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների տեղական ինքնակառավարման ոլորտի պատասխանատու նախարարների 16-րդ նստաշրջանում (Ուտրեխտ, 2009թ. նոյեմբերի 16-17): Խարտիայի լրացուցիչ արձանագրությունը ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ էր առնվազն ութ երկրների վավերացումը: Այդ ութերորդ երկիրը Ֆինլանդիան էր, որը վավերացրեց լրացուցիչ արձանագրությունը 2012թ. փետրվարի 10-ին, և այն ուժի մեջ մտավ նույն տարվա հունիսի 1-ից:

Հայաստանը խարտիայի լրացուցիչ արձանագրությունն ստորագրել է 2010թ. մարտի 18-ին, սակայն մինչև 2012-ի վերջը ՀՀ Ազգային Ժողովը այն չվավերացրեց: Նկատի ունենալով այն, որ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրության վավերացումից հետո, Հայաստանի գործող օրենսդրության մեջ պետք է այդ մասնակցության ապահովմանն ուղղված լրացումներ կատարվեն, Համայնքների ֆինանսիստների միավորումը 2011-ին մշակել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն էր ներկայացրել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, որը վերաբերում էր տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցությանը: 2012-ին ՀՖՄ-ն և նախարարությունը համատեղ այդ նախագծի հանրային լսումներ և քննարկումներ կազմակերպեցին Հայաստանի տարբեր մարզերում և լրամշակեցին օրենքի նախագիծը:

2012-ին շարունակում էր գործել 2011թ. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1138-րդ հանդիպմանը հավանության արժանացած «Եվրոպայի խորհուրդ - Հայաստանի կառավարություն 2012-2014թթ. գործողությունների ծրագիրը, որի դրույթներից մեկը տեղական ինքնակառավարման բարեփոխումներին աջակցությունն է:

Հայաստանը, ընդգրկված լինելով Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) և Արևելյան գործընկերության մեջ, որոշ պարտավորություններ ունի նաև Եվրամիության հանդեպ: Եվրամիություն-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրում որոշ դրույթներ են ամրագրված նաև տեղական ինքնակառավարման վերաբերյալ, որոնք Հայաստանի «պարտավորություններն են»՝ այդ ծրագրի իրականացման համատեքստում:

Նշված ծրագրի իրականացմանն են ուղղված ՀՀ Նախագահի 2012թ. ապրիլի 16-ի ՆԿ- 52-Ա կարգադրությամբ սահմանված ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2012-2013թթ. միջոցառումների ցանկը՝ ըստ տարիների (աղյուսակ 1): 2012թ. միջոցառումների ցանկը գրեթե կրկնում է ՀՀ կառավարության ծրագրի և Եվրոպայի խորհրդի հանդեպ Հայաստանի ունեցած պարտավորությունները, որոնց մասին արդեն խոսվել է վերևում:

Աղյուսակ 1. ԵՀԶ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2012-2013 թվականների տեղական ինքնակառավարման զարգացմանն ուղղված միջոցառումների ցանկ

| Գերակա խնդիրները և առաջնահերթ միջոցառումները | Ակնկալվող արդյունքը | Իրականացման ենթակա միջոցառումները | |
|---|--|--|--|
| | | 2012 | 2013 |
| Տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումների իրականացման շարունակականության ապահովում: «Տեղական ինքնակառավարման մասին» Եվրոպական խարտիայում ամրագրված Եվրոպայի խորհրդի սկզբունքների վրա հիմնված օրենսդրության զարգացում: | Կատարելագործված ֆինանսական համահարթեցման նոր համակարգի ներդրում: | Փորձագիտական ուսումնասիրությունների իրականացում, անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակում: | Փորձագիտական ուսումնասիրությունների իրականացում, անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակում: |
| | Տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացում՝ վերջիններիս և բնակչության տարբեր խմբերի կապերի սերտացման միջոցով: | Տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության իրավական ապահովում: | Տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության իրավական ապահովում: |
| | Համայնքային մասնակցային ինստիտուտների զարգացում: | Համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների, խորհրդատվական հանձնաժողովների, աշխատանքային խմբերի և քաղաքացիական այլ խմբերի աշխատանքներն արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև ավագանու անդամի կողմից համայնքի բնակիչների ընդունելություն, հանրային հանդիպումներ ու քննարկումներ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ պայմանների ստեղծում: | Համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների, խորհրդատվական հանձնաժողովների, աշխատանքային խմբերի և քաղաքացիական այլ խմբերի աշխատանքներն արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև ավագանու անդամի կողմից համայնքի բնակիչների ընդունելություն, հանրային հանդիպումներ ու քննարկումներ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ պայմանների ստեղծում: |

2. Վարչասարածրային բարեփոխումները և միջհամայնքային համագործակցությունը

ՀՀ տարածքը կազմում է 29 743 կմ², որի 68%-ը կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը, 11,2%-ը՝ անտառները, 11,1%-ը՝ հատուկ պահպանվող տարածքները և 8,8%-ը՝ այլ հողերը: ՀՀ տարածքի 36,6%-ը լեռներ են, մնացածը՝ բարձրավանդակներ ու այլ հողեր: Սևանա լճի հայելու մակերեսը՝ 1276,6 կմ² է:

Հայաստանի մշտական բնակչությունը 2013թ. Հունվարի 1-ի դրությամբ կազմել է 3026,9 հազ. մարդ:

Համաձայն «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների, հանրապետության տարածքը բաժանված է 10 մարզերի և Երևանի քաղաքային համայնքի:

2.1 Վարչասարածրային բարեփոխումները

ՀՀ վարչատարածքային բաժանման համակարգում 2012թ. փոփոխություններ չեն կատարվել, այդ ընթացքում շարունակել են գործել 915 համայնքներ, որոնցից 866-ը՝ գյուղական և 49-ը՝ քաղաքային:

Հայաստանի մեկ համայնքին ընկնող միջին տարածքը (ընդգրկված չէ միայն Սևանա լճի մակերեսը) 2013թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 31,1 կմ² (առանց Երևան համայնքի 30,9 կմ²), իսկ ըստ գյուղատնտեսական նշանակության հողերի՝ 22,4 կմ² (առանց Երևան համայնքի 22,2 կմ²): Մեկ համայնքին ընկնող բնակչության միջին թիվը կազմել է 3308 մարդ, իսկ առանց Երևան համայնքի՝ 2145 մարդ: Մեկ համայնքին ընկնող միջին տարածքի և բնակչության ցուցանիշներով Հայաստանը Եվրոպայի խորհրդի երկրների մեջ վերջին շարքերում է:

Հայաստանի համայնքների 29,2%-ը ունի 500-ից պակաս բնակչություն, 47,9%-ը՝ 1000-ից պակաս, իսկ 5000-ից ավելի բնակչություն ունի միայն 8,4%-ը (աղյուսակ 2): Մեկ միլիոնից ավելի բնակչություն ունի միայն Երևան համայնքը, որը չի մտնում որևէ մարզի տարածքի մեջ: 100 000-ից ավելի բնակչություն ունի միայն Շիրակի մարզի Գյումրի քաղաքը, իսկ ամենափոքր քաղաքային համայնքը Սյունիքի մարզի Դաստակերտ քաղաքն է, որի բնակչության թիվը կազմում է 313 մարդ: Ամենամեծ բնակչություն ունեցող գյուղական համայնքը Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքն է՝ 10 001 մարդ, իսկ ամենափոքրը Սյունիքի մարզի Քաշունի համայնքն է՝ 30 մարդ: Փոքրաթիվ բնակչություն ունեցող համայնքների թվով, ինչպես նախկին տարիներին, առաջատարը մնում է Սյունիքի մարզը, որի համայնքների թիվը 67,9 %-ը ունի 500-ից պակաս, իսկ 81,9%-ը՝ 1000-ից պակաս բնակչություն:

Աղյուսակ 2. ՀՀ համայնքների թիվը (այդ թվում քաղաքային/գյուղական) ըստ մարզերի և բնակչության ընտրված միջակայքերի (01.01.2013թ. դրությամբ)

| Մարզերը | Մինչև 500 | 501-1000 | 1001-5000 | 5001-10000 | 10001-15000 | 15001-50000 | 50001-100000 | 100001-1000000 | Ընդամենը |
|-----------------------------|----------------------|----------------------|----------------------|---------------------|------------------|--------------------|------------------|------------------|-----------------------|
| Արագածոտն քաղաք/գյուղ | 37 0/37 | 36 0/36 | 36 0/36 | 4 2/2 | | 1 1/0 | | | 114 3/111 |
| Արարատ քաղաք/գյուղ | 4 0/4 | 14 0/14 | 69 0/69 | 6 0/6 | 1 1/0 | 3 3/0 | | | 97 4/93 |
| Արմավիր քաղաք/գյուղ | 5 0/5 | 6 0/6 | 79 0/79 | 5 1/4 | | 2 2/0 | | | 97 3/94 |
| Գեղարքունիք քաղաք/գյուղ | 25 0/25 | 19 0/19 | 31 0/31 | 12 1/11 | 3 2/1 | 2 2/0 | | | 92 5/87 |
| Լոռի քաղաք/գյուղ | 45 0/45 | 18 1/17 | 42 2/40 | 4 1/3 | 3 3/0 | | 1 1/0 | | 113 8/105 |
| Կոտայք քաղաք/գյուղ | 7 0/7 | 12 0/12 | 36 1/35 | 8 2/6 | 1 1/0 | 3 3/0 | | | 67 7/60 |
| Շիրակ քաղաք/գյուղ | 40 0/40 | 29 0/29 | 45 0/45 | 3 1/2 | | 1 1/0 | | 1 1/0 | 119 3/116 |
| Սյունիք քաղաք/գյուղ | 74 1/73 | 15 0/15 | 16 2/14 | 1 1/0 | 1 1/0 | 2 2/0 | | | 109 7/102 |
| Վայոց Ձոր քաղաք/գյուղ | 18 0/18 | 7 0/7 | 15 0/15 | 4 3/1 | | | | | 44 3/41 |
| Տավուշ քաղաք/գյուղ | 12 0/12 | 15 0/15 | 31 1/30 | 2 2/0 | | 2 2/0 | | | 62 5/57 |
| Ընդամենը քաղաք/գյուղ | 267 1/266 | 171 1/170 | 400 6/394 | 49 14/35 | 9 8/1 | 16 16/0 | 1 1/0 | 1 1/0 | 914 48/866 |

Նշված ցուցանիշները ցույց են տալիս Հայաստանի տեղական ինքնակառավարման միավորների խիստ մասնատվածությունը: Դրանք միմյանցից էականորեն տարբերվում են՝ բնակչության թվաքանակով, համայնքապատկան տարածքներով, բնակլիմայական պայմաններով, սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքներով, ինչպես նաև՝ իրենց կարգավիճակով. լեռնային, բարձր լեռնային, սահմանամերձ և այլն:

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրումից ի վեր, առանցքային հիմնախնդիրներից մեկը վարչատարածքային կառուցվածքն է, նրա մասնատվածության բարձր աստիճանը. համայնքների 95%-ը գյուղական է, որոնց մեծամասնությունը բնակչությանը մատուցվող ծառայություններից շատերը իրականացնում է կամ շատ ցածր մակարդակով, կամ էլ ընդհանրապես չի իրականացնում:

Աղյուսակ 3-ում և 4-ում ցույց են տրված նախադպրոցական, կրթական, մարզական, առողջապահական, անասնաբուժական և արտակարգ իրավիճակների կազմակերպությունների տեղաբաշխումը ըստ մարզերի: Հարկ է նշել, որ կարևոր ծառայություններ մատուցող կազմակերպությունները հիմնականում կենտրոնացած են քաղաքներում՝ մարզային և նախկին շրջանային կենտրոններում: Քիչ են այն գյուղական համայնքները, որտեղ գործում են առողջապահական հիմնարկներ, մարզական, երաժշտական և արվեստի դպրոցներ:

Աղյուսակ 3. Նախադպրոցական հաստատությունների, հանրակրթական, երաժշտական և արվեստի դպրոցների, արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, բուհերի և մարզական կազմակերպությունների թիվը՝ ըստ մարզերի

| Մարզերը | Նախադպրոցական | Հանրակրթական | Երաժշտական և արվեստի | Արհեստագործական | Միջին մասնագիտական | Բուհեր | Մարզական |
|--------------------|---------------|--------------|----------------------|-----------------|--------------------|-----------|------------|
| ք. Երևան | 207 | 253 | 49 | 12 | 35 | 51 | 55 |
| Արագածոտն | 20 | 122 | 8 | 1 | 1 | - | 7 |
| Արարատ | 74 | 112 | 22 | 1 | 6 | - | 7 |
| Արմավիր | 56 | 123 | 14 | 2 | 5 | 2 | 6 |
| Գեղարքունիք | 42 | 126 | 17 | 3 | 8 | 2 | 9 |
| Լոռի | 61 | 168 | 22 | 4 | 10 | 2 | 18 |
| Կոտայք | 52 | 105 | 24 | 6 | 6 | 2 | 16 |
| Շիրակ | 45 | 173 | 27 | 6 | 12 | 3 | 36 |
| Սյունիք | 52 | 121 | 17 | 4 | 7 | 2 | 10 |
| Վայոց Ձոր | 18 | 51 | 7 | 1 | 3 | 1 | 4 |
| Տավուշ | 56 | 81 | 19 | 3 | 6 | - | 4 |
| Ընդամենը ՀՀ | 683 | 1435 | 226 | 43 | 99 | 65 | 172 |

Եվրոպական շատ երկրների տեղական ինքնակառավարման համակարգերի ուսումնասիրություններն ու փորձը ցույց են տալիս, որ միայն համայնքների խոշորացման դեպքում է հնարավոր լուրջ և էական արդյունքների հասնել ռեսուրսների կենտրոնացման և դրանց առավել արդյունավետ օգտագործման հարցերում: Եվրոպական երկրների մեծ մասում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման նպատակով համայնքները խոշորացվել են և այդ միտումը շարունակ-

վում է նաև այժմ: Համեմատության համար նշենք, որ մի շարք երկրներում՝ Անգլիա և Ռուելս, Լիտվա, Բուլղարիա, Շվեդիա, Դանիա, Մակեդոնիա, Վրաստան և այլն, մեկ համայնքին ընկնող բնակչության միջին թիվը գերազանցում է 15,0 հազ. մարդը, իսկ մեկ համայնքի միջին տարածքը՝ 150 կմ²-ից ավել է, ընդհանրապես գոյություն չունեն մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքներ:

Համայնքների խոշորացումը հնարավորություն է տալիս խորացնել ապակենտրոնացման քաղաքականությունը, նոր կազմավորված խոշոր համայնքների ՏԻՄ-երին վերապահելով առավել մեծ ծավալի լիազորություններ՝ մեծացնելով նրանց դերը հանրային կառավարման համակարգում: Եվրոպայում դեռևս կան նաև քիչ թվով երկրներ, որտեղ պահպանվել են մեծ թվով փոքր համայնքներ՝ Ֆրանսիա, Իսպանիա, Իտալիա, Հունգարիա, Չեխիա և այլն: Մակայն այդ երկրներում գործում են տեղական ինքնակառավարման երկրորդ, երրորդ մակարդակներ, որոնք լուծում են տեղական ինքնակառավարման միավորների մասնատվածության բացը:

Աղյուսակ 4. Առողջապահական/ամբուլատոր պոլիկլինիկական/ հիմնարկների և հիվանդանոցային մահճակալների քանակը, սննդի անվտանգության, անասնաբուժական և արտակարգ իրավիճակների կազմակերպությունների թիվը

| Մարզերը | Ամբուլատոր պոլիկլինիկաներ | Հիվանդանոցային մահճակալներ | Սննդի անվտանգության | Անասնաբուժական | Արտակարգ իրավիճակների |
|--------------------|---------------------------|----------------------------|---------------------|----------------|-----------------------|
| ք. Երևան | 144 | 7569 | 12 | 12 | 12 |
| Արագածոտն | 24 | 208 | 4 | 4 | 4 |
| Արարատ | 59 | 563 | 4 | 4 | 4 |
| Արմավիր | 62 | 335 | 3 | 3 | 3 |
| Գեղարքունիք | 41 | 755 | 5 | 5 | 5 |
| Լոռի | 45 | 501 | 6 | 6 | 7 |
| Կոտայք | 44 | 658 | 4 | 4 | 4 |
| Շիրակ | 32 | 843 | 7 | 7 | 8 |
| Սյունիք | 26 | 420 | 5 | 5 | 5 |
| Վայոց Ձոր | 9 | 95 | 3 | 3 | 3 |
| Տավուշ | 27 | 294 | 4 | 4 | 4 |
| Ընդամենը ՀՀ | 513 | 12241 | 57 | 57 | 59 |

Համայնքների խոշորացման հարցը տարեց տարի ընդգրկվում է ՀՀ կառավարության ծրագրերում: Իսկ համաձայն ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշման, հավանություն է տրվել համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգին, որտեղ նշված է. «Գործող վարչատարածքային բաժանումը լուրջ և էական խոչնդոտ է հանդիսանում համայնքների կարողությունների ամրապլնդ-

ման և տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման համար: Ջարգացման այս փուլում տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանում պատրաստ չէ ապակենտրոնացման հետագա խորացմանը, որն առաջին հերթին ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմիններին լրացուցիչ լիազորությունների տրամադրում»: Արձանագրվել է, որ համայնքների խոշորացումը և միջհամայնքային համագործակցության զարգացումը ՀՀ համար խիստ արդիական և հրատապ լուծում պահանջող խնդիր է:

Նկատի ունենալով վարչատարածքային բարեփոխումների իրականացման ողջ բարդությունն ու հնարավոր հետևանքները, որոշումների ընդունման շտապողականությունը կարող է հանգեցնել ինչպես այս հիմնարար գաղափարի խեղաթյուրման, այնպես էլ լրացուցիչ դժվարություններ և բարդություններ առաջացնել տեղական ինքնակառավարման համակարգում: Այս նկատառումով ՀՀ կառավարությունը որոշեց, որ անհրաժեշտ է բարեփոխումներն իրականացնել փուլային տարբերակով՝ որպես առաջին փուլի ուսումնասիրության թիրախ ընտրելով այդ նպատակի համար իր պարամետրերով նպատակահարմար մարզերից մեկը, իսկ հաջորդ փուլում՝ մեկ այլ մարզ: Առաջին փուլի համար ընտրվել է Վայոց Ձորի մարզը, որը պայմանավորված է մյուս մարզերի հետ մի շարք ընդհանրություններով՝ ամենափոքրն է բնակչության թվաքանակի և համայնքների թվի առումով, փոքրերից է տարածքի առումով և բնութագրվում է բնակչության միատարրությամբ: Հաջորդ փուլի համար ընտրվել է Սյունիքի մարզը, որն ամենամեծն է ցամաքային տարածքով և մեծերից է համայնքների թվաքանակով: Ուսումնասիրություններն իրականացնելու համար մշակվել են խոշորացման համապատասխան սկզբունքներ և չափորոշիչներ, որի համար հիմք են հանդիսացել Արագածոտնի մարզում իրականացված ուսումնասիրությունները:

2012-ին կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում, հաշվի առնելով խոշորացման սկզբունքներն ու չափորոշիչները, առաջարկվել է Վայոց Ձորի մարզում գործող 44 համայնքների փոխարեն կազմավորել՝ 8, իսկ Սյունիքի մարզում՝ 109-ի փոխարեն 18 համայնքներ: Արդյունքում այս երկու մարզերի համայնքների թվաքանակը կկրճատվի մոտ 6 անգամ: Իրականացված բարեփոխումների արդյունքների հիման վրա հնարավոր կլինի հանգել որոշակի եզրակացությունների, որոնք էլ նախադրյալներ կստեղծեն ողջ երկրի մաշտաբով այս քաղաքականությունն իրագործելու համար:

2.2 Միջհամայնքային համագործակցությունը

ՀՀ օրենսդրությունը որպես միջհամայնքային համագործակցության ձև ամրագրել է միջհամայնքային միավորումների ինստիտուտը (ՀՀ Սահմանադրության 110 հոդված, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք՝ գլուխ 8): Ըստ օրենքի՝ «Համայնքների որոշակի խնդիրներ համատեղ լուծելու և ծախսերը նվազեցնելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինները կարող են ստեղծել

միջհամայնքային միավորումներ, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ»: Օրենքը սահմանում է նաև նրանց ձևավորման կարգը և կառավարման մարմինները, ինչպես նաև՝ որ միջհամայնքային միավորումների խնդիրները և իրավասությունները սահմանվում են օրենքով: Նշենք որ միջհամայնքային միավորումների խնդիրներն ու իրավասությունները դեռևս սահմանված չեն որևէ օրենքով, իսկ օրենքներում եղած մի քանի հոդվածներն էլ դեկլարատիվ բնույթ են կրում: Այդ իսկ պատճառով առ այսօր Հայաստանում միջհամայնքային միավորներ չեն ստեղծվել:

Ներկայումս Հայաստանում միջհամայնքային համագործակցությունը փաստացի գործում է Համայնքների միությունների միջոցով, որոնք արդարադատության նախարարությունում գրանցված են որպես իրավաբանական անձանց /համայնքների/ միություններ: 2013թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում գրանցված են 25 համայնքների միություններ, որոնց կազմում ընդգրկված են 495 համայնքներ (աղյուսակ 5), այսինքն համայնքների կեսից մի փոքր ավելին:

2012թ. ընթացքում գրանցվել է միայն «Ախուրյանի միջհամայնքային միավորում» իրավաբանական անձանց միությունը, որի կազմում ընդգրկված են 8 համայնքներ: 2012թ. լուծարվել է «Արմադան» համայնքների միությունը, որի կազմում ընդգրկված էին երկու համայնքներ, իսկ Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի համայնքների միությունը չի վերագրանցվել: Սևանի համայնքների միությունը գրանցված է, սակայն փաստացի չի գործում:

Աղյուսակ 5. ՀՀ տարածքը, բնակչությունը, համայնքների թիվը, համայնքների միությունների և նրանց կազմում ընդգրկված համայնքների թիվը՝ ըստ մարզերի

| Մարզերը | Տարածքը (կմ ²) | Մշտական բնակչությունը հազ.մարդ | Համայնքների թիվը | Համայնքների միությունների թիվը | Համայնքների միությունների կազմում ընդգրկված համայնքների թիվը |
|--------------------|----------------------------|--------------------------------|------------------|--------------------------------|--|
| ք. Երևան | 223 | 1066,3 | 1 | 1 | 40 |
| Արագածոտն | 2756 | 133,0 | 114 | 2 | 33 |
| Արարատ | 2090 | 261,4 | 97 | 4 | 67 |
| Արմավիր | 1242 | 267,1 | 97 | - | - |
| Գեղարքունիք | 5349 | 235,6 | 92 | 4 | 61 |
| Լոռի | 3799 | 234,7 | 113 | 4 | 91 |
| Կոտայք | 2086 | 255,3 | 67 | - | - |
| Շիրակ | 2680 | 251,3 | 119 | 1 | 8 |
| Սյունիք | 4506 | 141,7 | 109 | 4 | 108 |
| Վայոց Ձոր | 2308 | 52,2 | 44 | 1 | 27 |
| Տավուշ | 2704 | 128,3 | 62 | 4 | 60 |
| Ընդամենը ՀՀ | 29743 | 3026,9 | 915 | 25 | 495 |

Համայնքների միության կառավարման մարմինը խորհուրդն է, որը ձևավորվում է կազմակերպության մեջ մտնող համայնքների ղեկավարներից: Խորհուրդն իր կազմից ընտրում է նախագահ, քարտուղար և վերահսկիչ հանձնաժողով: Աշխատակազմը փոքրաքանակ է, պայմանավորված ֆինանսական միջոցների սղության և գործունեության սահմանափակ ոլորտներով: Համայնքների միությունների ֆինանսական աղբյուրները գոյանում են անդամավճարներից, մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող գումարներից, ինչպես նաև՝ դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող միջոցներից: Համայնքների միությունները, միջհամայնքային պայմանագրեր կնքելով, իրականացնում են համայնքների գույքահարկի և հողի հարկի կենտրոնացված հաշվարկները և բազաների վարումը, մատուցում են խորհրդատվական և այլ ծառայություններ, կազմակերպում սեմինարներ և դասընթացներ: 2012թ. ընթացքում շարունակվել է մի շարք համայնքների կադմից հողի հարկի և գույքահարկի բազաները միասնական վարելու հաջող փորձը: Պայմանագրային հիմունքներով 2012թ. գործել են համայնքների կողմից ստեղծված 68 կառույցներ (նախորդ տարվա համեմատ թիվը չի փոխվել), որոնք իրենց մեջ ընդգրկում են 427 համայնքներ (աղյուսակ 6): Կան նաև չգրանցված համագործակցության օրինակներ, որոնց գործունեության մասին տեղեկատվությունը շատ սուղ է:

Համայնքների միջազգային համագործակցությունն արտահայտված է քույր քաղաքների ձևով, որոնցում ընդգրկված են մի շարք քաղաքներ՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Արովյան, Ջերմուկ, Իջևան, Դիլիջան, Գորիս, Ալավերդի, Նոյեմբերյան և այլն, որոնք համագործակցում են Ռուսաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Հունաստանի, Ավստրալիայի, Վրաստանի և այլ երկրների քաղաքների հետ, իսկ տարիների ընթացքում այդ աշխարհագրությունն ընդլայնվում է: Նշված քաղաքներից մի քանիսը համագործակցում են նաև տարբեր երկրների մի շարք այլ քաղաքների հետ: Նրանց միջև կնքված համաձայնագրերը հաճախ սահմանափակվում են մշակույթի և տուրիզմի բնագավառներով: Կան նաև նպատակային համագործակցության դեպքեր՝ առողջապահության, կրթության, բնապահպանության, գյուղատնտեսության, բիզնեսի խրախուսման, շինարարության և այլ բնագավառներում, երբ մեծամասամբ Հայաստանի քաղաքները դրամաշնորհներ են ստանում քույր քաղաքներից, որոշակի ծրագրեր իրականացնելու համար: 2012թ. ընթացքում շարունակվել է Հայ-ֆրանսիական համայնքային համագործակցությունը՝ տուրիզմի, բիզնեսի խրախուսման, գյուղատնտեսության զարգացման, ֆրանկաֆոնիայի և այլ ուղղություններով:

Աղյուսակ 6. Գույքահարկի և հողի հարկի տվյալների բազաները վարող կառույցները (2013թ. հունվարի դրությամբ)¹¹

| | ՍԱՐՁ | Համայնքների միություն (ՀՄ) | | Միջհամայնքային կառույց (ՄՀԿ) | | ՀՄ-ների կամ ՄՀԿ-ների կազմում ընդգրկված համայնքներ | Միայն իրենց բազան վարող համայնքներ | Սեփական տվյալների բազա չունեցող համայնքներ | Տվյալների բազա ունեցող համակարգիչների թիվը |
|----|-----------------|----------------------------|-----------------------------|------------------------------|-----------------------------------|---|------------------------------------|--|--|
| | | Թիվը | ՀՄ-ի անդամ համայնքների թիվը | Թիվը | ՄՀԿ-ում ներառված համայնքների թիվը | | | | |
| 1 | Արագածոտն | 1 | 9 | 17 | 48 | 57 | 57 | 39 | 75 |
| 2 | Արարատ | 2 | 27 | 2 | 12 | 39 | 58 | 35 | 62 |
| 3 | Արմավիր | 0 | 0 | 1 | 2 | 2 | 95 | 1 | 96 |
| 4 | Գեղարքունիք | 0 | 0 | 7 | 30 | 30 | 62 | 23 | 69 |
| 5 | Լոռի | 3 | 48 | 5 | 16 | 64 | 49 | 59 | 57 |
| 6 | Կոտայք | 0 | 0 | 1 | 2 | 2 | 65 | 1 | 66 |
| 7 | Շիրակ | 0 | 0 | 17 | 53 | 53 | 66 | 36 | 83 |
| 8 | Սյունիք | 4 | 100 | 0 | 0 | 100 | 9 | 100 | 13 |
| 9 | Վայոց Ձոր | 3 | 28 | 1 | 2 | 30 | 14 | 26 | 18 |
| 10 | Տավուշ | 4 | 50 | 0 | 0 | 50 | 12 | 50 | 16 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 17 | 262 | 51 | 165 | 427 | 487 | 370 | 555 |

Միջսահմանային համագործակցությունը դեռևս թույլ է զարգացած: Հայտնի պատճառներով Ադրեջանի և Թուրքիայի սահմանները փակ են, իսկ Իրանի հետ համագործակցության օրնակներ դեռևս չկան: Ինչ վերաբերվում է հայ-վրացական սահմանամերձ տարածաշրջանների համագործակցությանը, ապա Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության շրջանակներում շարունակվել են սահմանամերձ տարածաշրջաններում տարածքային զարգացման ծրագրերի իրականացման աշխատանքները՝ հիմնականում երեք պիլոտային ծրագրերի (Էկոլոգիական, փոքր և միջին քիզմեսի խրախուսման, տուրիզմի զարգացման) ուղղությամբ, որի սկիզբը դրվել է 2010թ., իսկ ծրագիրը ֆինանսավորվել է Նիդեռլանդների թագավորության կողմից: Այդ ծրագրերում հայկական կողմից ընդգրկված են՝ Ալավերդի, Վանաձոր, Տաշիր, Դիլիջան և Իջևան քաղաքները:

Ակնհայտ է, որ միջհամայնքային համագործակցությունը Հայաստանում շատ թույլ է զարգացած, իսկ առանձին ձևեր պարզապես գոյություն չունեն:

¹¹ www.mta.gov.am

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության կողմից ընդունված հայեցակարգը գրեթե հավասար կարևորություն է տալիս ինչպես համայքների խոշորացմանը, այնպես էլ միջհամայնքային միավորումների ձևավորմանը: Ուստի անհրաժեշտ է, հիմնվելով միջազգային փորձի, ինչպես նաև արդեն իսկ գործող համակարգի ուսումնասիրությունների վրա, բավարար պայմաններ ստեղծել միջհամայնքային համագործակցության հետագա զարգացման համար՝ ապահովելով անհրաժեշտ օրենսդրական դաշտ, կիրառելով միջհամայնքային համագործակցության թե կամավոր, թե պարտադիր սկզբունքները: Այնհայտ է նաև, որ պետության անմիջական մասնակցությունն այս խնդիրների լուծման առումով, պարտադիր է:

3. ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը, բաղաբաղիական հասարակության մասնակցությունը սեղական ինֆնակառավարմանը

3.1 ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը

ՀՀ մարզերի համայնքներում ՏԻՄ-երն ընտրվում են մեծամասնական ընտրակարգով, իսկ Երևանում՝ համամասնական:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներ կարող են առաջադրել կուսակցություններն իրենց համապատասխան տարածքային (սկզբնական, տեղական) ստորաբաժանումների որոշմամբ, ինչպես նաև՝ ընտրվելու իրավունք ունեցող քաղաքացիները՝ ինքնաառաջադրման կարգով¹²: Կուսակցությունը կարող է համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու առաջադրել նաև իր կուսակցության անդամ չհանդիսացող անձի:

2012-ին Հայաստանի մարզերում անց են կացվել համայնքի ղեկավարի 704 և ավագանու 751 ընտրություններ (աղյուսակ 7): Ընդհանուր առմամբ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են անց կացվել 815 համայնքներում: Համայնքի ղեկավարի ընտրություններից 37-ը տեղի է ունեցել քաղաքային համայնքներում, իսկ 667-ը՝ գյուղական համայնքներում: Ընտրված 704 համայնքի ղեկավարներից 555-ը (ընտրվածների 78,84 %-ը) վերընտրված է, իսկ 149-ը (ընտրվածների 21,16 %-ը)՝ նորընտիր:

ՀՀ մարզերում համայնքների ղեկավարների մեծ մասը՝ 70,8 %-ը, Հայաստանի հանրապետական կուսակցության ներկայացուցիչներ են: Համայնքների ղեկա-

¹² Մինչև 2011-ին «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի» ընդունումը համայնքի ավագանու անդամի և համայնքի ղեկավարի թեկնածուներ առաջադրվում էին միայն ինքնաառաջադրման սկզբունքով: Նոր Ընտրական օրենսգրքի ընդունումից հետո թեկնածուներ առաջադրելու իրավունք ստացան նաև կուսակցությունները:

վարների մեջ համեմատաբար մեծ թիվ են կազմում անկուսակցական և Բարգավաճ Հայաստան կուսակցության ներկայացուցիչները՝ համապատասխանաբար 13,9 % և 9,5 % (աղյուսակ 8):

**Աղյուսակ 7. 2012-ին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների թիվն ըստ մարզերի¹³
(26 դեկտեմբերի 2012 թ. դրությամբ)**

| Հ/հ | Մարզ | ՏԻՄ ընտրություններ անցկացրած համայնքների թիվը | Համայնքի ղեկավարի ընտրություններ անցկացրած համայնքների թիվը | Համայնքի ավագանու ընտրություններ անցկացրած համայնքների թիվը |
|-----|-----------------|---|---|---|
| 1 | Արագածոտն | 102 | 91 | 91 |
| 2 | Արարատ | 86 | 74 | 84 |
| 3 | Արմավիր | 93 | 76 | 91 |
| 4 | Գեղարքունիք | 67 | 57 | 50 |
| 5 | Լոռի | 99 | 95 | 96 |
| 6 | Կոտայք | 66 | 51 | 62 |
| 7 | Շիրակ | 115 | 94 | 102 |
| 8 | Սյունիք | 96 | 85 | 93 |
| 9 | Վայոց Ձոր | 36 | 31 | 36 |
| 10 | Տավուշ | 55 | 50 | 46 |
| | Ընդամենը | 815 | 704 | 751 |

Համայնքներում քիչ են իշխանափոխության դեպքերը: Այսպես, 2012 թ. հոկտեմբերի դրությամբ առաջին անգամ ընտրված համայնքի ղեկավարների թիվը կազմել է 21,7 %, երկրորդ անգամ ընտրվածներինը՝ 20,8 %, երրորդ անգամ ընտրվածներինը՝ 15,6 %, չորրորդ անգամ ընտրվածներինը՝ 13,1 %, հինգերորդ անգամ ընտրվածներինը՝ 13,2 %, իսկ վեցերորդ անգամ ընտրվածներինը՝ 15,6 %: Վերջին թիվը ցույց է տալիս, որ 142 համայնքի ղեկավարներ պաշտոնավարում են տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման պահից սկսած, և այդ համայնքներում տեղական ինքնակառավարման համակարգի գոյության անցած 16 տարիների ընթացքում իշխանափոխություն չի եղել¹⁴:

2012 թ. ՀՀ ընտրական օրենսգրքում կատարվել են երեք փոփոխություններ, որոնք, ըստ էության, տեղական ինքնակառավարման համակարգին չեն վերաբերում:

¹³ Աղբյուրը՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն, Տեղեկանք 2012 թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների վերաբերյալ (փետրվարի 12-ին, հունիսի 10-ին և 24-ին, հուլիսի 8-ին, օգոստոսի 5-ին և 26-ին, սեպտեմբերի 9-ին, 23-ին և 30-ին, հոկտեմբերի 14-ին և 28-ին, նոյեմբերի 4-ին և 18-ին, դեկտեմբերի 9-ին):

¹⁴ Աղբյուրը՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն, Ամփոփ տեղեկանք ՀՀ մարզերի համայնքի ղեկավարների վերաբերյալ

2012թ. ՀՀ կառավարության որոշումներով վաղաժամկետ դադարեցվել են 9 համայնքների ղեկավարների (2-ը քաղաքային, 7-ը գյուղական) և 5 համայնքների ավագանիների (բոլորը գյուղական) լիազորություններ: 6 համայնքների, այդ թվում 1 քաղաքային համայնքի, ղեկավարների լիազորությունները դադարեցվել են նրանց հրաժարական տալու, 2-ինը՝ մահվան և 1 քաղաքային համայնքինը՝ անհամատեղելի պաշտոն գրադեցնելու պատճառներով: Համայնքների ավագանիների լիազորությունները հիմնականում դադարեցվել են ավագանիների անդամների լիազորությունների դադարեցման պատճառով, որի արդյունքում ավագանիների թվաքանակը պակասել է օրենքով սահմանված թվաքանակի կեսից:

2012-ին, ինչպես և նախորդ տարիներին, չի գրանցվել համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու որևէ դեպք:

Աղյուսակ 8. Համայնքների ղեկավարների կուսակցական պատկանելությունը (2012 թ. հոկտեմբերի դրությամբ)¹⁵

| Հ/հ | Մարզ | Կուսակցություն | | | | | | | | |
|-----|-----------------|---|--|--------------------------------------|-----------------------------------|--|--|------------------------------|-------------------------------------|---------------|
| | | Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ) | Բարգավաճ Հայաստան կուսակցություն (ԲՀԿ) | Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀԶԴ) | Օրինաց Երկիր կուսակցություն (ՕԵԿ) | Հայաստանի Կոմունիստական կուսակցություն (ՀԿԿ) | Ժողովրդավարություն և Աշխատանք կուսակցություն (ԺԱԿ) | Հայոց Համագգային Ծափոմ (ՀՀԾ) | Ազգային Ինքնորոշում Միավորում (ԱԻՄ) | Անկուսակցական |
| 1 | Արագածոտն | 93 | 2 | 4 | 2 | - | - | - | - | 13 |
| 2 | Արարատ | 68 | 11 | 4 | - | - | - | - | - | 14 |
| 3 | Արմավիր | 80 | 1 | 4 | 1 | - | - | - | - | 10 |
| 4 | Գեղարքունիք | 58 | 12 | 2 | - | 1 | 1 | - | - | 19 |
| 5 | Կոտայք | 29 | 37 | 1 | - | - | - | - | - | - |
| 6 | Լոռի | 75 | 1 | 3 | - | 1 | - | - | - | 33 |
| 7 | Շիրակ | 72 | 8 | 10 | 10 | - | - | 1 | - | 18 |
| 8 | Սյունիք | 88 | 4 | 3 | - | - | - | - | - | 14 |
| 9 | Վայոց Ձոր | 33 | 7 | - | - | - | - | - | - | 4 |
| 10 | Տավուշ | 51 | 4 | 3 | 1 | - | - | - | 1 | 2 |
| | Ընդամենը | 647 | 87 | 34 | 14 | 2 | 1 | 1 | 1 | 127 |

¹⁵ Աղբյուրը՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն, Ամփոփ տեղեկանք ՀՀ մարզերի համայնքի ղեկավարների վերաբերյալ

ՏԻՄ-երի իրավասությունները և լիազորությունները

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն, 2012 թ. տարեվերջի դրությամբ համայնքների ավագանիներն ունեն թվով 34 իրավասություններ, իսկ համայնքների ղեկավարները՝ թվով 25 իրավասություններ:

Թվով 38 իրավասություններ ունի Երևանի ավագանին, իսկ քաղաքապետը՝ 18, որոնք սահմանված են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով ու լրացումներով համայնքի ղեկավարին տրվել են մի քանի նոր լիազորություններ, որոնք ներկայացված են սույն զեկույցի 1.1 կետում:

Ամփոփ կերպով կարելի է նշել, որ 2012 թվականի տարեվերջի դրությամբ համայնքի ղեկավարներին օրենքով վարապահված պարտադիր լիազորությունների թիվը կազմել է 62, պատվիրակված լիազորություններինը՝ 20, իսկ կամավոր լիազորություններինը՝ 23 (աղյուսակ 9):

Համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման կարգերի հետ կապված 2012թ. նկատվել են որոշ դրական տեղաշարժեր: ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. սեպտեմբերի 18-ի հրամանով հաստատվել են նախադպրոցական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական հագեցվածության նորմատիվները (փափուկ գույքի հագեցվածության նորմատիվները՝ ըստ նախադպրոցական ուսումնական հաստատությունների տեսակների և խմբերի): 2012թ. մարտի 21-ին ընդունվել են «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքը և դրա կիրարկումն ապահովող 4 իրավական ակտեր: Օրենքը կարգավորում է գրադարանների ստեղծման, գործունեության կազմակերպման և ֆինանսավորման հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է գրադարանների տեսակները, գործառույթները, գրադարանային հավաքածուների հաշվառման, համալրման, պահպանության և հանրային գրադարանի հավատարմագրման կարգը, գրադարանների և գրադարաններից օգտվողների իրավունքներն ու պարտականությունները և ապահովում գրադարանային գործի զարգացման իրավական հիմքերը:

Որոշումների կայացումը համայնքներում

2012 թ. ընթացքում համայնքների կողմից մարզպետարաններ են ներկայացվել ընդհանուր թվով 19511 որոշումներ: Այդ որոշումներից 4,9 %-ի (950 որոշումներ) մոտ հայտնաբերվել են անհամապատասխանություններ օրենքների և իրավական ակտերի հետ: Մարզպետարանների կողմից վերադարձված բոլոր որոշումները համայնքների կողմից համապատասխանեցվել են օրենքներին և իրավական ակտերին և սահմանված ժամկետներում ներկայացվել մարզպետարաններ: 2012-ին համայնքների կողմից ավագանու որոշումները մարզպետարան չներկայացնելու դեպքեր չեն եղել: 2012-ին, ինչպես և նախորդ տարի, ավագանու որոշումներն անվավեր ճանաչելու նպատակով մարզպետարանները դատական հայց չեն ներկայացրել (հավելված 1)¹⁶:

¹⁶ Աղբյուրը՝ www.mta.gov.am

Աղյուսակ 9. ՏԻՄ-երի լիազորությունների քանակական տվյալներն ըստ առանձին տեսակների և բնագավառների (2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)¹⁷

| Հ/հ | Բնագավառ | Պարտադիր լիազորություններ | | Պատվիրակված լիազորություններ | | Կամավոր լիազորություններ | |
|-----|---|---------------------------|---------------|------------------------------|---------------|--------------------------|---------------|
| | | ՀՀ այլ ՏԻՄ-եր | Երևանի ՏԻՄ-եր | ՀՀ այլ ՏԻՄ-եր | Երևանի ՏԻՄ-եր | ՀՀ այլ ՏԻՄ-եր | Երևանի ՏԻՄ-եր |
| 1 | Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն | 8 | 0 | 8 | 0 | 0 | 0 |
| 2 | Ֆինանսներ | 8 | 7 | 0 | 0 | 0 | 0 |
| 3 | Հասարակական կարգի պահպանություն | 0 | 4 | 2 | 0 | 0 | 0 |
| 4 | Պաշտպանության կազմակերպում | 3 | 3 | 0 | 0 | 3 | 3 |
| 5 | Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | 20 | 14 | 0 | 1 | 5 | 0 |
| 6 | Հողօգտագործում | 5 | 1 | 3 | 4 | 2 | 0 |
| 7 | Տրանսպորտ (և ճանապարհաշինություն) | 4 | 4 | 1 | 2 | 1 | 0 |
| 8 | Առևտուր և ծառայություններ (սպասարկում) | 9 | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| 9 | Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ | 1 | 2 | 1 | 1 | 5 | 3 |
| 10 | Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ | 1 | 3 | 0 | 4 | 3 | 3 |
| 11 | Աշխատանք և սոցիալական ծառայություն (սոցիալական պաշտպանություն) | 0 | 1 | 1 | 1 | 2 | 1 |
| 12 | Գյուղատնտեսություն | 2 | 0 | 2 | 4 | 2 | 0 |
| 13 | Բնության և շրջակա միջավայրի պահպանություն (բնապահպանություն) | 1 | 4 | 2 | 2 | 0 | 1 |
| 14 | Ավագանու հետ հարաբերություններ | 0 | 10 | 0 | 0 | 0 | 0 |
| 15 | Գործադիր իշխանության հանրապետական մարմինների և դրանց Երևանի տարածքային ծառայությունների հետ հարաբերություններ | 0 | 5 | 0 | 0 | 0 | 0 |
| 16 | Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ | 0 | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| 17 | Էլեկտրոնային հաղորդակցություն, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, գազամատակարարում | 0 | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| | Ընդամենը | 62 | 64 | 20 | 19 | 23 | 11 |

¹⁷ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում բերված ՏԻՄ-երի լիազորությունների բնագավառների անվանումները տարբերվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում բերված բնագավառների անվանումներից: Այն դեպքում, երբ այդ անվանումները շատ չեն տարբերվում, տարբերությունները նշվել են փակագծերում: Հակառակ դպքում դրանք ձևակերպվել են որպես առանձին բնագավառներ:

2012-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից իրավական հսկողություն է իրականացվել Երևանի ավագանու ընդունած 548 որոշումների նկատմամբ¹⁸: Համայնքի ավագանիները որոշումների ընդունման հարցում շարունակում են մնալ պասիվ դիրքերում:

Համայնքի ավագանիների գործունեությունը փորձել է գնահատել «Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպությունը (դիտարկվել են 100 գյուղական համայնքներ՝ յուրաքանչյուր մարզից 10-ական համայնք): Վերջինիս իրականացրած ՏԻՄ-երի գործունեության վարկանիշային գնահատմամբ, համայնքի ավագանու՝ համայնքի ղեկավարման գործընթացին մասնակցության և ակտիվության գնահատականը 2011թ. հոկտեմբեր – 2012 թ. մարտ և 2012թ. ապրիլ – 2012 թ. սեպտեմբեր ամիսների համար կազմել է համապատասխանաբար 6,4 և 6,5 միավոր (10 բալանոց սանդղակով)¹⁹:

Համայնքների ավագանիները ոչ բոլոր համայնքներում են ապահովված նորմալ գործունեության համար անհրաժեշտ պայմաններով: Համայնքների ավագանու աշխատանքները կազմակերպելու համար առանձնացված աշխատասենյակներ 2012թ. 1-ին եռամսյակի տվյալներով եղել են 640 համայնքներում, 2-րդ եռամսյակի տվյալներով՝ 646, 3-րդ եռամսյակի տվյալներով՝ 654 և 4-րդ եռամսյակի տվյալներով՝ 676 համայնքներում: Մարզային կտրվածքով դիտարկելիս կարելի է նկատել, որ Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի բոլոր համայնքներում առկա են այդպիսի աշխատասենյակներ: Ավագանու գործունեության համար առանձնացված աշխատասենյակ ունեցող համայնքների տեսակարար կշռի ամենացածր ցուցանիշը եղել է Արագածոտնի և Տավուշի մարզերում՝ 2012 թ. 4-րդ եռամսյակի տվյալներով կազմելով 43%: 4-րդ եռամսյակի տվյալներով մնան աշխատասենյակներ չունեցող բոլոր համայնքները գյուղական համայնքներ են, քաղաքային համայնքներում դրանք առկա են²⁰:

Ներդիր 2. Իջևան համայնքի բյուջեն չհաստատելու փորձ

Իջևանի ավագանու անդամների մի մասի կողմից ավագանու նիստերը բոյկոտելու և նիստին չներկայանալու պատճառով հնարավոր չէր լինում հաստատել Իջևան համայնքի 2012 թ. բյուջեն: 2012 թ. հունիսի 5-ին կայացել է Իջևան համայնքի ավագանու արտահերթ նիստ, որին մասնակցում էին ավագանու 7 անդամներ: Նիստի սկզբում վաղաժամկետ դադարեցվել են ավագանու 3 անդամների լիազորությունները՝ ավագանու նիստերի կեսից ավելիին անհարգելի բացակայելու պատճառով: Այդ կերպ ավագանու անդամների թիվը դարձել է 11, ապահովվել է քվորում և հաստատվել է բյուջեն:

Աղբյուրները՝ <http://news.am/arm/news/94875.html>, Իջևանի ավագանիի նիստերը պարբերաբար բոյկոտվում են, <http://www.aravot.am/2012/06/06/299004/>, Իջևանում «Սառույցը կտրվեց», հաստատվեց համայնքի 2012 թ. բյուջեն

¹⁸ Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2012 թ. գործունեության հաշվետվություն

¹⁹ Աղբյուրը՝ www.iyc.am, Վարկանիշային գնահատումը՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության դիտարկման անաչառ գործիք

²⁰ Աղբյուրը՝ www.mta.gov.am, Ամփոփ տեղեկանքներ 2012թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում ՀՀ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության վերաբերյալ

2012-ին ՀՀ մարզերում համայնքի ղեկավարների մոտ ընդունելության են մասնակցել 135633 քաղաքացիներ, իսկ ավագանու անդամների մոտ՝ 24219 քաղաքացիներ: Համայնքի ղեկավարների մոտ ընդունելության են մասնակցել ընդունելության դիմած քաղաքացիների 97,2%-ը, իսկ ավագանու անդամների մոտ՝ 96,6%-ը: 2012թ. տարբեր եռամսյակներում ընդունելություն կազմակերպած համայնքների թիվը տատանվել է 887-ից մինչև 897-ի սահմաններում: Արարատի, Արմավիրի, Շիրակի և Տավուշի մարզերի բոլոր համայնքները տարվա 4 եռամսյակների ընթացքում կազմակերպել են համայնքի բնակիչների ընդունելություններ: Մնացյալ մարզերի ոչ բոլոր համայնքներում են 2012թ. ընթացքում կազմակերպվել ընդունելություններ: Այդ առումով առավել ցածր ցուցանիշ գրանցվել է Լոռու մարզում, որտեղ ընդունելություն կազմակերպած համայնքների թիվը տարվա ընթացքում առավելագույնը կազմել է մարզի համայնքների թվի 86 %-ը (հավելված 2):

2012-ին Հայաստանում տեղական հանրաքվե չի անցկացվել:

2012թ. վարչական հսկողություն է իրականացվել ՀՀ մարզերի 288 համայնքներում: Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերել են «Տեղական ինքնակառավարման մասին», «Գնումների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Քաղաքաշինության մասին» և ՀՀ այլ օրենքների և ենթօրենսդրական ակտերի պահանջների չկատարմանը: ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից հսկողություն է սահմանվել արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ իրականացված աշխատանքների նկատմամբ²¹:

3.2 Քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 2013թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված են եղել քաղաքացիական հասարակության սուբյեկտներ հանդիսացող 3547 հասարակական կազմակերպություն, 742 հիմնադրամ, 693 արհեստակցական կազմակերպություն և 71 կուսակցություն²²:

Տեղական ինքնակառավարման ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն չկա: Ոլորտում գործող հասարակական կազմակերպություններից կարելի է նշել Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ), Հայաստանի ավագանիների ասոցիացիան (ՀԱԱ), Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնը, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը: Տեղական ինքնակառավարման ոլորտում գործող կազմակերպություններ են նաև բոլոր 25 համայնքների միությունները²³ (իրավաբանական անձանց միություններ) և «Ուրբան» հիմնադրա-

²¹ Աղյուսը՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարարության 2012 թ. գործունեության հաշվետվություն

²² Աղբյուրը՝ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն

²³ Տես՝ աղյուսակ 5:

մը: 2012-ին հիմնադրվել է «Համայնքային իրավաբանների միավորում» ՀԿ-ն՝ համայնքային իրավաբանների շահերը համատեղ ուժերով պաշտպանելու, լավագույն փորձը փոխանակելու, տեղական ինքնակառավարման օրենսդրության բարելավմանն ուղղված առաջարկներ ներկայացնելու նպատակով²⁴:

«Ֆրիդոմ Հաուս» իրավապաշտպան կազմակերպության զեկույցի համաձայն, Հայաստանի ժողովրդավարության առաջընթացի գնահատականը նախորդ տարվա համեմատ փոքր ինչ բարձրացել է՝ 2012թ. կազմելով 5,39 միավոր (գնահատականները տրված են 7 բալանոց սանդղակով, որտեղ ամենալավ ցուցանիշը 1-ն է, իսկ ամենավատը՝ 7-ը): «Տեղական ժողովրդավարական կառավարում» և «Քաղաքացիական հասարակություն» բաժինների գնահատականները նախորդ տարվա համեմատ մնացել են նույնը՝ կազմելով համապատասխանաբար 5,75 և 3,75 միավոր²⁵:

Քաղաքացիական հասարակության սուբյեկտները և ՏԻՄ-երը հարաբերվում են տեխնիկական աջակցության, ծառայությունների մատուցման, շահերի պաշտպանության և այլ բնագավառներում: Այս բնագավառներում ՏԻՄ-երը հարաբերակա-նորեն ակտիվ գործընկերային հարաբերությունների մեջ են գտնվում հասարակական կազմակերպությունների հետ: Սակայն այդ հարաբերությունները հաճախ սահմանափակվում են ՀԿ-ների կողմից իրականացվող դրամաշնորհային ծրագրերով և ոչ միշտ են շարունակական բնույթ ունենում: Քաղաքացիական հասարակության որոշ սուբյեկտներ ստեղծվում են համայնքների աշխատակազմերի կամ ՏԻՄ-երի ներկայացուցիչների ակտիվ նախաձեռնությամբ և մասնակցությամբ: Որպես օրինակ են արդեն գործող ՀՖՄ-ն, ՀԱԱ-ն և այլն, կամ 2012թ. ստեղծված Համայնքային իրավաբանների միավորումը: Քաղաքացիական հասարակության որոշ սուբյեկտներ, օրինակ, համայնքների միությունները, ՏԻՄ-երի հետ հարաբերվում են ծառայությունների մատուցման բնագավառում: Որպես այդպիսի օրինակ է 2012թ. ստեղծված Ախուրյանի համայնքների միությունը:

ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ տեղեկատվության մասշտիբությունը

Տարեցտարի ավելանում է պաշտոնական ինտերնետային կայքեր ունեցող համայնքների թիվը: Սակայն չկա պաշտոնական տեղեկատվություն, թե 2012թ. քանի համայնքի կայք է ստեղծվել և 2012 թ. տարեվերջի դրությամբ քանի գործող կայքեր կան:

Համաձայն ՀՀ մարզերում համայնքների բյուջեների հրապարակայնության տվյալների, 2012 թ. համայնքների բյուջեների ցուցանիշները ցուցատախտակներում և այլ տեսանելի վայրերում տեղադրել են գրեթե բոլոր համայնքները: Այդ ցուցանիշները հեռուստատեսությամբ հեռարձակող և թերթերում տպագրող

²⁴ Աղբյուրը՝ <http://program.counterpart.org/Armenia/>, Նորաստեղծ «Համայնքային իրավաբանների միավորումը» որպես փոխհամագործակցության և կարողությունների զարգացման հարթակ

²⁵ Աղբյուրը՝ www.freedomhouse.org, Nations in Transit 2012

համայնքների թիվը տարբեր եռամսյակներում կազմել է համայնքների ընդհանուր թվի մոտավորապես 7-12%-ը, իսկ ինտերնետային կայք էջերում տեղադրել է համայնքների մոտավորապես կեսը (հավելված 3):

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի կողմից 2012թ. անց կացված տեղեկատվության ազատության հերթական մրցանակաբաշխության արդյունքներով, «ոսկե բանալին» և «Ժանգոտ կողպեքը» բաժին չեն հասել տեղական ինքնակառավարման մարմիններին²⁶:

2012թ. Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի կողմից հրապարակված «սև ցուցակում» ՏԻՄ-երի ներկայացուցիչներից ընդգրկվել են Վանաձորի և Վարդենիսի քաղաքապետերը²⁷:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում 2012թ. կատարված լրացման համաձայն, քաղաքապետը ավագանու նիստի ժամանակի վերաբերյալ տեղեկությունը՝ կցելով նաև օրակարգի նախագիծը, ի թիվս օրենքում արդեն իսկ նշված վայրերի, պետք է հրապարակի նաև <http://www.azdarrar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

«Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպության իրականացրած տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վարկանիշային գնահատմամբ համայնքի ղեկավարի և ավագանու կողմից ընդունված որոշումների թափանցիկության և գործունեության հրապարակայնության գնահատականը 2011թ. հոկտեմբեր – 2012թ. մարտ և 2012թ. ապրիլ – 2012թ. սեպտեմբեր ամիսների համար կազմել է համապատասխանաբար 6,2 և 6,4 միավոր (10 բալանոց սանդղակով)²⁸:

²⁶ Աղբյուրը՝ www.foi.am

²⁷ Աղբյուրը՝ www.foi.am

²⁸ Աղբյուրը՝ www.iyc.am , Վարկանիշային գնահատումը՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության դիտարկման անաչառ գործիք

ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ դիմում-բողոքները

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության տարեկան զեկուցում տեղեկատվություն կա միայն Երևանի քաղաքապետարանի գործունեության վերաբերյալ 2012թ. ստացված դիմում-բողոքների մասին (սակայն զեկույցում նշված է, որ ներկայացված խնդիրներն ու թերությունները հիմնականում վերաբերելի են նաև մյուս բոլոր ՏԻՄ-երին): Բնակչության դիմում-բողոքները վերաբերել են հողի կադաստրային արժեքի վերաբերյալ գործնականում հանդիպող ոչ իրավաչափ գործողություններին, ինքնակամ շինարարություններին, մի շարք մանկապարտեզներում առկա խմբերի երեխաների թիվը՝ նախատեսված քանակը գերազանցելուն և այլն: Երևանի վարչական շրջաններում և քաղաքապետարանում գործող «թեժ գիծ» ծառայությունը 2012թ. ընթացքում ստացել է շուրջ 2160 ահազանգ: Բողոքների գերակշիռ մասը վերաբերել է կոմունալ-կենցաղային հարցերին²⁹:

Իրավապաշտպան կազմակերպություններից Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների դիմումները հիմնականում վերաբերել են տեղեկատվություն ստանալուն: 2012թ. կազմակերպության կողմից 17 քաղաքացու գործով տեղեկատվություն ստանալու հարցումներ են ներկայացվել Վանաձոր համայնքի ղեկավարին, որոնց վերաբերյալ ստացվել են համապատասխան պատասխաններ³⁰:

²⁹ Աղբյուրը՝ 2012 թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց

³⁰ Աղբյուրը՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

4. Համայնքների սեփականությունը, զարգացման ծրագրերը և ֆինանսական անկախությունը

ՀՀ օրենսդրությունը (ՀՀ Սահմանադրություն, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք) համայնքներին վերապահել է սեփականություն ունենալու իրավունք և այն ինքնուրույն տնօրինելու իրավասություն: Համայնքի սեփականություն կարող են լինել համայնքի տարածքում գտնվող մանկապարտեզները, ջրմուղ-կոյուղու, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և այլ կոմունալ տնտեսության համակարգերը, փողոցները, հրապարակները, կամուրջները, վարչական շենքերը, կրթական, մշակութային, մարզական և այլ օբյեկտներն ու շինությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, տրանսպորտային միջոցները և այլ անշարժ ու շարժական գույքը:

2012թ.-ին համայնքների սեփականության և ֆինանսների վերաբերյալ օրենսդրական դաշտում էական փոփոխություններ չեն եղել: Մեկական փոփոխություններ են կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում՝ Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ օրենքում փոփոխություն կատարելու մասին: Մեկ լրացում է կատարվել «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում, ըստ որի գույքահարկի վճարման գծով խախտումներ հայտնաբերելու դեպքում գույքահարկի գծով հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը կատարելուց հետո անցել է տասը տարի: Ընդունվել է «Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին» ՀՀ օրենքը, որով մի շարք արտոնություններ են տրամադրվել բնակիչներին նախկինում չվճարված հողի հարկի և գույքահարկի մասով:

4.1 Համայնքների սեփականությունը

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2012թ. համայնքների սեփականության համալրման հիմնական աղբյուր են հանդիսացել համայնքների կողմից կատարված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (աղյուսակ 10): Այդ ծախսերի ծավալը 2012թ. կազմել է 24573.4 մլն ՀՀ դրամ, նախորդ տարվա 25764.2 մլն-ի փոխարեն, նվազելով 4.6%-ով: Նշված ծախսերի հիմնական մասը՝ 99.8%-ը, ինչպես նախորդ տարիներին (2010թ.՝ 99.8%, 2011թ.՝ 99.7%) կազմում են հիմնական միջոցների գծով ծախսերը, իսկ նրանց կազմում շենքերի և շինությունների բաժինը մնում է բարձր՝ 90.8% (2010թ.՝ 89.3%, 2011թ.՝ 89.6%): 2012թ. մոտ երկու անգամ նվազել են շենքերի և շինությունների կառուցման ծախսերը, թե գումարային՝ 4556.4 մլն ՀՀ դրամ (2010թ.՝ 7893.8մլն, 2011թ.՝ 8735.9մլն), թե տեսակարար կշռով՝ 18.5% (2010թ.՝ 32.7%, 2011թ.՝ 33.9%):

Աղյուսակ 10. ՀՀ համայնքների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2010-2012թթ. (մլն ՀՀ դրամ)

| Տող | Բովանդակություն | 2010թ. | | 2011թ. | | 2012թ. | |
|------|---|----------|----------------|----------|----------------|----------|----------------|
| | | Գու-մարը | Տես. կշիռը (%) | Գու-մարը | Տես. կշիռը (%) | Գու-մարը | Տես. կշիռը (%) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 5000 | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱՆՍԵՐ | 24162.3 | 100 | 25764.2 | 100 | 24573.4 | 100 |
| 5100 | այդ թվում՝ 1.Հիմնական միջոցներ | 24109.0 | 99.8 | 25683.9 | 99.7 | 24520.3 | 99.8 |
| 5110 | այդ թվում՝ Շենքեր և շինություններ | 21570.8 | 89.3 | 23012.9 | 89.3 | 22301.8 | 90.8 |
| 5111 | որից՝ -Շենքերի և շինությունների ձեռքբերում | 54.7 | 0.2 | 29.1 | 0.1 | 147.5 | 0.6 |
| 5112 | -Շենքերի և շինությունների կառուցում | 7893.8 | 32.7 | 8735.9 | 33.9 | 4556.4 | 18.5 |
| 5113 | -Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 13622.3 | 56.4 | 14247.9 | 61.9 | 17597.9 | 71.6 |
| 5120 | Սեբեմաներ և սարքավորումներ | 1789.5 | 7.4 | 1855.7 | 7.2 | 1647.2 | 6.7 |
| 5121 | որից՝ -Տրանսպորտային սարքավորումներ | 595.8 | 2.5 | 845.2 | 3.3 | 586.0 | 2.4 |
| 5122 | -Վարչական սարքավորումներ | 854.1 | 3.5 | 566.8 | 2.2 | 678.3 | 2.8 |
| 5123 | -Այլ մեքենաներ և սարքավորումներ | 339.6 | 1.4 | 443.7 | 1.7 | 382.9 | 1.6 |
| 5130 | Այլ հիմնական միջոցներ | 748.7 | 3.1 | 815.3 | 3.2 | 571.3 | 2.3 |
| 5200 | 1.2.Պաշարներ | 30.1 | 0.1 | 56.4 | 0.2 | 45.2 | 0.2 |
| 5300 | 1.3.Բարձրարժեք ակտիվներ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 5400 | 1.4.Չարտադրված ակտիվներ | 23.2 | 0.1 | 24.0 | 0.1 | 7.9 | 0.0 |
| 5411 | Այդ թվում՝ -Հող | 23.2 | 0.1 | 24.0 | 0.1 | 7.9 | 0.0 |

Շարունակել են աճել շենքերի և շինությունների կապիտալ նորոգման ծախսերը՝ ինչպես գումարային արտահայտությամբ՝ 17597.9 մլն (2010թ.՝ 13622,3 մլն, 2011թ.՝ 14247.9), այնպես էլ տեսակարար կշռով՝ 71.6% (2010թ.՝ 56.4%, 2011թ.՝ 61.9%): Չնայած նրան, որ նախորդ տարվա (2011թ՝ 29.1 մլն) համեմատ 2012թ. (147.5 մլն) մոտ հինգ անգամ աճել են շենքերի և շինությունների ձեռք բերման ծախսերը, շարունակում է շատ փոքր մնալ նրա տեսակարար կշիռը՝ 0.6%: Նվազել է մեքենաների և սարքավորումների բաժինը՝ 6.7%, նախորդ տարվա 7.2%-ի փոխարեն, նվազելով մաս գումարային արտահայտությամբ: Չնչին են մնում պաշարների և չարտադրված ակտիվների վրա կատարված ծախսերը՝ 0.2%:

2012թ. ընթացքում կառավարության մի շարք որոշումներով՝ գույք է նվիրաբերվել համայնքներին, փոխվել է հողերի նպատակային նշանակությունը, բացառիկ գերակա հանրային շահ է ճանաչվել և օտարման պահանջ է ներկայացվել մի շարք հողամասերի նկատմամբ, այդ թվում համայնքային սեփականության³¹:

Համաձայն գործող օրենսդրության, համայնքային ենթակայության ներքո գործող կազմակերպություններ կարող են լինել՝ բյուջետային հիմնարկները, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք ամբողջությամբ պատկանում են համայնքին և առևտրային կազմակերպությունները, որոնցում մասնակի սեփականատեր է համայնքը: Մեկ այլ օրենքով (Քաղաքցիական օրենսգրքի 72-րդ հոդված) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք չունեն հանդես գալ որպես տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների մասնակիցներ: Այդ հակասությունը առ այսօր չի վերացվել:

2012թ. ընթացքում գրանցվել են 67 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ (ՀՈԱԿ), իսկ տարվա վերջին նրանց թիվը կազմել է 1132: 100% համայնքային սեփականությամբ բաժնետոմսերով առևտրային իրավաբանական անձանց թիվը կազմել է՝ 427, իսկ պետություն-համայնք մասնակցությամբ առևտրա-

³¹ ՀՀ կառավարության 02.02.2012թ. 108-Ա որոշումը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից 410884,5 հազ. դրամ արժեքով լուսավորության ցանցեր նվիրաբերելու մասին, 02.02.2012թ. 109-Ա որոշումը պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացված և Գեղարքունիքի մարզի Նորատուսի գյուղական համայնքի ֆոնդային բյուջե մուտքագրված 30849.3 հազ. դրամ գումարը ուղղել համայնքի փողոցների հիմնանորոգման և գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների իրականացմանը, 17.05.2012թ. 626-Ա որոշումը 812.4 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով «Ջիլի լճի ջրամբար» ոռոգման համակարգը նվիրաբերել Սյունիքի մարզի Վերինշենի գյուղական համայնքին, 14.06.2012թ. 744-Ա որոշումը Շիրակի մարզի Գետքի գյուղական համայնքին Աճի N1 1013,4 քառ. մետր մակերեսով պոմպակայանը նվիրաբերելու մասին, 02.09.2012թ. 134-Ա որոշումը մի շարք գյուղական համայնքների 6188.5 հազ. դրամի համակարգչային տեխնիկա նվիրատվության կարգով գույք հանձնելու մասին, 06.09.2012թ. 1118-Ա որոշումը Գեղարքունիքի մարզի Սոթքի միջնակարգ դպրոցի մասնաշենքը՝ 1206 քառ. մետր ընդհանուր մակերեսով, 3075.3 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով և 0.11738 հեկտար հողատարածքը նվիրաբերել Սոթքի գյուղական համայնքին՝ որպես մանկապարտեզ օգտագործելու պայմանով, 10.10.2012թ. 1269-Ա որոշմամբ Գոգոլի 2 հասցեում գտնվող շենքերը, պարիսպը, լողավազանը և 0.3930 հեկտար հողատարածքը անհատույց սեփականության իրավունքով փոխանցել Երևանի քաղաքային համայնքին և այլն: Մի շարք որոշումներով փոխվել են հողերի նպատակային նշանակությունը՝ 09.02.2012թ. 123-ն և 124-Ն, 16.02.2012թ. 157-Ն և 159-Ն, 23.02.2012թ. 196-Ն և 209-Ն որոշումները և այլն: 18.10.2012թ. 1325-Ն որոշումը Արագածոտնի մարզի Դավթաշենի, Եղնիկի, Կաթնաղբյուրի, Ներքին Սասնաշենի, Վերին Սասնաշենի գյուղական համայնքների հողերի օտարմանը համաձայնություն տալու մասին: 19.07.2012թ. 953-Ն որոշումը Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին: 27.08.2012թ. 1236-Ա որոշումը Կոնդ թաղամասում որոշ տարածքների նկատմամբ գերակա հանրային շահ ճանաչելու մասին և այլն:

յին իրավաբանական անձանց թիվը՝ 219:

Համայնքային սեփականության հիմնական մասը կառուցվել, կամ ձեռք է բերվել տասնամյակներ առաջ և անցած տարիների ընթացքում ենթարկվել է ֆիզիկական և բարոյական մաշվածության: Դժվարացել է նրանց թե պահպանումը, թե շահագործումը: Գույքի մեծ մասը վերանորոգման խիստ կարիք ունի, սակայն համայնքների միջոցները չեն բավարարում, իսկ չշահագործվող և մասամբ շահագործվող շենքերի վիճակը գնալով վատթարանում է: ՏԻՄ-երի մի մասն իր լիազորություններն իրականացնելու համար գույքի խիստ կարիք ունի, իսկ մի մասն էլ առկա հնարավորություններն օգտագործում է ոչ արդյունավետ:

Համայնքները հաճախ իրենց սեփականությունը հանդիսացող գույքի իրացումից ստացվող միջոցներով համալրում են ֆոնդային բյուջեն (աղյուսակ 11): 2012թ. նախորդ տարվա համեմատությամբ մոտ 3.5 անգամ, կամ 5470.0 մլն-ով նվազել են անշարժ գույքի իրացումից մուտքերը, իսկ հողի իրացումից մուտքերն ավելացել են 6.4%-ով, կամ 610.0մլն-ով: Ընդհանուր առմամբ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը նվազել են 38.4%-ով, կամ 4864.6 մլն դրամով:

4.2 Համայնքների զարգացման ծրագիրը և բյուջեսավարումը

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածի, համայնքի ղեկավարը մշակում է համայնքի զարգացման քառամյա ծրագիրը և ներկայացնում է նորընտիր համայնքի ավագանու հաստատմանը՝ վերջինիս լիազորությունների ստանձնման օրվանից եռամսյա ժամկետում, իսկ համաձայն 54 հոդվածի, համայնքի բյուջեն կազմելիս և հաստատելիս հաշվի են առնվում համայնքի զարգացման քառամյա ծրագիրը և ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների իրականացումը:

Աղյուսակ 11. ՀՀ համայնքների ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը 2010 – 2012թթ. (մլն դրամ)

| Տող | Բովանդակություն | 2010թ. | 2011թ. | 2012թ. |
|------|--|---------|---------|---------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 6000 | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 17014.5 | 17485.9 | 12621.3 |
| 6100 | այդ թվում՝ Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | 6365,3 | 7877.0 | 2407.0 |
| 6110 | այդ թվում՝ Անշարժ գույքի իրացումից մուտքեր | 4905.0 | 7538.9 | 2167.4 |
| 6120 | Շարժական գույքի իրացումից մուտքեր | 0.0 | 0.3 | 2.3 |
| 6130 | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | 1460.3 | 337.8 | 237.3 |
| 6200 | Պաշարների իրացումից մուտքեր | 0.0 | 0.0 | 0.0 |
| 6300 | Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր | 1.0 | 9.6 | 5.0 |
| 6400 | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | 10648.2 | 9599.3 | 10209.3 |
| 6410 | այդ թվում՝ Հողի իրացումից մուտքեր | 10648.2 | 9599.3 | 10209.3 |

Համայնքի քառամյա զարգացման ծրագիրն այն հիմնական փաստաթղթերից է, որը հաստատվում է ավագանու կողմից: Հայաստանի գրեթե բոլոր համայնքներն ունեն քառամյա ծրագրեր, սակայն ոչ բոլոր համայնքներում է, որ դրանք լավ մշակված փաստաթղթեր են: Խոշոր համայնքներում (հատկապես քաղաքային), որտեղ առկա են համապատասխան միջոցներ և տեղեկատվական բազա, այդ ծրագրերը կազմվում են շատ թե քիչ իրատեսական և փորձում են կատարել դրանք: Փոքր համայնքներում, որտեղ չկան միջոցներ և համապատասխան մասնագետներ, զարգացման ծրագրերն ուղղակի ձևական բնույթ են կրում: Հաշվի առնելով, որ օրենքով համայնքները պարտավորված չեն ամեն տարի թարմացնել զարգացման քառամյա ծրագրերը, ուստի արդեն իսկ կազմածները հաճախ մնում են որպես ձևական փաստաթղթեր և բյուջեի կազմման ժամանակ որևէ դերակատարում չեն ունենում:

Համայնքները կարող են ընդգրկվել նաև պետական ծրագրերում, առաջարկությունների հայտ ներկայացնելով մարզպետարաններ:

Հայաստանի օրենսդրությունը հստակ սահմանում է համայնքի բյուջետային գործընթացը, նրա մասնակիցներին, ինչպես նաև գործողություններն ու ժամկետները: Համաձայն գործող օրենքի, համայնքի զարգացման ծրագիրը և տարեկան բյուջեն հաստատվելուց հետո հրապարակվում են: Համայնքի ղեկավարն ապահովում է բյուջեի կատարումը, իսկ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ավագանին: Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ բյուջեի ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում ավագանուն: Համայնքի ավագանին բյուջեի կատարման վերաբերյալ կարող է անցկացնել աուդիտ և իրավախախտումներ հայտնաբերելու դեպքում դիմել համապատասխան մարմիններին:

Բյուջետավարման վերաբերյալ 2012թ. ընթացքում օրենսդրական փոփոխություններ չեն կատարվել:

Համայնքների/հիմնականում գյուղական/ մի ստվար հատվածի կողմից բյուջետային գործընթացները դեռևս իրականացվում են թերի, ժամկետների և գործողությունների հերթականությունների խախտումներով, չեն ապահովվում այդ գործընթացի հրապարակայնությունն ու թափանցիկությունը, անտեսվում է բնակիչների մասնակցության կարևորությունը:

Գանձապետական համակարգի մասին ՀՀ օրենքով կարգավորվում և ապահովվում է ՀՀ և համայնքների ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արդյունավետ կառավարման համակարգը՝ դրամական միջոցների կառավարումը, ակտիվների ու պասիվների հաշվառումը, օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքների բյուջեների կատարման կազմակերպումը: Համայնքներին ամրագրված բոլոր միջոցները հաշվեգրվում են գանձապետական միասնական հաշվին, իսկ համայնքների կողմից բոլոր վճարումներն իրականացվում են գանձապետական միասնական հաշվից՝ լիազորված մարմնի սահմանված կարգով: Համայնքներին միայն մեկ դեպքում է թույլատրվում ունենալ բանկային հաշիվ առևտրային բանկերում՝ եթե հատուկ ծրագրերի իրականացման նպատակով մասնավոր անձանց կողմից նվիրատվության կարգով տրամադրված ֆինանսական միջոցներն այդ անձանց պահանջով պետական լիազորված մարմնի

համաձայնությամբ և համայնքի ավագանու որոշմամբ տեղադրվում է բանկում:

2011թ. ներդրվել է գանձապետական հաշիվների կառավարման (Client Treasury) էլեկտրոնային համակարգը, որը հնարավորություն է տալիս առանց բանկ այցելելու, օգտվելով միայն համացանցից, կատարել պետական տուրքի, տուգանքների, գույքային հարկերի և համայնքի բյուջեին ամրագրված առանձին վճարումներ: 2012թ. ընթացքում աշխատանքներ են տարվել Երևան համայնքի բյուջետային մուտքերի որոշ վճարումներ այդ համակարգով իրականացնելու համար:

4.3 Համայնքի բյուջեի եկամուսները

Հայաստանի համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտները 2012թ. կազմել են 95515.8 մլն դրամ, որը նախորդ տարվա (2011թ.՝ 87342.4 մլն դրամ) համեմատությամբ աճել է 8173.4 մլն դրամով, կամ 9.4%-ով, որը պայմանավորված է պաշտոնական դրամաշնորհների՝ 6353.9 մլն դրամով, փոխադրամիջոցներից գույքային հարկերի՝ 554.0 մլն դրամով, տեղական տուրքերի՝ 476.5 մլն դրամով, այլ եկամուտների՝ 1335.7 մլն դրամով աճով (աղյուսակ 12): 2393.3 մլն դրամով ավելացել են նաև վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը: Չնայած արձանագրված ընդհանուր աճին, նվազել են՝ անշարժ գույքի (այդ թվում հողի) գույքահարկը (470 մլն դրամով), պետական տուրքերը (76.7 մլն դրամով), պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները (1864.6 մլն դրամով): Այլ գործոնների ազդեցությունն աննշան է:

Համաձայն 21.03.2012թ. ընդունված «Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին» ՀՀ օրենքի, հողի հարկ և գույքահարկ վճարող անձինք ազատվում են 2008թ. հունվարի 1-ին նախորդող ժամանակաշրջանների համար չվճարված գույքահարկից և հողի հարկից, ինչպես նաև՝ հաշվարկված տույժերից և տուգանքներից: Օրենքը սահմանում է նաև մի շարք արտոնություններ, այդ թվում ժամանակին չվճարված գույքահարկի և հողի հարկի մասով հաշվարկված և չվճարված տույժերի մասով (ընդհուպ ազատվում են տույժերի վճարումից), եթե մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ չվճարված գումարների վճարումն ապահովելու նպատակով իրենց հաշվառվող մարմինների հետ կնքել են պայմանագրեր՝ վճարման ժամանակացույցով:

ՀՀ համայնքների բյուջեների մեջ զգալի է մնում Երևան համայնքի բաժինը: 2012թ. ՀՀ համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների մեջ Երևանի բյուջեի տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 1.3%-ով՝ կազմելով 59.9%, այդ թվում՝ հարկեր և տուրքեր՝ 56.7%, պաշտոնական դրամաշնորհներ՝ 48.2%, իսկ պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների գծով՝ 99% (աղյուսակ 13.): Մեծ է նաև Երևան համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր ֆոն-

դային բյուջեների եկամուտների մեջ՝ 71.5%, այդ թվում պաշտոնական դրամաշնորհներ՝ 60.1%, այլ եկամուտներ՝ 76.2%, որից վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը՝ 79.0%:

Համայնքների սեփական եկամուտները 2012թ. կազմել են 28892.6 մլն դրամ, կամ ամբողջ եկամուտների 30.2%-ը, նախորդ՝ 2011թ. 25208.5 մլն դրամի, կամ 28.9%-ի փոխարեն: Չնայած նախորդ տարիների համեմատ որոշակի աճին, Հայաստանում համայնքները մնում են պաշտոնական դրամաշնորհներից մեծապես կախված:

Աղյուսակ 12. ՀՀ համայնքների բյուջեների եկամուտները և նրանց տեսակարար կշիռները 2010-2012թթ. (մլն ՀՀ դրամ)

| Տող | Եկամտատեսակները | 2010թ. | | 2011թ. | | 2012թ. | |
|------|--|----------------|--------------------|----------------|--------------------|----------------|--------------------|
| | | Գումարը | Կշիռը ընդհ. մեջ(%) | Գումարը | Կշիռը ընդհ. մեջ(%) | Գումարը | Կշիռը ընդհ. մեջ(%) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ | 84933.8 | 100 | 87342.4 | 100 | 95515.8 | 100 |
| 1100 | այդ թվում՝ 1. Հարկեր և Տուրքեր | 18913.5 | 22,3 | 19550.7 | 22,4 | 20034.5 | 21,0 |
| 1110 | այդ թվում՝ 1.1. Գույքային հարկեր անշարժ գույքից/ այդ թվում հողի հարկ/ | 8532.4 | 10,0 | 10006.4 | 11,5 | 9536.4 | 10,0 |
| 1121 | 1.2. Գույքային հարկեր փոխադրամիջոցներից | 7303.1 | 8,6 | 6207.7 | 7,1 | 6761.7 | 7,1 |
| 1131 | 1.3. Տեղական տուրքեր | 2296.4 | 2,7 | 2544.4 | 2,9 | 3020.9 | 3,2 |
| 1151 | 1.4. Պետական տուրքեր | 780.5 | 1,0 | 791.8 | 0,9 | 715.1 | 0,7 |
| 1160 | 1.5. Այլ հարկային եկամուտներ | 1.1 | 0 | 0,4 | 0 | 0,4 | 0 |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 39554.4 | 46,6 | 42445.8 | 48,6 | 48799.7 | 51,1 |
| 1300 | 3. ԱՅԼ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ | 26465.9 | 31,1 | 25345.9 | 29,0 | 26681.6 | 27,9 |
| 1342 | Այդ թվում՝ Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 21573.7 | 25,4 | 19688.1 | 22,5 | 17823.5 | 18,7 |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | 2464.3 | 2,9 | 2739.0 | 3,1 | 5132.3 | 5,4 |

2012թ. 2.3 անգամ ավելացել են համայնքների բյուջեների հանրագումարի ֆոնդային մասի եկամուտները (7510.4 մլն) 2011թ. (3296.0 մլն) համեմատությամբ, իսկ նրա տեսակարար կշիռը ավելացել է մոտ երկու անգամ՝ 7.9% (2011թ.՝ 3.8%): Նշված ցուցանիշների աճը պայմանավորված է պետական բյուջեից համայնքներին տրվող պաշտոնական դրամաշնորհների և վարչական բյուջեի պահուստային ֆոնդից կատարվող հատկացումների աճով:

Աղյուսակ 13. Երևանի բյուջեի եկամուտների (այդ թվում՝ ֆոնդային) տեսակարար կշիռը ՀՀ համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների կազմում 2012թ. (մլն դրամ)

| Տող | Եկամտահարկերը | Ընդամենը բյուջեների եկամուտները | | | Այդ թվում՝ ֆոնդային | | |
|------|--|---------------------------------|-------------------|----------------------------|----------------------|-------------------|----------------------------|
| | | Ընդամենը համայնքների | Այդ թվում՝ Երևանի | Երևանի տեսակարար կշիռը (%) | Ընդամենը համայնքների | Այդ թվում՝ Երևանի | Երևանի տեսակարար կշիռը (%) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 95515.8 | 57247.7 | 59,9 | 7510.4 | 5373.4 | 71,5 |
| 1100 | այդ թվում՝ 1. Հարկեր և Տուրքեր | 20034.5 | 11357.3 | 56,7 | X | X | X |
| 1110 | այդ թվում՝ 1.1. Գույքային հարկեր անշարժ գույքից/ այդ թվում հողի հարկ/ | 9536.4 | 4635.4 | 48,6 | X | X | X |
| 1121 | 1.2. Գույքային հարկեր փոխադրամիջոցներից | 6761.7 | 4014.5 | 59,4 | X | X | X |
| 1131 | 1.3. Տեղական տուրքեր | 3020.9 | 2316.6 | 76,7 | X | X | X |
| 1151 | 1.4. Պետական տուրքեր | 715.1 | 390.8 | 54,6 | X | X | X |
| 1160 | 1.5. Այլ հարկային եկամուտներ | 0.4 | 0.0 | 0,0 | X | X | X |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԱՇՆՈՐՀՆԵՐ | 48799.7 | 23514.4 | 48,2 | 2152.7 | 1292.7 | 60,1 |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 26681.6 | 22375.9 | 83,9 | 5357.7 | 4080.7 | 76,2 |
| 1342 | Այդ թվում՝ Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 17823.5 | 17648.8 | 99,0 | X | X | X |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | 5132.3 | 4054.7 | 79,0 | 5132.3 | 4054.7 | 79,0 |

Սեփական եկամուտների կազմում զգալի է մնում անշարժ գույքի/այդ թվում հողի հարկ/ և փոխադրամիջոցների գույքահարկի տեսակարար կշիռը: Դրանց տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ կազմել է՝ 17.1% (2011թ.՝ 18.6%): Անշարժ գույքի/այդ թվում հողի հարկ/ գույքահարկի տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.5%-ով, իսկ չնայած փոխադրամիջոցների գույքահարկի եկամուտների աճին, դրա տեսակարար կշիռը մնացել է նույնը՝ 7.1%: Աճել է նաև տեղական տուրքերի տեսակարար կշիռը՝ 2010-ի 2.7%-ից հասնելով 2012-ին՝ 3.4%-ի:

2012-ին որոշ փոփոխություններ են կատարվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում, մասնավորապես փոփոխվել են տեղական որոշ տուրքերի դրույքաչափերը կամ նոր տեղական տուրքեր են սահմանվել:

Այսպես, ՏԻՄ-երին լիազորություն է վերապահվել համայնքի տարածքում սեղմված բնական գազերի համար սահմանել տեղական տուրք, ինչպես նաև համայնքի տարածքում գործող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք է սահմանվել տվյալ տարվա համար՝ 30.000-60.000 դրամ³²:

Սահմանվել է նաև, որ ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը տվյալ տարվա համար կազմում է 50.000-100.000 դրամ, իսկ տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը տվյալ տարվա համար կազմում է 10.000-20.000 դրամ³³:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված փոփոխությամբ տեղական տուրք է սահմանվել համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար և համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար: Վերջինիս համար տեղական տուրքը սահմանվել է տարեկան 50.000-100.000 դրամ:

Նույն օրենքով փոփոխության է ենթարկվել նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը: Նախկինում գործող 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար սահմանված մինչև 70000 դրամ տեղական տուրքը փոխարինվել է 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր տարածք ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50.000 դրամ և 3000 քառակուսի մետրից ավելի տարածք ունեցող օբյեկտների համար՝ մինչև 100.000 դրամ: Փոփոխության է ենթարկվել ուճելից և ակոհոլային խմիչքների համար սահմանված տեղական տուրքի չափը: Նախկինում գործող յուրաքանչյուր օրվա համար 350 դրամը, փոխարինվել է յուրաքանչյուր օրվա համար 0-350 դրամ, բայց մեկ քառակուսի մետրի համար³⁴:

2012 թվականին նախորդ տարիների համեմատ ավելացել են պաշտոնական դրամաշնորհները, որի հիմնական մասը՝ 95,6%-ը, ինչպես նախորդ տարիներին

³² <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=78388>, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, ՀՕ-178-Ն, Ընդունված է սեպտեմբերի 11-ին:

³³ Նույն տեղում

³⁴ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80204>

(2011թ.՝ 99,4%-ը, 2010թ.՝ 95,9%-ը) կազմել են ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհները (աղյուսակ 14.):

Աղյուսակ 14. Համայնքների բյուջեների եկամուտների պաշտոնական դրամաշնորհները 2010-2012թթ.(մլն ՀՀ դրամ)

| 1 | 2 | 2010թ. | | 2011թ. | | 2012թ. | |
|------|---|---------|--------------------|---------|--------------------|---------|--------------------|
| | | Գումարը | Կշիռը ընդհ. մեջ(%) | Գումարը | Կշիռը ընդհ. մեջ(%) | Գումարը | Կշիռը ընդհ. մեջ(%) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1200 | 2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԱՇՆՈՐՀՆԵՐ | 39554.4 | 46,6 | 42445.8 | 48,6 | 48799.7 | 51,1 |
| 1210 | Այդ թվում՝ 2.1 Ընթացիկ արտաքին դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից | 0 | 0 | 0.7 | 0 | 4.2 | 0 |
| 1220 | 2.2 Կապիտալ արտաքին դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից | 4.6 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 1230 | 2.3 Ընթացիկ արտաքին դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմություններից | 4.8 | 0 | 0 | 0 | 1.7 | 0 |
| 1240 | 2.4 Կապիտալ արտաքին դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմություններից | 42.7 | 0,1 | 1.0 | 0 | 0 | 0 |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից | 37936.5 | 95,9 | 42170.2 | 99,4 | 46641.1 | 95,6 |
| 1251 | Որից՝ Ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 32421.8 | 82,0 | 32416.8 | 76,4 | 32435.5 | 66,5 |
| 1254 | Բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | 66.3 | 0,2 | 3014.1 | 7,1 | 7287.1 | 14,9 |
| 1257 | Գ) Պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիաներ | 5448.4 | 13,8 | 6739.3 | 15,9 | 6918.4 | 14,2 |
| 1260 | 2.6 Կապիտալ ներքին դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից | 1565.8 | 4,0 | 273.9 | 0,6 | 2152.7 | 4,4 |
| 1261 | Այդ թվում՝ Ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման սուբվենցիաներ | 1565.8 | 4,0 | 263.7 | 0,6 | 2148.2 | 4,4 |
| 1262 | Բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող դրամաշնորհներ | 0 | 0 | 10.2 | 0 | 4.5 | 0 |

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները էական փոփոխության չեն ենթարկվել, սակայն էականորեն նվազել է դրանց տեսակարար կշիռը պաշտոնական դրամաշնորհներում (2012թ՝ 66,5%, 2011թ՝ 76,4%, 2010թ՝ 82,0%): Կտրուկ ավելացել են պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաները (2012թ՝ 7287,1 մլն դրամ, 2011թ՝ 3014,1 մլն դրամ և 2010թ՝ 66,3 մլն դրամ), աճել է նաև դրանց տեսակարար կշիռը: Ավելացել են նաև սուբվենցիաները (2012թ՝ 6918,4 մլն դրամ, 2011թ՝ 6739,3 մլն դրամ, 2010թ՝ 5448,4 մլն դրամ): Նախորդ տարվա համեմատ զգալիորեն ավելացել են պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները (սուբվենցիաները) (2012թ՝ 2148,2 մլն դրամ, 2011թ՝ 263,7 մլն դրամ, 2010թ՝ 1565,8 մլն դրամ):

Նվազել է նաև այլ եկամուտների տեսակարար կշիռը՝ 27.9% (2010թ՝ 31.1%, 2011թ՝ 29%), որի զգալի մասը, ինչպես նախորդ տարիներին կազմում են պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացված միջոցները (26681.6 մլն դրամից՝ 17823.5 մլն դրամը):

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2012թ. այլ հարկատեսակներից (եկամտահարկ, շահութահարկ) համայնքներին մասհանումներ չեն կատարվել:

4.4 Պարսփ կառավարումը

Համայնքներին բյուջետային վարկերի, փոխատվությունների և երաշխավորագրերի տրամադրումն իրականացվում է համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» գործող օրենքների, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշումներով հաստատված կարգերի: Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի (հոդված 30) համայնքի ղեկավարը, ավագանու որոշմամբ, վարչական բյուջեով նախատեսված ծախսերը ժամանակին կատարելու նպատակով համապատասխան պետական լիազորված մարմնի համաձայնությամբ կարող է ստանալ բյուջետային փոխատվություններ, կամ համայնքի սոցիալական ենթակառուցվածքները զարգացնելու նպատակով ներդրումներ կատարելու համար կարող է վարկ ստանալու պայմանագիր կնքել կամ թողարկել համայնքային արժեթղթեր, այն պայմանով, որ յուրաքանչյուր բյուջետային տարում վարկի և արժեթղթերի մարման ծրագրով նախատեսված տարեկան գումարը՝ մայր գումարի և տոկոսագումարների հանրագումարը չի գերազանցի համայնքի բյուջեի համապատասխան տարվա ֆոնդային մասի եկամուտների 20%-ը: Նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն համայնքներին բյուջետային փոխատվությունները տրվում են վեց ամսից ոչ ավելի տևողությամբ և փոխառուների կողմից ենթակա են վերադարձման մույն բյուջետային տարում:

Փոխատվությունները կարող են ստացվել ինչպես պետական բյուջեից, այնպես էլ այլ համայնքների բյուջեներից: Հարկ է նշել, որ սահմանափակ են համայնքի բյուջեից փոխատվություններ տալու իրավունքը և այն տրամադրվում է բացառիկ դեպքերում:

Համայնքի բյուջեի պակասորդը 01.01.2013թ. դրությամբ փաստացի կազմել է 1939.1 մլն դրամ, որից վարչական բյուջեի մասով հավելուրդը՝ 2526.6 մլն դրամ, իսկ ֆոնդային բյուջեի մասով պակասորդը՝ -4465.7 մլն. դրամ: Բյուջեի պակասորդը ֆինանսավորվել է հիմնականում ի հաշիվ բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդների: 2012թ. ընթացքում համայնքները ստացել են 2.4 մլն. ՀՀ դրամի վարկեր, որոնք ամբողջությամբ մարվել են, իսկ փոխատվություններ չեն տրամադրվել և չեն ստացվել: Մարվել են նախկինում ստացված վարկերից 5.7 մլն.՝ այդ թվում պետական բյուջեին՝ 3.9 մլն., այլ աղբյուրներից՝ 1.8 մլն. ՀՀ դրամ:

ՏԻՄ-երի կողմից պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու կարգ դեռևս չի սահմանվել, բնականաբար համայնքները 2012թ. ևս պարտատոմսեր չեն թողարկել:

4.5 Ֆինանսական հաշվետվողականությունը

ՀՀ օրենսդրությունը («Տեղական ինքնակառավարման մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներ) հստակ սահմանում է համայնքի բյուջեի կատարման մասին հաշվետվությունների և հաղորդումների ներկայացման կարգը և ժամկետները:

Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը, եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն և համապատասխան մարզպետին (Երևանում՝ ավագանուն և ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը): Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը, որը ավագանու նիստում քննարկվում և հաստատվում է աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ՝ մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը: Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը կազմվում է օրենքի պահանջներին համապատասխան, պետական լիազորված մարմնի կողմից սահմանված ձևով և ներառում է տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի մուտքերի և ելքերի հիմնավորվածության, պահուստային ֆոնդից կատարած ծախսերի ուղղությունների և չափերի, պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ և այլ տվյալներ: Համայնքի ղեկավարը, ավագանու կողմից համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն հաստատելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, այն ներկայացնում է համապատասխան մարզպետին: Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում են Վերահսկիչ պալատը և ՀՀ կառավարությունը:

Համայնքների բյուջեների հրապարակայնությունն ապահովելու համար համայնքի բյուջեի մասին որոշման նախագիծը համայնքի ավագանուն ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում («ՀՀ

բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 36): Բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո մեկ ամսվա ընթացքում հրապարակվում է տեղեկատվություն համայնքի բյուջեի եռամսյակային կատարման մասին, իսկ տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում: Հարկ է նշել, որ օրենքի այդ պահանջները տարբեր պատճառներով հաճախ չեն կատարվում: Հատկապես փոքր գյուղական համայնքների մեծ մասը չեն հրապարակում ոչ միայն հաշվետվությունները, այլև բյուջեները:

2010թ. դեկտեմբերի 22-ին ընդունված «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով մեկնարկել է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի ներդրման աշխատանքների սկիզբը, որն իրականացվելու է փուլային եղանակով: ՀՀ կառավարության 11.08.2011թ. N1233-Ն որոշման 3-րդ հավելվածով հաստատված ժամանակացույցի համաձայն 2012թ. ապրիլի 1-ից ներքին աուդիտը ներդրվել է պետական կառավարման մարմիններում և ՏԻՄ-երից առայժմ միայն Երևանի քաղաքապետարանում: Նույն որոշմամբ հաստատվել են ներքին աուդիտի մասնագիտական ստանդարտները և վարքագծի կանոնները:

Համայնքների մի ստվար մասը դեռևս չի անցկացնում ներքին աուդիտ: Նրանց թիվն ավելի մեծ է հատկապես փոքրաթիվ բնակչություն ունեցող գյուղական համայնքներում, որոնցից շատերը դեռևս չունեն աուդիտորի հաստիք:

Դեռևս շատ քիչ է արտաքին աուդիտ անցկացնող համայնքների թիվը, հիմնականում պայմանավորված ֆինանսական սուղ միջոցներով:

5. ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքի ֆինանսական միջոցների համադրասասխանությունը

Համաձայն Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի, համայնքների ֆինանսական միջոցները պետք է համաչափ լինեն սահմանադրությամբ կամ օրենքով նրանց տրված լիազորություններին³⁵: Այդ դրույթն իր արտացոլումն է գտել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, որպես տեղական ինքնակառավարման սկզբունքներից մեկը՝ համայնքներին օրենքով վերապահված լիազորությունների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համապատասխանությունը:

Հիմնվելով ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքի ֆինանսական միջոցների համապատասխանության գնահատման բնագավառում միջազգային փորձի վրա, «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ կողմից նախկինում ընտրվել և 2004-2011թթ. համար գնահատման են ենթարկվել մի շարք ֆինանսական ցուցանիշներ³⁶: Ստորև բերվում են նույն ֆինանսական ցուցանիշների գնահատման արդ-

³⁵ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, հոդված 9, կետ 2:

³⁶ Տես Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2004-2006թթ.), գիրք 2, Գ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տպագր., 2008, էջ 62-85: →

յունքները 2012թ. համար:

Տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռները տվյալ երկրի հանրային ծախսերում և համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ-ում) բնութագրում են այդ երկրում իշխանության ապակենտրոնացման աստիճանը³⁷: Եվրամիության երկրներում 2010 և 2011 թվականներին տեղական ինքնակառավարման բոլոր մակարդակների՝ տեղական (համայնքային) և տարածաշրջանային, բյուջեների ծախսերի տեսակարար կշիռների միջինը հանրային ծախսերում կազմել է համապատասխանաբար 2010թ.՝ 33.5%, և 2011թ.՝ 34.0%, իսկ ՀՆԱ-ում՝ համապատասխանաբար 2010թ.՝ 17.0%, և 2011թ.՝ 16.7% (աղյուսակ 15):

Եվրամիության երկրներում 2010 և 2011 թվականների միայն տեղական (համայնքային) բյուջեների ծախսերի տեսակարար կշիռների միջինը հանրային ծախսերում կազմել է համապատասխանաբար 2010թ.՝ 27.0% և 2011թ.՝ 24.3%, իսկ ՀՆԱ-ում՝ համապատասխանաբար 2010թ.՝ 13.6% և 2011թ.՝ 11.9%: Օրինակ, Գերմանիայի 2011թ. միայն տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռը հանրային ծախսերում կազմել է 17.5%, իսկ ՀՆԱ-ում՝ 8.5%, Իսպանիայինը՝ համապատասխանաբար 15.5% և 6.5%, Ավստրիայինը՝ համապատասխանաբար 16.0% և 8.0%, Բելգիայինը՝ համապատասխանաբար 12.5% և 7.5%:

ՀՀ համայնքների բյուջեների հանրագումարի տեսակարար կշիռը ՀՀ 2012թ. համախառն բյուջեում եկամուտների գծով կազմել է 9.8%, իսկ ծախսերի գծով՝ 9.4% (հավելված 4): Նախորդ տարվա համեմատ, 2012-ին այս ցուցանիշը եկամուտների գծով աճել է մոտ 0.2%-ով, իսկ ծախսերի գծով՝ մոտ 0.6%-ով: Սակայն, Հայաստանն այդ ցուցանիշներով դեռևս էականորեն զիջում է Եվրամիության երկրներին՝ մոտ 3.6 անգամ փոքր լինելով Եվրամիության երկրների միջին ցուցանիշից, և գերազանցում է միայն Հունաստանին, Կիպրոսին ու Մալթային (աղյուսակ 15):

Համայնքների բյուջեների ծախսերի հանրագումարի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում 2004-2009թթ. Հայաստանում տատանվել է 1.3-1.7%-ի սահմաններում, 2010-2011թթ. այն տատանվել է 2.3-2.4%-ի սահմաններում, իսկ 2012-ին այն կազմել է 2.45%³⁸: Վերջին ցուցանիշը մոտ 6.8 անգամ փոքր է Եվրամիության երկրների միջին ցուցանիշից և գերազանցում է միայն Կիպրոսի ու Մալթայի նույն ցուցանիշին (աղյուսակ 15):

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Հայաստանում ապակենտրոնացման աստիճանը դեռևս էականորեն ցածր է Եվրամիության երկրներում ապակենտրոնացման աստիճանից:

ՀՀ համայնքների 2012թ. բյուջեների ամփոփ եկամուտների և ծախսերի փաս-

← Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2007 և 2008թթ.), գիրք 3, Գ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2009, էջ 26-31, 95-99:

Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009 և 2010թթ.), գիրք 4, Գ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2011, էջ 33-47, 127-138

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2011թ.), գիրք 5, Գ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2012, էջ 32-46:

³⁷ Հայաստանում հանրային ծախսերի տակ դիտարկվում են ՀՀ համախառն բյուջեի ծախսերը, իսկ ՀՆԱ-ի տակ դիտարկվում է անվանական ՀՆԱ-ն:

³⁸ Հայաստանի 2012թ. տարեկան անվանական ՀՆԱ-ն ընթացիկ գներով կազմել է 3,981.5 մլրդ դրամ, աղբյուրը՝ www.minfin.am

տացի կատարողականները տարեկան հաստատված պլանի նկատմամբ զգալիորեն բարձր են, քան **տարեկան ճշտված պլանի նկատմամբ** (աղյուսակ 16): Այսպես, եկամուտների գծով ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևան քաղաքի) 2012թ. բյուջեների կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 94.2%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 89.5%: Ծախսերի գծով՝ ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևան քաղաքի) 2012թ. բյուջեների կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 92.3%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 85.4%: Սա նշանակում է, որ ՀՀ համայնքներում դեռևս կան որոշակի խնդիրներ՝ կապված բյուջեների եկամուտների և ծախսերի ճշգրիտ կանխատեսումների, պլանավորման և, հետագայում նաև, դրանց պատշաճ կատարման հետ:

Աղյուսակ 15. Եվրամիության երկրների և Հայաստանի տեղական բյուջեների ծախսերի

| Երկրներ | Տեղական բյուջեների ծախսերը հանրային ծախսերում (%) | | Տեղական բյուջեների ծախսերը ՀՆԱ-ում (%) | |
|--------------------------------------|---|-------------|--|-------------|
| | 2010 | 2011 | 2010 | 2011 |
| Դանիա | 64,5 | 64,5 | 33,0 | 37,5 |
| Իսպանիա | 53,0 | 54,5 | 24,0 | 24,0 |
| Շվեդիա | 48,5 | 49,0 | 26,0 | 25,5 |
| Գերմանիա | 44,5 | 46,0 | 21,0 | 21,0 |
| Բելգիա | 42,5 | 42,0 | 22,5 | 22,5 |
| Ֆինլանդիա | 41,0 | 41,0 | 23,0 | 22,0 |
| Ավստրիա | 34,0 | 33,5 | 19,0 | 17,5 |
| Հոլանդիա | 34,0 | 33,0 | 18,0 | 17,0 |
| *Եվրամիության երկրների միջինը | 33,5 | 34,0 | 17,0 | 16,7 |
| Լեհաստան | 33,0 | 32,5 | 15,0 | 14,0 |
| Իտալիա | 31,5 | 31,0 | 16,5 | 15,5 |
| Սեժ Բրիտանիա | 28,5 | 27,5 | 14,5 | 13,5 |
| Լիտվա | 28,5 | 26,5 | 12,0 | 10,5 |
| Լատվիա | 28,0 | 28,0 | 12,5 | 11,5 |
| Չեխիա | 27,5 | 27,5 | 12,0 | 12,0 |
| Հունգարիա | 25,0 | 23,0 | 12,5 | 11,5 |
| Էստոնիա | 25,0 | 25,0 | 10,0 | 9,5 |
| Ռումինիա | 23,5 | 26,0 | 10,0 | 10,0 |
| Ֆրանսիա | 21,5 | 21,5 | 12,0 | 12,0 |
| Սլովենիա | 21,0 | 19,0 | 10,0 | 9,5 |
| Բուլղարիա | 18,5 | 19,0 | 7,0 | 7,0 |
| Սլովակիա | 18,0 | 18,0 | 7,5 | 7,0 |
| Պորտուգալիա | 13,0 | 13,5 | 7,0 | 7,0 |
| Լյուքսեմբուրգ | 12,5 | 13,0 | 5,0 | 5,5 |
| Իռլանդիա | 10,5 | 13,5 | 7,0 | 6,5 |
| *Հայաստան | 8,5 | 8,8 | 2,4 | 2,34 |
| Հունաստան | 6,0 | 6,0 | 3,5 | 3,0 |
| Կիպրոս | 4,5 | 4,5 | 2,5 | 2,0 |
| Սալթա | 1,5 | 1,5 | 1,0 | 1,0 |

³⁹ Աղբյուրը՝ Subnational public finance in the European Union, Dexia, July, 2011

Subnational public finance in the European Union, Dexia, June, 2012

տեսակարար կշիռները հանրային ծախսերում և ՀՆԱ-ում (2010թ. և 2011թ. տվյալներով)³⁹

Համեմատելով ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևան քաղաքի) 2012թ. բյուջեների եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները 2011թ. նույն ցուցանիշների հետ, կարելի է նկատել, որ եթե ՀՀ բոլոր համայնքների 2012թ. բյուջեների եկամտային մասերի կատարման տոկոսները (94.2% և 89.5%) այդքան նկատելիորեն չեն տարբերվում համայնքների 2011թ. բյուջեների եկամտային մասերի կատարման տոկոսների (94.7% և 90.2%) համեմատ, ապա ՀՀ բոլոր համայնքների 2012թ. բյուջեների ծախսային մասերի կատարման տոկոսները (92.3% և 85.4%) մոտ 1-3%-ով նվազել են համայնքների 2011թ. բյուջեների ծախսային մասերի կատարման տոկոսներից (89.5% և 84.4%):

Աղյուսակ 16. ՀՀ համայնքների 2012թ. բյուջեների ընդհանուր եկամուտների, ծախսերի և հավելուրդի / պակասուրդի տարեկան հաստատված, ճշտված պլանները և

| Հ/հ | Հոդվածի անվանումը | 2012թ. | | | | |
|-----|--|------------------------|---------------------|--------------|---|--|
| | | Տարեկան հաստատված պլան | Տարեկան ճշտված պլան | Փաստացի | Կատարման տոկոսը հաստատված պլանի նկատմամբ, % | Կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ, % |
| | ՀՀ բոլոր համայնքների բյուջեների | | | | | |
| 1 | Եկամուտներ, ընդամենը | 101,391,635.7 | 106,764,902.1 | 95,515,791.4 | 94.2 | 89.5 |
| 2 | Ծախսեր, ընդամենը | 105,621,586.9 | 114,072,221.6 | 97,454,938.5 | 92.3 | 85.4 |
| 3 | Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-) | -4,229,951.2 | -7,307,319.6 | -1,939,147.1 | x | x |
| | այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի | | | | | |
| 1 | Եկամուտներ, ընդամենը | 63,716,652.5 | 67,634,655.6 | 57,247,696.3 | 89.8 | 84.6 |
| 2 | Ծախսեր, ընդամենը | 63,766,652.5 | 69,747,383.7 | 59,085,702.5 | 92.7 | 84.7 |
| 3 | Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-) | -50,000.0 | -2,112,728.1 | -1,838,006.3 | x | x |
| | այդ թվում՝ ՀՀ բոլոր համայնքների՝ առանց Երևան քաղաքի, բյուջեների | | | | | |
| 1 | Եկամուտներ, ընդամենը | 37,674,983.2 | 39,130,246.5 | 38,268,095.1 | 101.6 | 97.8 |
| 2 | Ծախսեր, ընդամենը | 41,854,934.4 | 44,324,837.9 | 38,369,236.0 | 91.6 | 86.6 |
| 3 | Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-) | -4,179,951.2 | -5,194,591.5 | -101,140.8 | x | x |

⁴⁰ Աղբյուրները՝ www.minfin.am և www.yerevan.am

փաստացի կատարումը (հազար դրամ)⁴⁰

Երևան քաղաքի 2012թ. բյուջեի եկամուտների գծով հաստատված և ճշտված պլանները կատարվել են համապատասխանաբար 89.8%-ով և 84.6%-ով, իսկ ծախսերի գծով՝ համապատասխանաբար 92.7%-ով և 84.7%-ով (աղյուսակ 16): Փաստորեն, Երևան քաղաքի 2012թ. բյուջեի եկամուտների կատարման մակարդակները մոտ 5%-ով ավելի ցածր են, քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների եկամուտների կատարման մակարդակները, իսկ դրանց ծախսերի կատարման մակարդակներն իրարից նկատելիորեն չեն տարբերվում:

Համեմատելով Երևանի 2012թ. բյուջեի եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները 2011թ. նույն ցուցանիշների հետ, կարելի է նկատել, որ Երևանի 2012թ. բյուջեի և՛ եկամտային (89.8% և 84.6%), և՛ ծախսային (92.7% և 84.7%) մասերի կատարման տոկոսները մոտ 1-3%-ով նվազել են Երևանի 2011թ. բյուջեների եկամտային (91.7% և 85.6%) և ծախսային (90.0% և 83.5%) մասերի կատարման մակարդակների համեմատ:

ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևան քաղաքի) 2012թ. բյուջեների եկամուտների գծով հաստատված և ճշտված պլանները կատարվել են համապատասխանաբար 101.6%-ով և 97.8%-ով, իսկ ծախսերի գծով՝ համապատասխանաբար 91.6%-ով և 86.6%-ով (աղյուսակ 15):

Աղյուսակ 17. ՀՀ համայնքների 2008-2012թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին

| Ցուցանիշի անվանումը | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
|--|-------------|-------------|-------------|-------------|-------------|
| ՀՀ բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ) | 3,238.0 | 3,249.5 | 3,262.6 | 3,021.4 | 3,026.9 |
| Երևանի բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ) | 1,107.8 | 1,111.3 | 1,060.1 | 1,061.1 | 1,066.3 |
| ՀՀ (առանց Երևանի) բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ) | 2,130.2 | 2,138.2 | 2,202.5 | 1,960.3 | 1,960.6 |
| Մեկ ԱՄՆ դոլարի տարվա միջին փոխարժեքը (դրամ) | 306 | 363 | 374 | 373 | 402 |
| Տարեկան գնաճը (%) | 109.0 | 103.4 | 108.2 | 107.7 | 102.6 |
| ՀՀ համայնքների բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (դրամ) | 15,973 | 16,182 | 26,033 | 28,908 | 31,556 |
| Երևանի բյուջեի փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (դրամ) | 13,664 | 17,765 | 46,019 | 48,203 | 53,688 |

ընկնող եկամուտը և ծախսը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով) *

*) Աղբյուրները՝ www.armstat.am և www.minfin.am

| | | | | | |
|---|--------|--------|--------|--------|--------|
| ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (դրամ) | 17,180 | 15,359 | 16,413 | 18,464 | 19,519 |
| ՀՀ համայնքների բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 52.2 | 44.6 | 69.6 | 77.5 | 78.5 |
| Երևանի բյուջեի փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 44.7 | 48.9 | 123.0 | 129.2 | 133.6 |
| ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 56.1 | 42.3 | 43.9 | 49.5 | 48.6 |
| ՀՀ համայնքների բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (դրամ) | 17,185 | 15,189 | 25,325 | 29,494 | 32,196 |
| Երևանի բյուջեի փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (դրամ) | 13,812 | 15,974 | 45,175 | 49,472 | 55,412 |
| ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (դրամ) | 18,939 | 14,789 | 15,770 | 18,680 | 19,570 |
| ՀՀ համայնքների բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 56.2 | 41.8 | 67.7 | 79.1 | 80.1 |
| Երևանի բյուջեի փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 45.1 | 44.0 | 120.8 | 132.6 | 137.8 |
| ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 61.9 | 40.7 | 42.2 | 50.1 | 48.9 |

Փաստորեն, ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևան քաղաքի) 2012թ. բյուջեի եկամուտների կատարման մակարդակները մոտ 8.0%-ով ավելի բարձր են, քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների եկամուտների կատարման մակարդակները, իսկ ծախսերի կատարման մակարդակներն իրարից նկատելիորեն չեն տարբերվում:


Համայնքների ֆինանսական ապահովվածության կարևոր հարաբերական ցուցանիշներից են **բնակչության մեկ շնչին ընկնող համայնքների բյուջեների եկամուտը և ծախսը**: ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2008-2012թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 17, գծապատկեր 1) բացարձակ արժեքով տարեցտարի զգալիորեն աճել է՝ 2008թ. 15,973 ՀՀ դրամից (մոտ 52.2 ԱՄՆ

դրվարից) 2012-ին հասնելով 26,771 դրամի (մոտ 78.5 դրվարի):

Համապատասխանաբար, ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2008-2012թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 21, գծապատկեր 2) 2008թ. 17,185 դրամից (մոտ 56.2 դրվարից) 2012-ին հասել է 32,196 դրամի (մոտ 80.1 դրվարի):


Այս ցուցանիշների՝ 2010-ից սկսած կտրուկ թռիչքը հիմնականում պայմանավորված է 2010-ից սկսած Երևան քաղաքի, որպես համայնքի, բյուջետային տվյալների ներառմամբ ՀՀ բոլոր համայնքների բյուջետային տվյալների կազմում:

Գծապատկեր 1. ՀՀ համայնքների 2008-2012թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող փաստացի եկամուտը (ՀՀ դրամով և ԱՄՆ դրվարով)



Երևանի 2008-2012թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով բացարձակ արժեքով տարեցտարի էականորեն աճել է՝ 2008թ. 13,664 դրամից (մոտ 44.7 դրվարից) 2012-ին հասնելով 53,688 դրամի (մոտ 133.6 դրվարի): Համապատասխանաբար, Երևանի 2008-2012թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով 2008թ. 13,812 ՀՀ դրամից (մոտ 45.1 դրվարից) 2012-ին հասել է 55,412 դրամի (մոտ 137.8 դրվարի):

Գծապատկեր 2. ՀՀ համայնքների 2008-2012թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող փաստացի ծախսը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով)



ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2008-2012թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 21) բացարձակ արժեքով՝ արտահայտված ՀՀ դրամով, տարեցտարի աճել է՝ 2008թ. 17,180 դրամից 2012-ին հասնելով ընդամենը 19,519 դրամի, իսկ այն արտահայտված ԱՄՆ դոլարով, ընդհակառակը, նվազել է՝ 2008թ. մոտ 56.1 դոլարից 2012-ին իջնելով մոտ 48.6 դոլարի: Համապատասխանաբար, ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2008-2012թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով 2008թ. 18,939 դրամից (մոտ 61.9 դոլարից) 2012-ին հասել է (իջել է) 19,570 դրամի (մոտ 48.9 դոլարի):

Դրա հետ մեկտեղ, եթե հաշվի առնենք նաև Հայաստանում տարեցտարի տեղի ունեցած զգալի գնաճը, ապա բնակչության մեկ շնչին մատուցվող համայնքային ծառայությունների ընդհանուր ծախսերի չափը տարիների ընթացքում զգալի փոփոխության չի ենթարկվել և նկատելի դրական ազդեցություն չի ունեցել բնակչության ընդհանուր կենսամակարդակի վրա, իսկ գյուղական և փոքր ու միջին քաղաքային համայնքների բնակչության կենսամակարդակի վրա, ընդհակառակը, այն բացասական ազդեցություն է ունեցել:

Ցուցանիշների առանձին խումբ են կազմում ՏԻՄ-երին օրենքով տրված լիազորությունների ֆինանսական ապահովումն ըստ նրանց գործունեության բնագավառների կամ **համայնքների բյուջեների ծախսերն ըստ գործառնական դասակարգման** (աղյուսակ 22): 2012-ին ընդհանուր բնույթի ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը **ՀՀ համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) բյուջեների** ընդհանուր ծախսերում (գծապատկեր 3) կազմել է 23.9%, որը 2.1%-ով ցածր է 2011-ի նույն


ցուցանիշից (26.0%):

Համայնքների 2012թ. բյուջեների ընդհանուր ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն կրթության ոլորտի ծախսերը՝ 31.4% (2011-ին՝ 32.5%), այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 12.1%, տարրական ընդհանուր կրթություն՝ 5.2%, միջնակարգ ընդհանուր կրթություն՝ 6.9%, արտադպրոցական դաստիարակություն՝ 4.8% և այլ դասերին չպատկանող կրթություն՝ 2.4%:

2011-ի համեմատ, կրկնակիից ավելի նվազել է «հանգիստ, մշակույթ և կրոն» ոլորտին հատկացված ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ համայնքների 2012թ. բյուջեների ընդհանուր ծախսերում՝ 6.2% (2011-ին՝ 12.9%): Սա պայմանավորված է հարաբերական այս ցուցանիշի մոտ 4 անգամ նվազումով Երևանի 2012թ. բյուջեում՝ 3.6% (2011-ին՝ 14.8%, որի աննախադեպ չափը կապված էր այս ոլորտում Երևանի ՏԻՄ-երի կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման հետ): Սոցիալական մյուս ոլորտներին ՀՀ համայնքների 2012թ. բյուջեներից հատկացված ծախսերի տեսակարար կշիռները, նախորդ տարվա համեմատ, մոտավորապես նույն մակարդակի վրա են և առանձնապես մեծ տեսակարար կշիռ չունեն ընդհանուր ծախսերում՝ սոցիալական պաշտպանություն՝ 2.7% (2011-ին՝ 2.4%), առողջապահություն՝ 0.3% (2011-ին՝ 0.2%):

ՀՀ համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) 2012թ. բյուջեների ընդհանուր ծախսերում տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տեսակարար կշիռները մոտավորապես նույն մակարդակի վրա են, ինչ 2011-ին: Այսպես, այդ ցուցանիշը տրանսպորտի ոլորտում կազմել է 24.2% (սա նորից պայմանավորված է Երևանի բյուջեում նույն ցուցանիշի բարձր մակարդակով՝ 35.0%), բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում (ջրամատակարարում, փողոցների լուսավորում, համայնքային զարգացում և այլն)՝ 9.8%, շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում (աղբահանում, կեղտաջրերի հեռացում և այլն)՝ 10.5% և այլն:

Գծապատկեր 3. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2012թ. բյուջեների փաստացի ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում (ըստ գործառնական դասակարգման)



Երևան քաղաքի 2012թ. բյուջեում ըստ գործառնական դասակարգման ծախսերի տեսակարար կշիռները զգալիորեն տարբերվում են ՀՀ բոլոր համայնքների բյուջեների ծախսերի տեսակարար կշիռներից (աղյուսակ 18):

Աղյուսակ 18. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի և առանց Երևանի) և Երևանի 2012թ. բյուջեների փաստացի ծախսերն՝ ըստ գործառնական դասակարգման

| Հ/հ | Ծախսի անվանումը | 2012թ. | | | | | |
|----------|---|--|--------------------|---|--------------------|---|--------------------|
| | | ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ | Տեսակարար կշիռը, % | Երևանի բյուջեի փաստացի ծախսերը, հազ. դրամ | Տեսակարար կշիռը, % | ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ | Տեսակարար կշիռը, % |
| | Ընդամենը ծախսեր*, այդ թվում՝ | 97,454,938.5 | 100 | 59,085,702.5 | 100 | 38,369,236.0 | 100 |
| | Վարչական բյուջե | 90,611,108.2 | 93.0 | 55,709,892.8 | 94.3 | 34,901,215.4 | 91.0 |
| | Ֆոնդային բյուջե | 11,976,129.4 | 12.3 | 7,430,549.4 | 12.6 | 4,545,580.0 | 11.8 |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 23,082,051.4 | 23.9 | 6,536,699.5 | 11.1 | 16,545,351.9 | 43.1 |
| 2 | Պաշտպանություն | 44,494.7 | 0.0 | 40,877.6 | 0.1 | 3,617.1 | 0.0 |
| 3 | Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն | 1,750.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 1,750.0 | 0.0 |
| 4 | Տնտեսական հարաբերություններ, այդ թվում՝ | 12,968,356.2 | 13.3 | 12,883,860.0 | 21.8 | 84,496.2 | 0.2 |
| 4.1 | Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ | 9,574.1 | 0.0 | 0.0 | 0.0 | 9,574.1 | 0.0 |
| 4.2 | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն | 889,875.3 | 0.9 | 453,193.0 | 0.8 | 436,682.3 | 1.1 |
| 4.3 | Վառելիք և էներգետիկա | 190,604.2 | 0.2 | 0.0 | 0.0 | 190,604.2 | 0.5 |
| 4.4 | Լեռնաարդյունահանում, արդյունաբերություն և շինարարություն | 700.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 700.0 | 0.0 |
| 4.5 | Տրանսպորտ | 23,599,438.6 | 24.2 | 20,669,999.7 | 35.0 | 2,929,438.9 | 7.6 |

*) Առանց վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումների.
 ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեներում՝ 5,132,299.1 հազ. դրամ, Երևանի բյուջեում՝ 4,054,739.7 հազ. դրամ, ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեներում՝ 1,077,559.4 հազ. դրամ:

| | | | | | | | |
|----------|---|---------------------|-------------|--------------------|-------------|--------------------|------------|
| 4.6 | Կապ | 1,092.6 | 0.0 | 0.0 | 0.0 | 1,092.6 | 0.0 |
| 4.7 | Այլ բնագավառներ | 40.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 40.0 | 0.0 |
| 4.8 | Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | 5,876.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 5,876.0 | 0.0 |
| 4.9 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | -11,728,844.6 | -12.0 | -8,239,332.7 | -13.9 | -3,489,511.9 | -9.1 |
| 5 | Շրջակա միջավայրի պաշտպանություն, այդ թվում՝ | 10,193,447.0 | 10.5 | 7,042,640.8 | 11.9 | 3,150,806.2 | 8.2 |
| 5.1 | Աղբահանում | 7,584,426.0 | 6.3 | 5,020,004.6 | 8.5 | 2,564,421.4 | 6.7 |
| 5.2 | Կեղտաջրերի հեռացում | 165,638.9 | 0.2 | 0.0 | 0.0 | 165,638.9 | 0.4 |
| 5.3 | Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար | 71,933.7 | 0.1 | 37,470.2 | 0.1 | 34,463.5 | 0.1 |
| 5.4 | Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն | 106,879.8 | 0.1 | 0.0 | 0.0 | 106,879.8 | 0.3 |
| 5.5 | Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | 1,715.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 1,715.0 | 0.0 |
| 5.6 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | 2,262,853.6 | 2.5 | 1,985,166.1 | 3.4 | 277,687.5 | 0.7 |
| 6 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն, այդ թվում՝ | 9,552,065.8 | 9.8 | 6,187,712.2 | 10.5 | 3,364,353.6 | 8.8 |
| 6.1 | Բնակարանային շինարարություն | 1,460,169.7 | 1.5 | 1,201,347.6 | 2.0 | 258,822.1 | 0.7 |
| 6.2 | Համայնքային զարգացում | 290,030.8 | 0.3 | 0.0 | 0.0 | 290,030.8 | 0.8 |
| 6.3 | Ջրամատակարարում | 942,426.5 | 1.0 | 192,604.4 | 0.3 | 749,822.1 | 2.0 |
| 6.4 | Փողոցների լուսավորում | 3,452,285.3 | 3.5 | 2,075,575.0 | 3.5 | 1,376,710.3 | 3.6 |
| 6.5 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | 27,427.4 | 0.0 | 5,991.0 | 0.0 | 21,436.4 | 0.1 |
| 6.6 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 3,379,726.1 | 3.5 | 2,172,194.2 | 3.7 | 1,207,531.9 | 3.1 |

| | | | | | | | |
|-----|---|---------------------|-------------|---------------------|-------------|--------------------|-------------|
| 7 | Առողջապահություն | 302,037.9 | 0.3 | 238,760.2 | 0.4 | 63,277.7 | 0.2 |
| 8 | Հանգիստ, մշակույթ և կրոն | 6,031,294.0 | 6.2 | 2,153,878.2 | 3.6 | 3,877,415.8 | 10.1 |
| 9 | Կրթություն | 30,643,432.5 | 31.4 | 21,303,469.9 | 36.1 | 9,339,962.6 | 24.3 |
| 9.1 | Նախադպրոցական կրթություն | 11,833,788.7 | 12.1 | 6,032,083.2 | 10.2 | 5,801,705.5 | 15.1 |
| 9.2 | Տարրական ընդհանուր կրթություն | 5,075,344.6 | 5.2 | 4,989,747.0 | 8.4 | 85,597.6 | 0.2 |
| 9.3 | Միջնակարգ ընդհանուր կրթություն | 6,697,183.5 | 6.9 | 6,602,362.8 | 11.2 | 94,820.7 | 0.2 |
| 9.4 | Արտադպրոցական դաստիարակություն | 4,703,356.1 | 4.8 | 1,664,441.1 | 2.8 | 3,038,915.0 | 7.9 |
| 9.5 | Կրթություն (այլ դասերին չպատկանող) | 2,333,759.6 | 2.4 | 2,014,835.8 | 3.4 | 318,923.8 | 0.8 |
| 10 | Սոցիալական պաշտպանություն | 2,662,060.3 | 2.7 | 915,516.8 | 1.5 | 1,746,543.5 | 4.6 |
| 11 | Հիմնական բաժինների և չդասվող պահուստային ֆոնդեր* | 1,973,948.7 | 2.0 | 1,782,287.3 | 3.0 | 191,661.4 | 0.5 |

Այսպես, Երևանի 2012թ. բյուջեում ընդհանուր բնույթի ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը մոտ 2 անգամ ցածր է ՀՀ համայնքների բյուջեների նույն ցուցանիշից՝ կազմելով 11.1% (2011-ին՝ 13.4%): Կրթության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում, ընդհակառակը, ավելի բարձր է Երևանի 2012թ. բյուջեում, քան ՀՀ համայնքների բյուջեներում՝ կազմելով 36.1% (2011-ին՝ 38.2%), այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 10.2%, տարրական ընդհանուր կրթություն՝ 8.4%, միջնակարգ ընդհանուր կրթություն՝ 11.2%, արտադպրոցական դաստիարակություն՝ 2.8% և այլ դասերին չպատկանող կրթություն՝ 3.4%: Սա հիմնականում պայմանավորված է Երևանում տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության ոլորտում պետության կողմից համապատասխան պատվիրակված լիազորությունների իրականացմամբ և դրանց համար ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորմամբ:

Սոցիալական մյուս ոլորտներին Երևանի 2012թ. բյուջեից հատկացված ծախսերի տեսակարար կշիռները, նախորդ տարվա համեմատ, մոտավորապես նույն մակարդակի վրա են (բացառությամբ հանգիստ, մշակույթ և կրոնի ոլորտից՝ 2012-ին՝ 3.6%, իսկ 2011-ին՝ 14.8%)՝ սոցիալական պաշտպանություն՝ 1.5% (2011-ին՝ 0.9%), առողջապահություն՝ 0.4% (2011-ին՝ 0.3%):

Երևան քաղաքի 2012թ. բյուջեի ընդհանուր ծախսերում տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տեսակարար կշիռները համապատասխանաբար կազմել են՝ տրանսպորտի ոլորտում՝ 35.0% (2011-ին՝ 27.6%), բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում (ջրամատակարարում, փողոցների լուսավորում, համայնքային զարգացում և այլն)՝ 10.5% (2011-ին՝ 14.3%), շրջակա միջավայրի պաշտպանու-

յան ոլորտում (աղբահանում, կեղտաջրերի հեռացում և այլն)՝ 11.9% (2011-ին՝ 10.3%) և այլն:

ՀՀ համայնքների (առանց Երևան քաղաքի) 2012թ. բյուջեների ըստ գործառնական դասակարգման ծախսերի տեսակարար կշիռները էականորեն տարբերվում են ինչպես ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2012թ. բյուջեների, այնպես էլ Երևանի 2012թ. բյուջեի ծախսերի տեսակարար կշիռներից ընդհանուր ծախսերում: Այսպես, ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2012թ. բյուջեներում ընդհանուր բնույթի ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է և կազմում է ընդհանուր ծախսերի մոտ 43.1% (2011-ին՝ 44.0%): Ընդհանուր ծախսերում երկրորդ բարձր տեսակարար կշիռն ունեն կրթության ոլորտի ծախսերը՝ կազմելով 24.3% (2011-ին՝ 24.4%), այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 15.1%, տարրական ընդհանուր կրթություն՝ 0.2%, միջնակարգ ընդհանուր կրթություն՝ 0.2%, արտադպրոցական դաստիարակություն՝ 7.9% և այլ դասերին չպատկանող կրթություն՝ 0.8%:

Սոցիալական մյուս ոլորտներին ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2012թ. բյուջեներից հատկացված ծախսերի տեսակարար կշիռները, նախորդ տարվա համեմատ, մոտավորապես նույն մակարդակի վրա են՝ հանգիստ, մշակույթ և կրոն՝ 10.1% (2011-ին՝ 10.1%)՝ սոցիալական պաշտպանություն՝ 4.6% (2011-ին՝ 4.5%), առողջապահություն՝ 0.2% (2011-ին՝ 0.1%):

ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2012թ. բյուջեների ընդհանուր ծախսերում տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տեսակարար կշիռները համապատասխանաբար կազմել են՝ բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում (փողոցների լուսավորում, ջրամատակարարում, համայնքային զարգացում և այլն)՝ 8.8% (2011-ին՝ 8.0%), շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում (աղբահանում, կեղտաջրերի հեռացում և այլն)՝ 8.2% (2011-ին՝ 7.7%), տրանսպորտի ոլորտում՝ 7.6% (2011-ին՝ 9.3%), և այլն:

ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքների ֆինանսական միջոցների համապատասխանության ցուցանիշներից է նաև «**Ֆինանսավորվող կամ թերի ֆինանսավորվող լիազորությունների**» առկայությունը: Կան ՏԻՄ-երի՝ օրենքով սահմանված բազմաթիվ լիազորություններ (այդ թվում՝ հանրային ծառայությունների մատուցման), որոնք ՀՀ շատ համայնքներում (հատկապես գյուղական ու փոքր քաղաքային) ընդհանրապես չեն իրականացվում կամ իրականացվում են մասնակիորեն (ֆինանսական միջոցների սղության և այլ պատճառներով): Այդպիսի լիազորությունների թվին է դասվում կենսական նշանակություն ունեցող այնպիսի հանրային ծառայությունների մատուցումը, ինչպիսիք են, մասնավորապես, աղբահանությունը, կանաչապատումը, ջրամատակարարումը և ջրահեռացումը, շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարը, համայնքային զարգացումը և այլն: Համայնքների բյուջեների ծախսերի տեսակների (ընթացիկ և կապիտալ/ոչ ֆինանսական ակտիվների գծով) հարաբերակցությունների մասին կարելի է պատկերացում կազմել՝ դիտարկելով **բյուջետային ծախսերն ըստ տնտեսագիտական**

դասակարգման: ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) 2012թ. բյուջեների կապիտալ / ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 12.2%, սակայն, եթե հաշվի առնենք մաս ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի հաշվին կատարված կապիտալ ծախսերը (12,621,309.4 հազ. դրամ կամ 13.0%), ապա կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 25.2% (աղյուսակ 19):

Դիտարկելով ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցություններն ընդհանուր ծախսերում վերջին 5 տարիների՝ 2008-2012թթ. համար (գծապատկեր 4), տեսնում ենք, որ եթե 2008-2009թթ. ժամանակահատվածում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում 28.5%-ից նվազել է մինչև 19.2%-ի (մոտ 1/3-ով), իսկ 2010-2011թթ. ընթացքում այն անշեղորեն աճել է՝ հասնելով մինչև 28.9%-ի, ապա 2012թ. ընթացքում այն նորից դրսևորել է նվազման միտում՝ իջնելով մինչև 25.2%-ի:

Ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցությունների պատկերն այլ է Երևան քաղաքի 2008-2012թթ. բյուջեներում: Եթե Երևանի քաղաքապետարանի և նախկին քաղաքի համայնքների 2008-2009թթ. բյուջեների ընդհանուր ծախսերում գերակշռող տեսակարար կշիռ են ունեցել ընթացիկ ծախսերը, իսկ կապիտալ ծախսերի ցուցանիշներն անհամեմատ ավելի համեստ են եղել, քան հանրապետության մասշտաբով, ապա Երևան քաղաքի 2010-2012թթ. բյուջեների

Աղյուսակ 19. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի և առանց Երևանի) և Երևանի 2012թ. բյուջեների փաստացի ծախսերն՝ ըստ տնտեսագիտական դասակարգման


| Հ/հ | Ծախսի անվանումը | 2012թ. | | | | | |
|----------|---|--|--------------------|---|--------------------|---|--------------------|
| | | ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ | Տեսակարար կշիռը, % | Երևանի բյուջեի փաստացի ծախսերը, հազ. դրամ | Տեսակարար կշիռը, % | ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ | Տեսակարար կշիռը, % |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ* (Ա+Բ+Գ) | 97,454,938.5 | 100 | 59,085,702.5 | 100 | 38,369,236.0 | 100 |
| Ա | ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ* | 85,502,883.2 | 87.7 | 51,674,429.4 | 87.5 | 33,828,453.8 | 88.1 |
| 1 | Աշխատանքի վարձատրություն, այդ թվում՝ | 18,328,234.1 | 18.8 | 4,598,786.2 | 7.8 | 13,729,447.9 | 35.8 |
| | <i>Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ</i> | 15,552,718.7 | 16.0 | 4,082,242.6 | 6.9 | 11,470,476.1 | 29.9 |
| | <i>Փաստացի սոցիալական ապահովության վճարներ</i> | 2,775,515.4 | 2.8 | 516,543.6 | 0.9 | 2,258,971.8 | 5.9 |

*) Առանց վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումների


| | | | | | | | |
|----------|--|----------------------|--------------|---------------------|--------------|---------------------|-------------|
| 2 | Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում | 34,981,388.4 | 35.9 | 26,208,030.6 | 44.4 | 8,773,357.8 | 22.9 |
| 3 | Տոկոսավճարներ | 1,880.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 1,880.5 | 0.0 |
| 4 | Սուբսիդիաներ | 18,241,944.5 | 18.7 | 11,123,605.7 | 18.8 | 7,118,338.8 | 18.6 |
| 5 | Դրամաշնորհներ | 3,787,805.5 | 3.9 | 1,771,213.8 | 3.0 | 2,016,591.7 | 5.3 |
| 6 | Մոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 2,138,804.0 | 2.2 | 361,673.8 | 0.6 | 1,777,130.2 | 4.6 |
| 7 | Այլ ծախսեր*, այդ թվում՝ | 8,022,826.2 | 8.2 | 7,611,119.4 | 12.9 | 411,706.8 | 1.1 |
| | Պահուստային միջոցներ* | 1,973,948.7 | 2.0 | 1,782,287.3 | 3.0 | 191,661.4 | 0.5 |
| | Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ | 5,132,299.2 | 5.3 | 4,054,739.6 | 6.9 | 1,077,559.6 | 2.8 |
| Բ | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ | 24,573,364.7 | 25.2 | 16,532,576.1 | 28.0 | 8,040,788.6 | 21.0 |
| 1 | Հիմնական միջոցներ | 24,520,295.4 | 25.2 | 16,494,152.1 | 27.9 | 8,026,143.3 | 20.9 |
| 2 | Պաշարներ | 45,167.3 | 0.0 | 38,424.0 | 0.1 | 6,743.3 | 0.0 |
| 3 | Բարձրարժեք ակտիվներ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4 | Չարտադրված ակտիվներ | 7,902.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 7,902.0 | 0.0 |
| Գ | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | -12,621,309.4 | -13.0 | -9,121,303.0 | -15.4 | -3,500,006.4 | -9.1 |
| | Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | -2,407,013.0 | -2.5 | -2,075,013.9 | -3.5 | -331,999.1 | -0.9 |
| 2 | Պաշարների իրացումից մուտքեր | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3 | Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր | -5,011.0 | -0.0 | 0.0 | 0.0 | -5,011.0 | -0.0 |
| 4 | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | -10,209,285.3 | 10.5 | -7,045,109.3 | -11.9 | -3,164,176.0 | -8.2 |

ընդհանուր ծախսերում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար 8.7%, 7.6% և 12.6%: Սակայն, եթե հաշվի առնենք նաև ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի հաշվին կատարված կապիտալ ծախսերը (համապատասխանաբար 2010թ.՝ 11,534,766.4 հազ. դրամ կամ 17.4%, 2011թ.՝ 13,241,236.7 հազ. դրամ կամ 25.2%, և 2012թ.՝ 9,121,303.0 հազ. դրամ կամ 15.4%), ապա կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է համապատասխանաբար 26.1%, 32.8% և 28.0% (աղյուսակ 19, գծապատկեր 5), որոնք համեմատաբար ավելի բարձր են ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների մույն ցուցանիշներից և զգալիորեն բարձր են ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) բյուջեների մույն ցուցանիշներից (աղյուսակ 19):

Գծապատկեր 4. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2008-2012թթ. բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում, %



Գծապատկեր 5. Երևանի քաղաքի 2008-2012թթ. բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում, %



ՏԻՄ-երի գործունեության արդյունավետ կազմակերպման տեսանկյունից, կարևոր ֆինանսական ցուցանիշներից են նաև համայնքային աշխատողների աշխատանքի վարձատրության բաղկացուցիչ մասերի՝ **աշխատավարձերի և սոցիալական ապահովության վճարների տեսակարար կշիռները համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերում**: 2012-ին ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) ՏԻՄ-երի, դրանց ենթակա բյուջետային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի ու հավելավճարների փաստացի ծախսերն ընդհանուր ծախսերում կազմել են 16.0%, սոցիալական ապահովության վճարների փաստացի ծախսերն ընդհանուր ծախսերում՝ 2.8%, իսկ նշված երկու ծախսերը միասին՝ 18.8% (աղյուսակ 19): Համեմատելով այս ցուցանիշները 2010-2011թթ.-ի նույն ցուցանիշների հետ (համապատասխանաբար 2010թ.՝ 17.8%, 3.6% և 21.4%, և 2011թ.՝ 17.1%, 3.1% և 20.2%)՝ պետք է արձանագրել դրանց աստիճանական նվազման դրական միտումը:

Երևան քաղաքի 2012թ. բյուջեում այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 6.9%, 0.9% և 7.8% (աղյուսակ 19), որոնք, 2010-ի համեմատ (համապատասխանաբար 5.9%, 1.0% և 6.9%), փոքր չափով աճել են, իսկ 2011-ի համեմատ (համապատասխանաբար 7.1%, 0.9% և 8.0%), ընդհակառակը, աննշան չափով նվազել են, որոնք պայմանավորված են 2011-ի տարեսկզբին Երևանի տեղական ինքնակառավարման համակարգում աշխատողների աշխատավարձերի արդարացված բարձրացմամբ:

ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) ՏԻՄ-երի, դրանց ենթակա բյուջետային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի ու հավելավճարների փաստացի ծախսերն ընդհանուր ծախսերում կազմել են 29.9%, սոցիալական ապահովության վճարների փաստացի ծախսերն ընդհանուր ծախսերում՝ 5.9%, իսկ նշված երկու ծախսերը միասին՝ 35.8% (աղյուսակ 23): Համեմատելով այս ցուցանիշները 2010-2011թթ.-ի նույն ցուցանիշների հետ (համապատասխանաբար 2010թ.՝ 34.1%, 7.3% և 41.4%, և 2011թ.՝ 31.4%, 6.3% և 37.7%)՝ պետք է նորից արձանագրել դրանց աստիճանական նվազման դրական միտումը:

Կարելի է նկատել, որ ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) համար հաշվարկված վերջին ցուցանիշներն էականորեն բարձր են Երևան քաղաքի համար հաշվարկված նույն ցուցանիշներից: Դա պայմանավորված է երկու հանգամանքներով՝ համայնքների (առանց Երևանի) աշխատակազմերի ու ենթակա կազմակերպությունների աստիճանական ուռճացումով և համայնքների բյուջեների եկամուտների անբավարարությամբ: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ նվազեցնելու համայնքային աշխատողների թվաքանակը և դրա հաշվին բարձրացնելու նրանց աշխատավարձերի չափերը: Եվ ընդհանրապես, անհրաժեշտ է հետևողական աշխատանքներ տանել՝ ավելացնելու համայնքների բյուջեների եկամուտների աղբյուրներն ու դրանց փաստացի հավաքագրումները, ինչպես նաև՝ բարձրացնելու բյուջետային ծախսերի կատարման արդյունավետությունը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 71 գլխում սահմանված վարչական հսկողության դրույթների, ՏԻՄ-երի լիազորությունների իրա-

կանացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող մարմինները մարզպետներն են, իսկ Երևան քաղաքի ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման նկատմամբ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: ՏԻՄ-երի նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ իրավական հսկողություն իրականացնող բարձրագույն մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է, իսկ օրենքով սահմանված դեպքերում մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինն այն պետական մարմինն է, որի իրավասության շրջանակներում է համապատասխան լիազորությունը: Ընդ որում, վարչական հսկողության իրականացման ընթացքում ձեռնարկվող միջոցները պետք է սահմանվեն բացառապես օրենքով:

Մասնավորապես, համայնքային աշխատողների աշխատավարձերի և փաստացի սոցիալական ապահովության վճարների գծով օրենքի պահանջների կատարման նկատմամբ, բացի մարզպետներից, վարչական հսկողություն կարող են իրականացնել նաև համապատասխանաբար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը և ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության հիմնադրամը՝ իրենց լիազորությունների սահմաններում, օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև ՀՀ վերահսկիչ պալատը՝ համայնքներում պարբերական ստուգումներ անցկացնելու ընթացքում: ՀՀ աշխատանքի պետական տեսչությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է պետական հսկողություն և վերահսկողություն ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ: Համաձայն «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի, համայնքների աշխատակազմերը և համայնքային այլ կազմակերպությունները, որպես գործատուներ, պարտավոր են ՀՀ աշխատանքի պետական տեսչություն ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ իրենց աշխատողների թվի, աշխատավարձի (ըստ մասնագիտությունների), աշխատավայրում տեղի ունեցած դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների մասին:

6. Համայնքի խնդիրներին վարչական կառուցվածքների, մարդկային և տեղեկատվական ռեսուրսների համադասասխանությունը, միջազգային աջակցությունը

6.1 ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի ընդհանուր կարողությունները

ՏԻՄ-երն օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում ընդունում են որոշումներ և համակարգում դրանց կատարումը: Իրենց քաղաքականությունը նրանք իրականացնում են համայնքի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների միջոցով: ՏԻՄ-երին օրենսդրությամբ վերապահված առանձին խնդիրներ և գործառույթներ իրականացվում են վարձու աշխատողների կողմից:

ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների պատշաճ կատարումը մեծ չափով պայմանավորված է ոչ միայն համայնքների ֆինանսական կարողություններով, այլև ՏԻՄ-երի և համայնքային կառավարչական հիմնարկների կադրային ներուժով, ինչը անհնար է ապահովել հատկապես փոքր գյուղական համայնքներում: Նման համայնքներում ոչ միայն համայնքային կառավարչական հիմնարկների աշխատակազմերն է լինում փոքրաթիվ, այլև, սովորաբար, ավելի դժվար են համարվում անհրաժեշտ կրթական ու մասնագիտական կարողությունների տեր կադրերով:

Համայնքային ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում այդ պաշտոնն զբաղեցվում է մրցույթով, բացառությամբ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14.1-րդ, 18-րդ հոդվածներով և 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար համապատասխան համայնքի ղեկավարը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12.1-ին հոդվածի 1-ին մասում նշված վայրերում փակցնելու միջոցով, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ <http://www.azdarar.am>:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր: Թեստերը կազմվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի հաստատված կարգով՝ վաղորդ կազմված հարցաշարից և դրանից պատահական ընտրված հարցերից՝ մասնակիցների գիտելիքները հետևյալ բնագավառներում ստուգելու համար.

ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության.

բ) համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրության.

գ) տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը սահմանող Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

Թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից և խնդիրներից: Գաղտնիությունն ապահովելու նպատակով թեստավորման փուլն անցկացվում է մասնակիցների համար կողերի կիրառմամբ:

Մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք ունեն թեստավորման առաջադրանքների առնվազն 85 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները: Հարցազրույցն անցկացվում է համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակներում նրանց գործնական կարողություններն ստուգելու նպատակով: Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հարցազրույցի միջոցով յուրաքանչյուր մասնակցի գործնական կարողությունները գնահատում է 5 բալային համակարգով: Նվազագույն դրական գնահատականը 3 բալն է:

Մրցույթի հաղթող է ճանաչվում մրցութային հանձնաժողովի՝ գնահատմանը մասնակցած անդամների կեսից ավելիի կողմից դրական բալերով գնահատված այն մասնակիցը, որի ստացած դրական բալերի հանրագումարն առավելագույնն է:

Եթե երկու կամ ավելի մասնակիցներ հավաքել են դրական բալերի առավելագույն հավասար հանրագումար, ապա նրանցից հաղթող է (են) ճանաչվում թեստային փուլում առավել բարձր միավորներ հավաքած մասնակիցը (առավել բարձր հավասար միավորներ հավաքած մասնակիցները):

Մրցույթներն անցկացնում են համապատասխան հանձնաժողովները:

ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 21.06.2012 թ. N 79 – Ա հրամանի 1-ին կետով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարված մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյանի վարման մեթոդական ուղեցույցը», որով, փաստորեն, ոչ միայն անհրաժեշտ տեղեկատվական բազա է ստեղծվում մրցույթներին մասնակցելու համար դիմորդների վերաբերյալ, այլև նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը:

Որպեսզի համայնքների աշխատակազմերը մշտապես հնարավորություն ունենան բարձրացնելու իրենց աշխատանքային կարողությունները, երեք տարին մեկ անգամ, համայնքային ծառայողների համար անցկացվում է ատեստավորում:

Ատեստավորումն անցկացվում է հետևյալ եղանակներով.

ա) փաստաթղթային.

բ) թեստավորման և հարցազրույցի:

Փաստաթղթային ատեստավորման ենթակա են այն համայնքային ծառայողները, որոնք ունեն զբաղեցրած պաշտոնի ենթախմբի համար «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված համապատասխան դասային աստիճանից բարձր դասային աստիճան կամ համայնքային ծառայության նույն

պաշտոնն զբաղեցնելու ընթացքում ատեստավորվել են:

Փաստաթղթային ատեստավորումն անցկացվում է ծառայողական բնութագրի հիման վրա՝ հարցազրույցի միջոցով:

Փաստաթղթային ատեստավորումից հետո ատեստավորման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

ա) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

բ) ենթակա է ատեստավորման թեստավորման և հարցազրույցի միջոցով:

Թեստավորման և հարցազրույցի միջոցով ատեստավորման ենթակա են համայնքային այն ծառայողները՝

ա) ովքեր փաստաթղթային ատեստավորման ենթակա չեն.

բ) որոնց վերաբերյալ ատեստավորման հանձնաժողովն ընդունել է վերը նշված «բ» կետի որոշումը:

Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ զբաղվոր: Թեստերը կազմում, հարցազրույցն անցկացնում և արդյունքները գնահատում է ատեստավորման հանձնաժողովը՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով:

Ատեստավորման հանձնաժողովը թեստավորման և հարցազրույցի արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

ա) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

բ) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

Ատեստավորումներն անցկացնում են համապատասխան հանձնաժողովները: Չնայած օրենսդրությամբ համայնքի ղեկավարների համար կրթական ցենզ սահմանված չէ, այդուհանդերձ, համայնքների ղեկավարների զգալի մասն ունի բարձրագույն կրթություն:

Թեև «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը կոչված է համայնքային ծառայողներին պաշտպանելու իրավիճակային փոփոխություններից, գործնական կյանքում նրանք շարունակում են մեծապես կախված մնալ համայնքի ղեկավարների կամայական որոշումներից:

Համայնքի աշխատակազմի ֆունկցիոնալ կառուցվածք

Համայնքի աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որը ենթակա է հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից: Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը: Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը՝ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Աշխատակազմը բաղկացած է մասնագետներից, որոնք ընդգրկված են լինում «բաժին» տեսակի կառուցվածքային, առանձնացված ստորաբաժանումներում: Բաժնի գործունեության բնագավառում վարվող քաղաքականության մասով բաժնի պետերը կատարում են համայնքի ղեկավարի, իսկ համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպական մա-

սով՝ աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը համակարգել է ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշման N 3 հավելվածով նախատեսված ժամկետում (01.01.2013թ.) ՀՀ քաղաքային համայնքներում ներքին աուդիտի համակարգի ներդրման աշխատանքների իրականացումը, որի արդյունքում թվով 41 քաղաքային համայնքներում ստեղծվել են ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանով ներքին աուդիտի ստորաբաժանումներին ներկայացվող հիմնական պահանջներին համապատասխանող բաժիններ: Թվով 4 քաղաքային համայնքներում ներքին աուդիտի ստորաբաժանումների ստեղծման աշխատանքներն ընթացքի մեջ են, իսկ Դաստակերտի, Ախթալայի, Թումանյանի և Շամլուղի քաղաքային համայնքներում ներքին աուդիտի ստորաբաժանումներ չեն նախատեսվում, ինչը ենթադրում է, որ այդ համայնքներում ներքին աուդիտի գործառույթները կարող են իրականացվել այլ համայնքի կամ տվյալ մարզպետարանի ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից⁴¹:

2012 թվականին այլ փոփոխություններ չեն եղել համայնքի աշխատակազմի ֆունկցիոնալ կառուցվածքի առումով:

Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգերի զարգացումը

«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպությունը («ՏՀԶՎԿ» ՀԿ), շարունակել է ՀՀ համայնքներում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի (ՀԿՏՀ) տեղադրման աշխատանքները: ՀԿՏՀ-ն համայնքների համար նախատեսված էլեկտրոնային կառավարման ծրագիր է: 2012 թվականի ընթացքում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ) ներդրվել է ևս 98 քաղաքապետարաններում և գյուղապետարաններում:

Ընդհանուր առմամբ, տեղեկատվական համակարգը 2012 թ. տարեվերջին շահագործվել է ՀՀ 339 համայնքներում: Տարվա ընթացքում թվով 115 համայնքներում աշխատանքներ են տարվել էլեկտրոնային փաստաթղթաշարժի ներդրման ուղղությամբ, որոնց արդյունքում 37 քաղաքապետարաններում և 78 գյուղապետարաններում շահագործվող ՀԿՏՀ-ներն իրենց փաստաթղթաշարժի բաղադրիչի միջոցով հնարավորություն ունեն էլեկտրոնային փաստաթղթեր փոխանակելու պետական կառավարման մարմիններում շահագործվող փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգի հետ⁴²:

2012 թվականի ընթացքում շարունակվել է համայնքի սեփականություն համարվող գույքի արդյունավետ կառավարման միասնական տեղեկատվական համակարգերի ներդրումը, համակարգը շահագործող ներդրված համայնքների քանակը հասել է մոտ 340-ի: Գործում են քաղաքացիների սպասարկման թվով 11 գրասենյակներ: Աշխատանքները շարունակվում են:

⁴¹ www.mta.gov.am

⁴² www.mta.gov.am

ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից որոշակի աջակցություն է ցուցաբերվել սոցիալական ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի ձևավորման գործընթացին, մասնավորապես, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքային իրավունքների վերաբերյալ տեղեկատվական բազան արդիականացնելու նպատակով վերջիններիս կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա համայնքների ղեկավարների միջոցով հավաքագրվել են քաղաքացիների անձնագրային և այլ տվյալներ ու ներկայացվել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

Բջջային կապ առկա է բոլոր համայնքներում: Տեղեկատվական ցուցատախտակներ ունեն գրեթե բոլոր համայնքները: Սակայն, հանրային իրազեկման այլ միջոցներով (թերթ, տեղական հեռուստահաղորդում) ապահովվածության տեսակետից վիճակը հեռու է բավարար լինելուց: Հանրային իրազեկման միջոցներով համայնքների ապահովվածության մասին ընդհանուր տեղեկատվությունը, որը նախորդ տարիներին տեղակայված էր ՀՀ տարածքային կառավարման նախարարության կայքում⁴³, ներկայումս առկա չէ:

2012 թ. հունվարի 1-ի դրությամբ.

- 48 քաղաքապետարանները և բազմաթիվ գյուղապետարաններ ապահովված են ժամանակակից համակարգիչներով (մոտ 2500 միավոր) և հարակից գրասենյակային սարքերով (տպոդ և պատճենահանող սարքեր, պատկերամուտներ, ցանցային սարքավորումներ և այլն)⁴⁴,
- մոտ 140 համայնքներում ստեղծվել են տեղային համակարգչային ցանցեր,
- համայնքների համար ստեղծվել են տարբեր ծրագրային միջոցներ և կառավարման տեղեկատվական համակարգեր. «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ» (ՀԿՏՀ) (2007-2011 թթ)⁴⁵,
- համայնքներում ներդրված տեղեկատվական համակարգերը սպասարկելու համար ուսուցանվել են ավելի քան 4000 մասնագետներ⁴⁶:
- թվով 59 համայնքներ (40 քաղաքային և 19 գյուղական) ունեն պաշտոնական համացանցային կայքեր՝ ստեղծված տարբեր կազմակերպությունների կողմից:

ՀՀ 11 քաղաքային համայնքներում ստեղծվել են ՔՍԳ-ներ: Այդ գրասենյակները գործում են կառավարման միասնական տեղեկատվական համակարգի հիման վրա՝ քաղաքացիներին (ընակչությանը) տրամադրելով 12-20 տարբեր տիպի ծառայություններ⁴⁷:

⁴³ Տես՝ Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009 և 2010թթ.): Գիրք 4, Գ. Թումանյանի խմբագրությամբ: Երևան 2011թ. էջ 66 և 154:

⁴⁴ 2008-2009թթ. ՀՀ պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում ՀՀ համայնքների տեխնիկական հենքը համարվել է 520 համակարգիչներով և բազմաթիվ հարակից սարքավորումներով:

⁴⁵ Ստեղծվել է «ՏՀԶՎԿ» ՀԿ կողմից պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում (պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն):

⁴⁶ Մասնագետների ուսուցումը իրականացրել են «Վեկտոր պլյուս» ՍՊԸ՝ մոտ 2400 մարդ, և «ՏՀԶՎԿ» ՀԿ՝ մոտ 1600 մարդ:

⁴⁷ ՔՍԳ-ները ստեղծվել են ՀՀ կառավարության, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ), տեղական ինքնակառավարման մարմինների և «ՏՀԶՎԿ» ՀԿ համատեղ իրականացված միջոցառումների շնորհիվ:

ՏԻՄ-երը սկսել են կիրառել նաև էլեկտրոնային ստորագրություն՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն իրականացնելու և հարկային մարմիններ էլեկտրոնային տեսքով հաշվետվություններ ներկայացնելու նպատակով: 2012թ. ապրիլի 1-ի դրությամբ թվով 30 համայնքների ղեկավարներ կիրառում են էլեկտրոնային ստորագրություններ⁴⁸, իսկ 2012 թ. սեպտեմբերի դրությամբ շուրջ 60 անձ (համայնքների ղեկավարները և համայնքների այլ պաշտոնատար անձինք):

2012թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքներում զգալի թիվ են կազմում համակարգիչները, տպող սարքերը, պատկերամուտները և անխափան սնուցման սարքերը (աղյուսակ 20):

Հանրապետությունում համացանցի հասանելիության աստիճանի բարձրացմանը զուգահեռ ավելանում է այն համայնքների քանակը, որոնք ակտիվորեն կիրառում են որակյալ և մշտական համացանց: **2012թ. հունվարի 1-ի դրությամբ** 400-ից ավել համայնքներ արդեն կիրառում էին համացանց: Համացանցի կիրառման հարցում առավել ակտիվ են (զմապատկեր 6) ՀՀ Կոտայքի և Արարատի մարզերի ՏԻՄ-երը (88.1% և 79.4% համապատասխանաբար): Համացանցի կիրառման վիճակն առավել վատթար է ՀՀ Արագածոտնի և Շիրակի մարզերի ՏԻՄ-երի կողմից (14.9% և 16.8% համապատասխանաբար):

Այդուհանդերձ, համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի և, մասնավորապես, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կիրառման պահանջներն աստիճանաբար ստիպում են ՏԻՄ-երին առավել ակտիվորեն կիրառել համացանցի հնարավորությունները:

Աղյուսակ 20. Համայնքներում առկա սարքավորումները 2012թ. հունվարի 1-ի դրությամբ⁴⁹

| Մարզը | Համակարգիչների թիվը, ընդամենը | | Տպող սարքեր | Պատկերամուտներ | Անխափան սնուցման սարքեր |
|-----------------|-------------------------------|------------------------------------|-------------|----------------|-------------------------|
| | ընդամենը | Որից P4 և ավելի հզոր համակարգիչներ | | | |
| 1. Արագածոտն | 176 | 139 | 128 | 44 | 65 |
| 2. Արարատ | 302 | 272 | 220 | 73 | 151 |
| 3. Արմավիր | 300 | 266 | 210 | 47 | 138 |
| 4. Գեղարքունիք | 223 | 186 | 153 | 45 | 129 |
| 5. Լոռի | 279 | 225 | 177 | 63 | 138 |
| 6. Կոտայք | 345 | 297 | 232 | 90 | 181 |
| 7. Շիրակ | 209 | 176 | 151 | 55 | 81 |
| 8. Սյունիք | 242 | 186 | 155 | 62 | 97 |
| 9. Վայոց Ձոր | 106 | 83 | 72 | 20 | 39 |
| 10. Տավուշ | 194 | 164 | 136 | 36 | 115 |
| Ընդամենը | 2376 | 1994 | 1634 | 535 | 1134 |

⁴⁸ Աղբյուրը՝ Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականությունը: «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» Հասարակական կազմակերպություն, 2013:


⁴⁹ Աղբյուրը՝ Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականությունը: «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ, 2013:

ՀՀ համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորումը նոր գործընթաց է: Ներկա իրավիճակի նկարագրության համար անհրաժեշտ է անդրադառնալ համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորմանն ուղղված՝ պետության կողմից ընդունված ռազմավարական մոտեցումներին, օրենսդրական դաշտի վերլուծությանը, իրականացված ծրագրերին:

Ակնհայտ է, որ ներկայացված տվյալները չեն խոսում համայնքներում առկա տեխնիկական լուրջ հնարավորությունների մասին: Ավելին, դրանց սակավությունը, որակը և բարոյական մաշվածությունը լուրջ խոչընդոտներ են ստեղծում տեղեկատվայնացման բնագավառում էական հաջողությունների հասնելու ճանապարհին: Լուրջ խնդիրներ կան՝ կապված համայնքներում օգտագործվող սերվեր համակարգիչների (Server) հետ: 2012 թ. հունվարի 1-ի դրությամբ 8 քաղաքապետարաններում և մոտ 200 գյուղապետարաններում, որտեղ տեղադրված է ՀԿՏՀ, որպես սերվեր համակարգիչներ են ծառայում: Հաղորդակցության որակյալ ենթակառուցվածքի առկայության պայմաններում նշված խնդրի լավագույն լուծում կարող է հանդիսանալ տվյալների կենտրոնների (Data Centers⁵⁰) ստեղծումը:

2012թ. մայիսի 1-ի դրությամբ ՀՀ 915 համայնքներից միայն 59-ն ունի պաշտոնական կայք: Դրանք ստեղծվել են տարբեր կազմակերպությունների և անհատների կողմից, իսկ մյուս մասը հիմնված է ՀԿՏՀ վրա:

Գծապատկեր 6. Համացանցից օգտվող համայնքների տեսակարար կշիռներն ընդհանուրի մեջ՝ ըստ մարզերի (2012 թ. հունվարի 1-ի դրությամբ)



ՏԻՄ-երի համար անհրաժեշտ 31 տեկատվական համակարգերից ՀՀ համայնքներում 2012 թ. մայիսի 1-ի դրությամբ առկա է ընդամենը 13-ը: Դրանք են՝ 1. Համայնքի բյուջեի կառավարման, 2. Համայնքային գույքի կառավարման,

⁵⁰ http://en.wikipedia.org/wiki/Data_center

3. Թույլտվությունների, տեղական տուրքերի և վճարների կառավարման, 4. Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կառավարման, 5. Համայնքի բնակչության տվյալների կառավարման, 6. Կազմակերպությունների տվյալների կառավարման, 7. Մարդկային ռեսուրսների կառավարման, 8. Համայնքի ղեկավարի գործառույթների կառավարման, 9. Համայնքի ավագանու գործառույթների կառավարման, 10. Աշխատակազմի քարտուղարի գործառույթների կառավարման, 11. Գույքային հարկերի հաշվառման ավտոմատացված, 12. Համայնքային խնդիրների կառավարման, 13. Աղբահանության և սանիտարական մաքրման վճարի հաշվարկման ենթահամակարգի (գործառնական հնարավորությունների մի մասով) տեկատվական համակարգերը: Բացի դրանցից որոշ համայնքներում առկա է հաշվապահական գործառույթների կառավարման ՏՀ (հաշվապահական ծրագրեր):

Համայնքների տեխնիկական և տեղեկատվական միջոցներով ապահովվածության գնահատումը

Համայնքները տեխնիկական և տեղեկատվական միջոցներով ապահովվածության տեսանկյունից դեռևս բավարար մակարդակի վրա չեն գտնվում: Նորագույն տեխնոլոգիաները բացակայում են համայնքների մեծ մասում: Լրջագույն հարց է սերվերների բացակայությունը: Շատ համայնքներում, հատկապես փոքր, սարքավորումները և այլ տեխնիկական ու տեղեկատվական միջոցները հնացած են:

Տեղական ինֆրակառավարման մարմինների և աշխատակազմերի գեներալին բաժանումը

Տեղական ինֆրակառավարման համակարգի ընտրովի մարմիններում կանանց ներկայացվածության հարցում նախորդ տարիների միտումները, փոքր փոփոխություններով, շարունակվում են պահպանվել: Պաշտոնական վիճակագրության համաձայն 2012-ին, ինչպես և նախորդ տարիներին, քաղաքային համայնքներում կին համայնքի ղեկավար ընդհանրապես չի եղել: Գյուղական համայնքներում կին համայնքի ղեկավարների թիվը կազմել է՝ 20 կամ գյուղական համայնքների ղեկավարների 2,31 %-ը: Ինչ վերաբերում է ավագանու անդամներին, ապա 2012թ. նրանց կազմում կանանց տեսակարար կշիռը նախորդ տարիների համեմատությամբ մի փոքր ավելացել է թե քաղաքային և թե գյուղական համայնքներում՝ քաղաքային համայնքներում կազմելով 5,68 %, իսկ գյուղական համայնքներում՝ 9,51 % (աղյուսակներ 21 և 22):

2012թ. ՀՀ մարզերի համայնքներում կայացած ընտրությունների արդյունքների համաձայն, որպես համայնքի ղեկավար է ընտրվել 11 կին: Ավագանու ընտրված թեկնածուների կազմում կանանց տեսակարար կշիռը կազմել է 8,3 % (աղյուսակ 23):

Ինչ վերաբերվում է ՏԻՄ-երի աշխատակազմերին, ապա այս դեպքում, չնայած

2012-ին արձանագրված որոշ փոփոխություններին, նախորդ տարիների նման գենդերային անհավասարություն շատ քիչ է նկատվել: 2012-ին քաղաքային համայնքների աշխատակազմերում կանանց տեսակարար կշիռը կազմել է՝ 43,3%, իսկ գյուղական համայնքներում՝ 48,6%: Ընդհանուր առմամբ, 2012-ին ՀՀ մարզերի համայնքներում ՏԻՄ-երի աշխատակազմի անդամների կազմում կանանց տեսակարար կշիռը կազմել է 47,3 % (աղյուսակներ 21 և 22):

Աղյուսակ 21. Քաղաքային համայնքների ղեկավարների, ավագանու անդամների և համայնքի ղեկավարի աշխատակազմերի գենդերային բաժանումը, 2012 թ.⁵¹

| Հ/հ | Մարզ | Քաղաքապետեր | | Քաղաքապետի տեղակալներ | | Աշխատակազմի քարտուղարներ | | Ավագանու անդամներ | | Աշխատակազմի անդամներ | |
|-----|-----------------|-------------|---------|-----------------------|---------|--------------------------|---------|-------------------|---------|----------------------|---------|
| | | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| 1 | Արագածոտն | - | 3 | - | 5 | - | 3 | 2 | 35 | 45 | 52 |
| 2 | Արարատ | - | 4 | - | 7 | - | 4 | 2 | 54 | 91 | 100 |
| 3 | Արմավիր | - | 3 | - | 5 | 1 | 2 | - | 41 | 69 | 99 |
| 4 | Գեղարքունիք | - | 5 | - | 5 | 3 | 2 | 3 | 64 | 61 | 111 |
| 5 | Լոռի | - | 8 | 1 | 4 | 4 | 4 | 8 | 70 | 163 | 182 |
| 6 | Կոտայք | - | 7 | - | 8 | 3 | 4 | 3 | 86 | 158 | 209 |
| 7 | Շիրակ | - | 3 | - | 3 | 1 | 2 | 1 | 46 | 139 | 234 |
| 8 | Սյունիք | - | 7 | - | 6 | 4 | 3 | 7 | 71 | 114 | 120 |
| 9 | Վայոց Ձոր | - | 3 | - | 3 | 2 | 1 | 3 | 30 | 33 | 41 |
| 10 | Տավուշ | - | 5 | - | 4 | 3 | 2 | 4 | 51 | 59 | 74 |
| | <i>Ընդամենը</i> | - | 48 | 1 | 50 | 21 | 27 | 33 | 548 | 932 | 1222 |

ՀՀ տարածքային կառավարության նախարարության տվյալների համաձայն, 2012թ. տարեվերջի դրությամբ համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց կազմում կանանց տեսակարար կշիռը կազմել է 51,6 %, իսկ տղամարդկանցը՝ 48,4 %⁵²:

⁵¹ Աղբյուրը՝ «Հայաստանի կանայք և տղամարդիկ 2013», վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2013:

⁵² Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2012 թ. գործունեության հաշվետվություն:

Աղյուսակ 22. Գյուղական համայնքների ղեկավարների, ավագանու անդամների և համայնքի ղեկավարի աշխատակազմերի գեներային բաժանումը, 2012 թ.⁵³

| Հ/հ | Մարզ | Գյուղապետեր | | Գյուղատնտեսական տնտեսավարներ | | Աշխատակազմի քարտուղարներ | | Ավագանու անդամներ | | Աշխատակազմի անդամներ | |
|-----|-------------|-------------|---------|------------------------------|---------|--------------------------|---------|-------------------|---------|----------------------|---------|
| | | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| 1 | Արագածոտն | 0 | 111 | 2 | 41 | 38 | 66 | 31 | 580 | 443 | 417 |
| 2 | Արարատ | 1 | 92 | 0 | 50 | 52 | 34 | 46 | 597 | 534 | 517 |
| 3 | Արմավիր | 2 | 92 | 2 | 88 | 38 | 49 | 58 | 653 | 298 | 355 |
| 4 | Գեղարքունիք | 2 | 85 | 3 | 63 | 20 | 67 | 40 | 508 | 193 | 457 |
| 5 | Լոռի | 7 | 98 | 9 | 60 | 59 | 33 | 78 | 516 | 257 | 297 |
| 6 | Կոտայք | 1 | 59 | 3 | 41 | 33 | 26 | 34 | 412 | 311 | 388 |
| 7 | Շիրակ | 2 | 114 | 6 | 56 | 51 | 54 | 70 | 568 | 347 | 240 |
| 8 | Սյունիք | 4 | 98 | 12 | 44 | 55 | 35 | 104 | 407 | 317 | 176 |
| 9 | Վայոց Ձոր | 0 | 41 | 2 | 9 | 17 | 24 | 8 | 214 | 157 | 194 |
| 10 | Տավուշ | 1 | 56 | 0 | 45 | 30 | 24 | 36 | 350 | 301 | 293 |
| | Ընդամենը | 20 | 846 | 39 | 497 | 393 | 412 | 505 | 4805 | 3158 | 3334 |

2012-ին Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերում գեներային անհավասարություն գրեթե չի նկատվել: Այնտեղ կանանց տեսակարար կշիռը կազմել է՝ 51,2 %: Մնացյալ պաշտոններում, մեկ բացառությամբ կարելի է ասել, որ կին չի եղել (աղյուսակ 24): Երևանի ավագանու 65 անդամների կազմում կանանց թիվը եղել է 5⁵⁴:

Համայնքներում գեներային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով 2012թ. ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից իրականացված «Լավագույն համայնքի ղեկավար՝ գեներային խնդիրների լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության արդյունքներով լավագույն համայնքի ղեկավարներ են ճանաչվել Արարատի մարզի Արտաշատ քաղաքային ու Լոռու մարզի Մեծավան գյուղական համայնքների ղեկավարները⁵⁵:

2012թ. մշակվել է ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում գեներային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների օրինակելի կառուցողությունը, որը հաստատվել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համատեղ հրամանով⁵⁶:

⁵³ Աղբյուրը՝ «Հայաստանի կանայք և տղամարդիկ 2013», վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2013:

⁵⁴ Աղբյուրը՝ «Հայաստանի կանայք և տղամարդիկ 2013», վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2013

⁵⁵ Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2012 թ. գործունեության հաշվետվություն

⁵⁶ Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2012 թ. գործունեության հաշվետվություն

Աղյուսակ 23. 2012թ. ՀՀ մարզերի համայնքներում կայացած ՏԻՄ-երի ընտրությունների ժամանակ ընտրված թեկնածուների գենդերային բաժանումը⁵⁷

| Հ/հ | Մարզ | Ընտրված համայնքի ղեկավարների թիվը | | | Ընտրված ավագանու անդամների թիվը | | |
|-----|-----------------|-----------------------------------|------------|-----------|---------------------------------|-------------|------------|
| | | Ընդամենը | Այդ թվում | | Ընդամենը | Այդ թվում | |
| | | | Տղամարդ | Կին | | Տղամարդ | Կին |
| 1 | Արագածոտն | 91 | 91 | 0 | 538 | 515 | 23 |
| 2 | Արարատ | 74 | 74 | 0 | 614 | 577 | 37 |
| 3 | Արմավիր | 76 | 74 | 2 | 661 | 604 | 57 |
| 4 | Գեղարքունիք | 57 | 57 | 0 | 390 | 382 | 8 |
| 5 | Լոռի | 95 | 91 | 4 | 598 | 523 | 75 |
| 6 | Կոտայք | 51 | 50 | 1 | 468 | 432 | 36 |
| 7 | Շիրակ | 94 | 93 | 1 | 596 | 552 | 44 |
| 8 | Սյունիք | 85 | 82 | 3 | 521 | 430 | 91 |
| 9 | Վայոց Ձոր | 31 | 31 | 0 | 220 | 210 | 10 |
| 10 | Տավուշ | 50 | 50 | 0 | 302 | 274 | 28 |
| | <i>Ընդամենը</i> | <i>704</i> | <i>693</i> | <i>11</i> | <i>4908</i> | <i>4499</i> | <i>409</i> |

Աղյուսակ 24. Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի գենդերային բաժանումը, 2012 թ.⁵⁸

| Պաշտոն | Կին | Տղամարդ |
|--|-----|---------|
| Երևանի քաղաքապետ | - | 1 |
| Երևանի քաղաքապետի տեղակալներ | - | 3 |
| Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար (այդ թվում՝ վարչական շրջանների աշխատակազմերի քարտուղարներ) | 1 | 12 |
| Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ | 968 | 924 |
| Երևանի վարչական շրջանների ղեկավարներ | - | 12 |
| Երևանի վարչական շրջանների ղեկավարի տեղակալներ | - | 19 |

⁵⁷ Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, Տեղեկանք 2012 թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների վերաբերյալ (փետրվարի 12-ին, հունիսի 10-ին և 24-ին, հուլիսի 8-ին, օգոստոսի 5-ին և 26-ին, սեպտեմբերի 9-ին, 23-ին և 30-ին, հոկտեմբերի 14-ին և 28-ին, նոյեմբերի 4-ին և 18-ին, դեկտեմբերի 9-ին)

⁵⁸ Աղբյուրը՝ «Հայաստանի կանայք և տղամարդիկ 2013», վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2013

6.2 Համայնֆային ծառայությունը

ՀՀ համայնֆային ծառայության օրենսդրական հիմքերը

«Համայնֆային ծառայության մասին» ՀՀ օրենքով ամրագրվում են համայնֆային ծառայության հիմնական սկզբունքները, կարգավորվում են համայնֆային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, համայնֆային ծառայության պաշտոնի նշանակման, համայնֆային ծառայողների ատեստավորման և վերապատրաստման, համայնֆային ծառայության կադրերի ռեզերվի, համայնֆային ծառայողների իրավական վիճակի, համայնֆային ծառայության կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

2012թ. քվականի մարտի 19-ին «Համայնֆային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ: Դրանցից առաջինով «Համայնֆային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում (որը վերաբերում է համայնքում ավագանու նիստի օրակարգի հրապարակմանը) «առնվազն հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային տեղեկատվության այլ միջոցներով» բառերը փոխարինվել է ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12.1-ին հոդվածի 1-ին մասում նշված վայրերում փակցնելու միջոցով, ինչպես նաև <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով: Երկրորդ փոփոխությամբ «Համայնֆային ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի (որը վերաբերում է վճարովի այլ աշխատանք կատարելու համայնֆային ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումներին) «և ստեղծագործական» բառերը փոխարինվել է «ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող» բառերով, իսկ երրորդ փոփոխությամբ նույն հոդվածի 2-րդ մասից (որը վերաբերում է այն հարցին, որ համայնֆային ծառայության պաշտոնում նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, համայնֆային ծառայողը օրենքով սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ և այլն) ունենալու դեպքում այն հանձնել հավատարմագրային կառավարման) հանվել է «10 և ավելի տոկոս» բառերը, որը վերաբերում էր բաժնեմասին, բաժնետոմսին կամ փային:

Համայնֆային ծառայության ինստիտուտի զարգացման գործընթացները հաշվետու տարում եղել են ավելի համակարգված, սակայն դեռևս հեռու են զարգացման օպտիմալ տեմպերից:

ՀՀ համայնֆային ծառայության պաշտոնների ավելի քան 60%-ը կազմում են կրտսեր պաշտոնները, մոտ 25%-ը առաջատար պաշտոնները և 15%-ը գլխավոր պաշտոնները (աղյուսակ 25):

Աղյուսակ 25. ՀՀ համայնքների աշխատակազմերում համայնքային ծառայության փաստացի զբաղեցված պաշտոնների թիվը 2012թ.⁵⁹

| N | Անվանումը | Գլխավոր | Առաջատար | Կրտսեր | Ընդամենը |
|----|-----------------|------------|-------------|-------------|-------------|
| 1 | Երևան | 87 | 600 | 790 | 1477 |
| 2 | Արագածոտն | 105 | 40 | 319 | 464 |
| 3 | Արարատ | 92 | 108 | 305 | 505 |
| 4 | Արմավիր | 90 | 73 | 437 | 600 |
| 5 | Գեղարքունիք | 87 | 122 | 354 | 563 |
| 6 | Լոռու | 96 | 123 | 426 | 645 |
| 7 | Կոտայք | 67 | 123 | 379 | 569 |
| 8 | Շիրակ | 112 | 159 | 228 | 499 |
| 9 | Սյունիք | 105 | 65 | 203 | 373 |
| 10 | Վայոց Ձոր | 46 | 54 | 83 | 183 |
| 11 | Տավուշ | 57 | 70 | 232 | 359 |
| | Ընդամենը | 948 | 1537 | 3756 | 6237 |

Համայնքային ծառայողների թվաքանակի հարաբերակցությունը համայնքի բնակչությանը

Համայնքային ծառայողների թվի բացարձակ մեծությունը դեռևս ոչինչ չի վկայում համայնքի կամ մարզի կտրվածքով դրա մեծ կամ փոքր լինելու մասին: Ստորև բերված աղյուսակ 26-ը բավարար պատկերացում է տալիս ըստ բնակչության թվի համայնքային ծառայողների պաշտոնների տեսակարար կշիռների վերաբերյալ:

Աղյուսակ 26. 2012թ. ՀՀ համայնքների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոնների թվի⁶⁰ տեսակարար կշիռը բնակչության թվի⁶¹ կազմում ըստ Երևան քաղաքի և մարզերի

| N | Անվանումը | Փաստացի զբաղեցված համայնքային ծառայողների ընդհանուր թիվը (ՓԾԹ) | Բնակչության թիվը, հազար մարդ, (ԲԹ) | ՓԾԹ/ ԲԹ, % |
|----|-----------------|--|------------------------------------|--------------|
| 1 | Երևան | 1477 | 1 061.0 | 0,139 |
| 2 | Արագածոտն | 464 | 133.0 | 0,349 |
| 3 | Արարատ | 505 | 260.7 | 0,194 |
| 4 | Արմավիր | 600 | 266.2 | 0,225 |
| 5 | Գեղարքունիք | 563 | 235.4 | 0,239 |
| 6 | Լոռու | 645 | 235.6 | 0,274 |
| 7 | Կոտայք | 569 | 254.6 | 0,223 |
| 8 | Շիրակ | 499 | 252.1 | 0,198 |
| 9 | Սյունիք | 373 | 141.8 | 0,263 |
| 10 | Վայոց Ձոր | 183 | 52.4 | 0,349 |
| 11 | Տավուշ | 359 | 128.6 | 0,279 |
| | Ընդամենը | 6237 | 3 021.4 | 0,206 |

⁵⁹ www.mta.gov.am, Երևանի և ՀՀ մարզերի համայնքների ղեկավարների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց դեմոգրաֆիկ պատկերը:

⁶⁰ www.mta.gov.am

⁶¹ ՀՀ ԱԿԾ, Հրապարակումներ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2014թ.,

Երևանի և ՀՀ մարզերի համայնքների ղեկավարների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց դեմոգրաֆիկ պատկերը 2012թ. ներկայացված է հավելված 5-ում:

6.3. Համայնքային ծառայողների վերադասրասումը. Համայնքային ծառայողների վերադասրասման համակարգի գնահատումը

Յուրաքանչյուր համայնքային ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման: Վերապատրաստումն անցկացվում է նաև համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով համայնքային ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում՝ համայնքային ծառայողի կամ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմինը:

Համայնքային ծառայողների վերապատրաստման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմինը:

Համայնքային ծառայողների վերապատրաստումներն իրականացվում են մրցութային կարգով ընտրված կազմակերպությունների միջոցով: Սկսած 2010 թվականից, վերապատրաստումներն անցկացվել են առանձին մրցույթներով՝ ՏԻՄ-երի համար (համայնքների ղեկավարներ, ավագանիների անդամներ) և համայնքային ծառայողների համար:

ՀՀ տարածքային կառավարման նախարար փոխվարչապետի 21.06.2012 թ. N 79 – Ա հրամանի 2-րդ կետով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքապետարանի (գյուղապետարանի) աշխատակազմի վերապատրաստված համայնքային ծառայողի հաշվառման մատյանի վարման մեթոդական ուղեցույցը»: Հաշվառումը կարող է իրականացվել թղթային և(կամ) էլեկտրոնային տարբերակով:

2012 թվականին հերթական վերապատրաստում է անցել 1532 համայնքային ծառայող, որից 1028-ը՝ պետական բյուջեի, 280-ը՝ համայնքի բյուջեի (Երևանի քաղաքապետարանի համայնքային ծառայողները), իսկ 224-ը՝ այլ միջոցների հաշվին: 2010 թվականից ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նախաձեռնել է տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների աշխատակիցների վերապատրաստումը, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009–2012 թթ. միջոցառումների ծրագրի մի շարք

կետերի կատարման արդյունավետության բարձրացմամբ: 2012 թվականին տեղական ինքնակառավարման մարմիններից վերապատրաստվել են ընդհանուր առմամբ 740 համայնքի ղեկավարներ և ավագանիների անդամներ⁶² (աղյուսակ 27):

Աղյուսակ 27. 2012 թվականին վերապատրաստված համայնքային ծառայողների և ՏԻՄ-երի թիվը ըստ մարզերի

| N | Անվանումը | Վերապատրաստվածների թիվը | |
|-----|-----------------|-------------------------|-----------------------------------|
| | | Համայնքային ծառայողներ | Տեղական ինքնակառավարման մարմիններ |
| 1. | Արագածոտն | 260 | 89 |
| 2. | Արարատ | 81 | 80 |
| 3. | Արմավիր | 98 | 77 |
| 4. | Գեղարքունիք | 82 | 78 |
| 5. | Լոռի | 153 | 98 |
| 6. | Կոտայք | 75 | 56 |
| 7. | Շիրակ | 117 | 96 |
| 8. | Սյունիք | 215 | 96 |
| 9. | Վայոց Ձոր | 40 | 26 |
| 10. | Տավուշ | 131 | 44 |
| | Ընդամենը | 1252 | 740 |
| 11. | Երևան | 280 | - |
| | Ընդամենը | 1532 | 740 |

2012 թվականին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների վերապատրաստում իրականացրել է Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտը (տե՛ս աղյուսակ 28), համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստումը՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիան (տե՛ս աղյուսակ 29), իսկ մարզերի համայնքների համայնքային ծառայողներինը՝ Հայաստանի համայնքների միությունը:

Աղյուսակ 28. 2012 թվականին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերապատրաստված համայնքային ծառայողների թվաքանակն ըստ բնագավառի⁶³

| Բնագավառը | համայնքային ծառայողների թվաքանակը |
|--|-----------------------------------|
| Ընդհանուր և իրավական հարցերի | 142 |
| Ֆինանսատնտեսական հարցերի | - |
| Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության հարցերի | 138 |
| Սոցիալական հարցերի | - |
| Ընդամենը | 280 |

⁶² www.mta.gov.am

⁶³ www.icm.am

Աղյուսակ 29. 2012 թ. վերապատրաստում անցած համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների թիվը

| Փաստացի հայտերի թիվ | Վերապատրաստված համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների թիվը | | Չվերապատրաստված համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների թիվը | |
|----------------------|---|----------------------|--|--------------------|
| 800 | 740 | 164 համայնքի ղեկավար | 60 | 4 համայնքի ղեկավար |
| | | 576 ավագանու անդամ | | 56 ավագանու անդամ |
| Խմբերի թիվ 35 | | | | |

6.4 Միջազգային աջակցությունը

Տեղական ինքնակառավարման ոլորտի կայացմանն ու զարգացմանը նպաստող գործոնների թվում, 2012 թվականին նույնպես, շարունակում են մեծ դեր խաղալ Հայաստանում տարբեր առաքելություններ իրականացնող միջազգային կազմակերպությունները և նրանց հայաստանյան մասնաճյուղերը:

2012 թվականին ՀՀ համայնքներում շարունակվել է մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից 2008-2013 թվականների համար նախատեսված ծրագրերի⁶⁴ իրականացումը (համաֆինանսավորմամբ), որի վերաբերյալ տարեկան կտրվածքով անհրաժեշտ տեղեկատվությունը բացակայում է (տես՝ աղյուսակ 30):

Աղյուսակ 30. 2008-2013 թթ. ՀՀ համայնքներում իրականացված ծրագրերի վերաբերյալ⁶⁵

| Հ/Հ | Իրականացնող կազմակերպություն | Ծրագրում ընդգրկված համայնքների թիվը | Ֆինանսավորման չափը (ՀՀԴ) | Համաֆինանսավորման չափը (ՀՀԴ) |
|-----------------|---|-------------------------------------|--------------------------|------------------------------|
| 1. | Հայաստանի Մարտահրավերներ - Հայաստան (ՀՄՀ-Հայաստան) | 29 | 1.880.085.569 | 282.012.835 |
| 2. | Համաշխարհային բանկ «Երրորդ կարգի ոռոգման ցանցերի վերականգնում» ծրագիր | 19 | 1.505.758.841 | 88.400.083 |
| 3. | Համաշխարհային բանկ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիր | 55 | 8.659.980.00 | 2.163.980.000 |
| 4. | «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾՎԿԳ» ՊՀ | 38 | 5.907.0268.625 | 181.649.876 |
| 5. | Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ (ՀՄՆՀ) | 241 | 18.500.000.000 | 1.650.000.000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 382 | 36.451 մլրդ | 4.365 մլրդ |

⁶⁴ http://mta.gov.am/u_files/file/norutyunner/intervi%D0%B5w%20dec%202013/total_2008-2013t%20new.pdf

⁶⁵ http://mta.gov.am/u_files/file/norutyunner/intervi%D0%B5w%20dec%202013/total_2008-2013t%20new.pdf

Տեղական ինքնակառավարման համակարգում գործող միջազգային կազմակերպությունները, նրանց կողմից իրականացվող ծրագրերը՝ ըստ ՏԻ ոլորտների, սարածաճրջանների և ներդրումների ուղղությունների

Տեղական ինքնակառավարման զարգացման գործում 2012 թվականի ընթացքում շարունակվել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ GIZ)՝ «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագիր

Ծրագիրը ներառում է երեք թեմատիկ ոլորտներ.

- Տարածքային բարեփոխումներ՝ համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի կիրարկման նպատակով՝ ուսումնասիրությունների իրականացում ՀՀ չորս մարզերում:

- Քաղաքացիների սպասարկման գրասենյակներ և համայնքների էլ. կառավարում: Նախկինում Հայաստանի 10 համայնքներում ԳՄՀԸ-ի օժանդակությամբ հիմնվել են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ և ներմուծվել է էլեկտրոնային կառավարման համակարգ՝ Կառավարման տեղեկատվական համակարգը: Համայնքների համար սա նշանակում է ներքին վարչարարական գործընթացների վերափոխում: Մեկ պատուհանի սկզբունքի ներմուծմամբ քաղաքացիները բոլոր հարցերի համար (օրինակ՝ սոցիալական ծառայություններ, շինարարության թույլատվություններ և այլն) կարող են դիմել մեկ կենտրոնացված գրասենյակի, որով ավելի մատչելի է դառնում հանրային ծառայությունների մատուցումը: Միաժամանակ, բարելավվում է համայնքային կառավարման արդյունավետությունն ու թափանցիկությունը: Նախարարությունը հետագայում ցանկանում է ավելացնել քաղաքացիների սպասարկման գրասենյակների թիվը և խթանել Կառավարման տեղեկատվական համակարգի օգտագործումը այս պահին իրականացվող ուսումնասիրության արդյունքների հիման վրա:

- Համայնքային ծրագրային բյուջետավարում՝ ընտրված համայնքներում փորձնական ծրագրերի իրականացման օժանդակություն: Դրա մի մասն է կազմում նաև ուղեցույցների նախագծերի պատրաստումը, գեներ-զգայուն խնդիրների և մասնակցության հարցերի ներգրավումը:

2012թ. ծրագիրը օժանդակել է ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը՝ տարածքային և համայնքային կառավարման ներկայացուցիչների միջև համագործակցության համար կարողությունների զարգացման ռազմավարության մշակման գործում:

Գերմանական զարգացման բանկ (KfW)

Գերմանական զարգացման բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միջև 16.08.2011թ. կնքված եռակողմ ֆինանսավորման համաձայնագրով նախատեսված՝ Գերմանական զարգացման բանկի ֆինանսական համագործակցության շրջանակներում 2012 թվականի հունիսի 29-ին կնքվել է «Վանաձոր քաղաքի կոշտ կենցաղային թափոնների համակողմանի կառավարման համակարգի մշակման իրագործելիության հետազոտություն» ծրագրի խորհրդատվական պայմանագիր, որի համաձայն մշակվել է «Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման հայեցակարգը», որը քննարկվել և համաձայնեցվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ:

«Քաունթերփարթ ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչություն և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն

Քաունթերփարթ ինտերնեշնլը չորս հասարակական կազմակերպությունների (Համայնքների ֆինանսիստների միավորում, Հայաստանի համայնքների միություն, Հայաստանի ավագանիների ասոցիացիա և Մարդկային զարգացման միջազգային կենտրոն) հետ նախաձեռնել է «Տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ» փաստաթղթի մշակումը: Փաստաթղթում փորձ է արվում ներկայացնելու տեղական ինքնակառավարման ապակենտրոնացմամբ պայմանավորված պետության և ՏԻՄ-երի իրավասությունների հստակ տարանջատման, տեղական ժողովրդավարության մշակույթի ձևավորման իրական մեխանիզմները, տեղական ինքնակառավարման բնագավառը կարգավորող հրատապ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը, ՏԻՄ ընտրական համակարգի հետագա կատարելագործման, վարչական և ֆինանսական ապակենտրոնացման մի շարք առանցքային հարցերի լուծումներ:

ՏԻՄ-երի և քաղաքացիական հասարակության համագործակցության դրամաշնորհների շրջանակում իրականացվել են 14 ծրագրեր: Ծրագրերն ուղղված էին, մասնավորապես, համայնքների ռազմավարական պլանավորմանը, համայնքային բյուջեների լուծման կազմակերպմանը, կենցաղային աղբի հեռացման բարելավմանը և այլն: Ընդհանուր գումարը՝ 77 մլն դրամ:

ՏԻՄ-երի խրախուսման դրամաշնորհների շրջանակում 31 ծրագրերը ավրտվել են, ևս 13 ծրագրեր կավարտվեն մինչև 2013թ. ապրիլ: Ծրագրերի ընդհանուր արժեքը շուրջ 372 մլն դրամ է, որից 182 մլն կազմել է Քաունթերփարթի ֆինանսավորումը, իսկ 190 մլն՝ համայնքների համաֆինանսավորումը: Նշված դրամաշնորհներով 2013թ. Քաունթերփարթը նախատեսում է բոլոր 43 գործընկեր համայնքներում ֆինանսավորել ծրագրեր շուրջ 430 մլն դրամի սահմաններում:

Քաղաքացիական նախաձեռնության և համայնքային զարգացման դրամաշնորհների շրջանակում իրականացվել են 31 ծրագրեր հիմնականում գյուղական համայնքներում՝ շուրջ 52 մլն դրամի արժողությամբ, որին ավելացել է

մոտ 60% համայնքների ներդրում: Այս դրամաշնորհների շրջանակներում 2013թ. նախատեսվում է մոտ 86 մլն դրամի սահմաններում ծրագրեր ֆինանսավորել բոլոր 43 համայնքներում:

41 մլն դրամ հատկացվել է Համայնքային երիտասարդական նախաձեռնությունների ակումբներին /ՀԵՆԱ-ներին/` փոքր համայնքային նախաձեռնություններ իրականացնելու, քաղաքացիական ակտիվության և կամավորականության խրախուսման նպատակով:

Աջակցություն է տրամադրվել նաև գործող համայնքների միություններին Տավուշի, Լոռու, Արարատի և Սյունիքի մարզերում: Օժանդակել են մեկ համայնքների միության ստեղծմանը Շիրակի մարզում (կենտրոնը Ախուրյանում):

Համայնքային ծառայողների, ավագանու և համայնքի ղեկավարների ուսուցման նպատակով մշակվել է 14 մոդուլից բաղկացած ուսումնական ծրագիր, հիմնվել է 2 ուսումնական կենտրոն Վանաձոր և Սիսիան քաղաքներում, պատրաստվել են շուրջ 60 դասընթացավարներ, 15 համայնքների ընդհանուր թվով 60 մասնակիցների համար անցկացվել են դասընթացներ: 2013թ. ակնկալվում է ևս մեկ ուսումնական կենտրոնի բացում և շարունակական դասընթացներ գործընկեր համայնքների ավագանիների, աշխատակազմի և համայնքների ղեկավարների համար:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և Ասիական զարգացման բանկը «Կայուն քաղաքաշինական զարգացման ներդրումային ծրագրի» (Sustainable Urban Development Investment Program)

երկրորդ տրանշի շրջանակներում աշխատանքներ են իրականացնում 4 քաղաքների համար (Գյումրի, Վանաձոր, Գիլիջան, Ջերմուկ) քաղաքաշինության պլան և ներդրումային ծրագիր մշակելու ուղղությամբ: Ծրագրի հիմնական նպատակներն են.

- տեղական համախոհների հետ միասին այս 4 քաղաքների համար մշակել 10-ամյա քաղաքային զարգացման պլան` կենտրոնանալով տնտեսական և գրոսաշրջության զարգացման վրա.

- բացահայտել անհրաժեշտ ներդրումներ` բարելավելու ենթակառուցվածքների ու ծառայությունների ոլորտը և մշակելու կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագիր.

- բացահայտել մասնավոր հատվածի հնարավորությունները և սահմանել համապատասխան կարգավորումներ, ինստիտուցիոնալ բարեփոխումներ, կարողությունների զարգացում` խթանելով համայնքի բազայի վրա հիմնված էկոտուրիզմը և տեղական արտադրությամբ արդյունաբերությունը.

- աջակցել հաղորդակցության/գովազդային/ նյութեր պատրաստելուն` քաղաքային զարգացման պլանը /ԲԶՊ – CDP/ ներդրումային հնարավորությունները շուկա դուրս բերելուն, գովազդելուն ու ցուցադրելուն և յուրաքանչյուր քաղաքում առաջարկված մասնավոր հատվածի ներգրավածությանը.

- մշակել ներդրումային ծրագիր` ծախսերի նախահաշվով և իրականացման գրաֆիկով, քաղաքի տեսլականը գովազդելու համար կպատրաստվեն հաղոր-

դակցության ու մատակարարման նյութեր, որի հիման վրա կձևավորվի քաղաքի ինտերնետ կայքը և կկազմակերպվի ցուցահանդես քաղաքի տնտեսական ոլորտի զարգացման թեմայով⁶⁶:

Առևտրային աջակցություն Կենտրոնական Ասիայի, Հարավային Կովկասի և ԱՊՀ երկրներին (Հայաստան) ծրագիրը մեկնարկել է 2011-ին և ավարտվելու է 2013-ին: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Տավուշի մարզում, ունի ռազմավարական և առանցքային նշանակություն դեպի ՌԴ և ԱՊՀ այլ երկրներ, ինչպես նաև Եվրոպա և Վրաստանի միջով Թուրքիա բեռնափոխադրումների համար: Այս ծրագրով Ֆինլանդիայի կառավարության և ՓՄՁ ՋԱԿ համագործակցությամբ ՄԱՋԿ-ը աջակցել է տնտեսական զարգացմանը՝ խթանելով առևտուրը Տավուշի մարզում՝ ստեղծելով հանրային ոլորտի մարմինների կարողություններ և գործարար աջակցման հաստատություններ առևտրի և արտահանման խթանման համար, հզորացրել շուկայի տեղեկատվական կենտրոնի կարողությունները հաճախորդներին համապատասխան ծառայությունների մատուցման համար: Ծրագրի իրականացման արդյունքում 150 – ից ավելի շահառուներ կստանան մասնագիտացված դասընթացներ բիզնեսի պլանավորման, ազդովերամշակման, ազդոբիզնեսի, չոր մրգերի արտադրման և ջերմոցային տեխնոլոգիաների վերաբերյալ, կստեղծվի առցանց շուկա վեբ պորտալ, չոր մրգերի արտադրությամբ զբաղվող տասնյակ անձինք կստանան համապատասխան սարքավորումներ: Պտղավան համայնքի 17 տնային տնտեսություններ և մարզի այլ համայնքերի 12 տնային տնտեսություններ կստանան 120 մ² ջերմոցներ՝ կաթիլային ռոռզմամբ և բարձրորակ բուսական օնկիներով: Ծրագրի ֆինանսավորումն իրականացնում է Ֆինլանդիայի կառավարությունը՝ 330,000 EUR, որից 2011-2012 թթ. ծախսված միջոցները կազմել են 155,240.39 EUR.⁶⁷:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության, UNICEF-ի և Համայնքների ֆինանսիստների միավորման համագործակցության արդյունքում մշակվել է ՀՀ տարածքային սոցիալական պլանավորման հայեցակարգը, որի հիման վրա մշակվել և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի թիվ 180-Ա և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թիվ 124-Ա/1 համատեղ հրամանով հաստատվել է «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագրի շրջանակում համայնքի սոցիալական կարիքների գնահատման, դրա հիման վրա սոցիալական ծրագրերի մշակման ուղեցույցը հաստատելու մասին» մեթոդական ուղեցույցը: Այդ ծրագրի շրջանակներում 2012 թվականի ընթացքում World Vision կազմակերպության հետ համագործակցության արդյունքում իրականացվել են հանրապետության թվով 6 մարզերի 170 համայնքների շուրջ 160 սոցիալական աշխատողների վերապատրաստման աշխատանքներ:

⁶⁶ www.mta.gov.am

⁶⁷ http://www.am.undp.org/content/armenia/en/home/operations/projects/poverty_reduction/aid-for-trade-for-central-asia—south-caucasus—and-western-cis-.html

Աջակցություն է ցուցաբերվել նաև ինտեգրված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ շենքային պայմանների տրամադրման գործընթացին⁶⁸:

Միջազգային կազմակերպությունների գործունեության համակարգվածության և միասնականության զննահատմը

ՀՀ-ում ծրագրեր իրականացնող տարբեր միջազգային կազմակերպությունների դերը շարունակում է զգալի մնալ ՀՀ համայնքներում իրականացվող տարատեսակ ծրագրերի առումով: Նրանք հիմնականում իրենց գործունեությամբ ձգտում են անշրջելի դարձնել ժողովրդավարության և ազատական տնտեսության սկզբունքներն՝ անցումային շրջանում գտնվող մեր երկրում: Իրենց առաքելություններն իրականացնելիս, նրանք համագործակցում են ՀՀ կառավարության, ՏԻՄ-երի, հաճախ նաև՝ միմյանց հետ: Սակայն, դեռևս նրանց գործունեության արդյունավետությունը հաճախ տուժում է իրականացվող ծրագրերի և համայնքային առաջնահերթ կարիքների չհամընկնելու պատճառով: Իրականացվող ծրագրերը հաճախ կրում են ոչ ինստիտուցիոնալ բնույթ:

7. Համայնքային ծառայությունների մատուցումը

7.1 Համայնքների կողմից մատուցվող հանրային ծառայությունները

2012 թվականին համայնքներին վերապահված ծառայությունների մատուցման բնագավառում կատարվել են մեծ ծավալի և տարաբնույթ աշխատանքներ, որոնք առավել մանրամասն ներկայացված են ըստ ծառայությունների առանձին ոլորտների:

Կանաչադաշտում և բարեկարգում

Երևան քաղաքում 2012 թվականին տնկվել է մոտ 40 000 ծառ և թուփ: Ծառերի կաչողականությունը կազմել է 70 տոկոս: Քանի որ սիզամարգային խոտածածկն առավել օժտված է փոշեկլանիչ հատկությամբ, ուստի մեծ ուշադրություն է դարձվում ոչ միայն դրանց գեղագիտական, այլև բնապահպանական նշանակությանը: 2012 թվականին բարելավվել և ընդլայնվել են սիզամարգային և ծաղկային տարածքները, որոնց ընդհանուր մակերեսը կազմել է 17.9 հա: Մայրաքաղաքին վայել տեսքն ապահովելու համար Երևանում զարգացել է ծաղկապատման մշակույթը, որն, ըստ էության, տարբեր լուծումներով ձևավորում է:

⁶⁸ www.mta.gov.am

2012 թվականին բարեկարգվել և ծաղկապատվել են Երևանի մուտքերը⁶⁹: «Էյ թի Փի»-ի առաջնային Համայնքային ծառատունկ ծրագիրը տնկել է 70,383 մրգատու և դեկորատիվ ծառ, մինչ SEEDS ծրագիրը՝ 342,099 ծառ Հայաստանի հյուսիսում՝ անտառավերականգնման նպատակով⁷⁰:

Երևան քաղաքի զարգացման ծրագրերի շրջանակում մայրաքաղաքում շարունակվում են բարեկարգվել, կանաչապատվել ու կահավորվել բակային տարածքները: Շենգավիթ վարչական շրջանում բացվել են նորակառույց հերթական երկու բակեր և ֆուտբոլի մեկ փոքր խաղադաշտ: Ծրագիրն առավել քան սպասված էր սեփական տնտեսություններից կազմված Արարատյան փողոցում ապրող բնակիչների համար: Երբևէ խաղահրապարակ ու հանգստյան գոտի չունեցող այս քաղամասում անխնամ տարածքի փոխարեն ներկայումս վառ գույներով ձևավորված խաղահրապարակ է: Շարուրի փողոցի 25, 27 և 29 շենքերի բակում շահագործման է հանձնվել ֆուտբոլի նոր, փոքր խաղադաշտ՝ ապահովված անհրաժեշտ բոլոր պայմաններով⁷¹:

Գեղեցիկ գրուցարաններով, մանուկների համար խաղահրապարակներով է կահավորվել նաև Աերացիա քաղամասի 5/1 շենքի բակը: Բարեկարգման ծրագրի շրջանակում ամբողջությամբ փոխվել են եզրաքարերը, սալապատվել ճեմուղիները, ինչպես նաև իրականացվել կանաչապատման ու ծաղկապատման աշխատանքներ⁷²:

Երևանի քաղաքապետարանի և ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի համատեղ «Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակներում բարեկարգվել և լուսավորվել է Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի շենքը: Ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքում շենքը բարեկարգվել է, հին պատուհանները փոխարինվել են նոր պատուհաններով, մուտքի դուռը վերանորոգվել է, իրականացվել են այլ աշխատանքներ, ներառյալ շենքի լուսավորության աշխատանքները⁷³: Անցած տարիների ընթացքում անտառատնկման մասսայական աշխատանքներ չեն կատարվել և չեն վերացվել նախկին տարիների ծառահատումների միջոցով հասցված վնասները: Ծառատնկումները հիմնականում կատարվում են հասարակական նախաձեռնությամբ և միջազգային կազմակերպությունների նվիրատվությամբ, որը չի կարող հիմնովին լուծել հիմնախնդիրը⁷⁴: 2012 թվականին Մեծամորի քաղաքապետարանը բնապահպանական վճարներից և կառավարության կողմից հատկացված գումարով քաղաքում ստեղծել է բնակչության հանգստի, զվարճալի միջոցառումների կազմակերպման և երեխաների խաղահրապարակ: Շուրջ 2000 քառակուսի մետր մակերեսի վրա գեղատեսիլ ծառատեսակներով և թփերով կանաչապատվել ու բարեկարգվել է տարածքը⁷⁵: Մեղրաձոր համայնքի անտառային հատվածից ապօրինի կերպով

⁶⁹ <http://www.yerevan.am/am/nature-protection/>

⁷⁰ http://www.armeniatree.org/atpnews/news_press_010213_arm.pdf

⁷¹ <http://www.iyerevan.am/am/work/improvement-of-shengavit-administrative-district/>

⁷² Նույն տեղում

⁷³ <http://www.iyerevan.am/am/work/renovation-of-musical-school-after-sayat-nova/>

⁷⁴ <http://aragatsotn.gov.am/socio-economic-situation/>

⁷⁵ <http://armavir.gov.am/reports/>

հատվել է շուրջ 50 ծառ, բնությանը հասցված վնասի չափը կազմում է 1,200,000 ՀՀ դրամ: Թեղենիք և Կարենիս համայնքներում մի քանի հեկտարների վրա վրա հիմնվել է անտառաշերտ, ընդհանուր առմամբ տնկվել են շուրջ 7000 հատ ծառեր և թփեր⁷⁶:

Իրականացվել են Իջևան համայնքի Ազատամարտիկների հրապարակի վերանորոգման աշխատանքները՝ 25,0 մլն դրամ արժեքով: Դիլիջան քաղաքում իրականացվել է հնգաթև հուշարձանի և օղակաձև խաչմերուկի հարակից տարածքների բարեկարգում և ճարտարապետական ձևավորում: Տեղադրվել են լուսատուներ և շատրվանների եռագույն լուսադիողային լուսավորման համակարգ⁷⁷:

Աղբահանություն

2012 թվականին դեռ խիստ հիմնախնդրային է մնում թափոնների տարեբայնորեն տեղադրման, անկանոն աղբահանության և աղբավայրերի ոչ կանոնակարգված ձևով օգտագործման հարցը: Արարատի մարզում կան 4 աղբավայրեր, որոնք շահագործվում են Արտաշատ, Արարատ, Մասիս և Վեդի համայնքների կողմից, և որոնց ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 28 հա: Մասիսի տարածաշրջանի 9 համայնքներ օգտվում են Երևան քաղաքին հատկացված կենտրոնացված աղբավայրից: Չարտոնագրված աղբավայրերից օգտվում են Արարատի մարզի 7 գյուղական համայնքներ: Մասիս քաղաքում «Առողջության զարգացման կենտրոն» ՍՊԸ N5 լիցենզավորված կազմակերպությունը իրականացնում է բժշկական վտանգավոր թափոնների վնասագերծման աշխատանքներ ըստ NN 121-123 պայմանագրերի:

Սյունիքի մարզում պաշտոնական աղբավայրերը 6 են, որոնք շահագործվում են Սիսիանի, Գորիսի, Կապանի, Քաջարանի, Մեղրիի, Ագարակի քաղաքային համայնքների կողմից: Վայոց Ձորի մարզի 3 քաղաքային և 10 գյուղական համայնքներ ունեն աղբավայրեր, իսկ 10 գյուղական համայնքներում սկսվել է աղբավայրերի տեղադրման գործընթացը: Հիմնովին կարգի են բերվել Եղեգնաձոր և Վայք քաղաքների աղբավայրերը: Եղեգնաձոր քաղաքում տեղադրվել է 75 աղբաման և 60 աղբարկղ: 45 աղբաման և 70 աղբարկղ տեղադրվել է Ջերմուկ քաղաքում, իսկ Վայքում՝ 30 աղբաման և 45 աղբարկղ⁷⁸: 2012 թվականի ընթացքում Իջևան, Բերդ, Նոյեմբերյան, Ոսկեպար, Բագրատաշեն համայնքներում գործել են պաշտոնական 5 աղբավայրեր: Գերմանական վերակառուցման վարկերի բանկի աջակցությամբ (KfW) իրականացվում է «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարում» ծրագիրը (դրամաշնորհային), որի «Խորհրդատվական պայմանագրով» նախատեսված գործատուի պարտավորություններն իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման

⁷⁶ <http://kotayk.gov.am/files/docs/3387.pdf>

⁷⁷ <http://tesankyun.am/2012/12/> 2012թ. Գիլիջանում իրականացված աշխատանքների մասին ՏԵՍԱՆԿՅՈՒՆ – ԴԵԿՏԵՄԲԵՐ 30, 2012

⁷⁸ <http://vdzor.gov.am/files/docs/6501.pdf>

նախարարությունը: Նշված ծրագրի ավարտին խորհրդատուն պարտավորվել է ներկայացնել բիզնես ծրագիր՝ Վանաձոր քաղաքի և հարակից համայնքների աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպման, նոր աղբավայրի կառուցման, դրանց նախահաշվային արժեքների վերաբերյալ, ինչպես նաև նոր աղբավայրի տեղադիրքի առաջարկություն կատարել⁷⁹:

Մշակվել և շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցվել է «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների (աղբահանության և սանիտարական մաքրման, նախադպրոցական հաստատությունների գործունեության մասով), իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքների մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն՝ 28.09.2012թ. թիվ 03/16/5039-12 գրությանը⁸⁰:

Բնակելի տների և ոչ բնակելի սարածիների դաշտանում

2002-ի նոյեմբերի 16-ին, ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնի, ԱՄՆ դեսպանության Ռազմական համագործակցության գրասենյակի, Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանի, Դարբնիկ համայնքի ղեկավար Ազատ Խաչատրյանի և համայնքի բնակիչների մասնակցությամբ տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում, որով նշանավորվեց Դարբնիկի համայնքային կենտրոնի վերանորոգման աշխատանքների ավարտը: Վերանորոգման աշխատանքների համար ԱՄՆ Եվրոպական հրամանատարության Ռազմական համագործակցության գրասենյակի մարդասիրական աջակցության ծրագիրը տրամադրել է 245,000 ԱՄՆ դոլար, որը ներդրվել է շենքի պատերի, պատուհանների և դռների նորացման, էլեկտրականության և ջեռուցման համակարգերի անցկացման, կոյուղու համակարգի, տանիքի վերանորոգման, ճաշարանի կառուցման համար: Աշխատանքները կատարել է տեղական ՍԵՄԿՕ ընկերությունը:

ՀՀ կառավարության 12.04.2012թ. թիվ 501-Ն որոշմամբ Արմավիր քաղաքի պահածոների գործարանի նախկին վարչական շենքը բնակելի շենքի վերակառուցելու համար հատկացվել է 244,170 մլն դրամ գումար, որով շենքը վերակառուցվեց և շահագործման հանձնվեց: Իրականացվել է Արմավիր քաղաքի 107 և 108 թաղամասերի, Ֆերիկ և Արևիկ գյուղերի գազաֆիկացման աշխատանքները: Կատարվել են Վաղարշապատ և Մեծամոր քաղաքային համայնքների, Փարաքար և Մյասնիկյան գյուղական համայնքների բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման, Մյասնիկյան համայնքի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները: Իրականացվել է նաև Մեծամոր քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի վերելակների վերանորոգման աշխատանքները: 2012 թվականին Վարդենիս քաղաքում 41 բազմաբնակարան շենքերով ստեղծված համատիրությունը լուծարվել է, աշխատանքներ են տարվում նոր համատիրություն ստեղծելու ուղղությամբ:

2012 թվականին Լոռու մարզի գյուղական համայնքներում երկրաշարժի հետ-

⁷⁹ <http://www.mta.gov.am/files/docs/441.pdf>

⁸⁰ <http://www.mta.gov.am/files/docs/440.pdf>

ևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակապահովման ծրագրի շրջանակներում «Գլենդել Հիլզ» ՓԲ ընկերությունը պետք է շինարարական աշխատանքներ կատարեր 420 բնակելի տների վրա, որոնցից պետք է կառուցեր և շահագործման հանձներ 305 բնակելի տուն, սակայն կառուցվել և շահագործման է հանձնվել միայն 146 բնակելի տուն: Աշխատանքների ընթացքը բավարար չի կարող համարվել: 2012 թվականին Կոտայքի մարզում վերանորոգվել են թվով 54 բազմաբնակարան շենքերի տանիքներ⁸¹:

2012 թվականին Գյումրի քաղաքի «Մուշ-2-2» և «Անի» քաղամասերում ավարտին են հասցվել և վիճակահանությամբ անօթևան ընտանիքներին են հատկացվել 1756 բնակարաններով թվով 38 բազմաբնակարան շենքեր: Իսկ Ախուրյան գյուղում շարունակվել է նույն նկատառումներով իրականացվող 144 բնակարաններով թվով 4 բազմաբնակարան շենքերի կառուցումը: Մարալիկ քաղաքում ավարտվել է 20-ական բնակարաններով երկու բազմաբնակարան շենքերի կառուցումը⁸²: Գավառ քաղաքում հիմնանորոգվել է քաղաքի Բունիաթյան 1-ին անցումը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և Ասիական զարգացման բանկը «Կայուն քաղաքաշինական զարգացման ներդրումային ծրագրի» (Sustainable Urban Development Investment Program) երկրորդ տրանշի շրջանակներում աշխատանքներ են իրականացնում 4 քաղաքների համար (Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Ջերմուկ)՝ քաղաքաշինության պլան և ներդրումային ծրագիր մշակելու ուղղությամբ⁸³:

Աղյուսակ 31. 2012 թվականի դրությամբ բնակ-կոմունալ տնտեսության ամփոփ տվյալները⁸⁴

| | Բազմաբնակարան շենքերի բնակարանային ֆոնդ բնակարանների քանակը | Ընդհանուր մակերեսը 1000մ ² | Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակը | Համատիրության, հավատարմագրային և լիազորագրային կառավարիչների կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակը | Համատիրության, հավատարմագրային և լիազորագրային կառավարիչների կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի քանակը |
|-----------|---|---------------------------------------|--|--|---|
| Տող 1 | Տող 2 | Տող 3 | Տող 4 | Տող 5 | Տող 6 |
| Ընդամենը | 436 631 | 93412 | 104 456 | 331 458 | 8 066 |
| Քաղաքային | 411 855 | 50148 | 81 013 | 330 175 | Բացակայում է |
| Գյուղական | 24 776 | 43264 | 23 443 | 1 283 | Բացակայում է |

⁸¹ <http://kotayk.gov.am/files/docs/3387.pdf>

⁸² <http://shirak.gov.am/files/docs/2359.pdf>

⁸³ <http://www.mta.gov.am/files/docs/441.pdf>

⁸⁴ <http://armstat.am/file/doc/99477448.pdf> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013

Աղյուսակ 31-ից պարզ է դառնում, որ համատիրությունների և հավատարմագրային լիազոր կառավարիչների կողմից կառավարվում է 8066 շենք՝ ընդհանուր 331458 բնակարաններով: Համատիրությունների և հավատարմագրային լիազոր կառավարիչների կողմից կառավարվում է բնակարանների 75.91 տոկոսը (տող 5/տող 2), իսկ միայն 24.09 տոկոսը՝ համայնքների կողմից: Համատիրությունների և հավատարմագրային լիազոր կառավարիչների կողմից բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակը ըստ գյուղական և քաղաքային համայնքների շատ անհավասարաչափ է: Այդ բնակարանների միայն 0.38% է գտնվում գյուղական համայնքներում, իսկ մնացած 99%-ից ավելին գտնվում է քաղաքային համայնքներում, սակայն համայնքների կողմից կառավարվող շենքերի բաշխավածությունը ըստ գյուղական և քաղաքային համայնքների այդչափ անհամաչափ չէ: Քաղաքային համայնքների կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակը կազմում է համայնքների կողմից կառավարվող ընդհանուր բնակարանների 77.55% իսկ 22.45% միայն կազմում գյուղական համայնքների կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի բնակարանները:

Չրամասակարարում և ջրահեռացում

Արագածոտնի մարզի 31 համայնքների (այդ թվում երեք քաղաքների) ջրամատակարարումը իրականացնում են «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ (28) և «Երևան ջուրը» (3), իսկ մնացած համայնքներինը իրականացվում է համայնքների կողմից: Մյուս բնակավայրերի, հատկապես գյուղական բնակավայրերի, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում⁸⁵:

Արտաշատի տարածքում ջրատարները (երկարությունը շուրջ 1130 կմ, կոյուղին 14 կմ) իրենց 80% մաշվածության պատճառով բազմիցս վթարների են ենթարկվում, չեն գործում կոյուղատարները՝ կեղտաջրերը լցվում են առվակները աղտոտելով շրջակա միջավայրը: Լուրջ վտանգ է ներկայացնում Արմավիր և Մեծամոր քաղաքների կոյուղու կեղտաջրերի հեռացման վիճակը: Կեղտաջրերը առանց գտման լցվում են Մեծամոր քաղաքին հարակից ստորգետնյա ջրերի հեռացման դրենաժների, ոռոգման ջրագծերը, Մեծամոր գետը օգտագործվում է ոռոգման համակարգերում, որը լուրջ հակասանիտարական վիճակ է ստեղծել Մեծամոր քաղաքի և հարակից մյուս բնակավայրերի համար:

Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից Արմավիրի մարզի 15 համայնքներում իրականացվել են 58 կմ երկարությամբ դրենաժների մաքրման

⁸⁵ <http://aragatsotn.gov.am/socio-economic-situation/>

աշխատանքներ՝ 83 մլն. դրամ ընդհանուր արժողությամբ⁸⁶: 2012 թվականին մաքրվել է ջրահեռացման բաց ցանց՝ Արմավիրի մարզի 12 համայնքների վարչական տարածքներում: Լուրջ հիմնախնդիր են մնում Փարաքար համայնքի կոյուղու վերանորոգումը, կոյուղու կեղտաջրերի հեռացման կազմակերպումը: Համայնքի ջանքերով ու նախաձեռնությամբ, ՀՀ կառավարության ՄԱԿ-ի «Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի» փոքր դրամաշնորհների ծրագրի և «Ազգային ջրային համագործակցության» շնորհիվ 2010թ. սկսվել և 2012թ. ավարտվել է «Փարաքարի համայնքի դեգրադացված գյուղատնտեսական հողատարածքների վերակազմում՝ կենցաղային մաքրման կենսաբանական լճակի կառուցմամբ» ծրագիրը:

Գերմանական վերակառուցման վարկերի բանկի (KfW) և ՀՀ կառավարության համաֆինասավորմամբ Վանաձոր քաղաքում և Լոռու մարզի 16 գյուղական համայնքներում իրականացվում է ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքներ: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 համայնքներում խնելու ջրի մատակարարման և ջրհեռացման համակարգերի աշխատանքների բարելավման նպատակով Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկ, Ասիական զարգացման բանկի ծրագրով պլանավորվել էր իրականացնել 250 մլն. դրամի աշխատանքներ, սակայն իրականացվել են 657.7 մլն դրամի աշխատանքներ: 2012 թվականին ձեռք է բերվել համաձայնություն ՄԱԿ-ի ծրագրով և համայնքային բյուջեների համաֆինասավորմամբ 11.4 մլն դրամի ծավալով աշխատանքներ կատարել Ծաղկաշատ (8.1 մլն. դրամ) և Չկալով (3.1 մլն դրամ) համայնքների ջրագծերի կառուցման համար:

2012 թվականին ամբողջությամբ վերակառուցվել է Մաքրավանի (Հրազդան) կենտրոնական պոմպակայանը: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջոցներով Ալափարս և Սոլակ համայնքներում իրականացվել են 42,600,000 ՀՀ դրամի աշխատանքներ: 2012 թվականին Գերմանական վերակառուցման վարկերի բանկի (KfW) և Ասիական զարգացման բանկերի կողմից իրականացվել են Ագատանի, Ախուրյանի, Մարալիկի և Գյումրի քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման աշխատանքները: 2012 թվականին Ագարակ և Եղվարդ համայնքներում «Կորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի կողմից կատարվել է ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնանորոգում՝ 15.0 մլն. դրամի չափով: «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի կողմից վերանորոգվել է Գորիս համայնքի ներտնտեսային ցանցը, որի նախահաշիվը կազմել է 132.9 մլն. դրամ: Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից մարզում իրականացրել են Ծավ և Վարդանիձոր համայնքների ջրամատակարարման ծրագրեր՝ ներդնելով 12.67 մլն. դրամ: ՀՀ կառավարության 24.05.2012թ. թիվ 711-Ն որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 1,330,000 հազ դրամ, որից քաղաքաշինության ոլորտի համար 1.304,758 հազ. դրամ, կառուցվել են Երասխահուն և Հայթաղ գյուղերի ներքին ջրամատակարարման ցանցերը և ավարտին հասցվել՝ Փարաքարի համայնքի կեղտաջրերի հեռացման կոլեկտորի և մաքրման կենսաբանական լճակի շինարարությունը:

⁸⁶ <http://armavir.gov.am/reports/>

Չեռուցում

2012 թվականին ավարտվել են մայրաքաղաքի բոլոր մանկապարտեզների ջեռուցման համակարգերի տեղադրման աշխատանքները⁸⁷: 2012թ. իրականացվել է գազամատակարարման և ջեռուցման համակարգով ապահովման ծրագիր, որի շրջանակում լուրջ ջեռուցման համակարգերի տեղակայման աշխատանքներ են կատարվել «Արաբկիր» մանկական պոլիկլինիկա», «Նոր Արեշ պոլիկլինիկա», «Թիվ 12 պոլիկլինիկա» և «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ներում: 2012 թվականի ընթացքում իրագործվել է թվով 8 գրադարանի և թվով 6 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի ջեռուցում և վերանորոգում:

2012 թվականին Երևան քաղաքում քաղաքապետի հանձնարարականով աշխատանքներ են տարվել Երևանում քաղաքապետարանի ենթակայության չջեռուցվող 17 դպրոցների ջեռուցման աշխատանքները մինչև 2012 թվականի նոյեմբերի 15-ը⁸⁸ ավարտելու ուղղությամբ: Աշխատանքները կատարվել են և ավարտվել:

Հասարակական տրանսպորտի և ճանապարհափոխություն

2012 թվականին Երևանի քաղաքապետի մարտի 30-ի հ.2911-Ա որոշմամբ հաստատվել է Երևանի ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների նոր երթուղային ցանցը, ինչը նպատակ է ունեցել լիովին վերանայելու Երևանի կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացը, որոշակիորեն ավելացնելու ավտոբուսների թիվը, դրան զուգահեռ, նվազեցնելով միկրոավտոբուսներին, մեծացնելու մետրոպոլիտենի և տրոլեյբուսների դերը ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրման ծավալում, ինչպես նաև նախատեսել ավտոբուսային նոր, արդյունավետ երթուղիներ⁸⁹:

Երթուղային նոր ցանցով նախատեսված է միկրոավտոբուսային 77 երթուղի (-1577 միավոր շարժակազմ), ավտոբուսային 68 երթուղի (939 միավոր) և տրոլեյբուսային 10 երթուղի (108 միավոր): Երթուղային նոր ցանցը ներդնելու գործընթացով անց են կացվել Երևանի ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիների մրցույթներ: Լոռու մարզում վերանորոգվել են 19 համայնքի ավտոճանապարհներ, այդ թվում մարզի բոլոր քաղաքների առաջնահերթ վերանորոգման փողոցները: Ընդհանուր առմամբ վերանորոգվել է 105 փողոց 70.4 կմ երկարությամբ: Պետական բյուջեի և համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ նախատեսվել և իրականացվել են Բալահովիտ-Մայակովսկի-Արամուս՝ 6.8 կմ երկարությամբ, Արամուս-Կամարիս-Գեղաշեն՝ 6.3 կմ երկարությամբ, Նոր գեղի-Արգել-Արգական-Հրագրան՝ 0.16 կմ երկարությամբ, Երևան-Գառնի-Գեղարդ՝ 1.8 կմ երկարությամբ ճանապարհների

⁸⁷ <http://www.yerevan.am/edfiles/files/avagani17.12/2.%20cragir.pdf>

⁸⁸ <http://www.yerevan.am/am/news/this-year-all-schools-in-the-capital-will-be-provided-with-heating-systems/>

⁸⁹ <http://www.yerevan.am/am/public-transportation/>

հիմնանորոգման աշխատանքները⁹⁰: Կատարվել է Գյումրի-Հացիկ ավտոճանապարհի 3.7 կմ երկարությամբ հատվածի ճանապարհի ավագակոպճային հիմքով վերանորոգման աշխատանքներ: Գյումրի քաղաքում վերանորոգվել են 7.0կմ ընդհանուր երկարությամբ թվով 10 փողոցներ, Արթիկ քաղաքում 1.4 կմ ընդհանուր երկարությամբ թվով 3 փողոցներ, Մարալիկ քաղաքում 0.5կմ ընդհանուր երկարությամբ թվով 4 փողոցներ, Սառնաղբյուրում 1.4 կմ երկարությամբ մեկ փողոց⁹¹: «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ի հատկացրած 10 մլն. դրամ միջոցներով իրականացվել են Գեղանուշ համայնքի ճանապարհի ասֆալտապատման-նորոգման աշխատանքները⁹²: 2012 թվականի ընթացքում կատարվել է Վայք քաղաքի Երիտասարդական փողոցի բարեկարգում 0.780կմ հատվածով և 131.5մլն. դրամ արժեքով: Բարեկարգվել է Եղեգնաձոր քաղաքի Սպանդարյան փողոցը 0.5 կմ հատվածով 72.1 մլն դրամ արժեքով: Կատարվել են նաև Ջերմուկ քաղաքի կամրջի վերանորոգման աշխատանքներ 137 մլն. դրամ ծավալով, Այգեհովիտ համայնքի ճանապարհի վերանորոգման աշխատանքները՝ 30,0 մլն դրամ արժեքով, Նոյեմբերյանի Դպրոցականների փողոցի վերանորոգման աշխատանքները՝ 20,0 մլն դրամ արժեքով, Գանձաքար համայնքի ճանապարհի վերանորոգման աշխատանքները՝ 23,1 մլն դրամ արժեքով: Այգեհովիտ համայնքի ճանապարհի վերանորոգման աշխատանքների ծրագիրը ամբողջապես ավարտելու համար Այգեհովտի համայնքապետարանը կատարել է ներդրում 8,5 մլն դրամ գումարի չափով⁹³:

2012 թվականին Դիլիջան քաղաքում իրականացվել են Անդրանիկի թաղամաս տանող ճանապարհի, Սայաթ-Նովա, Աբովյան, Շահումյան, Գայի, Օրջոնոկիձե, Գորկի-Մյասնիկյան, Հակոբջանյան փողոցների, հենապատերի, հեղեղատարների վերանորոգման, երթևեկության անվտանգության էլեմենտների տեղադրման աշխատանքները՝ 231.8 մլն դրամ արժեքով: Իջևան քաղաքում իրականացվել են Անկախության փողոցի ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման (ճանապարհային նշանների, լուսաֆորների տեղադրում) աշխատանքներ և Բլբուլյան փողոցի վերանորոգման աշխատանքներ՝ 13.65 մլն դրամ արժեքով⁹⁴:

Կրթություն և մշակույթ

2012 թվականը նշանավորվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք ընտրվելու և հայ գրատպության 500 ամյակին նվիրված միջոցառումներով: Երևանը որպես գրքի համաշխարհային մայրաքաղաք միավորեց փորձագետների և մասնագիտների տարածաշրջանում և ամբողջ աշխարհում, և ծառայեց որպես խթան հրատարակության կարևորության և

⁹⁰ <http://kotayk.gov.am/files/docs/3387.pdf>

⁹¹ <http://shirak.gov.am/files/docs/2359.pdf>

⁹² <http://syunik.gov.am/files/docs/10244.pdf>

⁹³ <http://tavush.gov.am/reports/>, ՀՀ Տավուշի մարզի 2012թ. տարեկան սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության մասին

⁹⁴ նույն տեղում

իրագեկության բարձրացման համար⁹⁵:

Իրականացվել է «Հանդիպման վայրը՝ գրադարան» ծրագիրը, որին մասնակցել են 103 գրադարաններ, կազմակերպվել է 257 միջոցառում: Մեկնարկել է ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատի համայնքի Թարգմանչաց եկեղեցու վերականգնման գործընթացը: Իրականացվել է «Համայնքային գրադարանների համար վարպետաց դասընթացներ» ծրագրի շրջանակներում 10 մարզի 90 գրադարանավարի վերապատրաստում⁹⁶:

Վարդանաշեն համայնքում նախադպրոցական հաստատության շենքը հանձնվել է մարզպետարանին և օգտագործվում է որպես դպրոց: Արմավիր քաղաքի թիվ 1 մշակույթի տանը դպրոցականների ուժերով կազմակերպվել է խորեոգրաֆիկ բեմականացում նվիրված Պ. Ի Չայկովսկու «Շելկունչիկ» բալետի 120-ամյակին: «Փրկենք երեխաներին» կազմակերպության և համայնքների միջոցներով գործարկվել են 3 նախակրթարաններ Շահումյան, Ջրաշեն և Մայիսյան համայնքներում:

3 սահմանամերձ համայնքների՝ Երվանդաշատի, Մարգարայի և Փշատավանի գրադարաններին ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված «Մուտքը գրքով» միջոցառումների շրջանակում հավաքագրված գրքերից հանձնվել է 1200 գիրք: Նոյեմբերի 29-ին «ԱրմենՏել» ընկերությունը Հայաստանի մանուկների հիմնադրամի հետ համատեղ Մյասնիկյան, Լեռնագոգ, Քարակերտ, Դալարիկ, Շենիկ, Արզիմա համայնքների դպրոցական գրադարաններին նվիրաբերեց Հայաստանի մշակույթը և պատմությունը ներկայացնող պատկերագրքեր:

«Վորլդ Վիժն ինթերնեշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին Արագածոտնի մարզի 21 համայնքների ուսուցիչների, աշակերտների և ծնողների համար կազմակերպվել են դասընթացներ՝ առողջ ապրելակերպի և հիվանդությունների կանխարգելման թեմաներով: Դասավանդման համագործակցային և մանկավարժական նոր մեթոդների ուսուցումը ներդնելու և կատարելագործելու նպատակով «Վորլդ Վիժն ինթերնեշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին վերը նշված 21 համայնքների նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների դաստիարակների և ուսուցիչների համար կազմակերպվել են ուսուցման նոր մեթոդների վերաբերյալ դասընթացներ⁹⁷:

2012 թ. հունիս-օգոստոս ամիսներին «Արի տուն» ծրագրի շրջանակներում Արարատի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում 14-օրյա այցով հյուրընկալվել են 142 սփյուռքահայ պատանիներ: Արարատի մարզում նշանակալի տեղ է հատկացվել զանգվածային միջոցառումներին «Տեառնընդառաջ» «Պոեզիայի տուն» «Բերքի տուն» «Ուսուցչի օր» որոնք աչքի են ընկել իրենց մասսայականությամբ: Մարզի տարբեր համայնքներում նշվել են Պ Սևակի, Վ. Սարգսյանի, 18-րդ դարի բանաստեղծ աշուղ Սայաթ-Նովայի, բանաստեղծ Եղիշե Չարենցի, Սպարապետ Վազգեն Սարգսյանի, Գառզուի, Հովսեփ Օրբելու,

⁹⁵ <http://yerevan2012.org/>

⁹⁶ <http://mincult.am/reports.html>

⁹⁷ <http://aragatsotn.gov.am/socio-economic-situation/>

Հովհաննես Բաղրամյանի, Անանիա Շիրակացու տարեդարձները, հայ գրատպության 500-ամյակը:

Բյուրեղավան քաղաքային և Սոլակ գյուղական համայնքների մանկապարտեզների շենքերը հիմնանորոգման գործընթացում են⁹⁸

ՀՀ կառավարության 04.10.2012թ. N 1392-Ն որոշմամբ Շիրակի մարզին հատկացված 1320.0 մլն. դրամ գումարի շրջանակներում՝ իրականացվելու են կրթական 4 ծրագրեր. Արթիկ քաղաքի 2 և 5, Հայկաձորի դպրոցներում և Ոսկեհասկի մանկապարտեզում: Այդ նույն գումարի շրջանակներում շարունակվելու է նաև Ագատանի մանկապարտեզի կառուցումը⁹⁹: Ավարտվել է Վահրամաբերդ գյուղի մշակույթի տան կառուցումը: Ամերիկահայ բարերարի, Յան Գիլանի «Դիպ Փարվիլ» լեգենդար ռոք խմբի և ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ ընթանում է Գյումրի քաղաքի N6 երաժշտական դպրոցի կառուցումը:

2012 թվականին Եղեգնաձոր քաղաքում կառուցվել է լողավազան: 2012 թվականին կազմակերպվել է «Մարզական փառատոն», որին մասնակցել են Տավուշի մարզի հինգ քաղաքների պատանի մարզիկները: Կանաչապատվել է Աչաջուր համայնքի ֆուտբոլի դաշտը¹⁰⁰: 2012 թվականի ընթացքում Ալավերդի, Արմավիր, Վեդի, Մարալիկ, Չարենցավան քաղաքներում կազմակերպվել են այդ համայնքների պատմությանը նվիրված ցուցահանդեսներ¹⁰¹:

Առողջադատություն

2012-ից Երևանում բնակչության ամբուլատոր-համաբուժարանային և հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնում են առողջապահական 108 կազմակերպություններ, որոնցից Երևանի քաղաքապետարանի ենթակայության են 34-ը: Երևանի քաղաքապետարանի ենթակայության են առողջապահական 34 հիմնարկներն. 4 բազմաճյուղ և 2 մասնագիտացված բուժկենտրոններ, 1 ծննդատուն, 22 համաբուժարան, 2 դիսպանսեր, բուժսանմաս, հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ ու շտապբուժօգնության ծառայություն: Երևանի ենթակայության առողջապահական 34 հաստատություններից 27-ը մատուցում են ամբուլատոր-համաբուժարանային ծառայություններ¹⁰²:

Երևանի բյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգվել է «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ մասնաշենքը: Մի շարք պոլիկլինիկաներում կատարվել են շենքերի արտաքին տեսքի բարելավման և մուտքերի դռների կապիտալ նորոգման աշխատանքներ: «Առողջապահական օբյեկտների թեքահարթակների կառուցում» ծրագրի շրջանակում սահմանափակ կարողություններով անձանց համար քաղաքապետարանի ենթակայության ընկերություններում կառուցվել են թեքահարթակներ,

⁹⁸ <http://kotayk.gov.am/files/docs/3387.pdf>

⁹⁹ <http://shirak.gov.am/files/docs/2359.pdf>

¹⁰⁰ <http://tavush.gov.am/reports/>, ՀՀ Տավուշի մարզի 2012թ. տարեկան սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության մասին

¹⁰¹ <http://www.mta.gov.am/files/docs/441.pdf>

¹⁰² <http://www.yerevan.am/am/health/>

պոլիկլինիկաների առաջին հարկերում առանձնացվել են հարմարեցված բուժսենյակներ՝ հաշմանդամների հարմարավետ բուժսպասարկումն իրականացնելու համար:

2012թ. դեկտեմբերին սոցիալապես անապահով խավի համար Երևանի բոլոր պոլիկլինիկաներում կազմակերպվել են «Բաց դռների օրեր»: Ակցիայի շրջանակում, անհրաժեշտության դեպքում, կատարվել են նաև դժվարամատչելի հետազոտություններ (համակարգչային տոմոգրաֆիա, ռենգենոգրաֆիա, կոլոնոս-կոպիա և այլ): Առողջապահության վարչության կողմից մշակել և ներդրվել է բուժօգնության որակի, ֆինանսատնտեսական և ծրագրային ցուցանիշների՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական ընկերությունների գործունեության գնահատման կողմնորոշիչ ուղեցույց: Երևանի քաղաքապետարանի ենթակայության բուժփինանսարկների կառավարման, ֆինանսատնտեսական գործունեության բարելավման, ինչպես նաև մասնավոր ներդրումների ապահովման նպատակով Երևան համայնքի ավագանու որոշումներով վերակազմակերպվել են «Քանաքեռ-Զեյթուն», «Սուրբ Աստվածամայր» և «Գրիգոր Նարեկացի» ՓԲԸ-ները՝ ստեղծելով նոր ընկերություններ («Դավիթ Անհաղթ» ԲԿ, «Թիվ 16 պոլիկլինիկա», «Արաբկիր» մանկական պոլիկլինիկա», «Ն.Բ. Հակոբյանի անվան ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների Գ-ՀԻ», «Նուբարաշեն», «Սարի Թաղ», «Նոր Արեշ», «Կարմիր Բլուր», «Թիվ 18 պոլիկլինիկա», «Սուրբ Աստվածածին» ՓԲԸ-ները): Կառավարման նոր մեխանիզմների ներդրումը կրերի բուժսպասարկման առաջնային օղակում ենթակառուցվածքների բարելավմանը, բուժփինանսարկների վերազինմանը, ինչը իր հերթին կնպաստի բնակչության բուժսպասարկման որակի բարձրացմանը¹⁰³:

Գյուղական բնակավայրերում առողջության առաջնային պահպանման հաստատությունների զարգացման նպատակով 13 գյուղական համայնքներում մեկնարկվել են ամբուլատորիաների նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքները, իսկ 4 գյուղական համայնքներում ավարտվել են բժշկական ամբուլատորիաների վերանորոգման աշխատանքները¹⁰⁴: Այդ համայնքներն են Տավուշի մարզի Հաղարծին, Այգեձոր, Արագածոտնի մարզի Մաստարա և Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքները: Բացի այդ Հաղարծնի ԱԱՊԿ-ն ստացել է ԷՍԳ սպարատ:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացված 60 մլն. դրամ արժողությամբ ծրագրի շրջանակներում Ակնաղբյուր գյուղում բացվեց նորակառույց համայնքային կենտրոնը: Այն իր մեջ ներառել է նաև բուժկետ, համայնքի բնակչության սպասարկման համար¹⁰⁵:

¹⁰³ <https://www.yerevan.am/edfiles/files/avagani17.12/2.%20cragir.pdf>

¹⁰⁴ <http://www.moh.am/karavar/GERAKA1.pdf>

¹⁰⁵ <http://www.himnadram.org/index.php?id=23485&page=13&lang=2>

Գերեզմանասների դահողանում

2012 թվականին շարունակվել է արդի մնալ համայնքների տարածքներում գերեզմանատների պահպանման հարցը: 2012 թվականին Կառավարության N25-Ն որոշման համաձայն Լոռու մարզի Մեծ Պառնի գյուղի համայնքային սեփականություն հանդիսացող հողերից 1.5 հեկտարը փոխանցվել է գերեզմանոցի ընդարձակման համար¹⁰⁶, իսկ Գոգարան գյուղական համայնքում հատուկ պահպանվող տարածքներից 2.52 հեկտարը հատկացվել է գերեզմանոցների ընդարձակման համար¹⁰⁷: 2012 թվականին Վանաձոր քաղաքը ստացել է 5 մլն դրամ Վանաձորի ազատամարտիկների գերեզմանների վերանորոգման աշխատանքների համար:

ՏԻՄ-երի կողմից համայնքային ծառայությունների մատուցման վճարներ սահմանելու իրավասությունը

2012 թվականի ընթացքում ՏԻՄ-երը համայնքային ծառայությունների մատուցման վճարներ են սահմանել հիմնականում աղբահանության, նախադպրոցական և արտադպրոցական կրթության համար:

Աղբահանության վճարի սահմանումը կանոնակարգված է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով: Այսպես, օրինակ, աղբահանության վճարը կենցաղային աղբի համար կարող է սահմանվել մինչև 400 դրամ՝ ամսական մեկ հաշվառված անձի կամ բնակչի հաշվով: Յուրաքանչյուր համայնքի ավագանի սահմանում է այդ վճարի չափը՝ իր համայնքում: Երևանում, օրինակ, այն սահմանված է 200 դրամ, Վեդիում՝ 150 դրամ, Ալավերդիում՝ 100 դրամ:

Նախադպրոցական և արտադպրոցական ծառայությունների մատուցման վճարների սահմանումը որևէ օրենքով կանոնակարգված չէ: Համայնքի ավագանին այն սահմանում է իր հայեցողությամբ: Այսպես, օրինակ, 2012 թվականին մայրաքաղաքում գործում էր 162 մանկապարտեզ, որոնք Երևանի քաղաքապետարանի ծրագրով նախորդ տարվանից սկսեցին գործել անվճար սկզբունքով¹⁰⁸: Երևան համայնքի բնակիչ չհանդիսացող ծնողների երեխաների համար Երևան քաղաքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի կրթության վճարի չափը սահմանվեց ամսական 8000 (ութ հազար) դրամ¹⁰⁹:

Գիլիջան համայնքում «Գիլիջանի Հովհաննես Ծարամբեյանի անվան գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների համար 2012թ. հունվարի 1-ից սահմանվեց ամսական վարձավճար 5000 դրամ: Նույն չափի վարձավճար սահմանվեց նաև նախադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների սաների համար:

¹⁰⁶ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=73698>

¹⁰⁷ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=73580>

¹⁰⁸ <http://archive.ankakh.com/2012/05/204427/>

¹⁰⁹ <http://168.am/2012/08/17/116580.html>

Ապարանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ Ապարանի քաղաքային համայնքի արվեստի դպրոցում 2012 թվականի համար սահմանվել էին հետևյալ դրույքաչափերը. դաշնամուրի դասարանում սովորողի ամսական վարձավճարի չափը՝ 3.000, ջութակի և կիթառի դասարաններում սովորողի ամսական վարձավճարի չափը՝ 2.000, ժողովրդական նվագարանների /քանոն, դուդուկ, շվի, դիոլ/ դասարաններում սովորողի ամսական վարձավճարի չափը՝ 1.500, ժողովրդական վոկալի դասարանում սովորողի ամսական վարձավճարի չափը՝ 1.500, կերպարվեստի բաժնում սովորողի ամսական վարձավճարի չափը՝ 1.500 դրամի չափով:

Ապարանի քաղաքային համայնքի մանկապարտեզի սաների համար սահմանվեց ամսական 3500 դրամ վարձավճար մեկ երեխայի համար:

Սահմանեցին նաև արտոնություններ մանկապարտեզի և արվեստի դպրոցի սաների համար: Մասնավորապես՝ մույն ընտանիքից 2 երեխա հաճախելու դեպքում դեպքում մեկ երեխայի համար սահմանվում է 50 տոկոս զեղչ, իսկ մույն ընտանիքից երեք երեխա հաճախելու դեպքում մեկ երեխայի վարձավճար չի գանձվում:

Կոտայքի Արգել համայնքի ավագանու 2012 թվականի մայիսի 15-ի որոշման համաձայն համայնքի մտոր մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական ամսական վճար սահմանվեց 4500 դրամը:

7.2 Համայնքային ծառայությունների կառավարում

2012 ավելացել է համայնքային բյուջեների ընդհանուր ծախսերի կազմում հիմնական հանրային ծառայությունների մատուցմանն ուղղված ուղղակի ծախսերի մասնաբաժինը՝ նախորդ տարվա 74.4%-ից հասնելով 78.2%-ի (աղյուսակ 32): Սակայն պետք է փաստել, որ ընդամենը ծախսերը, նախորդ տարվա նկատմամբ նվազել են մոտ 531 մլն դրամով: Արդյունքում բարձրացել է հանրային ծառայությունների ծախսերի և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցության գործակիցը՝ 3.43-ից հասնելով 3.60-ի: Սակայն անհրաժեշտ է նշել, որ այդ ցուցանիշը հիմնականում բարձր է ի հաշիվ Երևան քաղաքի՝ 8.95, նախորդ տարվա՝ 7.97-ի դիմաց:

Մնացած գյուղական և քաղաքային համայնքներում, առանց Երևան քաղաքի, այդ ցուցանիշը կազմում է 1.48, կամ կարելի է ասել որ հիմնական հանրային ծառայություններին ուղղված ծախսերը կազմում են ընդամենը ծախսերի 59.7%-ը (նախորդ տարում՝ 57.4%-ը): Նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 2.3 տոկոսային կետ: Սակայն, ամեն դեպքում, այս ցուցանիշը բավական ցածր է Երևան քաղաքի հետ համեմատած: Երևան քաղաքում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերը կազմում են ընդամենը ծախսերի 10.0%-ը, (նախորդ տարում՝ 10.7%-ը):

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որքան փոքր է համայնքը այնքան ավելի մեծ է ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների կամ

համայնքի աշխատակազմի պահպանման ծախսերի տեսակարար կշիռը ամբողջ ծախսերում:

Աղյուսակ 32. Համայնքների բյուջեներում ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը (2012թ. հազար դրամ)

| | Ընդամենը համայնքներ ¹¹⁰ | | Երևան քաղաք ¹¹¹ | | Ընդամենը քաղաքային և գյուղական համայնքներ՝ առանց Երևանի | |
|--|------------------------------------|---------|----------------------------|---------|---|---------|
| | Ընդամենը | Կոտորակ | Ընդամենը | Կոտորակ | Ընդամենը | Կոտորակ |
| Ընդամենը ծախսեր | 106,066,920.1 | 100.0% | 65,048,677.3 | 100.0% | 41,018,242.8 | 100.0% |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 23,082,051.4 | 21.8% | 6,536,699.5 | 10.0% | 16,545,351.9 | 40.3% |
| 1. Տրանսպորտ | 23,599,438.6 | 22.2% | 20,669,999.7 | 31.8% | 2,929,438.9 | 7.1% |
| 2. Կապ | 1,092.6 | 0.0% | 0.0 | 0.0% | 1,092.6 | 0.0% |
| 3. Շրջակա միջավայրի պաշտպանություն | 10,193,447.0 | 9.6% | 7,042,640.8 | 10.8% | 3,150,806.2 | 7.7% |
| 4. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ | 9,552,065.8 | 9.0% | 6,187,712.2 | 9.5% | 3,364,353.6 | 8.2% |
| 5. Առողջապահություն | 302,037.9 | 0.3% | 238,760.2 | 0.4% | 63,277.7 | 0.2% |
| 6. Հանգիստ, մշակույթ և կրոն | 6,031,294.0 | 5.7% | 2,153,878.2 | 3.3% | 3,877,415.8 | 9.5% |
| 7. Կրթություն | 30,643,432.5 | 28.9% | 21,303,469.9 | 32.8% | 9,339,962.6 | 22.8% |
| 8. Սոցիալական պաշտպանություն | 2,662,060.3 | 2.5% | 915,516.8 | 1.4% | 1,746,543.5 | 4.3% |
| Ընդամենը հանրային ծառայություններ (1+2+3+4+5+6+7+8) | 82,984,868.7 | 78.2% | 58,511,977.8 | 90.0% | 24,472,890.9 | 59.7% |
| Հանրային ծառայությունների ծախսերի և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը | 3.60 | | 8.95 | | 1.48 | |

¹¹⁰ <http://minfin.am/index.php?cat=76&lang=1>

¹¹¹ <https://www.yerevan.am/edfiles/files/avagani19.13/byuje%20hashv..pdf>

Եզրակացություններ և առաջարկություններ

2012 թվականին Հայաստանի տեղական ինքնակառավարման բարեփոխումներում էական առաջընթաց չի գրանցվել:

Սահմանադրական փոփոխություններով նախատեսված օրենսդրական փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել: Տարվա ընթացքում այդպես էլ չընդունվեցին օրենքներ կամ օրենսդրական դրույթներ համայնքների միացման կամ բաժանման սկզբունքների, կարգի և նոր ձևավորված համայնքներում ՏԻՄ-երի ընտրության ժամկետների սահմանման, միջհամայնքային միավորումների ձևավորման, համայնքային արժեթղթերի թողարկման և հյուրանոցային հարկի վերաբերյալ:

Առկա բոլոր պետական ծրագրային փաստաթղթերը (ՀՀ կառավարության ծրագիր, Կայուն զարգացման ծրագիր, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարություն) պարունակում են գրեթե նույն դրույթները և հիմնականում արտացոլում են սահմանադրական փոփոխությունների օրենսդրական պահանջների ապահովումը:

2012-ին պահպանվել է ՀՀ օրենսդրությունում առկա լուրջ թերությունը, այն է՝ տեղական հարկեր սահմանված գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերը շարունակել են սահմանված մնալ օրենքով, դրանց սահմանման իրավունքը, օրենքով նախատեսված շրջանակներում, չի վերապահվել ՏԻՄ-երին՝ ինչպես պահանջում է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան (հոդված 9.3):

2012-ին Հայաստանի վարչատարածքային բաժանման մեջ որևէ փոփոխություն չի կատարվել: Միայն իրականացվել են որոշ ծրագրեր՝ ուսումնասիրությունների մակարդակում:

Տեղական ինքնակառավարման միավորները՝ համայնքները, շարունակում են մնալ խիստ մասնատված և թույլ կարողություններով: Միջհամայնքային համագործակցության զարգացման առումով էական փոփոխություններ չեն գրանցվել: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2012-ին միջհամայնքային միավորումներ չեն ստեղծվել:

Համայնքների ֆինանսական անկախության մակարդակը շարունակում է մնալ ցածր, իսկ սեփականությունը՝ անբավարար և հնացած: 2012 թվականին ևս, ինչպես նախորդ տարիներին, պետական բյուջեին ամրագրվող հարկատեսակներից և պարտադիր վճարներից համայնքներին մասհանումներ չեն կատարվել:

2012թ. մեկ համայնք աննշան չափի վարկ է ստացել առևտրային բանկից, սակայն, ընդհանուր առմամբ, համայնքները դեռևս շատ հեռու են վարկային շուկա մուտք գործելու հնարավորությունից: 2012թ. ևս համայնքները չեն թողարկել պարտատոմսեր:

2012թ. ՏԻՄ-երի իրավասությունների և լիազորությունների կազմում լուրջ փոփոխություններ չեն նկատվել: Ակնառու առաջընթաց չի նկատվել նաև տեղական ինքնակառավարման ոլորտում քաղաքացիական հասարակության մասնակցությո-

յան առումով:

2012թ. ընթացքում ՏԻՄ-երի օրենքով սահմանված իրավասությունների ու լիազորությունների շրջանակում կատարվել են մի քանի ավելացումներ, որոնք չեն վերաբերել նոր համայնքային ծառայությունների մատուցմանը, և այդ պատճառով նշված փոփոխությունները ֆիքսած օրենքների կիրարկման արդյունքում՝ համայնքների բյուջեների ծախսերի ավելացում չի եղել և պետության կողմից չի փոխհատուցվել:

2012թ. համայնքների գերկշիռ մասում կայացած ընտրությունների ժամանակ վերընտրվել են գործող քաղաքապետերը: Համայնքներում իշխանափոխություն քիչ է լինում: Համայնքների ղեկավարների 70,8%-ը իշխող կուսակցության՝ ՀՀԿ ներկայացուցիչներ են: Առաջընթաց չի նկատվել ավագանիների գործունեության ակտիվության և ինքնուրույնության բարձրացման առումով: Տեղական հանրաքվեի ինստիտուտը շարունակում է չգործել: Գենդերային հարցում 2012թ. լուրջ փոփոխություններ չեն նկատվել: Ընտրովի պաշտոններում կանանց ներկայացվածությունը շարունակել է մնալ շատ ցածր, իսկ համայնքների աշխատակազմերում գենդերային անհավասարություն դարձյալ շատ քիչ է նկատվել: 2012-ին որոշ դրական տեղաշարժեր են նկատվել, Ֆրիդոմ Հաուսի գնահատականներում: Աշխատանքներ են տարվել ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության և թափանցիկության բարձրացման ուղղությամբ:

Համեմատելով ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքի ֆինանսական միջոցների համապատասխանության՝ Հայաստանի և Եվրամիության երկրների համապատասխան ցուցանիշները, տեսնում ենք, որ Հայաստանն առայժմ էականորեն զիջում է Եվրամիության երկրներին, մասնավորապես՝ երկրի հանրային ծախսերում և ՀՆԱ-ում համայնքների բյուջեների ծախսերի տեսակարար կշռի, բնակչության մեկ շնչին ընկնող՝ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի չափերով: Դա նշանակում է, որ 2012-ին Հայաստանում ապակենտրոնացման աստիճանը շարունակում է մնալ ցածր:

Չնայած վերջին 5 տարիներին տարեցտարի զգալիորեն աճել են ՀՀ համայնքների բյուջեների՝ ինչպես եկամտային և ծախսային բացարձակ ցուցանիշները, այնպես էլ դրանց կատարման տոկոսները, ՀՀ համայնքների մեծամասնությունը դեռևս չի կարողանում ամբողջական ծավալով և լիարժեքորեն իրականացնել օրենսդրությամբ իրենց վերապահված բոլոր լիազորությունները, կամ որ միևնույնն է՝ համայնքային ծառայությունների մատուցումը, որի պատճառով վերջին 5 տարիներին ՀՀ բնակչության գերակշռող մասի կենսամակարդակը նկատելի դրական փոփոխությունների համարյա չի ենթարկվել:

2012-ին ՀՀ բոլոր համայնքների բյուջեների եկամուտների/ծախսերի մեջ 60%-ից ավելին կազմում են միայն Երևան քաղաքի բյուջեի եկամուտները/ծախսերը: Իսկ բնակչության մեկ շնչին ընկնող՝ ՀՀ համայնքների բյուջեների (առանց Երևանի) եկամուտները/ծախսերը մոտ 2.8 անգամ ցածր են, քան Երևանի բյուջեի նույն ցուցանիշները:

ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախս-

սերի հարաբերակցություններն ընդհանուր ծախսերում վերջին 5 տարիներին փոփոխվել են տարբեր համամասնություններով: Եթե 2008-2009թթ. ժամանակահատվածում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում 28.5%-ից նվազել է մինչև 19.2%-ի (մոտ 1/3-ով), իսկ 2010-2011թթ. ընթացքում այն անշեղորեն աճել է՝ հասնելով մինչև 28.9%-ի, ապա 2012թ. ընթացքում այն նորից դրսևորել է նվազման միտում՝ իջնելով մինչև 25.2%-ի:

2012-ին ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) համար հաշվարկված՝ ընդհանուր ծախսերում աշխատավարձերի և սոցիալական ապահովության վճարների տեսակարար կշիռների ցուցանիշները (ընդամենը՝ 35.8%) մոտ 4.6 անգամ բարձր են Երևան քաղաքի համար հաշվարկված նույն ցուցանիշներից (ընդամենը՝ 7.8%), որը հիմնականում պայմանավորված է երկու հանգամանքներով՝ համայնքների (առանց Երևանի) ու նրանց ենթակա կազմակերպությունների աշխատակազմերի աստիճանական ուժճացումով և համայնքների բյուջեների եկամուտների համընդհանուր անբավարարությամբ:

Համայնքներում գրեթե բոլոր որոշումների նախաձեռնողն ու փաստացի կայացնողը լինում է համայնքի ղեկավարը: Ավագանին շարունակում է հնազանդորեն հաստատել համայնքի ղեկավարի կայացրած բոլոր որոշումները:

Էլեկտրոնային կապի միջոցներից օգտվելու հնարավորությունների առումով համայնքներում շարունակվել է առաջընթացը, սակայն վիճակը դեռևս հեռու է բավարար լինելուց: Շատ համայնքներ չեն օգտվում ինտերնետային կապից: Դրանցից շատերում չկան հանրային իրազեկման այլ միջոցներ, ինչպիսիք են թերթերը, տեղական հեռուստատեսությունը: Բջջային կապ և ցուցատախտակ գրեթե բոլոր համայնքներում առկա են:

Համայնքային ծառայողների վերապատրաստումները 2012թ. նույնպես անցկացրել են մրցութային կարգով ընտրված կազմակերպությունները: Ինչպես նախորդ տարիներին էր, այնպես էլ 2012թ. վերապատրաստումները կազմակերպվել են ՏԻՄ-երի և համայնքային ծառայողների համար առանձին-առանձին:

2012թ. տարբեր միջազգային կազմակերպություններ շարունակել են գործունեություն իրականացնել Հայաստանի բազմաթիվ համայնքներում: Նրանց գործունեությունը շարունակում է անհրաժեշտ և պահանջված մնալ համայնքների համար: Նրանք սովորաբար գործում են՝ համագործակցելով ՀՀ կառավարության հետ, հաճախ՝ փոխհամագործակցում են միմյանց հետ, սակայն առավել արդյունքի հասնելու ոչ բոլոր հնարավորություններն են օգտագործվում:

2012թ. համայնքային ծառայությունների մատուցման ոլորտում ծավալում աշխատանքներ են իրականացվում մայրաքաղաքում: Երևան քաղաքին բաժին է ընկնում համայնքների ընդհանուր բյուջետային ծախսերի ավելի մեծ մասնաբաժին, քան մնացյալ բոլոր համայնքներին՝ միասին վերցրած: Այդպիսով, բավականին բարձր է Երևանի բյուջեում հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը: Մարզերում ընդգրկված համայնքներում ցածր է հանրային ծառայությունների ծախսերի և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը՝ 1.48, ի տարբերություն Երևանի, որտեղ այս

ցուցանիշը կազմում է 8.95 միավոր: Մարզերում ընդգրկված համայնքներում ծառայությունների մատուցման բնագավառում այս կամ այն չափով աշխատանքներ են իրականացնում հիմնականում քաղաքային և խոշոր գյուղական համայնքները:

Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ բարելավման և հետագա զարգացման կարիք ունեն մատուցվող բոլոր համայնքային ծառայությունները, որոնք շատ համայնքներում հեռու են բավարար լինելուց:

Վերը նշված եզրակացությունների հիման վրա կատարում ենք հետևյալ առաջարկությունները

Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման կարևոր խնդիր է մնում բարեփոխումների ընթացքի արագացումն այդ ոլորտի բոլոր ուղղություններով: Խոսքը ինչպես օրենսդրական դաշտի համալրման, այնպես էլ ընդունված տարբեր ծրագրերի իրականացման մասին է: Մասնավորապես անհրաժեշտ է ընդունել համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքների և միջհամայնքային միավորումների մասին օրինագծերը, «Ֆինանսական համահարթեցման մասին» նոր օրինագիծը և տեղական հարկերի առանձին հարկատեսակների մասին մշակված օրենքների նախագծերը, ինչպես նաև՝ մշակել ու ընդունել համայնքային պարտատոմսերի թողարկման մասին օրենքի նախագիծը:

Նույնիսկ վերը նշված օրինագծերի ընդունումն օրակարգից չի կարող հանել Տեղական ինքնակառավարման զարգացման կամ ապակենտրոնացման ռազմավարական ծրագրի ընդունման հարցը: Դա հնարավորություն կտա մեկ փաստաթղթում ամրագրել Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի տեսլականը, դրան հասնելու ուղիներն ու քայլերի կատարման հաջորդականությունը և ժամկետները:

Անհրաժեշտ է ուղղել 2010թ. ընդունված տեղական հարկերի օրենսդրական փաթեթում թույլ տրված սխալը, այն է՝ գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերի սահմանման իրավունքն օրենքով սահմանված շրջանակներում վերապահել համայնքի ավագանուն:

Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացումն անհնար է առանց համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման: Այս հարցերը ևս շուտափույթ լուծում են պահանջում:

Անհրաժեշտ է պետական բյուջե մուտքագրվող հարկերից մասհանումների չափերն օրենսդրորեն ամրագրել ոչ թե յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով, այլ «Տեղական ինքնակառավարման մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներում:

ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման ֆինանսավորման աղբյուրների ու ծավալների ընդլայնման, ինչպես նաև համայնքների բյուջեների եկամուտների բազմազանության ապահովման նպատակով անչափ կարևոր է համայնքների ներ-

գրավումը փոխատվական կապիտալի շուկա: Մասնավորապես, անհրաժեշտ է մշակել և ընդունել համապատասխան կարգեր՝ համայնքների կողմից առևտրային բանկերից և ֆինանսական հաստատություններից փոխառու միջոցներ վերցնելու մասին, համայնքային պարտատոմսեր թողարկելու մասին, մշակել և կիրառության մեջ դնել համայնքների վարկունակության գնահատման համակարգեր և գործիքներ:

Հաշվի առնելով ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքի ֆինանսական միջոցների համապատասխանության բնագավառում ՀՖՄ-ի բազմամյա փորձը՝ անհրաժեշտ է ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել ընտրված ֆինանսական ցուցանիշների տարեկան գնահատման գործը՝ հետագա տարիներին այն պաշտոնապես լիազորված մարմինների կողմից մշտապես և պարբերական կատարելու համար: Այդ նպատակով, մշակել և ներդնել ֆինանսական ցուցանիշների վերլուծության և գնահատման միասնական տեղեկատվական համակարգ՝ ապահովելով պահանջվող տեղեկատվության հասանելիությունը և պարբերական թարմացումը, ցուցանիշների տարեկան կտրվածքով վերլուծումը և գնահատումը, ստացված արդյունքների պարտադիր հրապարակումը:

Հայաստանում ՏԻՄ-երի ընտրությունների հարցում դեռևս շարունակում է արդիական մնալ անցումը համայնքի ավագանիների ընտրությունների համամասնական ընտրակարգին: Ցանկալի է, որ ՏԻՄ-երի իրավասությունների և լիազորությունների ցանկի ավելացումը ենթադրի ՏԻՄ-երի կողմից նոր հանրային ծառայությունների մատուցում՝ ապահովելով նաև համապատասխան ֆինանսավորման աղբյուրներով: Կարևոր է սահմանել ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացման կարգերը: Անհրաժեշտ է հիմքեր ստեղծել տեղական հանրաքվեի անցկացման համար: Կարևոր է նաև համայնքների գործունեության հրապարակայնության ապահովման միջոցների լայնորեն կիրառումը, մասնավորապես՝ պաշտոնական ինտերնետային կայքերի ստեղծումն ու սպասարկումը, սոցիալական ցանցերով տեղեկատվության տարածումը և այլն: Անհրաժեշտ է շարունակական քայլեր ձեռնարկել ավագանու անդամների վերապատրաստումների իրականացման, մեթոդական ուղեցույցների մշակման ուղղությամբ :

Հանրային ծառայությունների մատուցման ծավալները և որակը բարձրացնելու հաջողության գրավականը, առաջին հերթին, համայնքների ֆինանսական կենսունակության բարձրացումն է և ռեսուրսների օպտիմալ օգտագործումը: Այս համատեքստում, նախորդ տարիների նման, արդիական են մնում համայնքների խոշորացումն ու միջհամայնքային միավորումների ստեղծումը: Կարևոր է նաև համայնքների համար ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարավորությունների ընդլայնումը, մասնավորապես՝ պետական բյուջեից նպատակային միջոցների, համայնքային վարկերի ներգրավման ինստիտուտների զարգացումը, ինչպես նաև՝ մասնավոր հատվածի հետ համագործակցության զարգացումը:

Հավելված 2. ՀՀ մարզերում համայնքների ղեկավարների և ավագանու կողմից 2012թ. կազմակերպված ընդունելությունները ¹¹³

| Հ/հ | ՀՀ ՄԱՐԶ | | Ընդունելություն կազմակերպված համայնքների թիվը | | | | Համայնքի ղեկավարի մոտ | | Համայնքի ավագանու մոտ | |
|-----|-----------------|------------------|---|------------|------------|------------|---|--|--|--|
| | Մարզ | Համայնքների թիվը | 1-ին | 2-րդ | 3-րդ | 4-րդ | Ընդունելությունների մասնակցած քաղաքացիների թիվը | Ընդունելություններին դիմած քաղաքացիների թիվը | Ընդունելություններին դիմած քաղաքացիների թիվը | Ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվը |
| | | | եռամսյակ | եռամսյակ | եռամսյակ | եռամսյակ | | | | |
| 1 | Արագածոտն | 114 | 111 | 114 | 114 | 114 | 29077 | 26750 | 8942 | 8016 |
| 2 | Արարատ | 97 | 97 | 97 | 97 | 97 | 26347 | 26360 | 1861 | 1711 |
| 3 | Արմավիր | 97 | 97 | 97 | 97 | 97 | 13543 | 13334 | 2410 | 3155 |
| 4 | Գեղարքունիք | 92 | 91 | 91 | 92 | 92 | 13241 | 12965 | 2913 | 2739 |
| 5 | Կոտայք | 67 | 66 | 67 | 67 | 66 | 8452 | 8301 | 858 | 839 |
| 6 | Լոռի | 113 | 92 | 97 | 97 | 96 | 5446 | 5242 | 3522 | 3466 |
| 7 | Շիրակ | 119 | 119 | 119 | 119 | 119 | 26422 | 26422 | 2653 | 2653 |
| 8 | Սյունիք | 109 | 108 | 107 | 108 | 108 | 7401 | 7332 | 686 | 671 |
| 9 | Վայոց ձոր | 44 | 44 | 42 | 44 | 43 | 5334 | 5187 | 742 | 667 |
| 10 | Տավուշ | 62 | 62 | 62 | 62 | 62 | 4345 | 3740 | 475 | 302 |
| | Ընդամենը | 914 | 887 | 893 | 897 | 894 | 139608 | 135633 | 25062 | 24219 |

¹¹³ Աղբյուրը՝ www.mta.gov.am, 2012թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում ՀՀ համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվը

Հավելված 3. 2012 թ. ՀՀ մարզերում համայնքների բյուջեների հրապարակայնությունը¹¹⁴

| Հ/հ | Մարզ | Համայնքների քիվը | Ցուցատախտակներին և տեսանելի այլ վայրերում տեղադրում | | | | Հեռուստատեսության հեռարձակում | | | | Թերթերում տպագրում | | | | Ինտերնետային կայք էջում տեղադրում | | | |
|-----|-------------|------------------|---|----------------|----------------|----------------|-------------------------------|----------------|----------------|----------------|--------------------|----------------|----------------|----------------|-----------------------------------|------|----------------|----------------|
| | | | հոկտեմբեր-2012 | հոկտեմբեր-2013 | հոկտեմբեր-2014 | հոկտեմբեր-2015 | ըվ-1 | հոկտեմբեր-2012 | հոկտեմբեր-2013 | հոկտեմբեր-2014 | հոկտեմբեր-2015 | հոկտեմբեր-2012 | հոկտեմբեր-2013 | հոկտեմբեր-2014 | հոկտեմբեր-2015 | ըվ-1 | հոկտեմբեր-2012 | հոկտեմբեր-2013 |
| 1 | Արագածոտն | 114 | 114 | 114 | 114 | 0 | 0 | 0 | 0 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 10 | 10 | 10 | 10 |
| 2 | Արարատ | 97 | 97 | 97 | 97 | 1 | 1 | 1 | 1 | 21 | 4 | 4 | 4 | 4 | 97 | 97 | 97 | 97 |
| 3 | Արմավիր | 97 | 97 | 97 | 97 | 26 | 26 | 26 | 21 | 22 | 22 | 39 | 39 | 39 | 97 | 97 | 97 | 97 |
| 4 | Գեղարքունիք | 92 | 87 | 87 | 87 | 3 | 3 | 3 | 3 | 9 | 9 | 16 | 33 | 3 | 7 | 7 | 11 | |
| 5 | Կոտայք | 67 | 67 | 67 | 67 | 2 | 2 | 2 | 2 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 67 | 67 | 67 | 67 |
| 6 | Լոռի | 113 | 113 | 113 | 113 | 5 | 3 | 5 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 4 | 6 | 6 | 6 | 6 |
| 7 | Շիրակ | 119 | 119 | 119 | 119 | 13 | 10 | 16 | 23 | 5 | 3 | 9 | 9 | 9 | 119 | 119 | 119 | 119 |
| 8 | Սյունիք | 109 | 109 | 109 | 109 | 5 | 5 | 5 | 5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 5 | 5 | 5 | 5 |
| 9 | Վայոց ձոր | 44 | 44 | 44 | 44 | 0 | 0 | 0 | 0 | 10 | 18 | 15 | 12 | 4 | 41 | 42 | 42 | 44 |
| 10 | Տավուշ | 62 | 62 | 62 | 62 | 15 | 10 | 10 | 15 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 5 | 3 | 4 | 5 |
| | Ընդամենը | 914 | 909 | 909 | 909 | 70 | 60 | 68 | 73 | 78 | 67 | 94 | 109 | 109 | 450 | 453 | 454 | 461 |

¹¹⁴ Աղբյուրը՝ www.mia.gov.am, Անիտի տեղեկանքներ 2012թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում ՀՀ համայնքներում տեղադրված ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և բախմանցիկության վերաբերյալ

Հավելված 4. 2010-2012թթ. ՀՀ համախմբված բյուջեների բաղկացուցիչ մասերի փաստացի կատարողականները և նրանց տեսակարար կշիռները համախմբված բյուջեներում*

| Հ/հ | Բյուջեի տեսակը | 2010թ. փաստացի, մլրդ դրամ | Տեսակարար կշիռը 2010թ. համախմբված բյուջեում, % | 2011թ. փաստացի, մլրդ դրամ | Տեսակարար կշիռը 2011թ. համախմբված բյուջեում, % | 2012թ. փաստացի, մլրդ դրամ | Տեսակարար կշիռը 2012թ. համախմբված բյուջեում, % |
|-----|----------------------------------|---------------------------|--|---------------------------|--|---------------------------|--|
| | Համախմբված բյուջե (1) | | | | | | |
| | Եկամուտներ | 804.3 | 100.0 | 906.1 | 100.0 | 975.3 | 100.0 |
| | Ծախսեր | 975.9 | 100.0 | 1013.5 | 100.0 | 1037.1 | 100.0 |
| | Դեֆիցիտ (-) այդ թվում՝ | -171.6 | | -107.4 | | -61.8 | |
| 1. | Պետական բյուջե | | | | | | |
| | Եկամուտներ | 780.4 | 97.0 | 880.9 | 97.2 | 946.2 | 97.0 |
| | Ծախսեր | 954.3 | 97.8 | 986.5 | 97.3 | 1006.1 | 97.0 |
| | Դեֆիցիտ (-) | -173.9 | | -105.7 | | -59.9 | |
| 2. | Համայնքային բյուջեներ (2) | | | | | | |
| | Եկամուտներ | 84.9 | 10.6 | 87.3 | 9.6 | 95.5 | 9.8 |
| | Ծախսեր | 82.6 | 8.5 | 89.1 | 8.8 | 97.4 | 9.4 |
| | Պլոսֆիցիտ (+)/դեֆիցիտ (-) | +2.3 | | -1.8 | | -1.9 | |

*) Աղբյուրը՝ <http://www.minfin.am/index.php?cat=76&lang=1>

1. Համախմբված բյուջեի եկամուտներում ներառված չեն միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերը, իսկ ծախսերում՝ միջբյուջետային փոխանցումները
2. Համայնքային բյուջեների եկամուտներում ներառված չեն միջհամայնքային փոխանցումներից ստացվող մուտքերը, իսկ ծախսերում՝ միջհամայնքային փոխանցումները:

112 Հավելված 5. Երևանի և ՀՀ մարզերի համայնքների ղեկավարների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց դեմոգրաֆիկ պատկերը 2012թ.

| Հ/հ | Համայնքի անվանումը | զվն. պաշտ. խմբի 1-ին ենթախ | զվն. պաշտ. խմբի 2-րդ ենթախ | զվն. պաշտ. խմբի 3-րդ ենթախ | I խումբ | առաջ. պաշտ. խմբի 1-ին ենթախ | առաջ. պաշտ. խմբի 2-րդ ենթախ | առաջ. պաշտ. խմբի 3-րդ ենթախ | II խումբ | կրտսեր պաշտ. խմբի 1-ին ենթախ | կրտ. պաշտ. խմբի 2-րդ ենթախ | կրտսեր պաշտ. խմբի 3-րդ ենթախ | III խումբ | Ընդամենը | Միլիոն մտերուց մինչև տասնուհին հարյուր հարյուր | | | | | | | | | | | | | |
|----------|--------------------|----------------------------|----------------------------|----------------------------|-----------------|-----------------------------|-----------------------------|-----------------------------|-----------------|------------------------------|----------------------------|------------------------------|-----------------|-----------------|--|-----------------|-----|------|------|-----|-----|-----|-----|------|------|------|------|------|
| | | Գոյություն ունի | Գոյություն ունի | Գոյություն ունի | Գոյություն ունի | Գոյություն ունի | Գոյություն ունի | Գոյություն ունի | Գոյություն ունի | Գոյություն ունի | Գոյություն ունի | Գոյություն ունի | Գոյություն ունի | Գոյություն ունի | Գոյություն ունի | Գոյություն ունի | | | | | | | | | | | | |
| 1 | Երևան | 0 | 1 | 5 | 33 | 26 | 22 | 31 | 56 | 41 | 105 | 23 | 47 | 223 | 161 | 287 | 313 | 202 | 162 | 244 | 172 | 9 | 1 | 455 | 335 | 773 | 704 | 1477 |
| 2 | Մյունիք | 1 | 2 | 50 | 47 | 4 | 1 | 55 | 50 | 6 | 10 | 1 | 0 | 28 | 20 | 35 | 30 | 82 | 64 | 38 | 16 | 3 | 0 | 123 | 80 | 213 | 160 | 373 |
| 3 | Գեղարքուն. | 2 | 0 | 21 | 60 | 2 | 2 | 25 | 62 | 2 | 17 | 0 | 4 | 13 | 86 | 15 | 107 | 56 | 155 | 44 | 62 | 19 | 18 | 119 | 235 | 159 | 404 | 563 |
| 4 | Արմավիր | 0 | 2 | 31 | 55 | 2 | 0 | 33 | 57 | 4 | 12 | 1 | 3 | 30 | 23 | 35 | 38 | 91 | 105 | 73 | 78 | 54 | 36 | 218 | 219 | 286 | 314 | 600 |
| 5 | Արագածոտն | 0 | 1 | 33 | 67 | 3 | 1 | 36 | 69 | 0 | 8 | 0 | 0 | 8 | 24 | 8 | 32 | 127 | 166 | 14 | 5 | 6 | 1 | 147 | 172 | 191 | 273 | 464 |
| 6 | Արարատ | 0 | 3 | 48 | 36 | 4 | 1 | 52 | 40 | 5 | 7 | 1 | 1 | 38 | 56 | 44 | 64 | 84 | 64 | 71 | 34 | 34 | 18 | 189 | 116 | 285 | 220 | 505 |
| 7 | Լոռի | 2 | 1 | 57 | 31 | 2 | 3 | 61 | 35 | 3 | 18 | 5 | 13 | 41 | 43 | 49 | 74 | 131 | 85 | 94 | 47 | 58 | 11 | 283 | 143 | 393 | 252 | 645 |
| 8 | Կոտայք | 2 | 1 | 32 | 27 | 5 | 0 | 39 | 28 | 6 | 20 | 3 | 3 | 38 | 53 | 47 | 76 | 97 | 60 | 89 | 38 | 65 | 30 | 251 | 128 | 337 | 232 | 569 |
| 9 | Շիրակ | 0 | 2 | 52 | 50 | 6 | 2 | 58 | 54 | 3 | 15 | 3 | 5 | 50 | 83 | 56 | 103 | 66 | 51 | 51 | 28 | 22 | 10 | 139 | 89 | 253 | 246 | 499 |
| 10 | Վայոց ձոր | 0 | 0 | 16 | 27 | 1 | 2 | 17 | 29 | 0 | 1 | 0 | 0 | 20 | 33 | 20 | 34 | 31 | 47 | 2 | 1 | 2 | 0 | 35 | 48 | 72 | 111 | 183 |
| 11 | Տավուշ | 0 | 2 | 30 | 22 | 3 | 0 | 33 | 24 | 3 | 6 | 0 | 0 | 23 | 38 | 26 | 44 | 62 | 53 | 52 | 20 | 40 | 5 | 154 | 78 | 213 | 146 | 359 |
| Ընդամենը | | 7 | 15 | 375 | 455 | 58 | 34 | 440 | 504 | 73 | 219 | 37 | 76 | 512 | 620 | 622 | 915 | 1029 | 1012 | 772 | 501 | 312 | 130 | 2113 | 1643 | 3175 | 3062 | 6237 |

Գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն
2. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, ընդունված 07 մայիսի 2002թ.
4. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը
5. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը
6. «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքը
7. ՀՀ Ընտրական օրենսգիրք, ընդունված 26 մայիսի 2011թ
8. «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենք, ընդունված 21 մարտի 2012 թ
9. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը
10. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը
11. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը
12. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքը
13. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքը
14. «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը
15. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական հագեցվածության նորմատիվները («Փափուկ գույքի հագեցվածության նորմատիվները՝ ըստ նախադպրոցական ուսումնական հաստատությունների տեսակների և խմբերի») հաստատելու մասին ՀՀ Կրթության և գիտության նախարարի հրաման, ընդունված 18 սեպտեմբերի 2012թ.
16. ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն, Տեղեկանք 2012թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների վերաբերյալ (փետրվարի 12-ին, հունիսի 10-ին և 24-ին, հուլիսի 8-ին, օգոստոսի 5-ին և 26-ին, սեպտեմբերի 9-ին, 23-ին և 30-ին, հոկտեմբերի 14-ին և 28-ին, նոյեմբերի 4-ին և 18-ին, դեկտեմբերի 9-ին)
17. «Հայաստանի կանայք և տղամարդիկ 2013», վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2013
18. ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2012 թ. գործունեության հաշվետվություն
19. Վարկանիշային գնահատումը՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության դիտարկման անաչառ գործիք
20. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի գործունեության հաշվետվություն
21. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի 2012 թվականի գործունեության հաշվետվություն
22. ՀՀ մշակույթի նախարարության 2012թ. գործունեության հաշվետվություն
23. ՀՀ վերահսկիչ պալատի 2012թ. տարեկան հաշվետվություն
24. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ. հունվար-դեկտեմբերին»
25. Երևան քաղաքի զարգացման 2012թ. ծրագիր
26. Ամփոփ տեղեկանք ՀՀ մարզերի համայնքի ղեկավարների վերաբերյալ
27. Ամփոփ տեղեկանքներ 2012թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում ՀՀ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և քափանցիկության վերաբերյալ
28. 2012թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում ՀՀ համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվը
29. Ամփոփ տեղեկանք «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված 2012 թ. ընթացքում ավագանու որոշումները մարզպետարան ներկայացնելու վերաբերյալ

30. Ամփոփ տվյալներ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի 2012 թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում պետական գրանցումների վերաբերյալ
31. 2012 թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց
32. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2004-2006թթ.), գիրք 2, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2008, էջ 62-85
33. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2007 և 2008թթ.), գիրք 3, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2009, էջ 26-31, 95-99
34. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009 և 2010թթ.), գիրք 4, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2011, էջ 33-47, 127-138
35. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2011թ.), գիրք 5, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2012, էջ 32-46
36. «Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում. ինչու և ինչպես մասնակցել տեղական ինքնակառավարմանը» ձեռնարկ, Դ. Թումանյան, Վ. Շահբազյան, Երևան 2011
37. Subnational public finance in the European Union, Dexia, July, 2011
38. Subnational public finance in the European Union, Dexia, June, 2012
39. UNDP/GEF 00035799 “Armenia-Improving the Energy Efficiency of Municipal Heating and Hot Water Supply” Project, Standard Progress Report
40. www.edu.am
41. www.psrc.am
42. www.iem.am
43. www.coc.am
44. www.mca.am
45. www.undp.am
46. www.cspn.am ,
47. www.oxfam.org.uk
48. www.giz.de
49. www.info.sys.am
50. www.chf.am
51. www.e-gov.am
52. www.region.am
53. www.arlis.am
54. www.minfin.am
55. www.yerevan.am
56. www.cfoa.am
57. www.elections.am
58. www.iyc.am
59. www.ombuds.am
60. www.freedomhouse.org
61. www.foi.am
62. www.armstat.am
63. www.mta.gov.am

ՁԵԿՈՒՅՉ

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում
(2013թ.)

Ձեկույցը պատրաստել են ՀՖՄ-ի փորձագիտական խմբի անդամներ
Դավիթ Թումանյանը, Վահրամ Շահբազյանը,
Զնարիկ Այվազովան (Արարյանը), Լևոն Թումանյանը,
Վահե Սարգսյանը և Գրիշա Գապոյանը

1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատումը

1.1 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական գնահատումը

Սահմանադրական դրույթների օրենսդրական արձագանքումը

2005 թվականի սահմանադրական փոփոխություններում տեղ գտած տեղական ինքնակառավարմանը վերաբերող դրույթներին գործող օրենքները պետք է համապատասխանեցվեին ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ժամկետում (Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում՝ մինչև 2007 թվականի դեկտեմբերի 6-ը): Սակայն, մինչև 2013 թվականի սկիզբը որոշ դրույթներին համապատասխան օրենսդրական փոփոխություններ չէին կատարվել կամ կատարվել էին մասնակիորեն: Դրանց թվում էին՝

- ա) Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով սահմանում է տեղական հարկեր (հոդված 107):
- բ) Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է օրենքով (հոդված 107):
- գ) Համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները, կարգը, ինչպես նաև նոր ձևավորված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամկետները սահմանվում են օրենքով (հոդված 110):
- դ) Օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել միջհամայնքային միավորումներ (հոդված 110):

2013 թվականին էլ համայնքների ավագանիներին հնարավորություն չի տրվել սահմանել տեղական հարկեր: Ըստ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ 2011-ին տեղական հարկեր էին սահմանված գույքահարկը, հողի հարկը և հյուրանոցային հարկը: «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքները գործում են վաղուց, և դրանցով են սահմանված այդ հարկերի դրույքաչափերը, չնայած դրանք անվանվել են տեղական հարկեր, իսկ համաձայն Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի՝ դրանց «...դրույքաչափերը տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են սահմանել օրենքով նախատեսված շրջանակներում»¹¹⁵: Այս առումով, վերը նշված օրենքների որոշ դրույթներ հակասում են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային, քանի որ տեղական հարկ անվանված գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերի սահմանման իրավունքը չի տրվել ՏԻՄ-երին: Համայնքի ավագանուն է տրվել միայն հյուրանոցային հարկի դրույքաչափի սահմանման իրավունքը, սակայն

¹¹⁵ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, հոդված 9.3:

2013-ի ընթացքում էլ շրնդունվեց «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքը¹¹⁶, որը հնարավորություն կտար համայնքների ավագանիներին՝ գործնականում իրացնել այդ իրավունքը:

Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման կարգերն՝ այդ թվում, պարտադիր և պատվիրակված լիազորությունների մասով, օրենքով սահմանելու հետ կապված՝ 2013-ին զարգացումներ չեն գրանցվել:

2013թ. որևէ էական քայլ չարվեց համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման ուղղությամբ: Չընդունվեց նաև օրենք կամ գործող օրենքներում չկատարվեցին լրացումներ համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքների և կարգի վերաբերյալ: Չընդունվեց նաև միջհամայնքային միավորումների մասին օրինագիծը:

Այսպիսով, սահմանադրական փոփոխություններով նախատեսված օրենսդրական փոփոխությունների իրականացման աշխատանքները 2013-ին գրեթե չեն շարունակվել և արդյունքներ չեն արձանագրվել:

2013-ին չի ընդունվել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (հոդված 59) և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով (հոդված 30) նախատեսված համայնքային արժեթղթերի մասին օրենքը:

Տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենքների փոփոխությունները և լրացումները

2013 թվականին տեղական ինքնակառավարմանը վերաբերող նոր օրենքներ չեն ընդունվել, գործող օրենքներում կատարվել են մի շարք փոփոխություններ ու լրացումներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ Ազգային ժողովի կողմից ընդունված չորս օրենքներով: 2013թ. փետրվարի 5-ին ընդունված օրենքով փոփոխություններ կատարվեցին համայնքի ղեկավարի և համայնքի աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի պաշտոնային դրույքաչափերում՝ պայմանավորված «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու հետ: Մայիսի 2-ին ընդունված օրենքով հստակեցումներ են կատարվել համայնքի ավագանու լիազորությունների դադարեցմանը, ավագանու առաջարկությամբ համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելուն, մարզպետի ներկայացմամբ համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելուն վերաբերող հոդվածներում: Հունիսի 19-ին ընդունված օրենքը վերաբերում է տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցությանը: Այդ օրենքը ընդունվել է ի կատարումն Տեղական

¹¹⁶ Դեռևս 2009-ի տարեվերջին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը ՀՀ կառավարություն էր ներկայացրել ՀՖՄ-ի մշակված «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը: 2010-ին ՀՀ կառավարությունը դա ետ էր ուղարկել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն՝ շահագրգիռ կողմերի հետ լրացուցիչ քննարկելու համար: Բննարկումների արդյունքում, չնչին փոփոխություններով, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նախագիծը տարվա վերջին կրկին ներկայացրել էր ՀՀ կառավարություն, սակայն օրինագիծն ընթացք չի տրվել:

ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրության պահանջների և կանոնակարգում է ՏԻՄ-երի պարտականությունները քաղաքացիների մասնակցության ապահովման հարցում, բնակչության մասնակցության ապահովման միջոցներն ու ձևերը:

Երկու փոփոխություններ են կատարվել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում (տես՝ բաժին 4): «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում կատարվել է մեկ փոփոխություն, որով ուժը կորցրած է ճանաչվել այն դրույթը, համաձայն որի «Պետական և համայնքային ենթակառուցվածքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների աշխատավարձը չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի կրկնապատիկից»:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարվել են երկու փոփոխություններ (տես՝ բաժին 6.2):

Դեռևս 2009թ. առաջին ընթերցմամբ ընդունված «Ֆինանսական համահարթեցման մասին» նոր օրինագիծը (29.04.2009) 2013-ին ևս չդրվեց երկրորդ ընթերցման:

1.2 Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրային գնահատումը

2013-ին շարունակել է գործել 2012թ. հունիսի 21-ին ՀՀ Ազգային ժողովի հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագիրը (տեղական ինքնակառավարմանը վերաբերող մասը տրված է «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2012թ.)» զեկույցի ներդիր 1-ում): Տեղական ինքնակառավարման մասով այդ ծրագրի շատ դրույթներ չկատարվեցին մաս 2013թ.: Մասնավորապես, չի ապահովվել ՏԻՄ-երի իրավասությունների և ֆինանսական ռեսուրսների միջև համապատասխանությունը, չի ավելացվել ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների տեսականին, չի խրախուսվել միջհամայնքային միավորումների ձևավորումը:

2013թ. մայիսի 23-ին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն է արժանացել ՀՀ կառավարության նոր ծրագիրը, որի տեղական ինքնակառավարմանը նվիրված բաժինը տրված է ներդիր 1-ում:

Նոր ծրագրում տեղ են գտել նախորդ ծրագրից չիրականացված որոշ դրույթներ՝ մասնավորապես, միջհամայնքային միավորումների ձևավորումը և համայնքների խոշորացումը, ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների տեսականու ավելացումը, ինչպես նաև նոր դրույթներ (օրինակ, համայնքներում ներդնել առևտրային բանկերից և այլ ֆինանսական կառույցներից փոխառության ներգրավման արդյունավետ մեխանիզմներ, իրականացնել տեղական մակարդակում որոշումների ընդունմանը և հանրային կառավարմանը քաղաքացիների մասնակցության խթանումն ապահովող միջոցառումներ և այլն): Մինչև տարվա վերջը

ընդունվել է օրենք «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին, որը վերաբերում է ՏԻՄ-երի գործունեության քափանցիկության և հրապարակայնության բարձրացմանը, ինչպես նաև՝ տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակչության մասնակցության ապահովմանը, աշխատանքներ են տարվել համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորման ուղղությամբ:

2013-ին հրապարակվել է «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի գնահատում» փաստաթուղթ¹¹⁷, որը պատրաստել են հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի փորձագետները: Այդ փաստաթղթի համաձայն տեղական ինքնակառավարման լիազոր մարմինը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը հասել է բոլոր 34 արդյունքների կատարմանը:

ՀՀ կառավարության սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր երկարաժամկետ ծրագիրը 2008 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունված Կայուն զարգացման ծրագիրն է (տեղական ինքնակառավարմանը վերաբերող մասը տրված է «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009թ.)» զեկույցի ներդիր 2-ում), որը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում դեռևս 2009-ից գտնվում էր վերանայման գործընթացում: Սակայն, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2013-ին՝ ծրագրում չարտացոլվեցին տարբեր ոլորտների, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման ոլորտի քաղաքականությունների հիմնական ուղղությունները:

¹¹⁷ <http://www.gov.am/files/docs/1409.pdf>

**Ներդիր 1. Հատված ՀՀ կառավարության 2013-ին ընդունված ծրագրից
(3.5.1.2. Տեղական ինքնակառավարումը)**

Տեղական ինքնակառավարման համակարգի բարելավումը միտված է պետության բոլոր մակարդակներում արդյունավետ կառավարման ներուժի զարգացմանը: Ըստ այդմ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախատեսում է՝

- բարձրացնել համայնքների ֆինանսական հնարավորությունները՝ ապահովելով նրանց բյուջեի մուտքի կայունությունը.
- շարունակել ապակենտրոնացման գործընթացը, ավելացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների տեսականին՝ միաժամանակ բոլոր համայնքներում բարձրացնելով դրանց որակը.
- ստեղծել խթաններ՝ դեպի համայնքներ ներդրումների հոսքի և համանքներում նոր աշխատատեղերի ստեղծման համար.
- ներդնել գործուն մեխանիզմներ՝ մարզերում երիտասարդների աշխատանքի և կենցաղի գրավչությունն ավելացնելու համար այդ թվում՝ համայնքային ծառայության ոլորտում.
- ապահովել համայնքի ղեկավարի կողմից ընդունվող որոշումների և գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողության մեխանիզմ.
- բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության քափանցիկությունը.
- իրականացնել համատիրությունների լիարժեք կայացման ռազմավարություն.
- մշակել և իրականացնել պիլոտային ծրագրեր՝ բնակչությանը մրցակցային սկզբունքով կոմունալ ծառայություն մատուցելու և դրանց որակը բարձրացնելու համար.
- բնակչությանը մատուցվող ծառայությունների մատչելիության և որակի էական բարելավման նպատակով իրականացնել համայնքների խոշորացում և խորացնել միջհամայնքային գործակցությունը՝ դրանցում առկա կարողությունների ավելացման և արդյունավետ օգտագործման միջոցով.
- Երևանին վերադարձնել իր ճարտարապետական շունչը՝ օրենքով բացառելով Երևանի կենտրոնում մայրաքաղաքի պատմությանն ու նկարագրին անհարիր կառուցապատումը.
- համայնքների խոշորացմանը զուգահեռ՝ շարունակել ավագանու ինստիտուտի կատարելագործմանն ու դերի բարձրացմանն ուղղված քայլերը, ավագանու ձևավորման գործընթացում ավելացնել քաղաքական բաղադրիչը.
- ներդնել ֆինանսական համահարթեցման նոր համակարգ՝ սահմանելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքների բյուջեին տրամադրվող դոտացիայի առավել արդյունավետ մեխանիզմ, որի արդյունքում տրամադրվող դոտացիան կդառնա ավելի հասցեական.
- մշակել և ընդունել «Անշարժ գույքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենք, որի համաձայն անցում կկատարվի միասնական հարկման նոր համակարգի
- համայնքներում ներդնել առևտրային բանկերից և այլ ֆինանսական կառույցներից փոխառության ներգրավման արդյունավետ մեխանիզմներ.
- իրականացնել տեղական մակարդակում որոշումների ընդունմանը և հանրային կառավարմանը քաղաքացիների մասնակցության խթանումն ապահովող միջոցառումներ.
- խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացումը, համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորումը:

Տեղական ինքնակառավարման ոլորտի զարգացման համար դասասխանատու ղեռնարկի մարմինների գործունեության գնահատումը

Տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումների ու զարգացման համար պատասխանատու են երկու պետական մարմիններ՝ ՀՀ Ազգային ժողովը և կառավարությունը:

ՀՀ Ազգային ժողովի Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում կազմակերպել է օրենքների լուսմներ, գումարել նիստեր և Ազգային ժողովի լիազումար նիստերի օրակարգերում ընդգրկելու համար հավանություն է տվել տեղական ինքնակառավարմանը վերաբերող մի շարք օրինագծերի: Սակայն հանձնաժողովը, նախորդ տարվա նման, բավարարվել է հիմնականում ՀՀ կառավարության ներկայացրած օրինագծերի քննարկումների կազմակերպմամբ ու դրանց ընթացք տալով և նախաձեռնություն չի ցուցաբերել տեղական ինքնակառավարման վերաբերյալ օրինագծերի մշակման ուղղությամբ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը՝ տեղական ինքնակառավարման ոլորտի պետական լիազորված մարմինը, 2013 թվականին շարունակել է աշխատանքներ տանել մշակված օրենքների նախագծերի քննարկումներ կազմակերպելու, լրամշակելու և սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելու ուղղությամբ (տես նաև սույն զեկույցի 1.1 բաժինը):

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը 2013 թվականին շարունակել է զարգացնել վարչական հսկողության ինստիտուտը: Վարչական հսկողություն է իրականացվել 292 համայնքներում: Հսկողության արդյունքների հիման վրա կազմվել են եռամսյակային հաշվետվություններ, որոնք տեղադրվել են նախարարության ինտերնետային կայքում: Նախարարությունը ՀՀ համայնքներում գնումների գործընթացի հետ կապված առկա խնդիրները վեր հանելու նպատակով՝ ՀՀ մարզպետների և համայնքների ղեկավարների հետ քննարկել է համայնքներում գնումների իրականացման գործընթացը, վեր են հանվել ոլորտում առկա խնդիրները և դժվարությունները, քննարկվել են դրանց լուծման ուղիները: Արդյունքում առաջարկությունները ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելիս հաշվի առնելու համար:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ն և Վորլդ Վիժն Հայաստանը մշակել են «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման» մեթոդաբանությունը: Այն հնարավորություն կտա մշակել լիարժեք և իրատեսական ծրագրեր:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը 2013թ. հոկտեմբերի 3-5-ը Ջերմուկ քաղաքում կազմակերպել է գյուղական համայնքների 3-րդ համաժողովը: Համաժողովին մասնակցել են պետական կառավարման մարմինների, համայնքների հետ աշխատող տարբեր միջազգային և տեղական կազմակեր-

պությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Համաժողովի ընթացքում տեղի են ունեցել բանախոսություններ և քննարկումներ տեղական ինքնակառավարմանը վերաբերող բազմաթիվ հարցերի շուրջ:

Շարունակվել է նախարարության հրապարակային և թափանցիկ աշխատանքի բարելավումը: Տարվա ընթացքում նախարարությունը շարունակել է ՏԻՄ-երի հետ գործնական աշխատանքները:

1.3. Արժանի դարձակառույթությունների կատարումը

Հայաստանը, որպես Եվրոպայի խորհրդի անդամ երկիր, որոշ պարտավորություններ ունի այդ կազմակերպության առջև՝ այդ թվում նաև տեղական ինքնակառավարման հարցերում: Այդ պարտավորությունները վերաբերում են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքները (խարտիան Հայաստանի օրենսդրության մաս է կազմում 2002թ. մայիսի 1-ից) և Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի համաձայարականները Հայաստանի օրենսդրությունում ներառելուն և դրանց համապատասխան մեխանիզմները փաստացի կիրարկելուն: Եթե օրենսդրական պարտավորությունների կատարումը, թեպետ դանդաղ տեմպերով, ընթանում է, (տես՝ սույն զեկույցի 1.1 կետը), ապա Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքների գործնական կիրարկումը շարունակում է ետ մնալ:

Հայաստանը միացել է նաև Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությանը: Հայաստանը խարտիայի լրացուցիչ արձանագրությունն ստորագրել էր դեռևս 2010թ. մարտի 18-ին: Հայաստանի Ազգային Ժողովն այն վավերացրեց 2013-ի մայիսի 13-ին, իսկ ուժի մեջ մտավ 2013-ի սեպտեմբերի 1-ից: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրության վավերացումից հետո, Հայաստանի գործող օրենսդրության մեջ այդ մասնակցության ապահովմանն ուղղված լրացումներ կատարվեցին, հունիսին ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքը, որը վերաբերում էր տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցությանը:

2013-ին շարունակում էր գործել 2011թ. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1138-րդ հանդիպմանը հավանության արժանացած Եվրոպայի խորհուրդ - Հայաստանի կառավարություն 2012-2014թթ. գործողությունների ծրագիրը, որի դրույթներից մեկը տեղական ինքնակառավարման բարեփոխումներին աջակցությունն է:

2013 թ. դեկտեմբերի 12-ին, ՀՀ արտաքին գործերի նախարարության և Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարության նախաձեռնությամբ Երևանում տեղի է ունեցել **Եվրոպայի խորհուրդ – Հայաստան 2012-2014թթ.** Գործողութ-

յունների ծրագրի իրականացմանը նվիրված հանդիպումը, որին մասնակցել են Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարությունում համապատասխան ծրագրերի պատասխանատուները և Հայաստանում ծրագրերին մասնակցող կամ դրանք համակարգող գերատեսչությունների ներկայացուցիչները: Հանդիպմանը քննարկվել է ծրագրի իրականացման ընթացքը, կատարվել են ճշգրտումներ:

2013-ի նոյեմբերի 26-28-ին Եվրոպայի խորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի մոնիտորինգային հանձնաժողովը, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի շրջանակում տեղական ժողովրդավարության և ապակենտրոնացման ոլորտներում Հայաստանի ստանձնած պարտավորությունների իրականացման ուսումնասիրման, անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու և համապատասխան զեկույց պատրաստելու նպատակով, այցելել է Երևան:

Հայաստանը, ընդգրկված լինելով Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) և Արևելյան գործընկերության մեջ, որոշ պարտավորություններ ունի նաև Եվրամիության հանդեպ: Եվրամիություն-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրում որոշ դրույթներ են ամրագրված նաև տեղական ինքնակառավարման վերաբերյալ, որոնք Հայաստանի պարտավորություններն են՝ այդ ծրագրի իրականացման համատեքստում:

Նշված ծրագրի իրականացմանն են ուղղված ՀՀ Նախագահի 2012թ. ապրիլի 16-ի ՆԿ- 52-Ա կարգադրությամբ սահմանված ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2012-2013թթ. միջոցառումների ցանկը՝ ըստ տարիների (2012թ. զեկույց, աղյուսակ 1): 2013թ. Միջոցառումներից իրականացվել է տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության իրավական ապահովումը:

2. Վարչասարածրային բարեփոխումները և միջհամայնային համագործակցությունը

2.1 Վարչասարածրային բարեփոխումները

ՀՀ վարչատարածքային բաժանման համակարգում 2013թ. փոփոխություններ չեն գրանցվել: Այդ ընթացքում շարունակել են գործել 915 համայնքներ, որոնցից 49-ը՝ քաղաքային, 866-ը՝ գյուղական:

Հայաստանի մշտական բնակչությունը 2014թ. Հունվարի 1-ի դրությամբ կազմել է 3017.1հազ. մարդ, որը 9,8 հազարով պակաս է նախորդ տարվա համեմատությամբ: Մեկ համայնքին ընկնող բնակչության միջին թիվը կազմել է 3297 մարդ՝ նախորդ տարվա համեմատ 11-ով պակաս, իսկ առանց Երևան համայնքի՝ 2132 մարդ՝ նախորդ տարվա համեմատ 13-ով պակաս: Հայաստանի մեկ համայնքին ընկնող միջին տարածքը մնացել է նույնը՝ 31.1կմ², իսկ առանց Երևան համայնքի՝ 30,9 կմ²:

Հայաստանի համայնքների 49 %-ը ունի մինչև 1000 բնակիչ, որը 6-ով ավելի է նախորդ տարվա համեմատությամբ, 4-ով պակասել է 1001-5000 , մեկական՝ 5001-10000 և 10001-15000 բնակիչ ունեցող համայնքների թիվը: Մյուս ցուցանիշներով փոփոխություններ չեն արձանագրվել: Հայաստանի տեղական ինքնակառավարման միավորները շարունակում են մնալ խիստ մասնատված (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. ՀՀ համայնքների թիվը ըստ մարզերի և բնակչության ընտրված միջակայքերի (01.01.2014թ. դրությամբ)

| Մարզերը | Մինչև 500 | 501-1000 | 1001-5000 | 5001-10000 | 10001-15000 | 15001-50000 | 50001-100000 | 100001-1000000 | Ընդամենը |
|-------------|-----------|----------|-----------|------------|-------------|-------------|--------------|----------------|----------|
| Արագածոտն | 36 | 36 | 37 | 4 | | 1 | | | 114 |
| Արարատ | 4 | 14 | 69 | 6 | 1 | 3 | | | 97 |
| Արմավիր | 5 | 6 | 80 | 4 | | 2 | | | 97 |
| Գեղարքունիք | 27 | 19 | 31 | 11 | 2 | 2 | | | 92 |
| Լոռի | 45 | 19 | 41 | 4 | 3 | | 1 | | 113 |
| Կոտայք | 7 | 12 | 35 | 9 | 1 | 3 | | | 67 |
| Շիրակ | 41 | 29 | 44 | 3 | | 1 | | 1 | 119 |
| Սյունիք | 74 | 16 | 15 | 1 | 1 | 2 | | | 109 |
| Վայոց Ձոր | 19 | 7 | 14 | 4 | | | | | 44 |
| Տավուշ | 12 | 16 | 30 | 2 | | 2 | | | 62 |
| Ընդամենը | 270 | 174 | 396 | 48 | 8 | 16 | 1 | 1 | 914 |

Հայաստանի ամենամեծ գյուղական համայնքը Շիրակի մարզի Ախուրյան համայնքն է, որի բնակչությունը կազմում է 9884 մարդ, իսկ ամենափոքրը մնում է Սյունիքի մարզի Քաշունի համայնքը՝ 30 մարդ: Ամենամեծ և ամենափոքր գյուղական համայնքները միմյանցից տարբերվում են 330 անգամ: Դեռևս չսահմանված են մնում քաղաքների և գյուղերի տարանջատման չափորոշիչները:

Աղյուսակ 2-ում ցույց է տրված նախադպրոցական, կրթական, մարզական կազմակերպությունների տեղաբաշխումը ըստ մարզերի: Հարկ է նշել, որ երաժշտական և արվեստի, միջին մասնագիտական, սննդի անվտանգության, անասնաբուժական և արտակարգ իրավիճակների կազմակերպությունների թիվը և տեղաբաշխումը նախորդ տարվա համեմատությամբ չեն փոխվել: Մեկական պակասել է հանրակրթական դպրոցների և առողջապահական հիմնարկների թիվը, երկուսով՝ բուհերի և հինգով՝ մարզական կազմակերպությունների թիվը (հիմնականում մարզերում), իսկ 14-ով ավելացել է նախադպրոցական, 2-ով արհեստագործական կազմակերպությունների թիվը (հիմնականում մարզերում):

Աղյուսակ 2. Նախադպրոցական հաստատությունների, հանրակրթական, երաժշտական և արվեստի դպրոցների, արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, բուհերի և մարզական կազմակերպությունների թիվը՝ ըստ մարզերի:

| Մարզերը | Նախա- դպրոցա- կան | Հանրա- կրթա- կան | Երաժշ- տական և արվեստի | Արհես- տագոր- ծական | Միջին մաս- նագիտա- կան | Բուհեր | Մար- զական |
|---------------------|-------------------------|------------------------|------------------------------|---------------------------|------------------------------|-----------|---------------|
| ք. Երևան | 206 | 252 | 49 | 13 | 36 | 51 | 54 |
| Արագածոտն | 20 | 122 | 8 | 2 | 1 | - | 7 |
| Արարատ | 75 | 112 | 22 | 1 | 4 | - | 7 |
| Արմավիր | 58 | 123 | 14 | 2 | 5 | 2 | 3 |
| Գեղարքունիք | 42 | 126 | 17 | 3 | 9 | 2 | 9 |
| Լոռի | 66 | 168 | 22 | 4 | 10 | 2 | 17 |
| Կոտայք | 54 | 105 | 24 | 6 | 6 | 2 | 16 |
| Շիրակ | 50 | 173 | 27 | 6 | 12 | 2 | 36 |
| Սյունիք | 52 | 121 | 17 | 4 | 7 | 2 | 10 |
| Վայոց Ձոր | 18 | 51 | 7 | 1 | 3 | - | 4 |
| Տավուշ | 56 | 81 | 19 | 3 | 6 | - | 4 |
| Ընդամենը չ՛հ | 697 | 1434 | 226 | 45 | 99 | 63 | 167 |

Վարչատարածքային բարեփոխումները Հայաստանի տեղական ինքնակառավարման զարգացման համար մնում են առաջնահերթ, և 2013թ. ընթացքում չ՛հ կառավարության անմիջական օժանդակությամբ շարունակվել են աշխատանքները համայնքների խոշորացման ուղղությամբ: Ուսումնասիրություններ

են կատարվել ՀՀ տարածքային կառավարման նախարարության և Գերմանական տեխնիկական համագործակցության (GIZ) կազմակերպության փորձագետների կողմից, որի արդյունքում կազմվել է «Համայնքների խոշորացումը՝ որպես Հայաստանի վարչատարածքային բաժանման օպտիմալացման միջոց» աշխատանքային տեղեկանքը:

Կրկին արձանագրվել է, որ գործող վարչատարածքային բաժանումը էական խոչընդոտ է հանդիսանում համայնքների կարողությունների ամրապնդման, իշխանության հետագա ապակենտրոնացման, սահմանափակ ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման և տեղական ինքնակառավարման համակարգի բնականոն զարգացման համար:

Ստեղծված իրավիճակում անհրաժեշտություն է առաջացել համայնքների խոշորացման միջոցով օպտիմալացնել ՀՀ վարչատարածքային բաժանման համակարգը՝ որպես ուղենիշ ունենալով Եվրախորհրդի անդամ երկրների համանման ոլորտում վերջին տարիների զարգացումները, հաշվի առնելով նաև Հայաստանի յուրահատկությունները, ինչպես նաև Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի ուսումնասիրությունները:

Որպես Հայաստանում վարչատարածքային բաժանման օպտիմալացման արդիական գործիք, առաջարկվել է համայնքների խոշորացման երկու սցենար:

1. Խոշորացում ըստ համայնքների փնջերի (սցենար 1)

Այս տարբերակի համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության՝ 2011թ. նոյեմբերի 10-ին ընդունած «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգը: Համաձայն հայեցակարգում առկա սկզբունքների և չափորոշիչների, փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում կազմվել են հինգ մարզերում համայնքների խոշորացման սխեմաներ, որի արդյունքում ակնկալվում է խոշորացման հետևյալ պատկերը (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Համայնքների խոշորացումը մարզերում, ըստ համայնքների փնջերի

| Մարզերը | Համայնքների քանակը մինչև խոշորացումը | Համայնքների քանակը խոշորացումից հետո |
|-----------|--------------------------------------|--------------------------------------|
| Վայոց Ձոր | 44 | 8 |
| Սյունիք | 109 | 18 |
| Արարատ | 97 | 25 |
| Կոտայք | 67 | 20 |
| Արագածոտն | 114 | 35 |
| Ընդամենը | 431 | 106 |

Նշված հինգ մարզերում գոյություն ունեցող 431 համայնքների փոխարեն առաջարկվում է ունենալ 106-ը: Ընդհանրացնելով ուսումնասիրությունների արդյունքները

որը կարելի է եզրակացնել, որ համայնքների խոշորացման այս տարբերակի կիրառման դեպքում Հայաստանում նախատեսվում է ունենալ մոտավորապես 235 համայնք:

2. Խոշորացում ըստ նախկին (մինչև 1995թ.) վարչական շրջանների (սցենար 2)

- Խոշորացման այս սցենարի դեպքում նախատեսվում է ունենալ՝
- որոշ թվաքանակից ավել բնակչություն ունեցող քաղաքային համայնքներ,
 - շրջանային համայնքներ, որոնք ներառում են նախկին վարչական շրջանի բնակավայրերը,
 - զարգացման մեծ ներուժ ունեցող համայնքներ:

Խոշորացման այս սցենարի համար կարող են լինել մի քանի տարբերակներ (աղյուսակ 4).

Աղյուսակ 4. Համայնքների խոշորացումն ըստ նախկին վարչական շրջանների

| Տարբերակներ | Համայնքների թիվը և կազմը |
|-------------|--------------------------|
| առաջին | 1+2+37 = 40 |
| երկրորդ | 1+4+37 = 42 |
| երրորդ | 1+4+37+3 = 45 |
| չորրորդ | 1+4+37+3+6 = 51 |

որտեղ՝ 1-ը Երևանն է, 2-ը՝ Գյումրին և Վանաձորը, 4-ը՝ Գյումրին, Վանաձորը, Հրազդանը և Էջմիածինը, 37-ը՝ նախկին վարչական շրջանները, 3-ը՝ Ջերմուկը, Դիլիջանը, Ծաղկաձորը, և 6-ը՝ համայնքներ որոնք ձևավորվում են նախկին վարչական շրջանների կիսման արդյունքում:

Առաջին և երկրորդ տարբերակների դեպքում շրջանային համայնքները նախատեսվում է ձևավորել բացառապես նախկին վարչական շրջանների տարածքով: Երրորդ տարբերակում առաջարկվում է շրջանային համայնքները ձևավորել նախկին վարչական շրջանների տարածքով, նրանցից անջատելով զարգացման մեծ ներուժ ունեցող համայնքները: Չորրորդ տարբերակի դեպքում, բացի զարգացման մեծ ներուժ ունեցող համայնքներից, առաջարկվում է ձևավորել նոր համայնքներ 75,0 հազարից ավել բնակչություն ունեցող նախկին վարչական շրջանների տարածքում:

Այսպիսով, ամփոփելով կարելի է եզրակացնել, որ համայնքների խոշորացման 1-ին սցենարն ավելի շատ նպաստելու է ՏԻՄ-երի գոյություն ունեցող լիազորություններն ամբողջ ծավալով, անհրաժեշտ ցանկով և պահանջվող որակով իրականացնելուն և ավելի քիչ է ուղղված համայնքներին նոր լիազորություններ փոխանցելուն կամ որ նույնն է՝ ապակենտրոնացմանը: Համայնքների խոշորացման 2-րդ սցենարը ոչ միայն հնարավորություններ է տալիս ներկայումս համայնքներին վերապահված լիազորություններն իրականացնելու, այլև ռեալ

նախապայման է լիազորությունների հետագա ապակենտրոնացման համար:

Բերված առաջարկությունների արդյունքում հաշվարկվել են համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետությունը, հնարավոր ծախսերը և օգուտները: Մշակվել են խոշորացվող համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման խնդիրները, ինչպես նաև համայնքների խոշորացման իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական բարեփոխումները, խոշորացման գործընթացի փուլերը և ժամանակացույցը:

2.2 Միջհամայնքային համագործակցությունը

Հիմնականում իրավական դաշտի, ինչպես նաև մի շարք այլ պատճառներով 2013թ. միջհամայնքային միավորումներ չեն ստեղծվել: Այդ կառույցների ստեղծման ուղղությամբ կատարվող քայլերը դեռևս գտնվում են նախապատրաստական փուլում՝ վերլուծությունների և հայեցակարգերի մշակում, քննարկումների և լսումների կազմակերպում, առաջարկությունների ուսումնասիրում և այլն: ՀՀ կառավարության «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման» հայեցակարգը դեռևս միակ պաշտոնական փաստաթուղթն է, որը որոշակի պատկերացումներ է տալիս միջհամայնքային միավորումների մասին:

2013 թվականի ընթացքում նոր համայնքների միություններ չեն գրանցվել և չեն լուծարվել, 2014թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված էին մնում 25 համայնքների միություններ, որոնց կազմում ընդգրկված էին 495 համայնքներ: Նրանց համագործակցության շրջանակները մնացել են նույնը և դրանք ակտիվությամբ՝ հատկապես ՏԻՄ-երի շահերի պաշտպանության հարցերում, առանձնապես աչքի չեն ընկել:

Միջհամայնքային համագործակցությունը հիմնականում մնում է համայնքների կողմից ստեղծված կառույցների և նրանց միջև ուղղակի կնքվող պայմանագրերի միջոցով գույքահարկի և հողի հարկի բազաների վարման և հավաքագրման իրականացումը: Այդ կառույցների թիվը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 68, ինչպես նախորդ տարի էր: Չի փոխվել նաև սպասարկվող համայնքների թիվը՝ 427:

Շարունակվել են նաև հայ-ֆրանսիական համայնքային համագործակցությանն ուղղված զարգացման ծրագրերի իրականացման աշխատանքները:

Ընդհանուր առմամբ, 2013թ. ընթացքում միջհամայնքային համագործակցության առանձնակի զարգացումներ չեն եղել:

3. ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը, ֆաղափացիական հասարակության մասնակցությունը սեղական ինֆնակառավարմանը

3.1 ՏԻՄ-երի ձևավորումը, իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը

2013թ. ընթացքում տեղական ընտրությունների անցկացման ձևը և թեկնածուների առաջադրման կարգը մնացել են անփոփոխ:

2013-ին Հայաստանի մարզերում անց են կացվել համայնքի ղեկավարի 34 և ավագանու 43 ընտրություններ (աղյուսակ 5): Թե համայնքի ղեկավարի և թե ավագանու ընտրությունները հիմնականում անց են կացվել գյուղական համայնքներում: Համայնքի ղեկավարի և ավագանու ընտրություններ անց են կացվել ընդամենը մեկական քաղաքային համայնքներում՝ համապատասխանաբար Արարատ և Բերդ քաղաքներում: 6 համայնքներում 2013 թ. ընթացքում անց են կացվել թե համայնքի ղեկավարի և թե ավագանու ընտրություններ: Այդ համայնքներն են Չորագլուխ, Թթուջուր, Ջրամբար, Սուսեր, Ճակատեն և Ծովինար գյուղական համայնքները:

2013-ին մարզերում անցկացված համայնքի ղեկավարի ընտրությունների ժամանակ առաջադրված թեկնածուների թվի դիտարկումը ցույց է տվել, որ ընտրությունները հիմնականում անց են կացվել ցածր մրցակցության պայմաններում: Առաջադրված թեկնածուների առավելագույն թիվը եղել է 4՝ ընդամենը 3 համայնքներում: 19 համայնքներում մրցակցել են ընդամենը 2 թեկնածուներ, իսկ 8 համայնքներում, կարելի է ասել, բացակայել է մրցակցային միջավայրը, քանի որ այս համայնքներում առաջադրվել է ընդամենը 1 թեկնածու:

2013թ. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն, համայնքի ավագանին կազմավորված է համարվում, եթե ընտրվել են ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն երկու երրորդը (նախկինում՝ կեսից ավելին):

2013թ. կայացել են Երևանի ավագանու հերթական ընտրությունները: Ընտրություններին մասնակցել են Առաքելություն, Բարգավաճ Հայաստան, Հայ ազգային կոնգրես, Հայ Յեղափոխական Դաշնակցություն, Օրինաց երկիր, Հայաստանի Հանրապետական կուսակցություններն ու «Բարև Երևան» կուսակցությունների դաշինքը:

Աղյուսակ 5. 2013-ին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների թիվն ըստ մարզերի¹¹⁸

| ՀՀ | Մարզ | Համայնքի ղեկավարի ընտրություններ | | | Համայնքի ավագանու ընտրություններ | | |
|----|-----------------|----------------------------------|----------------------|----------------------|----------------------------------|----------------------|----------------------|
| | | Ընդամենը | Քաղաքային համայնքներ | Գյուղական համայնքներ | Ընդամենը | Քաղաքային համայնքներ | Գյուղական համայնքներ |
| 1 | Արագածոտն | 6 | - | 6 | 15 | - | 15 |
| 2 | Արարատ | 9 | 1 | 8 | 1 | - | 1 |
| 3 | Արմավիր | 3 | - | 3 | - | - | - |
| 4 | Գեղարքունիք | 3 | - | 3 | 16 | - | 16 |
| 5 | Լոռի | 1 | - | 1 | 2 | - | 2 |
| 6 | Կոտայք | 3 | - | 3 | - | - | - |
| 7 | Շիրակ | 6 | - | 6 | - | - | - |
| 8 | Սյունիք | 2 | - | 2 | 1 | - | 1 |
| 9 | Վայոց Ձոր | - | - | - | 1 | - | 1 |
| 10 | Տավուշ | 1 | - | 1 | 7 | 1 | 6 |
| | <i>Ընդամենը</i> | <i>34</i> | <i>1</i> | <i>33</i> | <i>43</i> | <i>1</i> | <i>42</i> |

Ընտրությունների արդյունքում ավագանու 65 տեղերը բաշխվել են հետևյալ կերպ.

- ✓ Հայաստանի Հանրապետական կուսակցություն՝ 42 տեղ (64,6 %)
- ✓ «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 17 տեղ (26,2 %)
- ✓ «Բարև Երևան» կուսակցությունների դաշինք՝ 6 տեղ (9,2 %)¹¹⁹:

Քանի որ Հայաստանի Հանրապետական կուսակցությունն ստացել է ավագանու անդամների տեղերի 50 %-ից ավելին, ապա այդ կուսակցության թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձը օրենքի ուժով համարվել է ընտրված քաղաքապետ:

2013թ. ավելացել է ՀՀ մարզերում համայնքների ղեկավարների կազմում Հայաստանի Հանրապետական կուսակցության ներկայացուցիչների թիվը՝ հասնելով 72,8 %-ի: Համայնքների ղեկավարների մեջ համեմատաբար մեծ թիվ են կազմում անկուսակցական և Բարգավաճ Հայաստան կուսակցության ներկայացուցիչները՝ համապատասխանաբար 13,3 % և 8,6 % (աղյուսակ 6):

Համայնքներում դարձյալ քիչ են հանդիպում իշխանափոխության դեպքերը: 2013թ. հոկտեմբերի դրությամբ առաջին անգամ ընտրված համայնքի ղեկավարների թիվը կազմել է 21,6 %, երկրորդ անգամ ընտրվածներինը՝ 21,4 %, երրորդ անգամ ընտրվածներինը՝ 15,2 %, չորրորդ անգամ ընտրվածներինը՝ 12,8 %, հինգերորդ անգամ ընտրվածներինը՝ 13,2 %, իսկ վեցերորդ անգամ ընտրվածներինը՝ 15,8 %: Ստացվում է, որ 144 համայնքի ղեկավարներ պաշտոնավարում են տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման պահից սկսած, և այդ համայնքներում իշխանափոխություն չի եղել¹²⁰:

¹¹⁸ Աղբյուրը՝ www.elections.am

¹¹⁹ Աղբյուրը՝ www.elections.am

¹²⁰ Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, Ամփոփ տեղեկանք ՀՀ մարզերի համայնքի ղեկավարների վերաբերյալ

Աղյուսակ 6. Համայնքների ղեկավարների կուսակցական պատկանելությունը¹²¹ (2013 թ. տարեվերջի դրությամբ)

| Հ/հ | Մարզ | Կուսակցություն | | | | | | | |
|-----|-----------------|---|--|---|--------------------------------------|--|--|--|---------------|
| | | Հայաստանի Հանրապետական Կուսակցություն (ՀՀԿ) | Բարգավաճ Հայաստան Կուսակցություն (ԲՀԿ) | Հայ Յեղավորիական Դաշնակցություն (ՀՅԴ) | Օրինաց Երկիր Կուսակցություն (ՕԵԿ) | Հայաստանի Կոմունիստական Կուսակցություն (ՀԿԿ) | Ժողովրդավարություն և Աշխատանք Կուսակցություն (ԺԱԿ) | Ազգային Ինքնորոշում Միավորում (ԱԻՄ) | Անկուսակցական |
| 1 | Արագածոտն | 92 | 2 | 4 | 2 | - | - | - | 14 |
| 2 | Արարատ | 70 | 8 | 4 | - | - | - | - | 15 |
| 3 | Արմավիր | 85 | 1 | 4 | - | - | - | - | 7 |
| 4 | Գեղարքունիք | 64 | 12 | 2 | - | 1 | 1 | - | 12 |
| 5 | Կոտայք | 30 | 37 | - | - | - | - | - | - |
| 6 | Լոռի | 75 | 1 | 3 | - | 1 | - | - | 33 |
| 7 | Շիրակ | 72 | 7 | 10 | 8 | - | - | - | 22 |
| 8 | Սյունիք | 92 | 4 | 3 | - | - | - | - | 10 |
| 9 | Վայոց Ձոր | 34 | 3 | - | - | - | - | - | 7 |
| 10 | Տավուշ | 51 | 4 | 3 | 1 | - | - | 1 | 2 |
| | <i>Ընդամենը</i> | <i>665</i> | <i>79</i> | <i>33</i> | <i>11</i> | <i>2</i> | <i>1</i> | <i>1</i> | <i>122</i> |

2013թ. ՀՀ ընտրական օրենսգրքում կատարվել է մեկ փոփոխություն, որն ըստ էության, տեղական ինքնակառավարման համակարգին չի վերաբերում:

2013թ. ՀՀ կառավարության որոշումներով վաղաժամկետ դադարեցվել են 14 համայնքների ղեկավարների (որոնցից 1-ը քաղաքային, 13-ը գյուղական) և 2 համայնքների ավագանու (բոլորը գյուղական) լիազորություններ: 7 համայնքների, այդ թվում քաղաքային համայնքի, ղեկավարների լիազորությունները դադարեցվել են նրանց մահվան և 7-ինը՝ նրանց հրաժարական տալու պատճառներով:

2013թ. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն խմբագրվել է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին համայնքի ավագանու առաջարկությամբ վերաբերվող հոդվածը: Այդ հոդվածում, մասնավորապես, ավելացվել է, որ համայնքի ավագանին համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկություն կարող է անել նաև մեկ տարվա ընթացքում նախատեսված ժամկետում (ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ) համայնքի ղեկավարի կողմից երկու անգամ միատ չհրավիրվելու դեպքում: Խմբագրվել է նաև մարզպետի ներկայացմամբ համայնքի ղեկավարի պաշտոնանկությանը վերաբերվող հոդվածը, որտեղ ավելացվել է նույն նշված

¹²¹ Աղբյուրը՝ www.mta.gov.am , Ամփոփ տեղեկանք ՀՀ մարզերի համայնքների ղեկավարների վերաբերյալ

լրացուցիչ պատճառը, որի հիման վրա մարզպետը նույնպես կարող է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնել կառավարություն: Նշալ հողվածի խմբագրմամբ հանվել է այն դրույթը, որ մարզպետը կարող է դատական կարգով վիճարկել համայնքի ղեկավարի՝ օրենքին և իրավական ակտերին հակասող որոշումները: Բացի այդ, օրենքի փոփոխություններով սահմանվել են նաև երկու լրացուցիչ դեպքեր, որոնց հիման վրա վաղաժամկետ դադարեցվում են ավագանու լիազորությունները: Այսպիսով, ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են նաև, երբ ավագանու անդամների կողմից ավագանու նիստի իրավազարությունը չսպասիովելու պատճառով վեց ամիս անընդմեջ ավագանու նիստ չի կայանում, և երբ օրենքով սահմանված կարգով տվյալ համայնքը վերակազմակերպվում է որպես այլ վարչատարածքային միավոր:

2013-ին, ինչպես և նախորդ տարիներին, չի գրանցվել համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու որևէ դեպք:

ՏԻՄ-երի իրավասությունները և լիազորությունները

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն, 2013թ. տարեվերջի դրությամբ համայնքների ավագանիներն ունեն թվով 36 իրավասություններ, իսկ համայնքների ղեկավարները թվով 27 իրավասություններ: Թվով 38 լիազորություններ ունի Երևանի ավագանին, իսկ քաղաքպետը՝ 18, սահմանված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

2013թ. հունիսի 19-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով համայնքների ղեկավարներին տրվել են երկու նոր իրավասություններ՝ «առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ» և «առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ»: Երկուսով ավելացել են նաև համայնքների ավագանիների իրավասությունները. նրանք քննարկում և որոշում են կայացնում վերոնշյալ երկու առաջարկությունների վերաբերյալ:

Նույն օրենքով համայնքների ղեկավարներին փոխանցվել են 4 պարտադիր լիազորություններ նոր բնագավառում, որն է՝ բնակիչների մասնակցություն տեղական ինքնակառավարմանը: Նշյալ բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

✓ համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց (այդ թվում՝ տեղեկատ-

վության և հեռահաղորդակցության)։

✓ ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ՝ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնաձ համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար։

✓ կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լուծումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին։

✓ համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում և (կամ) ներգրավում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում։

2013թ. Երևանի ՏԻՄ-երի իրավասությունների և լիազորությունների շրջանակում փոփոխություններ չեն կատարվել։

Ամփոփ կերպով կարելի է նշել, որ 2013 թվականի տարեվերջի դրությամբ համայնքի ղեկավարներին օրենքով վարապահված պարտադիր լիազորությունների թիվը կազմել է 66, պատվիրակված լիազորություններինը՝ 20, իսկ կամավոր լիազորություններինը՝ 23 (աղյուսակ 7)։

Աղյուսակ 7. ՏԻՄ-երի լիազորությունների քանակական տվյալներն ըստ առանձին տեսակների և բնագավառների (2013 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)

| Հ/հ | Բնագավառ | Պարտադիր լիազորություններ | | Պատվիրակված լիազորություններ | | Կամավոր լիազորություններ | |
|-----|--|---------------------------|---------------|------------------------------|---------------|--------------------------|---------------|
| | | ՀՀ այլ ՏԻՄ-եր | Երևանի ՏԻՄ-եր | ՀՀ այլ ՏԻՄ-եր | Երևանի ՏԻՄ-եր | ՀՀ այլ ՏԻՄ-եր | Երևանի ՏԻՄ-եր |
| 1 | Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն | 8 | 0 | 8 | 0 | 0 | 0 |
| 2 | Բնակիչների մասնակցություն տեղական ինքնակառավարմանը | 4 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3 | Ֆինանսներ | 8 | 7 | 0 | 0 | 0 | 0 |
| 4 | Հասարակական կարգի պահպանություն | 0 | 4 | 2 | 0 | 0 | 0 |
| 5 | Պաշտպանության կազմակերպում | 3 | 3 | 0 | 0 | 3 | 3 |

| | | | | | | | |
|----|--|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|
| 6 | Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | 20 | 14 | 0 | 1 | 5 | 0 |
| 7 | Հողօգտագործում | 5 | 1 | 3 | 4 | 2 | 0 |
| 8 | Տրանսպորտ (և ճանապարհաշինություն)* | 4 | 4 | 1 | 2 | 1 | 0 |
| 9 | Առևտուր և ծառայություններ (սպասարկում)* | 9 | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| 10 | Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ | 1 | 2 | 1 | 1 | 5 | 3 |
| 11 | Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ | 1 | 3 | 0 | 4 | 3 | 3 |
| 12 | Աշխատանք և սոցիալական ծառայություն (սոցիալական պաշտպանություն)* | 0 | 1 | 1 | 1 | 2 | 1 |
| 13 | Գյուղատնտեսություն | 2 | 0 | 2 | 4 | 2 | 0 |
| 14 | Բնության և շրջակա միջավայրի պահպանություն (բնապահպանություն)* | 1 | 4 | 2 | 2 | 0 | 1 |
| 15 | Ավագանու հետ հարաբերություններ* | 0 | 10 | 0 | 0 | 0 | 0 |
| 16 | Գործադիր իշխանության հանրապետական մարմինների և դրանց Երևանի տարածքային ծառայությունների հետ հարաբերություններ* | 0 | 5 | 0 | 0 | 0 | 0 |
| 17 | Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ* | 0 | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| 18 | Էլեկտրոնային հաղորդակցություն, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, գազամատակարարում* | 0 | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| | Ընդամենը | 66 | 64 | 20 | 19 | 23 | 11 |

*) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում բերված ՏԻՄ-երի լիազորությունների բնագավառների անվանումները տարբերվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում բերված բնագավառների անվանումներից: Այն դեպքում, երբ այդ անվանումները շատ չեն տարբերվում, տարբերությունները նշվել են փակագծերում: Հակառակ դպքում դրանք ձևակերպվել են որպես առանձին բնագավառներ:

2013թ. ընթացքում պարտադիր լիազորությունների իրականացման կարգերի հետ կապված փոփոխություններ չեն կատարվել:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները ենթադրում են տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության, հանրային լսումների և համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման կարգերի առկայություն: 2013թ. ընթացքում այդ կարգերից որոշներն ընդունվել են Երևանում և մի քանի այլ համայնքներում:

Որոշումների կայացումը համայնքներում

2013թ. ընթացքում համայնքների կողմից մարզպետարաններ են ներկայացվել ընդհանուր թվով 24736 որոշումներ: Այդ որոշումներից 4,8 %-ում (1199 որոշումներ) հայտնաբերվել են անհամապատասխանություններ օրենքների և իրավական ակտերի հետ: Մարզպետարանների վերադարձրած որոշումների 85,1 %-ը համայնքների կողմից համապատասխանեցվել է օրենքներին և իրավական ակտերին և սահմանված ժամկետներում ներկայացվել մարզպետարաններ: 2013-ին, ինչպես և նախորդ տարի, համայնքների կողմից ավագանու որոշումները մարզպետարան չներկայացնելու դեպքեր չեն եղել: 2013-ին ավագանու որոշումներն անվավեր ճանաչելու նպատակով մարզպետարանները դատական հայց չեն ներկայացրել (հավելված 1)¹²²:

2013-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից իրավական հսկողություն է իրականացվել Երևանի ավագանու ընդունած 104 որոշումների նկատմամբ¹²³:

Որոշումների ընդունման հարցում համայնքի ավագանիները դեռևս ակտիվ չեն:

«Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպության իրականացրած՝ ՏԻՄ-երի գործունեության վարկանիշային գնահատմամբ համայնքի ավագանու՝ համայնքի ղեկավարման գործընթացին մասնակցության և ակտիվության գնահատականը 2013թ. մի փոքր աճել է (դիտարկվել են 100 գյուղական համայնքներ՝ յուրաքանչյուր մարզից 10-ական համայնք): Այդ գնահատականը 2012 թ. հոկտեմբեր – 2013 թ. մարտ և 2013 թ. ապրիլ – 2013 թ. սեպտեմբեր ամիսների համար կազմել է համապատասխանաբար 6,6 և 6,8 միավոր (10 բալանոց սանդղակով): Նշված կազմակերպության իրականացրած դիտարկումների համաձայն, դեռևս խնդրահարույց է ավագանիների ստեղծագործական ներուժի ցածր մակարդակը, որոշումներ կայացնելիս սեփական կարծիք արտահայտելու կամ պաշտպանելու, ծրագրերի մշակման գործում մասնակցություն ունենալու անբավարար աստիճանը, ավագանիների մեծամասնությունը չունի համայնքի ղեկավարմանը մասնակցելու հմտություն, օրենքների բավարար իմացություն և այլն¹²⁴:

Համայնքների ավագանիների բնականոն գործունեության համար կարևոր է նրանց անհրաժեշտ պայմաններով ապահովելը: Համայնքների ավագանու աշխատանքները կազմակերպելու համար առանձնացված աշխատասենյակներ 2013թ. 1-ին և 2-րդ եռամսյակների տյալներով եղել են 665 համայնքներում, իսկ 3-րդ և 4-րդ եռամսյակների տյալներով՝ 685 համայնքներում: Մարզային կտրվածքով դիտարկելիս կարելի է նկատել, որ Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի բոլոր համայնքներում առկա են այդպիսի աշխատասենյակներ: Իսկ Արագածոտնի և Տավուշի մարզերում 2013թ. 4-րդ եռամսյակի տյալներով ավագանու գործունեության համար առանձնացված աշխատասենյակ ունեցող համայնքների տեսակարար կշիռն ամենացածրն է եղել՝ 43 %: 4-րդ եռամսյակի տյալներով նման աշխատասենյակներ չունեցող համայնքները բոլորը գյուղական

¹²² Աղբյուրը՝ www.region.am

¹²³ Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2013 թ. գործունեության հաշվետվություն

¹²⁴ Աղբյուրը՝ www.iyc.am, Վարկանիշային գնահատումը՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության դիտարկման անաչառ գործիք

համայնքներ են, քաղաքային համայնքներում դրանք առկա են¹²⁵:

2013-ին ավագանու ինստիտուտի զարգացման նպատակով աշխատանքներ են իրականացվել «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության կողմից: Կազմակերպությունը անց է կացրել 43 մոդելային համայնքների ավագանու անդամների կարիքներին հարմարեցված դասընթացներ, որոնց վերաբերյալ ստացվող արձագանքները վկայում են, որ ավագանու անդամներն ավելի ակտիվ են դարձել և նրանց պարտավորությունների իրականացման կարողություններն ավելի են մեծացել: Քաունթերփարթի կողմից համակարգիչներով և բազմաֆունկցիոնալ տախիչ սարքերով կահավորվել են 5-ական քաղաքային և գյուղական համայնքների աշխատասենյակներ¹²⁶:

2013-ին համայնքի ղեկավարների և ավագանու անդամների մոտ քաղաքացիների ընդունելության վիճակագրությունն ունի հետևյալ պատկերը: 2013-ին ՀՀ մարզերում համայնքի ղեկավարների մոտ ընդունելության է մասնակցել 125318 քաղաքացի, իսկ ավագանու անդամների մոտ՝ 25787 քաղաքացի: Համայնքի ղեկավարների մոտ ընդունելության է մասնակցել ընդունելության դիմած քաղաքացիների 97,8 %-ը, իսկ ավագանու անդամների մոտ՝ 94,0 %-ը: 2013թ. տարբեր եռամսյակներում ընդունելություն կազմակերպած համայնքների թիվը տատանվել է 820-ից մինչև 893-ի սահմաններում: Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի և Տավուշի մարզերի բոլոր համայնքները տարվա 4 եռամսյակների ընթացքում կազմակերպել են համայնքի բնակիչների ընդունելություններ: Մնացյալ մարզերի ոչ բոլոր համայնքներում են 2013թ. ընթացքում կազմակերպվել ընդունելություններ: Այդ առումով ամենացածր ցուցանիշը գրանցվել է Սյունիքի մարզում, որտեղ ընդունելություն կազմակերպած համայնքների թիվը 4-րդ եռամսյակում կազմել է մարզի համայնքների թվի 36,7 %-ը (հավելված 2):

2013-ին Հայաստանում տեղական հանրաքվե չի անցկացվել, սակայն կատարվել է մեկ փորձ (ներդիր 2):

Ներդիր 2. Կապանում տեղական հանրաքվե անցկացնելու փորձ

2013թ. Կապանում ստեղծված նախաձեռնող խումբը դիմել է թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ տեղական հանրաքվեի միջոցով Կապանի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը «Հայջրմուղկոյտլի ՓԲԸ»-ին 25 տարով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու որոշումը չեղյալ համարելու պահանջով: Նախաձեռնող խումբը հանրաքվե անցկացնելու նպատակով ստորագրահավաք է անց կացրել, որին մասնակցել են տաս հազարից ավելի քաղաքացիներ: Ընտրական հանձնաժողովը մերժել է տեղական հանրաքվեի անցկացման նախաձեռնող խմբի դիմումի գրանցումը՝ հիմք ընդունելով «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի այն դրույթը, ըստ որի տեղական հանրաքվեի չեն կարող դրվել Սահմանադրությամբ կամ օրենքով ՏԻՄ-երի բացառիկ իրավասությանն ուղղակիորեն վերապահված հարցերը:

Աղբյուրը՝ <http://armenpress.am/arm/news/728023/syuniqi-tiv-38-yyh-n-merzhec-nakhadzernox-khmbi-dimumy-kapanum.html>

¹²⁵ Աղբյուրը՝ www.mta.gov.am , Ամփոփ տեղեկանքներ 2013թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում ՀՀ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և քափանցիկության վերաբերյալ

¹²⁶ Աղբյուրը՝ <http://program.counterpart.org/Armenia/> , Համայնքի ավագանու ինստիտուտի հզորացում՝ մեկ ամբողջական ՏԻՄ համակարգի խթանումն ապահովելու համար

2013թ. վարչական հսկողություն է իրականացվել ՀՀ մարզերի 292 համայնքներում: Արձանագրված խախտումները, ինչպես և նախորդ տարի, հիմնականում վերաբերել են «Տեղական ինքնակառավարման մասին», «Գնումների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Քաղաքաշինության մասին» և ՀՀ այլ օրենքների և ենթօրենսդրական ակտերի պահանջների չկատարմանը¹²⁷:

3.2 Քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 2014 թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված են եղել քաղաքացիական հասարակության սուբյեկտներ հանդիսացող 3838 հասարակական կազմակերպություն, 835 հիմնադրամ, 720 արհեստակցական կազմակերպություն և 74 կուսակցություն¹²⁸:

Այս կազմակերպությունների տարածքային տեղաբաշխվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Տեղական ինքնակառավարման ոլորտում շարունակում են գործել նախորդ տարիների զեկույցներում նշված կազմակերպությունները: Կան առանձին հասարակական կազմակերպություններ, հատկապես մարզերում, որոնք տեղական ինքնակառավարման ոլորտում եզակի ծրագրեր են իրականացնում:

Երևանի մամուլի ակումբի տվյալների համաձայն՝ Հայաստանի ՁԼՄ-ները հիմնականում տեղաբաշխված են Երևանում: Տարածականորեն համեմատաբար ընդգրկում աշխարհագրություն ունեն հեռուստաընկերությունները: Իսկ Հայաստանում օտարերկրյա ՁԼՄ-ների թղթակիցները և գրասենյակայինները, ինչպես նաև լրատվական գործակալություններն ու ինտերնետային հրատարակությունները գտնվում են միմիայն Երևանում (աղյուսակ 8):

«Ֆրիդոմ Հաուս» իրավապաշտպան կազմակերպության զեկույցի համաձայն, Հայաստանի ժողովրդավարության առաջընթացի գնահատականը նախորդ տարվա համեմատ փոքր ինչ բարձրացել է՝ 2013թ. կազմելով 5,36 միավոր (գնահատականները տրված են 7 բալանոց սանդղակով, որտեղ ամենալավ ցուցանիշը 1-ն է, իսկ ամենավատը՝ 7-ը): «Տեղական ժողովրդավարական կառավարում» և «քաղաքացիական հասարակություն» բաժինների գնահատականները նախորդ տարվա համեմատ մնացել են մույնը՝ կազմելով համապատասխանաբար 5,75 և 3,75 միավոր¹²⁹:

2013թ. հունիսի 19-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը հստակեցնում և կարգավորում է տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության հարցերը: Մասնավորապես, ամրագրվել է տեղական ինքնակառավարման նոր

¹²⁷ Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2013 թ. գործունեության հաշվետվություն

¹²⁸ Աղբյուրը՝ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն

¹²⁹ Աղբյուրը՝ www.freedomhouse.org, Nations in Transit 2013

սկզբունք՝ տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը: Տրվել է տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցություն հասկացության սահմանումը, սահմանվել է, որ համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ նաև համայնքի բնակիչները (նախկինում այդ իրավունքն ունեին համայնքի ղեկավարը և ավագանին), ավագանուն վերապահվել է նոր՝ համայնքի բնակիչների ընդունելություն կատարելու, հանրային հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու իրավասություն, նոր պարտականություններ, նկարագրվել են համայնքի զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման գործընթացներում բնակիչների մասնակցության առանձնահատկությունները և այլն (տես նաև սույն զեկույցի՝ «ՏԻՄ-երի ձևավորումը իրավասությունները, լիազորությունները և գործունեությունը/ՏԻՄ-երի իրավասությունները և լիազորությունները» բաժինը):

Աղյուսակ 8. Հայաստանի ՁԼՄ-ները և նրանց տարածքային բաշխվածությունը¹³⁰ (01 նոյեմբերի 2014թ. դրությամբ)

| Հ/հ | Մարզ | Մամուլ | Հեռուստաընկերություններ | Ռադիոընկերություններ | Օտարերկրյա ՁԼՄ-ների քոլեակիցները և գրասենյակները Հայաստանում | Լրատվական գործակալություններ և ինտերնետային հրատարակություններ | Լրագրողական միավորումներ |
|-----|-----------------|-----------|-------------------------|----------------------|--|--|--------------------------|
| | Երևան | 70 | 22 | 13 | 14 | 25 | 9 |
| 1 | Արագածոտն | 1 | 1 | - | - | - | - |
| 2 | Արարատ | - | 1 | - | - | - | - |
| 3 | Արմավիր | - | 3 | - | - | - | - |
| 4 | Գեղարքունիք | 1 | 5 | - | - | - | - |
| 5 | Կոտայք | 1 | 4 | - | - | - | - |
| 6 | Լոռի | 2 | 6 | 1 | - | - | 1 |
| 7 | Շիրակ | 5 | 4 | 2 | - | - | 1 |
| 8 | Սյունիք | 2 | 6 | 2 | - | - | 1 |
| 9 | Վայոց Ձոր | - | - | 1 | - | - | - |
| 10 | Տավուշ | - | 4 | - | - | - | - |
| | <i>Ընդամենը</i> | <i>82</i> | <i>56</i> | <i>19</i> | <i>14</i> | <i>25</i> | <i>12</i> |

Քաղաքացիական հասարակության սուբյեկտների և ՏԻՄ-երի արդյունավետ փոխգործակցության տեսանկյունից կարևոր է նրանց կարողությունների զարգացումը: Որպես նման նախաձեռնությունների օրինակ կարելի է նշել «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության կողմից իրականացված

¹³⁰ Աղբյուրը՝ www.ypc.am

«Շարժվելով առաջ» հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների ամրապնդում ծրագիրը (2013-2014 թթ.):

ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ սեղեկասվության մասշտիբությունը

2013թ. ընթացքում 117 համայնքներում գործարկվել են համացանցային պաշտոնական կայքեր: Նման կայքեր շահագործող համայնքների թիվը 2013թ. տարեվերջի դրությամբ եղել է 150¹³¹:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության և Հայաստանի համայնքների միության կողմից համատեղ անցկացվող «Տարվա լավագույն համայնք» ամենամյա մրցանակաբաշխության արդյունքներով 2013թ. «Տարվա լավագույն կայք» անվանակարգում հաղթող է ճանաչվել Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքը¹³²:

ՀՀ մարզերում համայնքների բյուջեների հրապարակայնության դիտարկումը ցույց է տալիս, որ 2013թ. համայնքների բյուջեների ցուցանիշները ցուցատախտակներում և այլ տեսանելի վայրերում տեղադրել են գրեթե բոլոր համայնքները: Այդ ցուցանիշները հեռուստատեսությամբ հեռարձակող և թերթերում տպագրող համայնքների թիվը չի կազմել նույնիսկ համայնքների ընդհանուր թվի 10%-ը: Իսկ տարբեր եռամսյակներում ինտերնետային կայք էջում տեղադրող համայնքների թիվը կազմել է մոտավորապես 50-60 % (հավելված 3):

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի 2013թ. անց կացրած տեղեկատվության ազատության հերթական մրցանակաբաշխության արդյունքներով տեղական ինքնակառավարման մարմիններին «ուկե բանալին» բաժին չի հասել: Երևանի քաղաքապետարանին շնորհվել է «Ժանգոտ կողպեք» մրցանակը, որպես քաղաքացիների՝ տեղեկություն ստանալու հարցումներին ամենադանդաղ պատասխանող մարմին¹³³:

2013թ. Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի հրապարակրած «սև ցուցակում» ՏԻՄ-երի ներկայացուցիչներից ընդգրկվել են Երևանի քաղաքապետն ու Կենտրոն վարչական շրջանի ղեկավարը¹³⁴:

«Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպության իրականացրած ՏԻՄ-երի գործունեության վարկանիշային գնահատմամբ համայնքի ղեկավարի և ավագանու ընդունած որոշումների թափանցիկության և գործունեության հրապարակայնության գնահատականը 2012 թ. հոկտեմբեր – 2013 թ. մարտ և 2013 թ. ապրիլ – 2013 թ. սեպտեմբեր ամիսների համար կազմել է համապատասխանաբար 6,3 և 6,7 միավոր (10 բալանոց սանդղակով)¹³⁵:

¹³¹ Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2013 թ. գործունեության հաշվետվություն

¹³² Աղբյուրը՝ <http://armtur.am/56474/>

¹³³ Աղբյուրը՝ www.foi.am

¹³⁴ Աղբյուրը՝ www.foi.am

¹³⁵ Աղբյուրը՝ www.iyc.am, Վարկանիշային գնահատումը՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության դիտարկման անաչառ գործիք

ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ դիմում-բողոքները

2013թ. մարդու իրավունքների պաշտպանի գործունեության տարեկան զեկույցում դարձյալ տեղեկատվություն կա միայն Երևանի քաղաքապետերանի վերաբերյալ՝ նշելով, որ հիմնականում այն վերաբերելի է նաև մյուս տեղական ինքնակառավարման մարմիններին: Բնակչության դիմում-բողոքները վերաբերել են տրանսպորտի սակագնի թանկացմանը, մանկապարտեզների խմբերում երեխաների մեծ թվին, հաշմանդամների տեղաշարժման խնդիրներին և այլն: 2013թ. քաղաքապետարանի «թեժ գծին» ստացված հեռախոսագանգերի արդյունքում մուտքագրվել է 8889 փաստաթուղթ: Երևան քաղաքի 12 վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում գործող «թեժ գիծ» համարվող հեռախոսահամարներին ստացվել է 4160 հեռախոսագանգ: Ահազանգերը վերաբերել են հիմնականում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպմանը, կոյուղագծերի և ջրագծերի վթարներին, համատիրությունների գործունեությանը և այլն¹³⁶:

2013թ. Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 12 քաղաքացու գործով տեղեկատվություն ստանալու հարցումներ է ներկայացրել Վանաձոր համայնքի ղեկավարին, որոնց վերաբերյալ ստացվել են համապատասխան պատասխաններ: 2012-2013 թվականների ընթացքում կազմակերպության կողմից իրականացված ռազմավարական նշանակություն ունեցող գործերից 4-ով վիճարկվել են համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներ: Նշված 4 գործերից մեկը եղել է քաղաքացու խնդրով, երբ համայնքի ղեկավարի որոշմամբ խախտվել է անձի սեփականության իրավունքը¹³⁷:

4. Համայնքների սեփականությունը, զարգացման ծրագրերը և ֆինանսական անկախությունը

2013թ. ընթացքում համայնքների ֆինանսներին և կառավարմանը վերաբերող մի շարք օրենսդրական փոփոխություններ են կատարվել:

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ գործող օրենքի համաձայն՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների չափը ըստ առանձին համայնքների բյուջեների հաշվարկվում էր՝ տարանջատելով 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող և 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքները: Արդյունքում 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող բոլոր համայնքները (շուրջ 200 համայնք) ստանում էին հավասարաչափ ֆինանսական համահարթեցման դոտացիաներ, իսկ 33 համայնքներում, որոնք ունեին 300-ից ավելի բնակչություն, 2012թ. համար նախատեսված դոտացիայի գումարը պակաս էր 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող

¹³⁶ Աղբյուրը՝ 2013 թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատության խախտման մասին տարեկան զեկույց

¹³⁷ Աղբյուրը՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

համայնքների համար սահմանված գումարից: Համայնքների բյուջեներին պետական աջակցության համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ են կատարվել (19.06.2013թ.; 04.12.2013թ.): Համաձայն այդ փոփոխության՝ ա) գործոնով և 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների բյուջեներին նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարը չպետք է պակաս լինի հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում եկամտահարկի, հողի հարկի և գույքահարկի փաստացի մուտքերի հանրագումարի քսանհինգ տոկոսից, իսկ բ) գործոնով նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարը՝ հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում եկամտահարկի փաստացի մուտքերի ընդհանուր գումարի տասը տոկոսից: Արդյունքում, 300-ից ավելի բնակիչ ունեցող, սակայն 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքի համար սահմանված դոտացիայի գումարից տվյալ տարում պակաս չափով դոտացիա ստացող յուրաքանչյուր համայնք ստանում է լրացուցիչ դոտացիա 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքի համար հաշվարկված դոտացիայի գումարի տարբերության չափով: Յուրաքանչյուր բյուջետային տարում ըստ առանձին համայնքների դոտացիայի հաշվարկման ժամանակ հիմք է ընդունվում հաշվարկվող տարվան նախորդող բյուջետային տարվա հունվարի 1-ի դրությամբ պետական վիճակագրական մարմինների կողմից ներկայացված, համայնքներում հաշվառված բնակչության թիվը:

Փոփոխություններ են կատարվել նաև «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում (30.04.2013թ.), տրվել են համապատասխան սահմանումներ և հասկացություններ, հստակեցվել են մի շարք հոդվածներ:

Փոփոխություններ են կատարվել նաև «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքում, որտեղ ամրագրված է, որ ՏԻՄ-երը տնօրինում են համայնքների բյուջեների միջոցների այն ենթահաշիվները, որոնց համար այդ մարմինները հանդիսանում են բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչներ, համայնքային հիմնարկների անվամբ բացված արտաբյուջետային ենթահաշիվները: Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները տնօրինում են իրենց բանկային սպասարկման համար բացված ենթահաշիվները, ծրագիր իրականացնող գրասենյակները տնօրինում են այդ ծրագրի իրականացման նպատակով նշված գրասենյակների բանկային սպասարման համար բացված ենթահաշիվները:

Փոփոխություններ և լրացումներ կան նաև «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում (12.11.2013թ.):

4.1 Համայնքների սեփականությունը

2013թ. նույնպես, ինչպես նախորդ տարիներին, համայնքային սեփականությունը հիմնականում համալրվել է համայնքների կատարած կապիտալ կամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հաշվին (աղյուսակ 9):

Աղյուսակ 9. ՀՀ համայնքների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2011-2013թթ. (մլն ՀՀ դրամ)

| Տող | Բովանդակություն | 2011թ. | | 2012թ. | | 2013թ. | |
|------|--|----------|----------------|----------|----------------|----------|----------------|
| | | Գու-մարը | Տես. կշիռը (%) | Գու-մարը | Տես. կշիռը (%) | Գու-մարը | Տես. կշիռը (%) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 5000 | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ | 25764.2 | 100 | 24573.4 | 100 | 23140.7 | 100 |
| 5100 | այդ թվում՝ 1.Հիմնական միջոցներ | 25683.9 | 99.7 | 24520.3 | 99.8 | 23112.7 | 99.9 |
| 5110 | այդ թվում՝ Շենքեր և շինություններ | 23012.9 | 89.3 | 22301.8 | 90.8 | 19540.4 | 84.4 |
| 5111 | որից՝ -Շենքերի և շինությունների ձեռքբերում | 29.1 | 0.1 | 147.5 | 0.6 | 1230.2 | 5.3 |
| 5112 | -Շենքերի և շինությունների կառուցում | 8735.9 | 33.9 | 4556.4 | 18.5 | 3730.9 | 16.1 |
| 5113 | -Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 14247.9 | 61.9 | 17597.9 | 71.6 | 14579.2 | 63 |
| 5120 | Մեքենաներ և սարքավորումներ | 1855.7 | 7.2 | 1647.2 | 6.7 | 2933.0 | 12.7 |
| 5121 | որից՝ -Տրանսպորտային սարքավորումներ | 845.2 | 3.3 | 586.0 | 2.4 | 734.4 | 3.2 |
| 5122 | -Վարչական սարքավորումներ | 566.8 | 2.2 | 678.3 | 2.8 | 758.2 | 3.3 |
| 5123 | -Այլ մեքենաներ և սարքավորումներ | 443.7 | 1.7 | 382.9 | 1.6 | 1440.4 | 6.2 |
| 5130 | Այլ հիմնական միջոցներ | 815.3 | 3.2 | 571.3 | 2.3 | 639.3 | 2.8 |
| 5200 | 1.2.Պաշարներ | 56.4 | 0.2 | 45.2 | 0.2 | 26.8 | 0.1 |
| 5300 | 1.3.Բարձրարժեք ակտիվներ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 5400 | 1.4.Չարտադրված ակտիվներ | 24.0 | 0.1 | 7.9 | 0.0 | 1.3 | 0.0 |
| 5411 | Այդ թվում՝ -Հող | 24.0 | 0.1 | 7.9 | 0.0 | 1.3 | 0.0 |

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծավալը վերջին երկու տարիների ընթացքում նվազման միտում ունի, այն 2013թ. կազմել է՝ 23140.7մլն դրամ (2012թ՝ 24573.4մլն դրամ, 2011թ՝ 25764.2մլն դրամ), որը 5.8%-ով քիչ է նախորդ տարվա 142

համեմատ: Այդ ծախսերի ճնշող մեծամասնությունը, նախորդ տարիների նման (չնչին տարբերությամբ) կազմել են հիմնական միջոցների գծով կատարված ծախսերը՝ 99.9%, որոնց կազմում չնայած նվազմանը, շարունակում է բարձր մնալ շենքերի և շինությունների բաժինը՝ 84.4% (2012թ.՝ 90.8%): 2013թ., թե գումարային արտահայտությամբ, թե տեսակարար կշռով նվազել են շենքերի և շինությունների կառուցման ու կապիտալ նորոգման ծախսերը՝ 16.1% և 63% (2012թ.՝ 18.5% և 71.6%): Նախորդ տարվա համեմատ կտրուկ (8.3 անգամ) աճել են շենքերի, շինությունների ձեռքբերման ծախսերը, ինչպես նաև այդ ծախսերի տեսակարար կշիռը՝ 5.3% (2012թ.՝ 0.6%): Սեքենաների և սարքավորումների բաժինը նույնպես աճել է՝ 6.7%-ից հասնելով 12.7%-ի՝ աճելով նաև գումարային արտահայտությամբ: Կտրուկ նվազել են առանց այդ էլ չնչին մաս կազմող պաշարների և չարտադրված ակտիվների վրա կատարված ծախսերը՝ 0.1%:

ՀՀ կառավարության մի շարք որոշումներով գույք և դրամական միջոցներ են նվիրաբերվել համայնքներին՝ մասնավորապես.

25.04.2013, N 424-Ա որոշմամբ՝ Գյուղական կարողությունների ստեղծման ծրագրով համաֆինանսավորման պարտավորությունների կատարման համար 16802.7 հազար դրամ լրացուցիչ գումար հատկացնելու մասին; 4.06.2013, N 712-Ա որոշմամբ՝ «ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» հիմնարկի հաշվեկշռում հաշվառված՝ Չինարիի ձեռնարկության լուծարումից մնացած 565.5 հազ. դրամ սկզբնական արժեքով գույքը նվիրել Տավուշի մարզի Չինարիի համայնքին; 06.06.2013, N 572-Ա որոշմամբ՝ «ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» հիմնարկին ամրացված՝ Երևան քաղաքի Ազատության 19 հասցեում գտնվող՝ 10006.2 հազ. դրամ սկզբնական արժեքով, 3100.7 քառ. մետր ընդհանուր մակերեսով մշակույթի կենտրոնն ու հատկացված 0.18135 հեկտար հողամասը նվիրել Երևանի քաղաքային համայնքին; 20.06.2013, N 644-Ա որոշմամբ՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում կառուցված գույքի կազմից 1030.7 մլն դրամ հաշվեկշռային արժեքով գույքը նվիրաբերել ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի, Տավուշի, Շիրակի մարզերի համապատասխան համայնքների՝ համաձայն հավելվածի; 19.09.2013, N 944-Ա որոշմամբ՝ Լոռու մարզի Գարգառի վարչական տարածքում գտնվող պետական սեփականության մասնավորեցման արդյունքում առաջացած 952.5 հազ. դրամը ուղղել Գարգառի գյուղական համայնքի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը; 05.09.2013, N 963-Ա որոշմամբ՝ Գեղարքունիքի մարզի Նորատուսի տարածքում գտնվող՝ «Ռ-աղիո» ՓԲԸ բաժնետոմսերի ուղղակի վաճառքի արդյունքում առաջացած 30849.3 հազ. դրամն ուղղել Նորատուսի գյուղական համայնքի փողոցների հիմնանորոգման աշխատանքներին; 17.10.2013, N 1163-Ա որոշմամբ՝ ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց Ձորի և Տավուշի մարզպետարանների հատկացված միջոցներով կառուցված և համայնքներին նվիրաբերվող գույքի ցանկը

հաստատելու մասին՝ համաձայն հավելվածի; 21.11.2013, N 1359-Ա որոշմամբ՝ «Գյումրու Նարեկ» հանգստյան տուն ԲԲԸ 80% (3194 հատ հասարակ բաժնետոմս, յուր.՝ 1000 դրամ անվանական արժեքով) պետական բաժնետոմսերը նվիրաբերել Գյումրու քաղաքային համայնքին և այլն:

Սի քանի այլ որոշումներով համայնքային սեփականության նկատմամբ բացառիկ գերակա շահ է ճանաչվել կամ համայնքային սեփականության գույք է նվիրաբերվել. (16.01.2013, 41-Ա) Երևան համայնքի սեփականություն հանդիսացող՝ Կոնդ քաղամասում 1005.0 քառ. մետր մակերեսով, 401.0 մլն դրամ արժեքով հողամասը «Երևան իմ սեր» հիմնադրամին նվիրաբերելու մասին; (24.01.2013, 47-Ա) Երևան համայնքի սեփականություն հանդիսացող՝ Արշակունյաց պողոտայի 28 շինությանը հարակից տարածքով՝ 3396.0 քառ. մետր և 36.4 մլն դրամ արժեքով «Հայաստան» հիմնադրամին նվիրաբերելու մասին; (29.08.2013, 945-Ն; 29.08.2013, 958-Ն; 19.09.2013, 1023-Ա; 05.09.2013, 1223-Ն; 28.11.2013, 1341-Ն; 14.11.2013, 1256-Ն և այլն):

Կայացվել են համայնքային սեփականության վերաբերյալ նորմատիվներ սահմանելու, հողի հարկից և գույքահարկից ազատվող շինությունների ցանկերը հաստատելու, մի շարք քաղաքապետարանների աշխատակազմերի սոցիալական ծառայությունների տարածքային բաժինների գործունեության կազմակերպական ծախսերի նորմատիվները սահմանելու և այլ որոշումներ:

Համայնքները հաճախ իրենց ոչ ֆինանսական ակտիվների (սեփական գույքի) իրացումից որոշակի համալրում են ստանում ֆոնդային բյուջե (աղյուսակ 10), որն արտացոլվում է բյուջեի ելքային մասում՝ բացասական նշանով: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2013թ. ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը գրեթե ամբողջությամբ ստացվել են հիմնական միջոցների (15.1%) և հողի (84.8%) իրացումից: Նախորդ տարիների համեմատ նվազել են հիմնական միջոցների իրացումից մուտքերը, իսկ հողի իրացումից մուտքերը ավելացել են, ավելացնելով նաև նրանց տեսակարար կշիռը ընդհանուր մուտքերի մեջ:

Աղյուսակ 10. ՀՀ համայնքների ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը 2011 – 2013թթ. (մլն դրամ)

| Տող | Բովանդակություն | 2011թ. | 2012թ. | 2013թ. |
|------|--|---------|---------|---------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 6000 | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 17485.9 | 12621.3 | 12081.7 |
| 6100 | այդ թվում՝ Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | 7877.0 | 2407.0 | 1838.1 |
| 6110 | այդ թվում՝ Անշարժ գույքի իրացումից մուտքեր | 7538.9 | 2167.4 | 1581.8 |
| 6120 | Շարժական գույքի իրացումից մուտքեր | 0.3 | 2.3 | 19.0 |
| 6130 | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | 337.8 | 237.3 | 237.3 |
| 6200 | Պաշարների իրացումից մուտքեր | 0.0 | 0.0 | 0.0 |
| 6300 | Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր | 9.6 | 5.0 | 0.1 |
| 6400 | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | 9599.3 | 10209.3 | 10242.7 |
| 6410 | այդ թվում՝ Հողի իրացումից մուտքեր | 9599.3 | 10209.3 | 10242.4 |

Համայնքային ենթակայության կազմակերպությունների իրավակազմակերպական ձևերը

2014թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) թիվը կազմել է 1201, որը 69-ով ավելի է նախորդ տարվա համեմատությամբ: 100% համայնքային սեփականությամբ բաժնետոմսերով առևտրային իրավաբանական անձանց թիվը նվազել է 2-ով և կազմել՝ 425, իսկ պետություն-համայնք մասնակցությամբ առևտրային իրավաբանական անձանց թիվը ավելացել է 1-ով և կազմել՝ 219:

Համայնքային սեփականության բավարար լինելը ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման համար

Ինչպես արդեն բազմիցս նշվել է, համայնքային սեփականության հիմնական մասը կառուցվել կամ ձեռք է բերվել տասնամյակներ առաջ և անցած տարիների ընթացքում ենթարկվել է ֆիզիկական և բարոյական մաշվածության: Վիճակը 2013թ. առանձնապես չի փոխվել և գույքի մեծ մասը վերանորոգման խիստ կարիք ունի, իսկ համայնքների մեծ մասը դեռևս անհրաժեշտ միջոցներ չունի: Համայնքների մի զգալի մասն իր լիազորություններն իրականացնելու համար գույքի (հատկապես տեխնիկայի) խիստ կարիք ունի:

4.2 Համայնքների զարգացման ծրագիրը և բյուջեսավարումը

Համայնքի զարգացման ծրագիրը

2013թ. նույնպես, նախորդ տարիների նման համայնքների մեծ մասի համար քառամյա զարգացման ծրագրերը մնում են որպես ձևական փաստաթղթեր, որոնք էական դերակատարում չունեն համայնքների բյուջեների կազմման ժամանակ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 02.02.2012թ. «ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգով նախատեսված տարածքային զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N135-Ն որոշումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.01.2013թ. «ՀՀ կառավարության 2013թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 70-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետով, մշակվել և կառավարության հաստատման է ներկայացվել «Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ամփոփ համաթվի հաշվարկման մեթոդաբանությունը»: Այդ մեթոդաբանության հաստատումը հնարավորություն կտա յուրաքանչյուր համայնքի սոցիալ-տնտեսական տվյալների հիման վրա գնահատելու տվյալ համայնքի աղքատության մակարդակը և այն գործոնները, որոնցով պայմանավորված է տվյալ համայնքի աղքատ լինելը: Առկա է նաև համայնքները նկարագրող հա-

մապատասխան տեղեկատվական բազա և գործիքակազմ, որի միջոցով հնարավոր է ոչ միայն գնահատել աղքատությունը, այլ նաև ցույց տալ այն խնդիրները, որոնցով պայմանավորված է տվյալ համայնքի աղքատությունը: Այն հնարավորություն կտա իրականացնելու աղքատության մակարդակը կրճատող նպատակային ծրագրեր: Համայնքային աղքատության գնահատման մոտեցումների օրենսդրորեն հաստատումը հնարավորություն կտա համայնքներում իրականացնել պետական բյուջեի, ինչպես նաև այլ միջոցների հաշվին կատարվող ներդրումների արդյունավետության հաշվարկ՝ աղքատության կրճատման գործընթացում տվյալ ներդրումների ունեցած ազդեցության տեսանկյունից:

Համայնքի բյուջեսային գործընթացը

2013թ. նույնպես բյուջետային գործընթացին վերաբերող էական փոփոխություններ չեն եղել: Համայնքների մի մասը (հատկապես փոքր գյուղական համայնքները) բյուջետային գործընթացը շարունակում է իրականացնել թերություններով, ժամկետների ու նախատեսված հերթականությունների խախտումներով: Կան դեպքեր, երբ համայնքի ղեկավարները որոշումները կայացնում են միանձնյա՝ մասնակից չդարձնելով նույնիսկ համայնքի ավագանուն: Նման դեպքերում չեն ապահովվում այդ գործընթացի հրապարակայնությունն ու թափանցիկությունը, անտեսվում է բնակիչների մասնակցության նշանակությունը:

Գանձապետական համակարգի հետ հարաբերությունները, բանկային հաշիվներ

2013թ. ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանը կազմակերպել է պետական և համայնքների բյուջեների ամսական և եռամսյակային տեղեկատվությունը կազմելու և հրապարակելու գործընթացը: Աշխատանքներ են տարվել գանձապետական հաշիվների կառավարման էլեկտրոնային համակարգում մարզային և համայնքային հիմնարկների ընդգրկման ուղղությամբ: Ներդրվել է գանձապետական գործառնական օր ծրագրային համակարգի նոր «Ռ-իսկերի բացահայտման» մոդուլը, նպատակ ունենալով որոշակի չափորոշիչներով ընտրել այն գործարքները, որոնք կարող են գնահատվել որպես ռիսկային՝ վերջիններիս հետ կապված սահմանված ընթացակարգերով հետագա գործողություններ կատարելու համար:

Բյուջեավարման կիրառվող մեթոդները, նոր մեթոդների կիրառման հնարավորությունը

Դեռևս մեծ է այն համայնքների թիվը, որոնց բյուջետային միջոցները բավարարում են միայն աշխատակազմի պահպանման ծախսերին: Սովորաբար այդ համայնքներում չկան համապատասխան մասնագետներ, իսկ բյուջեները կազմում են որպես եկամուտների և ծախսերի նախահաշիվ, առանց լուրջ վերլուծությունների և զարգացման ծրագրերի: Տարիների ընթացքում համայնքների մի մասն արդեն իսկ համարվել է բարձրորակ մասնագետներով, որոնք էլ փորձում են իրականացնել բյուջետավարման նոր ժամանակակից մեթոդներ՝ օգտագործելով ինչպես խառը տարբերակներ (ծրագրային և ըստ աշխատանքների կատարման), այնպես էլ ծրագրային բյուջետավարում:

4.3 Համայնքի բյուջեի եկամուտները

2013 թվականին Հայաստանի համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտները կազմել են 105802.4 մլն դրամ (2012թ.՝ 95515.8մլն դրամ, 2011թ.՝ 87342.4 մլն դրամ), որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 10286.6 մլն դրամով, կամ 10.8%-ով: Հիմնականում ավելացել են. պաշտոնական դրամաշնորհները՝ 5999.8 մլն դրամով, այլ եկամուտները՝ 3200.4 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներով (ավելացել են նաև նրանց տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 51.8% և 28.2%): Ավելացել են նաև վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը 3345,9 մլն դրամով: Նվազել են անշարժ գույքից (այդ թվում հողի հարկ) հարկերը, նվազել է նաև նրանց տեսակարար կշիռը: Իսկ չնայած փոխադրամիջոցներից գույքային հարկերի և տեղական տուրքերի աճին, նրանց տեսակարար կշիռը առանձնապես չի փոխվել:

ՀՀ համայնքների բյուջեի մեջ զգալի է մնում Երևան համայնքի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը, 2013թ. կազմելով՝ 60.2%, այդ թվում՝ շենքերի և շինությունների գույքահարկ՝ 75.7%, տեղական տուրքեր՝ 76.6%, պաշտոնական դրամաշնորհներ՝ 47.8%, իսկ պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները՝ 99.1% (աղյուսակ 11):

Աղյուսակ 11. ՀՀ համայնքների բյուջեների եկամուտները և նրանց տեսակարար կշիռները 2011-2013թթ. (մլն ՀՀ դրամ)

| 1 | Եկամտատեսակները | 2011թ. | | 2012թ. | | 2013թ. | |
|------|--|---------|--------------------|---------|--------------------|----------|--------------------|
| | | Գումարը | Կշիռը ընդհ. մեջ(%) | Գումարը | Կշիռը ընդհ. մեջ(%) | Գումարը | Կշիռը ընդհ. մեջ(%) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ | 87342.4 | 100 | 95515.8 | 100 | 105802.4 | 100 |
| 1100 | այդ թվում՝ 1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 19550.7 | 22,4 | 20034.5 | 21,0 | 21121.5 | 20,0 |
| 1110 | այդ թվում՝ 1.1.Գույքային հարկեր անշարժ գույքից/ այդ թվում հողի հարկ/ | 10006.4 | 11,5 | 9536.4 | 10,0 | 9463.9 | 8,9 |
| 1121 | 1.2.Գույքային հարկեր փոխադրամիջոցներից | 6207.7 | 7,1 | 6761.7 | 7,1 | 7462.6 | 7,1 |
| 1131 | 1.3.Տեղական տուրքեր | 2544.4 | 2,9 | 3020.9 | 3,2 | 3492.8 | 3,3 |
| 1151 | 1.4.Պետական տուրքեր | 791.8 | 0,9 | 715.1 | 0,7 | 702.1 | 0,7 |
| 1160 | 1.5.Այլ հարկային եկամուտներ | 0.4 | 0,0 | 0.4 | 0,0 | 0.1 | 0,0 |
| 1200 | 2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 42445.8 | 48,6 | 48799.7 | 51,1 | 54799.5 | 51,8 |
| 1300 | 3.ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ | 25345.9 | 29,0 | 26681.6 | 27,9 | 29881.4 | 28,2 |
| 1342 | Այդ թվում՝ պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 19688.1 | 22,5 | 17823.5 | 18,7 | 20644.4 | 19,5 |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | 2739.0 | 3,1 | 5132.3 | 5,4 | 8478.2 | 8,0 |

Համայնքների բյուջեների սեփական եկամուտները 2013թ. կազմել են 30358.5մլն դրամ կամ ամբողջ եկամուտների 28.7 %-ը(2012թ. 28892.6 մլն դրամի կամ 30.2%-ի փոխարեն): Չնայած սեփական եկամուտների նախորդ տարվա համեմատ որոշակի աճին (1465.9 մլն դրամ), 1.5%-ով նվազել է նրա տեսակարար կշիռը, խորացնելով համայնքների կախվածությունը պաշտոնական դրամաշնորհներից:

2013թ. ավելացել է բյուջեի ֆոնդային մասի տեսակարար կշիռը՝ 8.6% (2012թ.՝ 7.9%;

2011թ.՝ 3.8%), որը պայմանավորված է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերով (աղյուսակ 12): Ֆոնդային բյուջեի հիմնական մասը (81.2%) բաժին է ընկնում Երևան համայնքին (աղյուսակ 13):

Համայնքների բյուջեների եկամուտների կառուցվածքը, նախորդ տարիների համեմատ, էական փոփոխությունների չի ենթարկվել:

Ինչպես նախորդ տարիներին, 2013թ. ևս պետական բյուջեին ամրագրվող եկամտահարկից և շահութահարկից համայնքներին մասհանումներ չեն կատարվել:

Աղյուսակ 12. Երևանի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռները ՀՀ համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների կազմում 2013 թ. (մլն դրամ)

| 1 | 2 | Ընդամենը ՀՀ համայնքների եկամուտները | Այդ թվում՝ Երևանի բյուջեի եկամուտները | Երևանի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ (%) |
|------|--|-------------------------------------|---------------------------------------|---|
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ | 105802.4 | 63667.9 | 60.2 |
| 1100 | այդ թվում՝ 1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 21121.5 | 12004.4 | 56.8 |
| 1110 | այդ թվում՝ 1.1.Գույքային հարկեր անշարժ գույքից | 9463.9 | 4616.7 | 48.8 |
| 1111 | Այդ թվում՝ Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 5306.2 | 4018.9 | 75.7 |
| 1112 | Հողի հարկ | 4757.7 | 597.8 | 12.6 |
| 1120 | 1.2.Գույքային հարկեր այլ գույքից | 7462.6 | 4333.2 | 58.1 |
| 1121 | Այդ թվում փոխադրամիջոցներից | 7462.6 | 4333.2 | 58.1 |
| 1131 | 1.3.Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ այդ թվում՝ Տեղական տուրքեր | 3492.8 | 2677.1 | 76.6 |
| 1151 | 1.4.Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ այդ թվում՝ Պետական տուրքեր | 702.1 | 377.4 | 53.8 |
| 160 | 1.5.Այլ հարկային եկամուտներ | 0.1 | 0.0 | 0.0 |
| 1200 | 2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԲԱՍԱՇՆՈՐՋՆԵՐ | 54799.5 | 26200.9 | 47.8 |
| 1300 | 3.ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ | 29881.4 | 25462.6 | 85.2 |
| 1342 | Այդ թվում՝ Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 20644.4 | 20463.0 | 99.1 |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | 8478.2 | 7401.9 | 87.3 |

2013 թվականին նախորդ տարիների համեմատ ավելացել են պաշտոնական դրամաշնորհները, որի հիմնական մասը՝ 98,9%-ը, ինչպես նախորդ տարիներին (2012թ.՝ 95,6%-ը; 2011թ.՝ 99,4%-ը) կազմել են ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհները (աղյուսակ 14): Չնայած պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների աճին, նվազել է նրա տեսակարար կշիռը պաշտոնական դրամաշնորհներում՝ (2013թ՝ 66%; 2012թ.՝ 66,5%; 2011թ՝ 76,4%): Ավելացել են պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաները (2013թ՝ 9256,1մլն դրամ, 2012թ՝ 7287,1մլն դրամ, 2011թ՝ 3014,1մլն դրամ) և սուբվենցիաները (2013թ.՝ 8729,6մլն դրամ, 2012թ.՝ 6918,4մլն դրամ, 2011թ.՝ 6739,3մլն դրամ), աճել է նաև նրանց տեսակարար կշիռը: Նախորդ տարվա համեմատ չորս անգամ նվազել է պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները (սուբվենցիաները):

Աղյուսակ 13. ՀՀ Համայնքների ֆոնդային բյուջեի եկամուտները և Երևանի տեսակարար կշիռը 2013թ. (մլն դրամ)

| Տող | Եկամուտները | Ընդամենը համայնքների | Այդ թվում՝ Երևանի | Երևանի տեսակարար կշիռը (%) |
|------|--|----------------------|-------------------|----------------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1000 | ԸՆԴԱՍԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ | 9127.4 | 7410.8 | 81.2 |
| 1200 | 2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՍՎԵՆԿՆԵՐ | 622.8 | 0.0 | 0.0 |
| 1300 | 3.ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ | 85504.6 | 7410.8 | 87.1 |
| 1380 | 3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | 4.7 | 0.0 | 0.0 |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | 8478.2 | 7401.9 | 87.3 |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | 21.7 | 8.9 | 41.0 |

2013թ. ընթացքում այլ պետություններից և միջազգային կազմակերպություններից ընթացիկ և կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ չեն ստացվել: Չեն ստացվել նաև ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով պաշտոնական դրամաշնորհներ:

Անցած տարիների փորձը ցույց է տալիս, որ համայնքների գերակշիռ մասում ավագանիների ինստիտուտը դեռևս չի կայացել և լուրջ հակակշիռ չի հանդիսանում համայնքի ղեկավարին: Նրանց դերը հաճախ սահմանափակվում է բյուջեի ընդունումով և բյուջեում կատարվող փոփոխությունների հաստատումով: Նման դեպքերում համայնքի ավագանին համարյա միշտ և անվերապահորեն ընդունում և հաստատում է համայնքի ղեկավարի յուրաքանչյուր առաջարկություն: Եղել են

դեպքեր, երբ որոշ համայնքներում բյուջեների կազմման ժամանակ առանձին հող-վածներում միտումնավոր և չհիմնավորված ուռճացումներ կամ նվազեցումներ են կատարվել: Երբեմն բյուջեի եկամտային մասում ներառում են այնպիսի եկամուտներ, որոնք ի սկզբանե պարզ է, որ չեն կատարվելու: Այդ անիրատեսական մուտքերի դիմաց նախատեսվում են նաև չհիմնավորված ծախսեր, որոնք հաճախ հանգեցնում են չարաշահումների:

Համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման բարելավման և կատարելագործման նպատակով 2013թ. տարեսկզբին ՀՀ տարածքային կառավարման նախարարության օժանդակությամբ իրականացվել է գույքահարկի, հողի հարկի, տեղական ու պետական տուրքերի, գույքի վարձակալությունից ստացող եկամուտների վերլուծություն, որի արդյունքում մոտ 400 համայնքներում ավագանիների կողմից վերանայվել են բյուջեները և հաստատվել ավելի իրատեսական բյուջեներ:

Աղյուսակ 14. Համայնքների բյուջեների եկամուտների պաշտոնական դրամաշնորհները 2011-2013թթ (մլն ՀՀ դրամ)

| | Եկամտատեսակները | 2011թ. | | 2012թ. | | 2013թ. | |
|------|---|---------|--------------------|---------|--------------------|---------|--------------------|
| | | Գումարը | Կշիռը ընդհ. մեջ(%) | Գումարը | Կշիռը ընդհ. մեջ(%) | Գումարը | Կշիռը ընդհ. մեջ(%) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1200 | 2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 42445.8 | 100 | 48799.7 | 100 | 54799.5 | 100 |
| 1210 | Այդ թվում՝ 2.1 Ընթացիկ արտաքին դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից | 0.7 | 0 | 4.2 | 0 | 0 | 0 |
| 1220 | 2.2 Կապիտալ արտաքին դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 1230 | 2.3 Ընթացիկ արտաքին դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմբյուրաններից | 0 | 0 | 1.7 | 0 | 0 | 0 |
| 1240 | 2.4 Կապիտալ արտաքին դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմբյուրաններից | 1.0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից | 42170.2 | 99,4 | 46641.1 | 95,6 | 54176.7 | 98,9 |
| 1251 | Որից՝ Ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 32416.8 | 76,4 | 32435.5 | 66,5 | 36191.0 | 66,0 |
| 1254 | Բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | 3014.1 | 7,1 | 7287.1 | 14,9 | 9256.1 | 16,9 |

| | | | | | | | |
|------|---|--------|------|--------|------|--------|------|
| 1257 | Գ) Պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիաներ | 6739.3 | 15,9 | 6918.4 | 14,2 | 8729.6 | 15,9 |
| 1260 | 2.6 Կապիտալ ներքին դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից | 273.9 | 0,6 | 2152.7 | 4,4 | 622.8 | 1,1 |
| 1261 | Այդ թվում՝ Ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման սուբվենցիաներ | 263.7 | 0,6 | 2148.2 | 4,4 | 622.8 | 1,1 |
| 1262 | Բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող դրամաշնորհներ | 10.2 | 0 | 4.5 | 0 | 0 | 0 |

4.4 Պարսփ կառավարումը

2013թ. ընթացքում համայնքները ստացել են 14.8 մլն դրամի վարկեր, որից 6.5 մլն դրամը ՀՀ պետական բյուջեից, իսկ 8.3 մլն դրամը արտաքին աղբյուրներից: Արդյունքում՝ վերցրած վարկերը նույն տարում ամբողջությամբ մարվել են: Ստացված գումարները դեռևս մնում են չնշին և համայնքները մնում են չընդգրկված փոխատվական կապիտալի շուկայում: Այդ ընթացքում համայնքները այլ համայնքներից փոխատվություններ չեն ստացել:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու կարգ նույնպես չի սահմանվել և համայնքները 2013թ. ևս պարտատոմսեր չեն թողարկել:

4.5 Ֆինանսական հաշվետվողականությունը

ՀՀ օրենսդրությունը («Տեղական ինքնակառավարման մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներ) հստակ սահմանում է համայնքի բյուջեի կատարման մասին հաղորդագրությունների և հաշվետվությունների ներկայացման կարգը և ժամկետները: 2013թ. համայնքների կողմից ներկայացվող հաշվետվությունները սահմանված ձևով և հիմնականում նշված ժամկետներում (արձանագրվել են նաև առանձին ուշացման դեպքեր) ներկայացվել են համապատասխան մարմիններին (համայնքի ավագանուն, մարզպետին, գանձապետարանին և այլն):

Դեռևս կան համայնքներ (հիմնականում փոքր գյուղական), որոնք չեն հրապարակում ոչ միայն իրեց հաշվետվությունները, այլև հաստատված բյուջեները:

Գնահատելով համայնքների վերաբերյալ տեղեկատվական բազայի կառուցությունը՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 152

02.05.2013թ. թիվ 54-Ա հրամանով հաստատվել է «ՀՀ համայնքների տեղեկատվական բազայի արդիականացման նպատակով համայնքներից տվյալների հավաքագրման, ամփոփման և համայնքների տեղեկատվական բազա էլեկտրոնային ծրագիր մուտքագրման» կարգը: Կարգով նախատեսվել է մարզպետարանների միջոցով համայնքներից տեղեկատվության հավաքագրում, ամփոփում և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միջոցով մուտքագրում ազգային վիճակագրական ծառայության կողմից սպասարկվող էլեկտրոնային ծրագիր (www.Armdevinfo.am):

2012թ. պետական հատվածում և Երևան քաղաքում սկիզբ դրվեց ներքին աուդիտի համակարգի գործունեությանը (միջազգայնորեն ճանաչված ստանդարտներին լիովին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշմամբ հաստատվել են ներքին աուդիտի մասնագիտական ստանդարտները և վարքագծի կանոնները): 2013թ. ընթացքում, գործող 48 քաղաքային (բացի Երևանը) համայնքներից 44-ում ստեղծվել են ներքին աուդիտի ստորաբաժանումներ, ներդրվել է ներքին աուդիտի համակարգը: Մնացած 4 քաղաքային համայնքները (Ախթալա, Թումանյան, Շամլուխ, Դաստակերտ) իրենց ներքին աուդիտի իրականացումը կպատվիրակեն այն մարզպետարաններին, որի տարածքում գտնվում է տվյալ քաղաքային համայնքը: Ինչ վերաբերում է գյուղական համայնքներին, ապա նրանց մի մասը (հատկապես փոքր համայնքները) 2013թ. նույնպես չեն անցել ներքին աուդիտ և շարունակում են աուդիտորի հաստիք չունենալ: Բացատրությունը նույնն է՝ մասնագետներ չկան, միջոցներ նույնպես:

Դեռևս շատ քիչ է մնում արտաքին աուդիտ անցկացնող համայնքների թիվը:

Ներքին աուդիտի աշխատանքների ավտոմատացման, միասնական տեղեկատվական բազա ստեղծելու, ինչպես նաև այդ աշխատանքների նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու նպատակով մշակվել և ներդրվել է համապատասխան էլեկտրոնային ծրագիր, որտեղ ներկայացված են ներքին աուդիտի գործընթացի բոլոր փուլերը՝ պլանավորումից մինչև փաստացի աուդիտի իրականացում և հետադարձ հսկողություն: Տեղական ինքնակառավարման մարմինների աուդիտի գործառույթները համակարգում և վերահսկում է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

5. ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքի ֆինանսական միջոցների համադասասխանությունը

Հիմնվելով ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքի ֆինանսական միջոցների համապատասխանության գնահատման բնագավառում միջազգային փորձի վրա, «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ կողմից նախկինում ընտրվել և 2004-2012թթ. համար գնահատման են ենթարկվել մի շարք ֆինանսական ցուցանիշներ¹³⁸: Ստորև բերվում են նույն ֆինանսական ցուցանիշների գնահատման արդյունքները 2013թ. համար:

Տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռները տվյալ երկրի հանրային ծախսերում և համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ-ում) բնութագրում են այդ երկրում իշխանության ապակենտրոնացման աստիճանը¹³⁹: Եվրամիության երկրներում 2011թ. տեղական բյուջեների (որտեղ ներառված են տեղական ինքնակառավարման բոլոր մակարդակների՝ տեղական և տարածաշրջանային, բյուջեները) ծախսերի տեսակարար կշիռների միջինը հանրային ծախսերում կազմել է 34.0%, իսկ ՀՆԱ-ում՝ 16.7% (տես՝ 2012թ. զեկույցի աղյուսակ 15): Նոր տվյալներ այս ֆինանսական ցուցանիշների համար չկան:

ՀՀ համայնքների բյուջեների հանրագումարի տեսակարար կշիռը ՀՀ 2013թ. համախմբված բյուջեում եկամուտների գծով կազմել է 9.6%, իսկ ծախսերի գծով՝ 8.8% (հավելված 4): Նախորդ տարվա համեմատ, 2013-ին այս ցուցանիշը եկամուտների գծով նվազել է մոտ 0.2%-ով, իսկ ծախսերի գծով՝ մոտ 0.6%-ով:

Համայնքների բյուջեների ծախսերի հանրագումարի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում 2004-2009թթ. Հայաստանում տատանվել է 1.3-1.7%-ի սահմաններում, 2010-2012թթ. այն տատանվել է 2.3-2.45%-ի սահմաններում, իսկ **2013-ին այն կազմել է 2.41%**¹⁴⁰: Վերջին ցուցանիշը մոտ 6.9 անգամ փոքր է Եվրամիության երկրների միջին ցուցանիշից և գերազանցում է միայն Կիպրոսի ու Մալթայի նույն ցուցանիշին:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Հայաստանում ապակենտրոնացման աստիճանը դեռևս էականորեն ցածր է Եվրամիության երկրներում ապակենտրոնացման աստիճանից:

¹³⁸ Տես Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2004-2006թթ.), գիրք 2, Գ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2008, էջ 62-85

Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2007 և 2008թթ.), գիրք 3, Գ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2009, էջ 26-31, 95-99

Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009 և 2010թթ.), գիրք 4, Գ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2011, էջ 33-47, 127-138

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2011թ.), գիրք 5, Գ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2012, էջ 32-46

Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2012 և 2013թթ.), գիրք 6, Գ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, 2015

¹³⁹ Հայաստանում հանրային ծախսերի տակ դիտարկվում են ՀՀ համախմբված բյուջեի ծախսերը, իսկ ՀՆԱ-ի տակ դիտարկվում է անվանական ՀՆԱ-ն:

¹⁴⁰ Հայաստանի 2013թ. տարեկան անվանական ՀՆԱ-ն ընթացիկ զեկույցի կազմել է 4,272.9 մլրդ դրամ, աղբյուրը՝ www.armstat.am

ՀՀ համայնքների 2013թ. բյուջեների ամփոփ եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները տարեկան հաստատված պլանի նկատմամբ ավելի բարձր են, քան **տարեկան ճշտված պլանի նկատմամբ** (աղյուսակ 15): Այսպես, եկամուտների գծով, ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևան քաղաքի) 2013թ. բյուջեների կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 99.7%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 98.4%: Ծախսերի գծով, ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևան քաղաքի) 2013թ. բյուջեների կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 93.3%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 91.1%: Սա նշանակում է, որ ՀՀ համայնքներում դեռևս կան որոշակի խնդիրներ՝ կապված բյուջեների եկամուտների և ծախսերի ճշգրիտ կանխատեսումների, պլանավորման և, հետագայում նաև, դրանց ճշտման և պատշաճ կատարման հետ:

Համեմատելով ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևան քաղաքի) 2013թ. բյուջեների եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները 2012թ. նույն ցուցանիշների հետ, կարելի է նկատել, որ, եթե ՀՀ բոլոր համայնքների 2013թ. բյուջեների եկամտային մասերի կատարման տոկոսները (99.7% և 98.4%) նկատելիորեն բարձր են (համապատասխանաբար 5.5%-ով և 8.9%-ով) համայնքների 2012թ. բյուջեների եկամտային մասերի կատարման տոկոսներից (94.2% և 89.5%), ապա ՀՀ բոլոր համայնքների 2013թ. բյուջեների ծախսային մասերի կատարման տոկոսները (93.3% և 91.1%) համայնքների 2012թ. բյուջեների ծախսային մասերի կատարման տոկոսներից (92.3% և 85.4%) բարձր են համապատասխանաբար 1.0%-ով և 5.7%-ով: Սա նշանակում է, որ, նախորդ տարիների համեմատ, 2013-ին զգալիորեն բարելավվել է համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի կատարողական կարգապահությունը, ընդ որում այդ բարելավումը տպավորիչ է հատկապես եկամուտների մասով:

Երևան քաղաքի 2013թ. բյուջեի եկամուտների գծով հաստատված և ճշտված պլանները կատարվել են համապատասխանաբար 97.0%-ով և 98.1%-ով, իսկ ծախսերի գծով՝ համապատասխանաբար 94.1%-ով և 95.0%-ով (աղյուսակ 15): Փաստորեն, Երևան քաղաքի 2013թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամուտների կատարման մակարդակները համապատասխանաբար մոտ 2.7%-ով և 0.3%-ով ավելի ցածր են, քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2013թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամուտների կատարման մակարդակները: Իսկ Երևան քաղաքի 2013թ. հաստատված և ճշտված բյուջեների ծախսերի կատարման մակարդակներն, ընդհակառակը, համապատասխանաբար մոտ 0.8%-ով և 3.9%-ով ավելի բարձր են, քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2013թ. հաստատված և ճշտված բյուջեների ծախսերի կատարման մակարդակները:

Համեմատելով Երևանի 2013թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները 2012թ. նույն ցուցանիշների հետ, կարելի է նկատել, որ Երևանի 2013թ. հաստատված և ճշտված բյուջեների և՛ եկամտային (97.0% և 98.1%), և՛ ծախսային (94.1% և 95.0%) մասերի

կատարման տոկոսները համապատասխանաբար մոտ 7%-ով և 13.5%-ով, 1.5%-ով և 10%-ով աճել են՝ Երևանի 2012թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամտային (89.8% և 84.6%) և ծախսային (92.7% և 84.7%) մասերի կատարման տոկոսների համեմատ:

Աղյուսակ 15. ՀՀ համայնքների 2013թ. բյուջեների ընդհանուր եկամուտների, ծախսերի և հավելուրդի / պակասուրդի տարեկան հաստատված, ճշտված պլանները և փաստացի կատարումը (հազար դրամ)¹⁴¹

| Հ/հ | Հոդվածի անվանումը | 2013թ. | | | | |
|--|---------------------------------|------------------------|---------------------|---------------|---|--|
| | | Տարեկան հաստատված պլան | Տարեկան ճշտված պլան | Փաստացի | Կատարման տոկոսը հաստատված պլանի նկատմամբ, % | Կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ, % |
| ՀՀ բոլոր համայնքների բյուջեների | | | | | | |
| 1 | Եկամուտներ, ընդամենը | 106,115,258.6 | 107,529,004.9 | 105,802,430.5 | 99.7 | 98.4 |
| 2 | Ծախսեր, ընդամենը | 110,511,392.5 | 113,160,927.2 | 103,130,107.8 | 93.3 | 91.1 |
| 3 | Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-) | -4,396, 133.9 | - 5,631,922.3 | +2,672,322.6 | x | x |
| այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի | | | | | | |
| 1 | Եկամուտներ, ընդամենը | 65,665,941.7 | 64,925,341.5 | 63,667,925.2 | 97.0 | 98.1 |
| 2 | Ծախսեր, ընդամենը | 66,065,941.7 | 65,462,496.9 | 62,161,662.3 | 94.1 | 95.0 |
| 3 | Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-) | -400,000.0 | -537, 155.4 | +1,823,495.0 | x | x |
| այդ թվում՝ ՀՀ բոլոր համայնքների՝ առանց Երևան քաղաքի, բյուջեների | | | | | | |
| 1 | Եկամուտներ, ընդամենը | 40,449,316.9 | 42,603,663.4 | 42,134,505.3 | 104.2 | 98.9 |
| 2 | Ծախսեր, ընդամենը | 44,445,450.8 | 47,698,430.3 | 40,968,445.5 | 92.2 | 85.9 |
| 3 | Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-) | -3,996, 133.9 | -5,094, 766.9 | +848, 827.6 | x | x |

¹⁴¹ Աղբյուրները՝ www.minfin.am և www.yerevan.am

ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևան քաղաքի) 2013թ. բյուջեների եկամուտների գծով հաստատված և ճշտված պլանները կատարվել են համապատասխանաբար 104.2%-ով և 98.9%-ով, իսկ ծախսերի գծով՝ համապատասխանաբար 92.2%-ով և 85.9%-ով (աղյուսակ 15):

Համայնքների ֆինանսական ապահովվածության կարևոր հարաբերական ցուցանիշներից են **բնակչության մեկ շնչին ընկնող՝ համայնքների բյուջեների եկամուտը և ծախսը**: ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2009-2013թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 16, գծապատկեր 1) բացարձակ արժեքով տարեցտարի զգալիորեն աճել է՝ 2009թ. 16,182 ՀՀ դրամից (մոտ 44.6 ԱՄՆ դոլարից) 2013-ին հասնելով 35,068 դրամի (մոտ 85.5 դոլարի): Համապատասխանաբար, ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2009-2013թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 16, գծապատկեր 2) 2009թ. 15,189 դրամից (մոտ 41.8 դոլարից) 2013-ին հասել է 34,182 դրամի (մոտ 83.4 դոլարի):

Այս ցուցանիշների՝ 2010-ից սկսած կտրուկ բռնիքը հիմնականում պայմանավորված է այդ թվականից Երևան քաղաքի, որպես համայնքի, բյուջետային տվյալների ներառմամբ ՀՀ բոլոր համայնքների բյուջետային տվյալների կազմում:

Երևանի 2009-2013թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 16) բացարձակ արժեքով տարեցտարի էականորեն աճել է՝ 2009թ. 17,765 դրամից (մոտ 48.9 դոլարից) 2013-ին հասնելով 59,597 դրամի (մոտ 145.4 դոլարի): Համապատասխանաբար, Երևանի 2009-2013թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 16) 2009թ. 15,974 ՀՀ դրամից (մոտ 44.0 դոլարից) 2013-ին հասել է 58,187 դրամի (մոտ 141.9 դոլարի):

Աղյուսակ 16. ՀՀ համայնքների 2009-2013թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտը և ծախսը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով) *

| Ցուցանիշի անվանումը | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 |
|--|---------|---------|---------|---------|---------|
| ՀՀ (ներառյալ՝ Երևանի) բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ) | 3,249.5 | 3,262.6 | 3,021.4 | 3,026.9 | 3,017.1 |
| Երևանի բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ) | 1,111.3 | 1,060.1 | 1,061.1 | 1,066.3 | 1,068.3 |
| ՀՀ (առանց Երևանի) բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ) | 2,138.2 | 2,202.5 | 1,960.3 | 1,960.6 | 1,948.8 |
| Մեկ ԱՄՆ դոլարի տարվա միջին փոխարժեքը (ՀՀ դրամ) | 363 | 374 | 373 | 402 | 410 |
| Տարեկան գնաճը (%) | 103.4 | 108.2 | 107.7 | 102.6 | 105.8 |


| | | | | | |
|---|--------|--------|--------|--------|--------|
| ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ) | 16,182 | 26,033 | 28,908 | 31,556 | 35,068 |
| Երևանի բյուջեի փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ) | 17,765 | 46,019 | 48,203 | 53,688 | 59,597 |
| ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ) | 15,359 | 16,413 | 18,464 | 19,519 | 21,621 |
| ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 44.6 | 69.6 | 77.5 | 78.5 | 85.5 |
| Երևանի բյուջեի փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 48.9 | 123.0 | 129.2 | 133.6 | 145.4 |
| ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 42.3 | 43.9 | 49.5 | 48.6 | 52.7 |
| ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ) | 15,189 | 25,325 | 29,494 | 32,196 | 34,182 |
| Երևանի բյուջեի փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ) | 15,974 | 45,175 | 49,472 | 55,412 | 58,187 |
| ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ) | 14,789 | 15,770 | 18,680 | 19,570 | 21,022 |
| ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 41.8 | 67.7 | 79.1 | 80.1 | 83.4 |
| Երևանի բյուջեի փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 44.0 | 120.8 | 132.6 | 137.8 | 141.9 |
| ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 40.7 | 42.2 | 50.1 | 48.9 | 51.3 |

*) Աղբյուրները՝ www.armstat.am և www.minfin.am


ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2009-2013թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (աղյուսակ 16) բացարձակ արժեքով՝ արտահայտված ՀՀ դրամով (ԱՄՆ դոլարով), տարեցտարի աճել է՝ 2009թ. 15,359 դրամից (մոտ 42.3 դոլարից) 2013-ին հասնելով 21,621 դրամի (մոտ 52.7 դոլարի): Համապատասխանաբար, ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2009-2013թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով 2009թ. 14,789 դրամից (մոտ 40.7 դոլարից) 2013-ին հասել է ընդամենը 21,022 դրամի (մոտ 51.3 դոլարի):

Գրա հետ մեկտեղ, եթե հաշվի առնենք նաև Հայաստանում տարեցտարի տեղի ունեցած զգալի գնաճը, ապա բնակչության մեկ շնչին մատուցվող համայնքային ծառայությունների ընդհանուր ծախսերի չափը տարիների ընթացքում զգալի փոփոխության չի ենթարկվել և նկատելի դրական ազդեցություն չի ունեցել բնակչության ընդհանուր կենսամակարդակի վրա, իսկ գյուղական և փոքր ու միջին քաղաքային համայնքների բնակչության կենսամակարդակի վրա, ընդհակառակը, այն բացասական ազդեցություն է ունեցել:

Գծապատկեր 1. ՀՀ համայնքների 2009-2013 թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող փաստացի եկամուտը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով)



Գծապատկեր 2. ՀՀ համայնքների 2009-2013 թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող փաստացի ծախսը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով)



Յուցանիշների առանձին խումբ է կազմում ՏԻՄ-երին օրենքով տրված լիազորությունների ֆինանսական ապահովումն ըստ նրանց գործունեության բնագավառների կամ **համայնքների բյուջեների ծախսերն ըստ գործառնական դասակարգման** (աղյուսակ 17):

2013-ին ընդհանուր բնույթի ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը **ՀՀ համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) բյուջեների** ընդհանուր ծախսերում (զծապատկեր 3) կազմել է 23.8%, որը 0.1%-ով ցածր է 2012-ի նույն ցուցանիշից (23.9%): Համայնքների 2013թ. բյուջեների ընդհանուր ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն կրթության ոլորտի ծախսերը՝ 30.4% (2012-ին՝ 31.4%), այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 12.6%, տարրական ընդհանուր կրթություն՝ 5.4%, միջնակարգ ընդհանուր կրթություն՝ 6.2%, արտադպրոցական դաստիարակություն՝ 5.0% և այլ դասերին չպատկանող կրթություն՝ 1.1%:

2012-ի համեմատ, մոտ 0.3%-ով աճել է հանգիստ, մշակույթ և կրոնի ոլորտին հատկացված ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) 2013թ. բյուջեների ընդհանուր ծախսերում՝ 6.5% (2012-ին՝ 6.2%): Սոցիալական մյուս ոլորտներին ՀՀ համայնքների 2013թ. բյուջեներից հատկացված ծախսերի տեսակարար կշիռներն առանձնապես մեծ բաժին չունեն ընդհանուր ծախսերում և կազմում են համապատասխանաբար՝ սոցիալական պաշտպանություն՝ 3.4% (2012-ին՝ 2.7%), առողջապահություն՝ 0.2% (2012-ին՝ 0.3%):

ՀՀ համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) 2013թ. բյուջեների ընդհանուր ծախսերում տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տեսակարար կշիռները մոտավորապես նույն մակարդակի վրա են, ինչ 2012-ին: Այսպես, այդ ցուցանիշը տրանսպորտի ոլորտում կազմել է 2-3.6% (սա պայմանավորված է Երևանի բյուջեում նույն ցուցանիշի բարձր մակարդակով՝ 34.8%), բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում (ջրամատակարարում, փողոցների լուսավորում, համայնքային զարգացում և այլն)՝ 9.7%, շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում (աղբահանում, կեղտաջրերի հեռացում և այլն)՝ 10.5% և այլն:

Երևան քաղաքի 2013թ. բյուջեում ըստ գործառնական դասակարգման ծախսերի տեսակարար կշիռները զգալիորեն տարբերվում են ՀՀ բոլոր համայնքների բյուջեների ծախսերի տեսակարար կշիռներից (աղյուսակ 17): Այսպես, Երևանի 2013թ. բյուջեում ընդհանուր բնույթի ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը 2 անգամից ավելի ցածր է ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների նույն ցուցանիշից՝ կազմելով 10.6% (2012-ին՝ 11.1%), իսկ ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների նույն ցուցանիշից (43.7%) այն ցածր է ավելի քան 4 անգամ:

Կրթության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում, ընդհակառակը, ավելի բարձր է Երևանի 2013թ. բյուջեում, քան ՀՀ բոլոր համայնքների բյուջեներում՝ կազմելով 34.0% (2012-ին՝ 36.1%), այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 10.5%, տարրական ընդհանուր կրթություն՝ 8.9%, միջնակարգ ընդհանուր կրթություն՝ 10.1%: Սա հիմնականում պայմանավորված է Երևանում հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության ոլորտում պետության կողմից

համապատասխան պատվիրակված լիազորությունների իրականացմամբ և դրանց համար ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորմամբ:

Սոցիալական մյուս ոլորտներին Երևանի 2013թ. բյուջեից հատկացված ծախսերի տեսակարար կշիռները, նախորդ տարվա համեմատ, նկատելի չափով փոփոխվել են՝ հանգիստ, մշակույթ և կրոն՝ 4.4% (2012-ին՝ 3.6%)՝ սոցիալական պաշտպանություն՝ 3.1% (2012-ին՝ 1.5%), առողջապահություն՝ 0.2% (2012-ին՝ 0.4%):

Երևան քաղաքի 2013թ. բյուջեի ընդհանուր ծախսերում տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տեսակարար կշիռները մոտավորապես մնացել են նույն մակարդակի վրա և համապատասխանաբար կազմել են՝ տրանսպորտի ոլորտում՝ 34.8% (2012-ին՝ 35.0%), բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում (ջրամատակարարում, փողոցների լուսավորում, համայնքային զարգացում և այլն)՝ 11.0% (2012-ին՝ 10.5%), շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում (աղբահանում, կանաչապատում և այլն)՝ 11.5% (2012-ին՝ 11.9%) և այլն:

Աղյուսակ 17. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի և առանց Երևանի) և Երևանի 2013թ. բյուջեների փաստացի ծախսերն՝ ըստ գործառնական դասակարգման


| Հ/հ | Ծախսի անվանումը | 2013թ. | | | | | |
|-----|---|--|--------------------|---|--------------------|---|--------------------|
| | | ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ | Տեսակարար կշիռը, % | Երևանի բյուջեի փաստացի ծախսերը, հազ. դրամ | Տեսակարար կշիռը, % | ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ | Տեսակարար կշիռը, % |
| | Ընդամենը ծախսեր*, այդ թվում՝ | 103,130,107.8 | 100 | 62,161,662.3 | 100 | 40,968,445.5 | 100 |
| | Վարչական բյուջե | 100,544,331.9 | 97.5 | 61,835,517.3 | 99.5 | 38,708,814.6 | 94.5 |
| | Ֆոնդային բյուջե | 11,063,955.6 | 10.7 | 7,728,002.8 | 12.4 | 3,335,952.8 | 8.1 |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 24,529,303.6 | 23.8 | 6,617,533.1 | 10.6 | 17,911,770.5 | 43.7 |
| 2 | Պաշտպանություն | 42,978.8 | 0.0 | 40,793.6 | 0.1 | 2,185.2 | 0.0 |
| 3 | Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն | 755.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 755.0 | 0.0 |
| 4 | Տնտեսական հարաբերություններ, այդ թվում՝ | 14,249,723.5 | 13.8 | 14,139,047.7 | 22.7 | 110,675.8 | 0.3 |
| 4.1 | Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ | 15,318.6 | 0.0 | 0.0 | 0.0 | 15,318.6 | 0.0 |
| 4.2 | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն | 687,133.7 | 0.7 | 283,890.2 | 0.5 | 403,243.5 | 1.0 |
| 4.3 | Վառելիք և էներգետիկա | 131,938.7 | 0.1 | 0.0 | 0.0 | 131,938.7 | 0.3 |
| 4.4 | Լեռնաարդյունահանում, արդյունաբերություն և շին. | 500.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 500.0 | 0.0 |
| 4.5 | Տրանսպորտ | 24,340,850.8 | 23.6 | 21,641,654.4 | 34.8 | 2,699,196.4 | 6.6 |

| | | | | | | | |
|----------|--|---------------------|-------------|--------------------|-------------|--------------------|------------|
| 4.6 | Կապ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4.7 | Այլ բնագավառներ | 2,154.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 2,154.0 | 0.0 |
| 4.8 | Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | 4,436.8 | 0.0 | 0.0 | 0.0 | 4,436.8 | 0.0 |
| 4.9 | Տնտեսական հարաբեր. (այլ դասերին չպատկանող) | -10,932,609.1 | -10.6 | -7,786,496.8 | -12.5 | -3,146,112.3 | -7.7 |
| 5 | Շրջակա միջավայրի պաշտպանություն, այլ թվում՝ | 10,787,970.4 | 10.5 | 7,148,100.4 | 11.5 | 3,639,870.0 | 8.9 |
| 5.1 | Աղբահանում | 7,933,313.9 | 7.7 | 5,030,724.7 | 8.1 | 2,902,589.2 | 7.1 |
| 5.2 | Կեղտաջրերի հեռացում | 156,635.7 | 0.2 | 0.0 | 0.0 | 156,635.7 | 0.4 |
| 5.3 | Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար | 58,886.1 | 0.1 | 35,474.0 | 0.1 | 23,412.1 | 0.1 |
| 5.4 | Կենսաբազմազանության և բնության պաշտ. | 74,528.6 | 0.1 | 0.0 | 0.0 | 74,528.6 | 0.2 |
| 5.5 | Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | 7,470.9 | 0.0 | 0.0 | 0.0 | 7,470.9 | 0.0 |
| 5.6 | Շրջակա միջավայրի պաշտպան. (այլ դասերին չպատկ.) | 2,557,135.1 | 2.5 | 2,081,901.7 | 3.4 | 475,233.4 | 1.2 |
| 6 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն, այլ թվում՝ | 10,043,125.4 | 9.7 | 6,847,124.7 | 11.0 | 3,196,000.7 | 7.8 |
| 6.1 | Բնակարանային շինարարություն | 1,559,747.2 | 1.5 | 1,296,875.0 | 2.1 | 262,872.2 | 0.6 |
| 6.2 | Համայնքային զարգացում | 312,111.0 | 0.3 | 0.0 | 0.0 | 312,111.0 | 0.8 |
| 6.3 | Ջրամատակարարում | 1,303,431.9 | 1.3 | 661,097.9 | 1.1 | 642,334.0 | 1.6 |
| 6.4 | Փողոցների լուսավորում | 3,314,358.6 | 3.2 | 2,209,302.9 | 3.6 | 1,105,055.7 | 2.7 |
| 6.5 | Բնակչին. և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | 37,322.5 | 0.0 | 6,928.0 | 0.0 | 30,394.5 | 0.1 |
| 6.6 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 3,516,154.2 | 3.4 | 2,672,920.9 | 4.3 | 843,233.3 | 2.1 |

| | | | | | | | |
|-----|---|--------------|------|--------------|------|--------------|------|
| 7 | Առողջապահություն | 171,374.9 | 0.2 | 96,345.7 | 0.2 | 75,029.2 | 0.2 |
| 8 | Հանգիստ, մշակույթ և կրոն | 6,712,705.1 | 6.5 | 2,750,458.0 | 4.4 | 3,962,247.1 | 9.7 |
| 9 | Կրթություն | 31,301,775.0 | 30.4 | 21,108,007.0 | 34.0 | 10,193,768.0 | 24.9 |
| 9.1 | Նախադպրոցական կրթություն | 12,948,266.3 | 12.6 | 6,547,571.7 | 10.5 | 6,400,694.6 | 15.6 |
| 9.2 | Տարրական ընդհանուր կրթություն | 5,604,466.1 | 5.4 | 5,521,721.8 | 8.9 | 82,744.3 | 0.2 |
| 9.3 | Միջնակարգ ընդհանուր կրթություն | 6,390,428.5 | 6.2 | 6,273,543.3 | 10.1 | 116,885.2 | 0.3 |
| 9.4 | Արտադպրոցական դաստիարակություն | 5,179,605.2 | 5.0 | 1,875,128.0 | 3.0 | 3,304,477.2 | 8.1 |
| 9.5 | Կրթություն (այլ դասերին չպատկանող) | 1,179,008.9 | 1.1 | 890,042.2 | 1.4 | 288,966.7 | 0.7 |
| 10 | Սոցիալական պաշտպանություն | 3,556,679.1 | 3.4 | 1,912,322.0 | 3.1 | 1,644,357.1 | 4.0 |
| 11 | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր* | 1,733,717.1 | 1.7 | 1,501,929.9 | 2.4 | 231,787.2 | 0.6 |

*) Առանց վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումների. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեներում՝ 8,478,179.8 հազ. դրամ, Երևանի բյուջեում՝ 7,401,857.9 հազ. դրամ, ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեներում՝ 1,076,321.9 հազ. դրամ:

Գծապատկեր 3. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2013թ. բյուջեների փաստացի ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում (ըստ գործառնական դասակարգման)



ՀՀ համայնքների (առանց Երևան քաղաքի) 2013թ. բյուջեների ըստ գործառնական դասակարգման ծախսերի տեսակարար կշիռներն էականորեն տարբերվում են ինչպես ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2013թ. բյուջեների, այնպես էլ Երևանի 2013թ. բյուջեի ծախսերի տեսակարար կշիռներից ընդհանուր ծախսերում (աղյուսակ 17): Այսպես, ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2013թ. բյուջեներում ընդհանուր բնույթի ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է և կազմում է ընդհանուր ծախսերի մոտ 43.7% (2012-ին՝ 43.1%): Ընդհանուր ծախսերում երկրորդ բարձր տեսակարար կշիռն ունեն կրթության ոլորտի ծախսերը՝ կազմելով 24.9% (2012-ին՝ 24.3%):

Սոցիալական մյուս ոլորտներին ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2013թ. բյուջեներից հատկացված ծախսերի տեսակարար կշիռները, նախորդ տարվա համեմատ, մոտավորապես նույն մակարդակի վրա են:

ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2013թ. բյուջեների ընդհանուր ծախսերում տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տեսակարար կշիռները համապատասխանաբար կազմել են՝ բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում (փողոցների լուսավորում, ջրամատակարարում, համայնքային զարգացում և այլն)՝ 7.8% (2012-ին՝ 8.8%), շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում (աղբահանում, կեղտաջրերի հեռացում և այլն)՝ 8.9% (2012-ին՝ 8.2%), տրանսպորտի ոլորտում՝ 6.6% (2012-ին՝ 7.6%), և այլն:

ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքների ֆինանսական միջոցների համապատասխանության ցուցանիշներից է նաև «**Ֆինանսավորվող կամ թերի ֆինանսավորվող լիազորությունների**» առկայությունը: Կան ՏԻՄ-երի՝ օրենքով սահմանված բազմաթիվ լիազորություններ (այդ թվում՝ հանրային ծառայությունների մատուցման), որոնք ՀՀ շատ համայնքներում (հատկապես գյուղական ու փոքր քաղաքային) ընդհանրապես չեն իրականացվում կամ իրականացվում են մասնակիորեն (ֆինանսական միջոցների սղության և այլ պատճառներով): Այդպիսի լիազորությունների թվին է դասվում կենսական նշանակություն ունեցող այնպիսի հանրային ծառայությունների մատուցումը, ինչպիսիք են, մասնավորապես, աղբահանությունը, կանաչապատումը, ջրամատակարարումը և ջրահեռացումը, շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարը, համայնքային զարգացումը և այլն:

Համայնքների բյուջեների ծախսերի տեսակների (ընթացիկ և կապիտալ/ոչ ֆինանսական ակտիվների գծով) հարաբերակցությունների մասին կարելի է պատկերացում կազմել՝ դիտարկելով **բյուջեային ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման**: ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) 2013թ. բյուջեների կապիտալ/ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 10.7%, սակայն, եթե հաշվի առնենք նաև ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի (-12,081,688.0 հազ. դրամ կամ -11.7%) հաշվին կատարված կապիտալ ծախսերը, ապա կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 22.4% (աղյուսակ 18):

Գիտարկելով ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցություններն ընդհանուր ծախսերում վերջին 5 տարիների՝ 2009-2013թթ. համար (գծապատկեր 4), տեսնում ենք, որ եթե 2009-2011թթ. ժամանակահատվածում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում 19.2%-ից անշեղորեն աճել է՝ հասնելով մինչև 28.9%-ի, ապա 2012-2013թթ. ընթացքում այն դրսևորել է նվազման միտում՝ իջնելով մինչև 22.4%-ի:

Ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցությունների պատկերն այլ է Երևան քաղաքի 2009-2013թթ. բյուջեներում: Եթե Երևանի քաղաքապետարանի և նախկին թաղային համայնքների 2009թ. բյուջեների ընդհանուր ծախսերում գերակշռող տեսակարար կշիռ են ունեցել ընթացիկ ծախսերը (91.9%), իսկ կապիտալ ծախսերի ցուցանիշներն անհամեմատ ավելի համեստ են եղել (8.1%), քան հանրապետության մասշտաբով, ապա Երևան քաղաքի 2010-2013թթ. բյուջեների ընդհանուր ծախսերում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է համապատասխանաբար 8.7%, 7.6%, 12.6% և 11.4%: Սակայն, եթե հաշվի առնենք նաև ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի հաշվին կատարված կապիտալ ծախսերը (համապատասխանաբար 2010թ.՝ 11,534,766.4 հազ. դրամ կամ 17.4%, 2011թ.՝ 13,241,236.7 հազ. դրամ կամ 25.2%, 2012թ.՝ 9,121,303.0 հազ. դրամ կամ 15.4% և 2013թ.՝ 8,929,505.2 կամ 15.4%), ապա կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է համապատասխանաբար 26.1%, 32.8%, 28.0% և 26.8% (աղյուսակ 18, գծապատկեր 5), որոնք զգալիորեն ավելի բարձր են ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների նույն ցուցանիշներից և էականորեն բարձր են ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) բյուջեների նույն ցուցանիշներից:

ՏԻՄ-երի գործունեության արդյունավետ կազմակերպման տեսանկյունից, կարևոր ֆինանսական ցուցանիշներից է նաև համայնքային աշխատողների աշխատանքի վարձատրության բաղկացուցիչ մասերի՝ **աշխատավարձերի և սոցիալական ապահովության վճարների տեսակարար կշիռը համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերում:** ՀՀ հարկային օրենսդրությունում իրականացված բարեփոխումների արդյունքում¹⁴², 2013թ. հունվարի 1-ից սկսած՝ աշխատողների աշխատավարձից հաշվարկվող և հաշվառվող եկամտահարկի և սոցիալական ապահովության վճարների փոխարեն հաշվարկվում և հաշվառվում է նոր հարկատեսակ՝ եկամտային հարկ: Ըստ այդմ, 2013-ին ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) ՏԻՄ-երի, դրանց ենթակա բյուջետային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի ու հավելավճարների

¹⁴² Համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի՝ ընդունված 2010թ. դեկտեմբերի 22-ին (ՀՕ-246-Ն) և ուժի մեջ մտած 2013թ. հունվարի 1-ից, ուժը կորցրած են ճանաչվել «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները: Ուժի մեջ մտած նոր օրենքի անցումային դրույթների (հոդված 29) 1-ին կետով սահմանվել է՝ «2013 թվականի ընթացքում կամ մինչ այդ առաջացած եկամտահարկի կամ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները 2013 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում, և դրանք ենթակա են կատարման «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում»:


Աղյուսակ 18. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի և առանց Երևանի) և Երևանի 2013թ. բյուջեների փաստացի ծախսերն՝ ըստ տնտեսագիտական դասակարգման

| Հ/հ | Ծախսի անվանումը | 2013թ. | | | | | |
|-----|--|--|--------------------|---|--------------------|---|--------------------|
| | | ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ | Տեսակարար կշիռը, % | Երևանի բյուջեի փաստացի ծախսերը, հազ. դրամ | Տեսակարար կշիռը, % | ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ | Տեսակարար կշիռը, % |
| | ԸՆԴԱՍԵՆԸ ԾԱԽՍԵՐ* (Ա+Բ+Գ) | 103,130,107.8 | 100 | 62,161,662.3 | 100 | 40,968,445.5 | 100 |
| Ա | ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ* | 92,070,935.6 | 89.3 | 54,433,659.5 | 87.6 | 37,637,276.1 | 91.9 |
| 1 | Աշխատանքի վարձատրություն, այդ թվում՝ | 19,597,178.8 | 19.0 | 4,751,042.2 | 7.6 | 14,846,136.6 | 36.2 |
| | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 19,566,340.9 | 19.0 | 4,751,042.2 | 7.6 | 14,815,298.7 | 36.1 |
| | Փաստացի սոցիալական ասպահովության վճարներ | 30,837.9 | 0.0 | 0.0 | 0.0 | 30,837.9 | 0.1 |
| 2 | Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում | 34,190,352.9 | 33.2 | 24,593,950.6 | 39.6 | 9,596,402.3 | 23.4 |
| 3 | Տոկոսավճարներ | 2,165.8 | 0.0 | 0.0 | 0.0 | 2,165.8 | 0.0 |
| 4 | Մուրփիղիաներ | 20,822,209.3 | 20.2 | 12,330,133.9 | 19.8 | 8,492,075.4 | 20.7 |
| 5 | Դրամաշնորհներ | 4,715,971.8 | 4.6 | 2,210,607.6 | 3.6 | 2,505,364.2 | 6.1 |
| 6 | Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 2,810,813.6 | 2.7 | 1,111,074.0 | 1.8 | 1,699,739.6 | 4.1 |
| 7 | Այլ ծախսեր*, այդ թվում՝ | 9,932,243.3 | 9.6 | 9,436,851.2 | 15.2 | 495,392.1 | 1.2 |
| | Պահուստային միջոցներ* | 1,733,717.1 | 1.7 | 1,501,929.9 | 2.4 | 231,787.2 | 0.6 |
| | Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ | 8,478,179.8 | 8.2 | 7,401,857.9 | 11.9 | 1,076,321.9 | 2.6 |
| Բ | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ | 23,140,860.1 | 22.4 | 16,657,508.0 | 26.8 | 6,483,352.1 | 15.8 |
| 1 | Հիմնական միջոցներ | 23,112,651.7 | 22.4 | 16,637,786.7 | 26.8 | 6,474,865.0 | 15.8 |
| 2 | Պաշարներ | 26,783.4 | 0.0 | 19,721.3 | 0.0 | 7,062.1 | 0.0 |
| 3 | Բարձրարժեք ակտիվներ | 125.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 125.0 | 0.0 |
| 4 | Չարտադրված ակտիվներ | 1,300.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 1,300.0 | 0.0 |
| Գ | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ | -12,081,688.0 | -11.7 | -8,929,505.2 | -15.4 | -3,152,182.8 | -7.7 |
| 1 | Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | -1,838,146.3 | -1.8 | -1,515,191.1 | -2.4 | -322,955.2 | -0.8 |
| 2 | Պաշարների իրացումից մուտքեր | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3 | Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր | -870.0 | -0.0 | 0.0 | 0.0 | -870.0 | -0.0 |
| 4 | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | -10,242,365.0 | 9.9 | -7,414,314.1 | -11.9 | -2,828,050.9 | -6.9 |


166 *) Առանց վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումների

փաստացի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 19.0%, սոցիալական ապահովության վճարների փաստացի ծախսերն ընդհանուր ծախսերում՝ 30,837.9 հազ. դրամ (ստորև հղումում բերված՝ 2013-ին վերաբերող առանձնահատկության պատճառով) կամ 0.0%, իսկ նշված երկու ծախսերը միասին՝ 19.0% (աղյուսակ 18): Համեմատելով վերջին ցուցանիշը 2011-2012թթ.-ի նույն ցուցանիշների հետ (համապատասխանաբար 2011թ.՝ 20.2%, և 2012թ.՝ 18.8%)՝ պետք է արձանագրել դրա մոտավորապես նույն մակարդակի վրա մնալու (կայունացման) միտումը:

Գծապատկեր 4. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2009-2013թթ. բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում, %



Գծապատկեր 5. Երևանի քաղաքի 2009-2013թթ. բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում, %



Երևան քաղաքի 2013թ. բյուջեում այդ ցուցանիշը կազմել է 7.6% (աղյուսակ 5), որը 2011-2012թթ.-ի համեմատ (համապատասխանաբար 8.0% և 7.8%) աննշան չափով նվազել է:

2013-ին ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) ՏԻՄ-երի, դրանց ենթակա բյուջետային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի ու հավելավճարների փաստացի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 36.1%, սոցիալական ապահովության վճարների փաստացի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում` 0.1%, իսկ նշված երկու ծախսերի տեսակարար կշիռները միասին` 36.2%: Համեմատելով վերջին ցուցանիշը 2011-2012թթ.-ի նույն ցուցանիշների հետ (համապատասխանաբար 37.7% և 35.8%)` պետք է նորից արձանագրել դրա աստիճանական կայունացման միտումը:

Պետք է նաև նկատել, որ ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) համար հաշվարկված վերջին ցուցանիշն էականորեն բարձր է Երևան քաղաքի համար հաշվարկված նույն ցուցանիշից: Դա պայմանավորված է երկու հանգամանքներով` համայնքների (առանց Երևանի) աշխատակազմերի ու ենթակա կազմակերպությունների աստիճանական ուժնաջուժով և համայնքների բյուջեների եկամուտների անբավարարությամբ: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել` նվազեցնելու համայնքային աշխատողների թվաքանակը և դրա հաշվին բարձրացնելու նրանց աշխատավարձերի չափերը: Եվ ընդհանրապես, անհրաժեշտ է հետևողական աշխատանքներ տանել` ավելացնելու համայնքների բյուջեների եկամուտների աղբյուրներն ու դրանց փաստացի հավաքագրումները, ինչպես նաև բարձրացնելու բյուջետային ծախսերի կատարման արդյունավետությունը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 7¹ գլխում սահմանված վարչական հսկողության դրույթների, ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող մարմինները մարզպետներն են, իսկ Երևան քաղաքի` ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման նկատմամբ` ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: ՏԻՄ-երի նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ իրավական հսկողություն իրականացնող բարձրագույն մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է, իսկ օրենքով սահմանված դեպքերում մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինն այն պետական մարմինն է, որի իրավասության շրջանակներում է համապատասխան լիազորությունը: Ընդ որում, վարչական հսկողության իրականացման ընթացքում ձեռնարկվող միջոցները պետք է սահմանվեն բացառապես օրենքով:

Մասնավորապես, համայնքային աշխատողների աշխատավարձերի գծով ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, բացի մարզպետներից, վարչական հսկողություն կարող են իրականացնել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը` իր լիազորությունների սահմաններում, ինչպես նաև ՀՀ վերահսկիչ պալատը` համայնքներում պարբերական ստուգումներ անցկացնելու ընթացքում: ՀՀ

աշխատանքի պետական տեսչությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է պետական հսկողություն և վերահսկողություն ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ: Համաձայն «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի, համայնքների աշխատակազմերը և համայնքային այլ կազմակերպությունները, որպես գործատուներ, պարտավոր են ՀՀ աշխատանքի պետական տեսչություն ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ իրենց աշխատողների թվի, աշխատավարձի (ըստ մասնագիտությունների), աշխատավայրում տեղի ունեցած դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների մասին:

6. Համայնքի խնդիրներին վարչական կառուցվածքների, մարդկային և տեղեկատվական ռեսուրսների համադասասխանությունը, միջազգային աջակցությունը

6.1 ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի ընդհանուր կարողությունները

ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների պատշաճ կատարումը մեծ չափով պայմանավորված է ոչ միայն համայնքների ֆինանսական կարողություններով, այլև ՏԻՄ-երի և համայնքային կառավարչական հիմնարկների կադրային ներուժով, ինչն անհնար է ապահովել հատկապես փոքր գյուղական համայնքներում: Նման համայնքներում ոչ միայն համայնքային կառավարչական հիմնարկների աշխատակազմերն է լինում փոքրաթիվ, այլև, սովորաբար, ավելի դժվար են համարվում անհրաժեշտ կրթական ու մասնագիտական կարողությունների տեր կադրերով:

ՏԻՄ-երի կարողությունները, ընդհանուր առմամբ, բարձր մակարդակի վրա չեն: Դրանք հետագա հզորացման կարիք ունեն՝ հատկապես իրավական, մենեջմենթի և ֆինանսական կառավարման հարցերում:

Ի տարբերություն ՏԻՄ-երի, համայնքային ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում այդ պաշտոնը հիմնականում զբաղեցվում է մրցույթով, որը ենթադրում է հզոր կարողություններով թեկնածուների ներգրավում: Սակայն շատ համայնքներում հաճախ արժանի մրցակցություն չի լինում: Մրցույթներն անցկացնում են համապատասխան հանձնաժողովները:

Որպեսզի համայնքների աշխատակազմերը մշտապես հնարավորություն ունենան բարձրացնելու իրենց աշխատանքային կարողությունները, երեք տարին մեկ անգամ, համայնքային ծառայողների համար անցկացվում է ատեստավորում: Ատեստավորումներն անցկացնում են համապատասխան հանձնաժողովները:

Ատեստավորման արդյունքներով 7 համայնքային ծառայողներ ազատվել են զբաղեցրած պաշտոններից՝ այդ պաշտոններին չհամապատասխանելու հիմքով:

Թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել են 916 մրցույթներ, որոնցից կայացել են 602-ը կամ շուրջ 66%-ը: Հրապարակայնությունն ապահովելու նպատակով մրցույթների մասին հայտարարությունները տեղադրվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության հայտարարությունների վահանակում և ինտերնետային կայքում: Մրցույթների մասին տեղեկությունները տրամադրվել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությանը¹⁴³:

Չնայած օրենսդրությամբ համայնքի ղեկավարների համար կրթական ցենզ սահմանված չէ, այդուհանդերձ, համայնքների ղեկավարների զգալի մասն ունեն բարձրագույն կրթություն: 2013 թվականին համայնքների ղեկավարներից 544-ն ունի բարձրագույն կրթություն, 8-ը՝ թերի բարձրագույն, 270-ը՝ միջնակարգ մասնագիտական, 91-ը՝ միջնակարգ և 1-ը՝ 8-ամյա կրթություն (աղյուսակ 19):¹⁴⁴

2013 թվականին մինչև 1000 բնակչություն ունեցող համայնքներում աշխատակազմերի քարտուղարների պաշտոնների անձնագրերում բարձրագույն կրթության և (կամ) աշխատանքային ստաժի չափանիշները չներառելու մասին համաձայնություն է տրվել միայն 10 համայնքների: Ընդհանուր առմամբ, մինչև 1000 բնակչություն ունեցող 441 համայնքներից համաձայնություն է տրվել 279 համայնքներին:¹⁴⁵

Թեև «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը կոչված է համայնքային ծառայողներին պաշտպանելու իրավիճակային փոփոխություններից, գործնական կյանքում նրանք շարունակում են մեծապես կախված մնալ համայնքի ղեկավարների կամայական որոշումներից:

Աղյուսակ 19. Ամփոփ տեղեկանք ՀՀ մարզերի համայնքների ղեկավարների կրթության վերաբերյալ (առ 2013 թ. դեկտեմբերի դրությամբ)¹⁴⁶

| Հ/հ | Մարզի անվանումը | Համայնքների թիվը | | Կրթությունը | | | | | Մեռը | |
|-----|-----------------|------------------|------------|-------------|----------|------------|-----------|----------|------------|-----------|
| | | քաղ. | գյուղ. | բարձր. | թ/բարձր. | մ/մասն. | միջնակարգ | 8-ամյա | ար | իգ |
| 1. | Արագածոտն | 3 | 111 | 69 | 1 | 33 | 11 | - | 114 | - |
| 2. | Արարատ | 4 | 93 | 72 | - | 22 | 3 | - | 96 | 1 |
| 3. | Արմավիր | 3 | 94 | 58 | 2 | 23 | 14 | - | 95 | 2 |
| 4. | Գեղարքունիք | 5 | 87 | 59 | 2 | 24 | 7 | - | 89 | 3 |
| 5. | Կոտայք | 7 | 60 | 44 | - | 21 | 2 | - | 66 | 1 |
| 6. | Լոռի | 8 | 105 | 64 | 2 | 39 | 8 | - | 107 | 6 |
| 7. | Շիրակ | 3 | 116 | 61 | - | 36 | 21 | 1 | 117 | 2 |
| 8. | Սյունիք | 7 | 102 | 49 | - | 38 | 22 | - | 105 | 4 |
| 9. | Վայոց ձոր | 3 | 41 | 22 | - | 19 | 3 | - | 44 | - |
| 10. | Տավուշ | 5 | 57 | 46 | 1 | 15 | - | - | 61 | 1 |
| | <i>Ընդամենը</i> | <i>48</i> | <i>866</i> | <i>544</i> | <i>8</i> | <i>270</i> | <i>91</i> | <i>1</i> | <i>894</i> | <i>20</i> |

¹⁴³ www.mta.gov.am

¹⁴⁴ www.mta.gov.am

¹⁴⁵ www.mta.gov.am

¹⁴⁶ www.mta.gov.am

Համայնքի աշխատակազմի ֆունկցիոնալ կառուցվածքը

Համայնքի աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որը ենթակա է հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից: Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը: Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը՝ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Աշխատակազմը բաղկացած է մասնագետներից, որոնք ընդգրկված են լինում «բաժին» տեսակի կառուցվածքային, առանձնացված ստորաբաժանումներում: Բաժնի գործունեության բնագավառում վարվող քաղաքականության մասով բաժնի պետերը կատարում են համայնքի ղեկավարի, իսկ համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպական մասով՝ աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները:

2013 թվականի սկզբից 41 քաղաքային համայնքներում սկսել են գործել ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանով ներքին առօրին ստորաբաժանումներին ներկայացվող հիմնական պահանջների համապատասխանող բաժինները (տես՝ սույն զեկույցի «Ֆինանսական հաշվետվողականություն» բաժինը):

2013 թվականին աշխատակազմի ֆունկցիոնալ կառուցվածքի առումով այլ փոփոխություններ չեն եղել:

Գործավարության, փաստաթղթաւրջանառության և ռեզիսրների համակարգը

2013 թվականին համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների միասնական գրանցամատյանում ներառված են 6183 համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալները:¹⁴⁷

Պայմանավորված «Հողի հարկի և գույքահարկի գծով առաջացած ապառքների մասին», «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների փաթեթի ընդունմամբ՝ անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ իրականացնելու հողի հարկի և գույքահարկի շտեմարաններում, ինչպես նաև միասնական տեղեկատվական համակարգում: «Վեկտոր պլյուս» կազմակերպությունը մշակել է բարեփոխված ծրագրային փաթեթ, որը ներդրվել է ՀՀ համայնքներում, ինչպես նաև մարզպետարաններում: Նախատեսվել է վերջինս ներդնել նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում՝ արդյունքում ձևավորելով միասնական տեղեկատվական համակարգ:¹⁴⁸

2013թ. ընթացքում մի շարք համայնքներում շարունակվել է հողի հարկի և գույ-

¹⁴⁷ www.mta.gov.am

¹⁴⁸ www.mta.gov.am

քահարկի բազաները միասնական վարելու ՀՀ Սյունիքի մարզի «Միսիանի համայնքների միության» հաջող փորձի ներդրումը:

2013 թվականի ընթացքում շարունակվել են համայնքի սեփականություն համարվող գույքի արդյունավետ կառավարման միասնական տեղեկատվական համակարգերի ներդրման աշխատանքները:

Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգերի զարգացումը

Գնահատելով համայնքների վերաբերյալ տեղեկատվական բազայի կարևորությունը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից 2013թ. մշակվել և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 54-Ա հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության համայնքների տեղեկատվական բազայի արդիականացման նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքներից տվյալների հավաքագրման, ամփոփման և համայնքների տեղեկատվական բազա էլեկտրոնային ծրագիր մուտքագրման» կարգը: Կարգով նախատեսվել է մարզպետարանների միջոցով համայնքներից տեղեկատվության հավաքագրում, ամփոփում և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միջոցով մուտքագրում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից սպասարկվող Armdevinfo էլեկտրոնային ծրագիր: Իրականացված աշխատանքների շնորհիվ 2014 թվականին հնարավորություն կընձեռնվի յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ դինամիկ կտրվածքով ունենալու <http://www.armdevinfo.am/> կայքում տեղադրված էլեկտրոնային բազա: Ծրագրի գործիքակազմի օգտագործումով կնեժանան տարբեր տեսակի վերլուծություններ իրականացնելու հնարավորությունները (աղյուսակներ, գրաֆիկներ, քարտեզներ և այլն):

2013 թվականի ընթացքում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ) ներդրվել է ևս 153 համայնքներում (աղյուսակ 20): Ընդհանուր առմամբ տեղեկատվական համակարգը 2013 թ. վերջին շահագործվում է ՀՀ 496 համայնքներում:

Տարվա ընթացքում թվով 242 ՏԻՄ-երում աշխատանքներ են տարվել էլեկտրոնային փաստաթղթաշարժի ներդրման ուղղությամբ, որոնց արդյունքում բոլոր 48 քաղաքապետարաններում և 309 գյուղապետարաններում (ընդհանուր թվով 357 համայնքներում) շահագործվող ՀԿՏՀ-ներն իրենց փաստաթղթաշարժի բաղադրիչի միջոցով հնարավորություն ունեն էլեկտրոնային փաստաթղթեր փոխանակելու պետական կառավարման մարմիններում շահագործվող փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգի հետ: Տարվա ընթացքում 117 համայնքներում գործարկվել են համացանցային պաշտոնական կայքեր, իսկ մնացած կայքեր շահագործող համայնքների թիվը 150-ն է¹⁴⁹:

¹⁴⁹ www.mta.gov.am

Աղյուսակ 20. Համայնքները, որտեղ 2013 թ. ընթացքում տեղադրվել և գործարկվել է համայնքային կառավարման տեղակատվական համակարգ (ՀԿՏՀ)՝ ըստ մարզերի¹⁵⁰

| Հ/հ | ՄԱՐԶԸ | Համայնքները | Ընդամենը |
|-----|-----------------|--|------------|
| 1. | ԱՐԱԳԱԾՈՏՆ | Ուշի, Ոսկեհատ (Արագածոտն), Գեղածոր, Օհանավան, Կոշ, Բերքառատ, Շամիրամ, Արևաշատ, Ագարակավան, Ագարակ (Արագածոտն), Արուճ, Շենավան, Աշնակ, Հնաբերդ, Ներքին Սասնաշեն, Աղձք, Բաղմաղբյուր | 17 |
| 2. | ԱՐԱՐԱՏ | Ագատաշեն, Հնաբերդ (Արարատ), Դիտակ, Բերքանուշ, Խաչվիար, Մրգանուշ, Դեղձուտ, Սիս, Արևաբույր, Նոր Կյուրին, Արովյան, Ջրաշեն (Արարատ), Գետափնյա, Նիգամի, Ջրահովիտ, Դիմիտրով, Եղեգնավան, Լանջագատ, Մրգավան, Ջորակ, Արբաթ, Նոյակերտ, Դարբնիկ, Նոր Ուղի, Արգավանդ (Արարատ), Սիփանիկ, Նորամարգի | 27 |
| 3. | ԱՐՄԱՎԻՐ | Բամբակաշատ, Խանջյան, Այգեշատ (Արմավիր), Հայկավան (Արմավիր), Արգավանդ (Արմավիր), Երասխահուն, Ջրառատ (Արմավիր), Արտիմետ, Գողս, Ակնաշեն, Ամբերդ, Ապագա, Ծաղկունք (Արմավիր), Պտղունք, Գրիբոյեղով, Մարգարա, Արևիկ, Ալաշկերտ, Վարդանաշեն, Տարոնիկ, Շահումյան (Արմավիր), Հովտամեջ, Հայկաշեն, Նոր Կեսարիա, Լենուհի, Մեծամոր, Նորավան | 27 |
| 4. | ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ | Շորժա, Ծաղկունք (Գեղարքունիք), Գեղամավան, Մաղինա, Լուսակունք, Խաչաղբյուր, Գեղամասար, Նորակերտ, Լանջաղբյուր, Վահան, Թթուջուր, Վարսեր, Լճափ | 13 |
| 5. | ԼՈՌԻ | Լեռնապատ, Գյուլագարակ, Ագարակ (Լոռի), Արևածագ, Քարինջ, Հաղպատ, Մեծ Այրում, Գոգարան, Սարահարթ, Լուսաղբյուր, Լորուտ, Վահագն, Աբրի, Վարդաբլուր, Կուրթան, Գարգառ, Ուռուտ, Լեջան, Լեբնոնտովո, Ֆիդետովո, Շահումյան (Լոռի), Նորաշեն (Լոռի) | 22 |
| 6. | ԿՈՏԱՅՔ | Արագյուղ, Հացավան (Կոտայք), Վերին Պտղնի, Ողջաբերդ, Գողթ, Ռինդ, Բուժական, Քաղսի, Կաթնաղբյուր (Կոտայք), Սոլակ, Պռոշյան, Գետամեջ, Կոտայք, Ջովք, Նուռնուս, Կարենիս, Մեղրածոր | 17 |
| 7. | ՇԻՐԱԿ | Անուշավան, Որոտան, Մեղրաշեն, Սպանդարյան (Շիրակ), Սարատակ, Գուսանագյուղ, Քարաբերդ, Ջորակապ, Բասեն, Նահապետավան, Ջաջուռ, Արևշատ (Շիրակ), Հայկավան, Ջրառատ (Շիրակ), Մեղրաշատ, Ամասիա | 16 |
| 8. | ՄՅՈՒՆԻՔ | Տեղ, Շենաթաղ, Ծղուկ | 3 |
| 9. | ՎԱՅՈՑ ՁՈՐ | Գետափ, Արենի, Ելիին, Վերնաշեն, Խաչիկ | 5 |
| 10. | ՏԱՎՈՒՇ | Արճիս, Խաչքառակ, Սարիգյուղ, Չորաթան, Նորաշեն (Տավուշ), Ն.Կ. Աղբյուր | 6 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 153 |

¹⁵⁰ Աղբյուրը՝ «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ

Ի տարբերություն 2012 թվականի, 2013 թվականին համայնքների աշխատակազմերում առկա համակարգիչների, տպող սարքերի, պատկերամուտների և անխափան սնուցման սարքերի քանակի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն չկա:

Բջջային կապ առկա է բոլոր համայնքներում: Տեղեկատվական ցուցատախտակներ ունեն գրեթե բոլոր համայնքները: Սակայն հանրային իրազեկման այլ միջոցներով (թերթ, տեղական հեռուստահաղորդում) ապահովվածության տեսակետից, վիճակը հեռու է բավարար լինելուց:

Համայնքների տեխնիկական և տեղեկատվական միջոցներով առահովվածության գնահատում

Համայնքները տեխնիկական ապահովվածության տեսանկյունից դեռևս բավարար մակարդակի վրա չեն գտնվում: Նորագույն տեխնոլոգիաները բացակայում են համայնքների մեծ մասում: Հատկապես լրջագույն հարց է սերվերների բացակայությունը: Շատ համայնքներում հնացած են սարքավորումները և այլ տեխնիկական միջոցները:

Տեղական ինֆրակառավարման մարմինների և աշխատակազմերի գեներային բաժանումը

2013-ին տեղական ինֆրակառավարման համակարգի ընտրովի մարմիններում կանանց ներկայացվածությունը նախորդ տարվա համեմատությամբ քիչ է փոփոխվել: Պաշտոնական վիճակագրության համաձայն, 2013-ին, ինչպես և նախորդ տարիներին, քաղաքային համայնքներում կին համայնքի ղեկավար ընդհանրապես չի եղել: Գյուղական համայնքներում կին համայնքի ղեկավարների թիվը նախորդ տարվա համեմատ մեկով նվազել է՝ կազմելով 19 կամ գյուղական համայնքների ղեկավարների 2,19%-ը: Քաղաքային համայնքներում ավագանու անդամների կազմում կանանց տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատությամբ մի փոքր նվազել է՝ կազմելով 5,1 %, իսկ գյուղական համայնքներում, ընդհանրապես, մի փոքր ավելացել՝ կազմելով 9,7 % (աղյուսակներ 21 և 22):

Համայնքների աշխատակազմերում 2013-ին, ինչպես և նախորդ տարիներին, գեներային անհավասարություն շատ քիչ է նկատվել: 2013-ին քաղաքային համայնքների աշխատակազմերում կանանց տեսակարար կշիռը կազմել է 44,6 %, իսկ գյուղական համայնքներում՝ 50,9 %: Ընդհանուր առմամբ, 2013-ին ՀՀ մարզերում համայնքների աշխատակազմերի կազմում կանանց տեսակարար կշիռը կազմել է 49,1 % (աղյուսակներ 21 և 22):

Աղյուսակ 21. Քաղաքային համայնքների ղեկավարների, ավագանու անդամների և համայնքների աշխատակազմերի գեներալային բաժանումը, 2013 թ.¹⁵¹

| Հ/հ | Մարզ | Քաղաքապետեր | | Քաղաքապետի տեղակալներ | | Աշխատակազմի քարտուղարներ | | Ավագանու անդամներ | | Աշխատակազմի անդամներ | |
|-----|-----------------|-------------|---------|-----------------------|---------|--------------------------|---------|-------------------|---------|----------------------|---------|
| | | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| 1 | Արագածոտն | - | 3 | - | 5 | - | 3 | 2 | 35 | 42 | 54 |
| 2 | Արարատ | - | 4 | - | 7 | - | 4 | 2 | 54 | 94 | 96 |
| 3 | Արմավիր | - | 3 | - | 5 | - | 2 | - | 41 | 82 | 110 |
| 4 | Գեղարքունիք | - | 5 | - | 5 | 3 | 2 | 3 | 63 | 59 | 113 |
| 5 | Լոռի | - | 8 | - | 6 | 5 | 2 | 4 | 88 | 166 | 162 |
| 6 | Կոտայք | - | 7 | - | 7 | 3 | 4 | 3 | 86 | 155 | 203 |
| 7 | Շիրակ | - | 3 | - | 3 | 1 | 2 | 1 | 46 | 287 | 410 |
| 8 | Սյունիք | - | 7 | - | 6 | 2 | 5 | 8 | 71 | 113 | 121 |
| 9 | Վայոց Ձոր | - | 3 | - | 3 | 2 | 1 | 3 | 30 | 42 | 50 |
| 10 | Տավուշ | - | 5 | - | 5 | 3 | 2 | 4 | 42 | 56 | 43 |
| | <i>Ընդամենը</i> | - | 48 | - | 52 | 19 | 27 | 30 | 556 | 1096 | 1362 |

Աղյուսակ 22. Գյուղական համայնքների ղեկավարների, ավագանու անդամների և համայնքների աշխատակազմերի գեներալային բաժանումը, 2013 թ.¹⁵²

| Հ/հ | Մարզ | Գյուղապետեր | | Գյուղապետի տեղակալներ | | Աշխատակազմի քարտուղարներ | | Ավագանու անդամներ | | Աշխատակազմի անդամներ | |
|-----|-----------------|-------------|---------|-----------------------|---------|--------------------------|---------|-------------------|---------|----------------------|---------|
| | | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| 1 | Արագածոտն | - | 111 | 2 | 41 | 44 | 65 | 31 | 580 | 523 | 458 |
| 2 | Արարատ | 1 | 92 | - | 50 | 52 | 36 | 46 | 597 | 526 | 512 |
| 3 | Արմավիր | 2 | 92 | 2 | 84 | 38 | 51 | 58 | 651 | 300 | 359 |
| 4 | Գեղարքունիք | 3 | 84 | 1 | 67 | 23 | 64 | 45 | 501 | 197 | 451 |
| 5 | Լոռի | 6 | 99 | 16 | 53 | 56 | 32 | 78 | 502 | 326 | 235 |
| 6 | Կոտայք | 1 | 59 | 3 | 42 | 30 | 26 | 34 | 404 | 308 | 381 |
| 7 | Շիրակ | 2 | 114 | 4 | 47 | 51 | 54 | 68 | 559 | 344 | 222 |
| 8 | Սյունիք | 4 | 98 | 11 | 44 | 51 | 38 | 108 | 411 | 318 | 175 |
| 9 | Վայոց Ձոր | - | 41 | 2 | 9 | 16 | 25 | 8 | 213 | 183 | 164 |
| 10 | Տավուշ | - | 57 | - | 38 | 30 | 22 | 32 | 315 | 132 | 85 |
| | <i>Ընդամենը</i> | 19 | 847 | 41 | 475 | 391 | 413 | 508 | 4733 | 3157 | 3042 |

¹⁵¹ Աղբյուրը՝ «Հայաստանի կանայք և տղամարդիկ 2014», վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2014

¹⁵² Աղբյուրը՝ «Հայաստանի կանայք և տղամարդիկ 2014», վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2014

2013թ. մարզերում կայացած ընտրությունների արդյունքների համաձայն, որպես համայնքի ղեկավար առաջադրված 5 կին թեկնածուներից ընտրվել է 2-ը: Ավագանու առաջադրված թեկնածուների կազմում կանանց տեսակարար կշիռը կազմել է 9,7 %, իսկ ընտրվածների կազմում՝ 7,4 % (աղյուսակ 23):

Աղյուսակ 23. 2013թ. ՀՀ մարզերում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ առաջադրված և ընտրված թեկնածուների գեներալային բաժանումը¹⁵³

| Հ/հ | Մարզ | Համայնքի ղեկավարների | | | | | | Ավագանի | | | | | |
|-----|-----------------|------------------------|-----------|----------|---------------------|-----------|----------|------------------------|------------|-----------|---------------------|------------|-----------|
| | | Առաջադրված թեկնածուներ | | | Ընտրված թեկնածուներ | | | Առաջադրված թեկնածուներ | | | Ընտրված թեկնածուներ | | |
| | | Ընդամենը | Այդ թվում | | Ընդամենը | Այդ թվում | | Ընդամենը | Այդ թվում | | Ընդամենը | Այդ թվում | |
| | | | Տղամարդ | Կին | | Տղամարդ | Կին | | Տղամարդ | Կին | | Տղամարդ | Կին |
| 1 | Արագածոտն | 12 | 11 | 1 | 6 | 6 | - | 103 | 101 | 2 | 85 | 85 | - |
| 2 | Արարատ | 18 | 18 | - | 9 | 9 | - | 6 | 6 | - | 5 | 5 | - |
| 3 | Արմավիր | 11 | 11 | - | 3 | 3 | - | - | - | - | - | - | - |
| 4 | Գեղարքունիք | 4 | 3 | 1 | 3 | 2 | 1 | 116 | 97 | 19 | 98 | 85 | 13 |
| 5 | Լոռի | 1 | 1 | - | 1 | 1 | - | 20 | 20 | - | 20 | 20 | - |
| 6 | Կոտայք | 7 | 6 | 1 | 3 | 3 | - | - | - | - | - | - | - |
| 7 | Շիրակ | 11 | 10 | 1 | 6 | 5 | 1 | - | - | - | - | - | - |
| 8 | Սյունիք | 3 | 3 | - | 2 | 2 | - | 6 | 6 | - | 5 | 5 | - |
| 9 | Վայոց Ձոր | - | - | - | - | - | - | 5 | 4 | 1 | 5 | 4 | 1 |
| 10 | Տավուշ | 3 | 2 | 1 | 1 | 1 | - | 63 | 54 | 9 | 51 | 45 | 6 |
| | <i>Ընդամենը</i> | <i>70</i> | <i>65</i> | <i>5</i> | <i>34</i> | <i>32</i> | <i>2</i> | <i>319</i> | <i>288</i> | <i>31</i> | <i>269</i> | <i>249</i> | <i>20</i> |

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարության տվյալների, 2013թ. տարեվերջի դրությամբ համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց կազմում կանանց տեսակարար կշիռը կազմել է 51,4 %, իսկ տղամարդկանցը՝ 48,6 %¹⁵⁴:

2013-ին Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերում կանանց թիվը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է՝ կազմելով 52,9 %: Մնացյալ պաշտոններում ընդհանրապես կին չի եղել (աղյուսակ 24): 2013-ին կրկնապատկվել է Երևանի ավագանու կազմում կանանց թիվը՝ հասնելով 10-ի կամ ավագանու անդամների թվի 15,4 %-ի¹⁵⁵:

¹⁵³ Աղբյուրը՝ www.elections.am

¹⁵⁴ Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2013 թ. գործունեության հաշվետվություն

¹⁵⁵ Աղբյուրը՝ «Հայաստանի կանայք և տղամարդիկ 2014», վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2014

Աղյուսակ 24. Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի գեներային բաժանումը, 2013 թ.¹⁵⁶

| Պաշտոն | Կին | Տղամարդ |
|--|------|---------|
| Երևանի քաղաքապետ | - | 1 |
| Երևանի քաղաքապետի տեղակալներ | - | 4 |
| Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար (այդ թվում՝ վարչական շրջանների աշխատակազմերի քարտուղարներ) | 1 | 13 |
| Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ | 1003 | 893 |
| Երևանի վարչական շրջանների ղեկավարներ | - | 12 |
| Երևանի վարչական շրջանների ղեկավարի տեղակալներ | - | 20 |

6.2 Համայնքային ծառայություն

ՀՀ համայնքային ծառայության օրենսդրական հիմքեր

2013 թվականի ընթացքում «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի փետրվարի 5-ին և մարտի 19-ին ընդունված ՀՀ օրենքներով:

2013 թվականի փետրվարի 5-ին ընդունված «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով կատարվել են բազմաթիվ փոփոխություններ և լրացումներ, որոնցից հատկապես էական նշանակություն ունեն հետևյալները.

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո (26.05.2011) դրա որոշ դրույթներ սկսել են գործել նաև համայնքային ծառայությունում՝ հասկացություններ, սկզբունքներ և այլն, կապ է ստեղծվել պետական ծառայության և համայնքային ծառայության միջև: Այսպես, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «5. Պետական ծառայության դասային աստիճան (կոչում) ունեցող անձին համայնքային ծառայության պաշտոնի առաջին անգամ նշանակելու հետ միաժամանակ շնորհվում է նրա պետական ծառայության դասային աստիճանին (կոչմանը) համապատասխան համայնքային ծառայության դասային աստիճան, եթե նրա ունեցած պետական ծառայության դասային աստիճանը (կոչումը) ցածր չէ տվյալ պաշտոնի համար նախատեսված համայնքային ծառայության դասային աստիճանից, իսկ տվյալ պաշտոնի համար նախատեսված համայնքային ծառայության դասային աստիճանից ցածր պետական ծառայության դասային

¹⁵⁶ Աղբյուրը՝ «Հայաստանի կանաչ և տղամարդիկ 2014», վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2014

աստիճան (կոչում) ունենալու դեպքում՝ համայնքային ծառայության տվյալ պաշտոնին համապատասխան համայնքային ծառայության դասային աստիճան: Քաղաքացիական ծառայության 1-ին կամ 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան կամ դրանց համապատասխանող պետական ծառայության մյուս տեսակների դասային աստիճան (կոչում) ունեցող անձին համայնքային ծառայության պաշտոնի առաջին անգամ նշանակելու հետ միաժամանակ շնորհվում է համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան»:

Հստակեցվել է գրավոր բողոքների քննության կարգը: Այսպես, օրենքի 14-րդ հոդվածի 9.1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «...գրավոր բողոքը քննության է առնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ որոշելով կոնկրետ մասնակցի՝ մրցույթում հաղթող ճանաչելու, իսկ հարցազրույցի փուլը սահմանված կարգի խախտմամբ անցկացված լինելու դեպքում՝ նոր հարցազրույցի փուլ անցկացնելու հարցը: Մրցույթի արդյունքների բողոքարկման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի որոշումները կրում են պարտադիր բնույթ»:

Կատարվել են բազմաթիվ խմբագրական բնույթի փոփոխություններ:

Համայնքային ծառայության ինստիտուտի զարգացման գործընթացները հաշվետու տարում ընթացել են ավելի համակարգված, սակայն դեռևս հեռու են զարգացման օպտիմալ տեմպերից:

Համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների միասնական գրանցամատյանի համաձայն՝ 2013թ.-ի դեկտեմբերի 26-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնները 6752-ն են, որոնցից զբաղեցված են 6183-ը, կամ 92 %-ը: Համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանցից կանայք կազմում են 51.4%-ը, տղամարդիկ՝ 48.6%-ը:

Աղյուսակ 25-ում ներկայացված են համայնքային ծառայության պաշտոնների թիվը Երևան քաղաքում և մարզերում՝ ըստ պաշտոնների տեսակների:

2013 թվականին համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցվել են 4 անձինք: Համայնքների ղեկավարների և աշխատակազմերի քարտուղարների կողմից կադրերի ռեզերվ 408 հարցում է կատարվել ավելի քան 1000-ից ավելի ժամանակավոր թափուր պաշտոններ ժամկետային աշխատանքային պայմանագրերով համալրելու համար, որոնց մասին կազմված հայտարարությունները տեղադրվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության հայտարարությունների վահանակում և ինտերնետային կայքում: Հարցում արված պաշտոններից 5-ի համար կադրերի ռեզերվից ներկայացվել են համապատասխան թեկնածություններ, որոնց արդյունքում նշված անձինք օրենքով սահմանված կարգով հանվել են կադրերի ռեզերվից՝ նրանց հետ համայնքային ծառայության պաշտոններում ժամկետային աշխատանքային պայմանագրեր կնքելու հիմքով¹⁵⁷:

¹⁵⁷ www.mta.gov.am

Աղյուսակ 25*. Համայնքային ծառայության պաշտոնների թիվը 2013 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ¹⁵⁸

| Հ/հ | Անվանումը | Գլխավոր | | Առաջատար | | Կրտսեր | | Ընդամենը | |
|-----|-----------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|
| | | հաս- տատ- ված | զբա- ղեց- ված | հաս- տատ- ված | զբա- ղեց- ված | հաս- տատ- ված | զբա- ղեց- ված | հաս- տատ- ված | զբա- ղեց- ված |
| 1. | Երևան | 90 | 88 | 626 | 608 | 898 | 878 | 1614 | 1574 |
| 2. | Արագածոտն | 118 | 112 | 41 | 39 | 322 | 294 | 481 | 445 |
| 3. | Արարատ | 102 | 96 | 125 | 117 | 342 | 321 | 569 | 534 |
| 4. | Արմավիր | 99 | 90 | 78 | 76 | 471 | 435 | 648 | 601 |
| 5. | Գեղարքունիք | 97 | 88 | 134 | 109 | 355 | 307 | 586 | 504 |
| 6. | Լոռի | 119 | 103 | 136 | 127 | 439 | 408 | 694 | 638 |
| 7. | Կոտայք | 71 | 69 | 142 | 120 | 399 | 361 | 612 | 550 |
| 8. | Շիրակ | 127 | 105 | 197 | 159 | 298 | 258 | 622 | 522 |
| 9. | Սյունիք | 114 | 103 | 72 | 63 | 206 | 191 | 392 | 357 |
| 10. | Վայոց Ձոր | 48 | 47 | 54 | 52 | 86 | 82 | 188 | 181 |
| 11. | Տավուշ | 66 | 59 | 76 | 63 | 234 | 215 | 376 | 337 |
| | Ընդամենը | 1051 | 960 | 1681 | 1533 | 4050 | 3750 | 6782 | 6243 |

Ծանոթություն. Աղյուսակով ներկայացված զբաղեցված պաշտոնների թվերը ներառում են ժամկետային աշխատանքային պայմանագրերով զբաղեցված համայնքային ծառայության պաշտոնների թիվը:

Համայնքային ծառայողների թվաքանակի հարաբերակցությունը համայնքի բնակչությանը

Համայնքային ծառայողների թվի բացարձակ մեծությունը դեռևս ոչինչ չի վկայում համայնքի կամ մարզի կտրվածքով դրա մեծ կամ փոքր լինելու մասին: Աղյուսակ 26-ը բավարար պատկերացում է տալիս ըստ բնակչության թվի համայնքային ծառայողների պաշտոնների տեսակարար կշիռների վերաբերյալ:

2013թ. ընթացքում համայնքների աշխատակազմերում հաճախակի և չհիմնավորված հաստիքային փոփոխությունների դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն չկա:

¹⁵⁸ www.mta.gov.am

6.3. Համայնքային ծառայողների վերադասարանումը. Համայնքային ծառայողների վերադասարանում համակարգի գնահատումը

2013 թվականին հերթական վերապատրաստումն անցել է 1390 համայնքային ծառայող, որից 966-ը՝ պետական բյուջեի, 424-ը՝ համայնքի բյուջեի (Երևանի՝ թվով 423, Վաղարշապատի՝ թվով 1, քաղաքապետարանների համայնքային ծառայողները) հաշվին: 2010 թվականից ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նախաձեռնել է տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների աշխատակիցների վերապատրաստումը, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009–2012 թթ. միջոցառումների ծրագրի մի շարք կետերի կատարման արդյունավետության բարձրացմամբ:

Աղյուսակ 26. 2013թ. ՀՀ համայնքների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոնների թվի տեսակարար կշիռը բնակչության թվի կազմում ըստ Երևան քաղաքի և մարզերի¹⁵⁹

| Հ/հ | Անվանումը | Համայնքային ծառայության պաշտոնների թիվը (հաստատված) | Փաստացի զբաղեցված համայնքային ծառայողների ընդհանուր թիվը ՓԾԹ) | Բնակչության թիվը, հազար մարդ ¹⁶⁰ , (ԲԹ) | ՀՊԹ/ԲԹ, % | ՓԾԹ/ԲԹ, % |
|-----|-----------------|---|---|--|--------------|--------------|
| 1 | Երևան | 1614 | 1477 | 1066.3 | 0,151 | 0,138 |
| 2 | Արագածոտն | 481 | 464 | 133.0 | 0,361 | 0,349 |
| 3 | Արարատ | 569 | 505 | 261.4 | 0,218 | 0,193 |
| 4 | Արմավիր | 648 | 600 | 267.1 | 0,243 | 0,225 |
| 5 | Գեղարքունիք | 586 | 563 | 235.6 | 0,249 | 0,239 |
| 6 | Լոռի | 694 | 645 | 234.7 | 0,296 | 0,275 |
| 7 | Կոտայք | 612 | 569 | 255.3 | 0,240 | 0,223 |
| 8 | Շիրակ | 622 | 499 | 251.3 | 0,248 | 0,199 |
| 9 | Սյունիք | 392 | 373 | 141.7 | 0,277 | 0,263 |
| 10 | Վայոց Ձոր | 188 | 183 | 52.2 | 0,360 | 0,351 |
| 11 | Տավուշ | 376 | 359 | 128.3 | 0,293 | 0,280 |
| | Ընդամենը | 6782 | 6237 | 3026.9 | 0.224 | 0,206 |

¹⁵⁹ www.mta.gov.am

¹⁶⁰ ՀՀ ԱՎԾ, Հրապարակումներ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2014թ.,

2013թ. ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններից վերապատրաստվել են ընդհանուր առմամբ 754 համայնքի ղեկավարներ և ավագանիների անդամներ (աղյուսակ 27):¹⁶¹

Աղյուսակ 27. 2013 թվականին վերապատրաստված համայնքային ծառայողների և ՏԻՄ-երի թիվը ըստ մարզերի

| Հ/հ | Անվանումը | Վերապատրաստվածների թիվը | |
|-----|-----------------|-------------------------|-----------------------------------|
| | | Համայնքային ծառայողներ | Տեղական ինքնակառավարման մարմիններ |
| 1. | Արագածոտն | 51 | 96 |
| 2. | Արարատ | 100 | 75 |
| 3. | Արմավիր | 164 | 72 |
| 4. | Գեղարքունիք | 162 | 71 |
| 5. | Լոռի | 113 | 96 |
| 6. | Կոտայք | 212 | 74 |
| 7. | Շիրակ | 124 | 91 |
| 8. | Սյունիք | 41 | 93 |
| 9. | Վայոց Ձոր | 27 | 42 |
| 10. | Տավուշ | 64 | 43 |
| | Ընդամենը | 967 | 754 |
| 11. | Երևան | 423 | - |
| | Ընդամենը | 1390 | 754 |

2013 թվականին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների վերապատրաստում իրականացրել է Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտը (աղյուսակ 28), համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստումը՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիան (աղյուսակ 29), իսկ մարզերի համայնքների համայնքային ծառայողներին՝ Հայաստանի համայնքների միությունը:

Աղյուսակ 28. 2013 թվականին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերապատրաստված համայնքային ծառայողների թվաքանակն ըստ բնագավառի¹⁶²

| Բնագավառը | Համայնքային ծառայողների թվաքանակը |
|--|-----------------------------------|
| Ընդհանուր և իրավական հարցերի | 29 |
| Ֆինանսատնտեսական հարցերի | 135 |
| Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության հարցերի | 53 |
| Սոցիալական հարցերի | 42 |
| Ընդամենը | 259 |

¹⁶¹ www.mta.gov.am

¹⁶² www.iem.am

Աղյուսակ 29. 2013թ. վերապատրաստում անցած համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների թիվը

| Փաստացի հայտերի թիվ | Վերապատրաստված համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների թիվը | | Չվերապատրաստված համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների թիվը | |
|----------------------|---|----------------------|--|--------------------|
| 800 | 754 | 175 համայնքի ղեկավար | 46 | 6 համայնքի ղեկավար |
| | | 579 ավագանու անդամ | | 40 ավագանու անդամ |
| խմբերի թիվ 32 | | | | |

6.4 Միջազգային աջակցությունը

Տեղական ինքնակառավարման ոլորտի կայացմանն ու զարգացմանը նպաստող գործոնների թվում, 2013 թվականին նույնպես, շարունակում են մեծ դեր խաղալ Հայաստանում տարբեր առաքելություններ իրականացնող միջազգային կազմակերպությունները և նրանց հայաստանյան մասնաճյուղերը:

2013 թվականին ՀՀ համայնքներում շարունակվել է մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից 2008-2013 թվականների համար նախատեսված ծրագրերի¹⁶³ իրականացումը (համաֆինանսավորմամբ), որի վերաբերյալ տարեկան կտրվածքով անհրաժեշտ տեղեկատվությունը բացակայում է (աղյուսակ 30):

Տեղական ինքնակառավարման համակարգում գործող միջազգային կազմակերպությունները, նրանց կողմից իրականացվող ծրագրերը՝ ըստ ոլորտների, սարածածրջանների և ներդրումների ուղղությունների

2013 թվականի ընթացքում շարունակվել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ:

ԳՄՀԸ-ի (GIZ) հետ՝ «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում ՀՀ 60 համայնքներում ներդրվել է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ), այդ համայնքներին տրամադրվել է համակարգչային տեխնիկա և իրականացվել է ՀԿՏՀ-ն շահագործող համայնքային ծառայողների ուսուցում:

ԵՄ աջակցությամբ իրականացվող Վրաստան-Հայաստան տարածաշրջանային համագործակցության ծրագրի շրջանակներում սկսվել են համատեղ գործողությունների ծրագրի (Join Operational Programme) մշակման աշխատանքները:

¹⁶³ http://mta.gov.am/u_files/file/norutyunner/intervi%D0%B5w%20dec%202013/total_2008-2013t%20new.pdf

Աղյուսակ 30. 2008-2013 թթ. ՀՀ համայնքներում իրականացված ծրագրերի վերաբերյալ*

| Հ/հ | Իրականացնող կազմակերպություն | Ծրագրում ընդգրկված համայնքների քիվը | Ֆինանսավորման չափը (ՀՀԴ) | Համաֆինանսավորման չափը (ՀՀԴ) |
|-----|---|-------------------------------------|--------------------------|------------------------------|
| 1. | Հայաստանի Մարտահրավերներ - Հայաստան (ՀՄՀ-Հայաստան) | 29 | 1.880.085.569 | 282.012.835 |
| 2. | Համաշխարհային բանկ «Երրորդ կարգի ոռոգման ցանցերի վերականգնում» ծրագիր | 19 | 1.505.758.841 | 88.400.083 |
| 3. | Համաշխարհային բանկ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիր | 55 | 8659.98.000 | 2.163.980.000 |
| 4. | «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾՎԿԳ» ՊՀ | 38 | 59.070.268.625 | 181.649.876 |
| 5. | Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ (ՀՄՆՀ) | 241 | 18.500.000.000 | 1.650.000.000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 382 | 36.451 մլրդ | 4.365 մլրդ |

*Աղբյուրը՝ http://mta.gov.am/u_files/file/norutyunner/intervi%D0%B5w%20dec%202013/total_2008-2013t%20new.pdf

2013թ. սեպտեմբերի 27-ին Ուկրաինայի Հանրապետության մայրաքաղաք Կիևում կայացել է Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագրեր իրականացնող սահմանամերձ երկրների համագործակցության լավագույն փորձի ներկայացում: Մեմբերին մասնակցել են փորձագետներ Ուկրաինայի Հանրապետության կողմից, ներկայացուցիչներ Բելառուսի, Մոլդովայի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կողմից: Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության այս ռազմավարությունը, որը մշակվել է ԵՀ-ի կողմից համագործակից երկրների հետ խորհրդակցությունների արդյունքում, ներկայացնում է Հայաստանի և Վրաստանի, Ադրբեջանի և Վրաստանի, Բելառուսի և Ուկրաինայի, Մոլդովայի և Ուկրաինայի միջև իրականացվելիք, ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող տարածքային զարգացման ծրագրերի գերակայությունները, ներառման ենթակա շրջաններին ներկայացվող պահանջները, քիրախ խմբերը, ֆինանսական շրջանակը և կառավարման առանցքային հիմնահարցերը:

Մեմբերի ընթացքում մասնակիցներին ներկայացվել է Համատեղ գործառնական ծրագիրը (JOP), քննակվել են ծրագրի մշակման և հաստատման վերաբերյալ հարցեր: Մեմբերի ընթացքում քննարկվել են նաև հարցեր Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ տարածաշրջանների համագոր-

ծակցության շրջանակի վերաբերյալ. վերջիններս քննարկվել են նաև 2013 թվականի հոկտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության Ստեփանավան քաղաքում: Քննարկվել են հետևյալ հարցերը. «Գերակայություններ», «Գործառնական նպատակներ», «Սահմանամերձ շրջաններում տեղական համայնքների կենսապայմանների բարելավում», «Տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացում», «Համատեղ որոշումների ընդունման հանձնաժողովի գործառնությունները»:

Տարածքային համագործակցության չորս ծրագրերի ընդհանուր բյուջեն կազմելու է 12.5 միլիոն եվրո: Այդ գումարի մինչև 7%-ը կծախսվի ծրագրի կառավարման վրա, իսկ մնացած 11.625 միլիոն եվրոն կտրամադրվի համագործակցության ծրագրերի իրականացմանը (աղյուսակ 31): Տարածքային համագործակցության չորս ծրագրերի ֆինանսավորման մոտավոր բաշխումը կատարվել է ըստ մասնակից շրջանների բնակչության թվի, տնտեսական և սոցիալական զարգացման մակարդակի և ծրագրերի իրականացման կարողության:

Աղյուսակ 31. ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության աջակցության ծրագրի» ֆինանսական շրջանակը

| Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագիր | Հատկացվող բյուջե (միլիոն €) |
|--|-----------------------------|
| Հայաստան-Վրաստան | 1.8 |
| Ադրբեջան-Վրաստան | 1.8 |
| Բելառուս-Ուկրաինա | 4.025 |
| Մոլդովա-Ուկրաինա | 4.0 |
| Ընդամենը | 11.625 |

Եվրոպայի Խորհրդի երևանյան գրասենյակի հետ համատեղ նոյեմբերի 11-12-ին Երևանում կազմակերպվել են քննարկումներ, որտեղ ներկա եվրոպական փորձագետների կողմից ներկայացվել են իրենց երկրներում իրականացված վարչատարածքային բարեփոխումների մանրամասների, համայնքների խոշորացման ընթացքում առաջացած խնդիրների, դրանցից խուսափելու, բարեփոխումների իրականացման առավել նպատակահարմար ժամկետների, Հայաստանում հնարավոր խոշորացման մոդելների վերաբերյալ զեկույցներ: Այդ զեկույցում ներկայացված փորձագիտական առաջարկությունները հետագայում չափազանց կարևոր ուղեցույց կարող են հանդիսանալ Հայաստանում բարեփոխումների իրականացման ամբողջ ընթացքում:

Հունիսի 19-ին կայացել է «Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում» թեմայով միջազգային համաժողովը, որը կազմակերպվել է Եվրոպայի խորհրդում Հայաստանի նախագահության շրջանակում: Համաժողովի ընթացքում քննարկվել են ԵԽ անդամ երկրներում տեղական մակարդակում

մասնակցային ժողովրդավարության հետ կապված ներկա իրավիճակը, մասնակցային ժողովրդավարության դերը՝ տեղական իշխանությունների գործունեության արդյունավետության բարձրացման հարցում, տեղական մակարդակում մասնակցային ժողովրդավարության ամրապնդման ուղիները, ներկայացվել է նաև ԵԽ անդամ երկրներում այս ոլորտում առկա դրական փորձը:

ՀՀ կառավարությունը, համագործակցելով **Ասիական զարգացման բանկի** հետ, Հայաստանում իրականացնում է «**Կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավման ներդրումային ծրագիրը**», որի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման նախարարության առաջարկով տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով **ՔՈՎԻ (COWI) ինժեներական խորհրդատվական ընկերության ներկայացուցիչներից ձևավորված խորհրդատուների թիմը** մշակել և ներկայացրել է «Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական զարգացման պլանը, ճանապարհային քարտեզը և երկարաժամկետ ներդրումային պլանը» հաշվետվությունը, կազմակերպվել են հանրային քննարկումներ Գյումրի և Վանաձոր քաղաքներում ՀԿ-ների, շահագրգիռ գերատեսչությունների մասնակցությամբ, որի արդյունքում «Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական զարգացման պլանը, ճանապարհային քարտեզը և երկարաժամկետ ներդրումային պլանը» հաշվետվությունը խորհրդատուների կողմից լրամշակվել է: Վերջնական հաշվետվության մեջ ներառված են աղբահանության իրականացման տարածաշրջանային աղբավայրերի 5 մոդելներ՝ տարբերակներ և ներկայումս քննարկման փուլում են ընտրության աշխատանքները, թե նշված տարբերակներից որն է տնտեսապես նպատակահարմար ՀՀ-ում իրականացնելու համար¹⁶⁴:

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ Հայաստանում շարունակվել է «Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման» ծրագիրը, որն իրականացվում էր 2010թ.-ից «Զառու-թերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից: Հայաստանի տարբեր մարզերում գտնվող 43 համայնքներում կյանքի կոչվեցին մի շարք համայնքային զարգացման ծրագրեր, որոնք նպաստեցին ՏԻՄ-երի հզորացմանը, համայնքային կյանքի աշխուժացմանը, համայնքային ծառայողների մասնագիտական կարողությունների զարգացմանը: ՀՀ համայնքներում գնումների իրականացման գործընթացի կանոնակարգման նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարության առաջարկով նույն ծրագրի շրջանակներում «Ամերիա» ՓԲԸ-ն իրականացրել է համայնքներում գնումների իրականացման գործընթացի փաստացի վիճակի ուսումնասիրություն և բացահայտել գնումների գործընթացի առանձնահատկությունները համայնքներում, որոնք պայմանավորված են համայնքի բնակչության թվաքանակով, քաղաքային/գյուղական համայնք լինելու հանգամանքով, աշխարհագրական դիրքով, տարեկան գնումների ծավալով, նախկին փորձառությանը: Ուսումնասիրության արդյունքում

¹⁶⁴ www.mta.gov.am

արվել են մի քանի առաջարկություններ, որոնցից մեկը վերաբերում էր համայնքային այն ծառայողների վերապատրաստմանը, որոնք ընդգրկված են գնումների գործընթացում:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013թ. դեկտեմբերի 24-ի «Համայնքային գնումների կազմակերպման և իրականացման բնագավառում համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագիրը հաստատելու մասին» N 166-Ա հրամանով հաստատված ծրագրով հնարավոր կդառնա 2014թ. ընթացքում վերապատրաստել ՀՀ մարզերի քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերում համայնքային գնումների կազմակերպման և իրականացման պատասխանատու համայնքային ծառայողների:

ՄԱԿ-ի «Առևտրային աջակցություն Կենտրոնական Ասիայի, Հարավային Կովկասի և ԱՊՀ երկրներին (Հայաստան)» ծրագիրը մեկնարկել է 2011-ին և ավարտվել 2013-ին: Ծրագիրն իրականացվել է ՀՀ Տավուշի մարզում, ունի ռազմավարական և առանցքային նշանակություն դեպի ՌԴ և ԱՊՀ այլ երկրներ, ինչպես նաև Եվրոպա և Վրաստանի միջով Թուրքիա բեռնափոխադրումների համար: Ֆինլանդիայի կառավարության և ՓՄՉ ՁԱԿ համագործակցությամբ ՄԱԶԿ-ը աջակցել է տնտեսական զարգացմանը՝ խթանելով առևտուրը Տավուշի մարզում՝ ստեղծելով հանրային ոլորտի մարմինների կարողություններ և գործարար աջակցման հաստատություններ առևտրի և արտահանման խթանման համար, հզորացրել շուկայի տեղեկատվական կենտրոնի կարողությունները հաճախորդներին համապատասխան ծառայությունների մատուցման համար: Ծրագրի իրականացման արդյունքում 150 – ից ավելի շահառուներ ստացան մասնագիտացված դասընթացներ բիզնեսի պլանավորման, ագրովերամշակման, ագրոբիզնեսի, չոր մրգերի արտադրման և ջերմոցային տեխնոլոգիաների վերաբերյալ, ստեղծվեց «առցանց շուկա» վեբ պորտալը՝ <http://www.marketplace.smednc.am/>, որն ունի ավելի քան 3,600 գրանցված օգտատերեր, չոր մրգերի արտադրությամբ զբաղվող 14 անձինք ստացան համապատասխան սարքավորումներ: Պտղավան համայնքի 17 տնային տնտեսություններ և մարզի այլ համայնքերի 12 տնային տնտեսություններ ստացան 120մ² ջերմոցներ՝ կաթիլային ռոզգմամբ և բարձրորակ բուսական տնկիներով: Ծրագրի ֆինանսավորումն իրականացրել է Ֆինլանդիայի կառավարությունը՝ 330,000 EUR, որից 2013թ. ծախսված միջոցները կազմել են 174,759.61 EUR¹⁶⁵.

2013թ. ՄԱԶԿ-ն նաև աջակցել է Հայաստանում գյուղատնտեսական մարդահամարի անցկացման ծրագրին՝ ապահովելով տեխնիկական օժանդակություն և ստեղծելով ազգային հաստատությունների կարողություններ: Ծրագիրը մեկնարկել է 2013թ և կավարտվի 2014թ.: Այդ նպատակով 2013թ. ֆինանսավորումը կազմել է \$ 232,612.4¹⁶⁶:

¹⁶⁵ http://www.am.undp.org/content/armenia/en/home/operations/projects/poverty_reduction/aid-for-trade-for-central-asia-south-caucasus-and-western-cis-.html

¹⁶⁶ http://www.am.undp.org/content/armenia/en/home/operations/projects/poverty_reduction/agricultural-census.html

Եվրոպայի խորհուրդ – Հայաստան համագործակցության շրջանակներում 2013թ. հոկտեմբերին մեկնարկել է «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը, աջակցություն տեղական ինքնակառավարման բարեփոխումներին, տեղական իշխանությունների կարողությունների զարգացում, տեղերում ընտրված ներկայացուցիչների առաջնորդության հզորացում» ծրագիրը: Ծրագրի տևողությունը՝ 36 ամիս, բյուջեն՝ 1.8 միլիոն եվրո, դոնորը՝ Դանիայի կառավարություն, գործընկերները՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, Ֆինանսների նախարարություն, Ազգային ժողով, Հայաստանի տեղական իշխանություններ, ՏԻՄ-երը ներկայացնող միություններ, քաղաքացիական մասնակցության մեջ ներգրավված ՀԿ-ներ, Տեղական ժողովրդավարական գործակալությունների ասոցիացիա (ALDA): Ծրագիրը նպատակ է հետապնդում Եվրոպայի խորհրդի իրավական փորձագիտական կարծիքը, քաղաքական խորհրդատվությունը և աջակցությունը տրամադրել տեղական ինքնակառավարման բարեփոխումների գործընթացին՝ այդ թվում վարչատարածքային բարեփոխումների նախապատրաստմանը, ինչպես նաև զարգացնել տեղական իշխանությունների կարողությունները: Առաջին բաղադրիչը (Աջակցություն տեղական ինքնակառավարման բարեփոխումներին) նպատակ ունի ՏԻՄ ոլորտի հայաստանյան օրենսդրությունը ներդաշնակեցնել եվրոպական ստանդարտներին: Երկրորդ բաղադրիչը (տեղական իշխանությունների կարողությունների զարգացում) ուղղված է տեղական իշխանությունների ինստիտուցիոնալ կարողություններին և ծառայությունների մատուցման հնարավորություններին: Երրորդ բաղադրիչը (տեղերում ընտրված ներկայացուցիչների առաջնորդության հզորացում) նպատակ ունի բարելավել տեղական ընտրված ներկայացուցիչների առաջնորդության և կառավարման կարողությունները և ձևավորել համագործակցության ոգի ՏԻՄ-երի միջև¹⁶⁷:

Միջազգային կազմակերպությունների գործունեության համակարգվածության և միասնականության գնահատումը

ՀՀ-ում ծրագրեր իրականացնող տարբեր միջազգային կազմակերպությունների դերը շարունակում է զգալի մնալ ՀՀ համայնքներում իրականացվող տարատեսակ ծրագրերի առումով: Նրանք հիմնականում իրենց գործունեությամբ ձգտում են անշրջելի դարձնել ժողովրդավարության և ազատական տնտեսության սկզբունքներն՝ անցումային շրջանում գտնվող մեր երկրում: Իրենց առաքելություններն իրականացնելիս, նրանք համագործակցում են ՀՀ կառավարության, ՏԻՄ-երի, հաճախ նաև՝ միմյանց հետ: Սակայն, դեռևս նրանց գործունեության արդյունավետությունը հաճախ տուժում է իրականացվող ծրագրերի և համայնքային առաջնահերթ կարիքների չհամընկնելու պատճառով: Իրականացվող ծրագրերը հաճախ կրում են ոչ ինստիտուցիոնալ բնույթ:

¹⁶⁷ http://www.coe.am/index.php?cat_id=59

7. Համայնֆային ծառայությունների մասուցումը

2013 թվականի ընթացքում համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների շրջանակներում բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների գծով կատարված աշխատանքները ներկայացված են ըստ առանձին ոլորտների:

7.1 Համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունները

Կանչադատում և բարեկարգում

2013 թվականին մշակվել և Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի գեղարվեստի հանձնաժողովի հավանությանն է արժանացել «Երևան քաղաքի գովազդային վահանակների տեղադրման առանձնահատկությունները և համաչափությունները» հայեցակարգային ուղեցույցը: Դրանով կանոնակարգվել են արտաքին գովազդի վահանակների և կրիչների տեղադրման չափորոշիչները, տառատեսակները, համաչափությունները, դրանց վրա կրվող ղեկորատիվ տարրերը, դրանց տեղադրման վայրերը: Լայնածավալ աշխատանքներ են իրականացվել մայրաքաղաքի բոլոր վարչական շրջաններում՝ շենք-շինությունների արտաքին տեսքը խաթարող ոչ արդիական գովազդային միջոցների, ինչպես նաև ապօրինի տեղադրված և «Գովազդի մասին» ՀՀ օրենքին հակասող գովազդային վահանակների ապամոնտաժման ուղղությամբ: Ապամոնտաժվել է շուրջ 3000 ցուցանակային գովազդ: Դրանք փոխարինվելու են քաղաքային չափերի արդիական գովազդային միջոցներով¹⁶⁸:

Մշակվել է Երևան քաղաքի արտաքին ձևավորման հայեցակարգը, որը բաղկացած է 2 մասից՝ տոնական ձևավորում և պետական ու պաշտոնական այցերի ժամանակ Երևան քաղաքի ձևավորում: Մայրաքաղաքում տոն և հիշատակի օրերին մվիրված միջոցառումների ժամանակ իրականացվում են վարչական շրջանների արտաքին ձևավորման աշխատանքներ՝ համապատասխան տարրերի կիրառմամբ: Հայաստանի Հանրապետություն օտարերկրյա նախագահների պետական և պաշտոնական այցերի, ինչպես նաև միջազգային կառույցների ղեկավարների այցերի ժամանակ իրականացվել են դրոշակազարդման աշխատանքներ:

Մայրաքաղաքի բոլոր վարչական շրջաններում իրականացվում են քաղաքային կահավորանքի տարրերով համալրման աշխատանքներ:

Լայն կիրառություն են ստացել հայտարարությունների համար նախատեսված ցուցատախտակները, որի նպատակն է Երևանում քաղաքացիներին հնարավորություն տալ տեղադրել անվճար հայտարարություններ՝ միաժամանակ նպաստելով շենքերի պատերին և էլեկտրասյուների վակցված հայտարարությունների

¹⁶⁸ http://www.arlis.am/Annexes%5C4%5CER10_13hav86.pdf Երևանի զարգացման 2014 թվականի ծրագիր

նվազեցմանը, այնուհետև՝ վերացմանը: 2013 թվականին 12 վարչական շրջաններում տեղադրվել է շուրջ 200 ցուցատախտակ:

Իրականացվել են նաև պատերի նկարազարդման և գեղագիտական ձևավորման աշխատանքներ: Նկարազարդման աշխատանքներին մասնակցել են նաև կամավորները:

Բակային տարածքների նկարազարդմանը զուգընթաց, իրականացվել է կամարանցումների վերանորոգման, գունազարդման և լուսավորման ծրագիր: Կենտրոն, Արաբկիր, Շենգավիթ, Էրեբունի վարչական շրջաններում վերանորոգվել և գունազարդվել է շուրջ 180 կամարանցում:

2013թ. այգիների ստեղծման և բարեկարգման աշխատանքներ են իրականացվել Երևանի Ազատամարտիկների 5-րդ նրբանցքի և Նոր Արեշի 22-րդ փողոցի հատման մասում (Էրեբունի վարչական շրջան), Տիգրան Մեծի այգում (Նոր Նորք վարչական շրջան) և Շիրակի փողոցի հ. 12, 14 շենքերի միացյալ բակում (Շենգավիթ վարչական շրջան), Աճառյան և Մյասնիկյան փողոցների հատման մասում (Ավան վարչական շրջան)¹⁶⁹:

2013թ. Երևանում իրականացվել են 16հա սիզամարգերի բարեկարգման (հողի վերին շերտի փոխում, վերացանքս, ոռոգում) աշխատանքներ, որից 4հա տարածքում կատարվել են հիմնովին վերականգնման աշխատանքներ: Ստեղծվել են 4 հեկտար նոր սիզամարգեր՝ Հալաբյան, Գ. Բեկ փողոցների, Իսակովի պողոտայի հարակից տարածքում, Մյասնիկյան պողոտային կից պուրակում: Շուրջ 70հա կանաչ տարածք ոռոգելու համար կառուցվել են նոր ոռոգման ցանցեր և պոմպակայաններ¹⁷⁰:

Նոյեմբեր ամսին մայրաքաղաքի Դավթաշեն, Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում իրականացվել է ծառատունկ: Աշնանային ծառատունկին Երևանում 15000 ծառ և նույնքան էլ ծաղկող թուփ է տնկվել, ընդ որում, 12000-ը՝ վարդ¹⁷¹:

Ապրիլի 3-ին ծառատունկ էր կազմակերպվել Իջևանի Ազատամարտիկների հրապարակին հարող տարածքում, որին մեծ ոգևորությամբ ու ուրախությամբ մասնակցեցին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողները, ավագ դպրոցի սաները և «Երիտասարդ Տավուշ» հասարակական կազմակերպության կամավորները: Միջոցառումը նախաձեռնել էր միջազգային հարաբերությունների Ազգային ժողովրդավարության ինստիտուտը (NDI)՝ Տավուշի մարզպետարանի, Իջևանի քաղաքապետարանի և «Երիտասարդ Տավուշ» հասարակական կազմակերպության հետ համատեղ¹⁷²:

Թաթուլ, Չովասար և Հարթավան համայնքներում «Մաքուր ջուր և էներգիա», «Վորլդ Վիժըն» կազմակերպությունների ներդրումներով և համայնքների համաֆինասավորմամբ վերակառուցվել է համայնքների գիշերային լուսավորության համակարգը, նոր տեխնոլոգիական տնտեսող լամպերի միջոցով: Այդ նպատակի համար ծախսվել է 15 մլն. դրամ: «Վորլդ Վիժըն» կազմակերպության համաֆինան-

¹⁶⁹ http://www.arlis.am/Annexes%5C4%5CER10_13hav86.pdf Երևանի զարգացման 2014 թվականի ծրագիր

¹⁷⁰ Նույն տեղում

¹⁷¹ <http://www.a1plus.am/79154.html>

¹⁷² <http://tesankyun.am/2013/04>

սավորմամբ 28.6 մլն. դրամով Թալին քաղաքում կառուցվել է մանկական զբոսայգի: Գյումրի քաղաքում վերանորոգվել են 5.1 կմ ընդհանուր երկարությամբ թվով 7 փողոցներ և 13682 քառ.մ. մակերեսով թվով 2 հրապարակներ, Մարալիկ քաղաքում՝ 1.0 կմ ընդհանուր երկարությամբ թվով 1 փողոց¹⁷³:

Աղբահանություն

2013թ. ընթացքում Երևանի փողոցներում, կանգառներում, պուրակներում և այլ մարդաշատ վայրերում տեղադրվել է շուրջ 910 աղբաման¹⁷⁴:

Գնահատելով ռիսկերը, ինչպես նաև հաշվի առնելով ոլորտում ունեցած փորձը և առկա խնդիրները՝ նպատակահարմար է գտնվել Երևան քաղաքի սանմաքրման և աղբահանության դաշտը բաժանել արևելյան և արևմտյան հատվածների: Դա նպատակ է հետապնդում ազատ մրցակցային դաշտ ստեղծել հնարավոր շահագրգիռ օպերատորների համար՝ մայրաքաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման (ներառյալ՝ ձնռան ամիսներին) ոլորտում առկա հիմնախնդիրները լիարժեք և արդյունավետ լուծելու, ինչպես նաև ոլորտում ժամանակակից չափանիշներին համապատասխան կառավարման համակարգներդնելու և որակյալ ծառայություններ ապահովելու համար:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման, ներառյալ ձնռան ամիսների, ծառայությունների ձեռքբերումը խմբավորվել է 2 չափաբաժիններով.

1) Աղբահանություն և սանիտարական մաքրում, ներառյալ ձնռան ամիսներին, Երևան քաղաքի արևելյան հատվածում (Արաբկիր, Ավան, Էրեբունի, Քանաքեռ-Զեյթուն, Նորք- Մարաշ, Նոր Նորք և Նուբարաշեն վարչական շրջաններ):

2) Աղբահանություն և սանիտարական մաքրում, ներառյալ ձնռան ամիսներին, Երևան քաղաքի արևմտյան հատվածում (Աջափնյակ, Դավթաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջաններ):

Գնման ընթացակարգի գնման հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Էկոգրուպ» ՍՊԸ և «ԼԼ Միլյոբոնսուլտ ԱԲ» ընկերության կոնսորցիումը, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ «Սանիտեկ» ընկերությունը (Լիբանան): Երևանի քաղաքապետարանը վերոնշյալ ընկերությունների հետ կնքել է 10 (տասը) տարի ժամկետով պայմանագրեր¹⁷⁵:

Հայ-Գերմանական ֆինանսական համագործակցության շրջանակներում իրականացվում է «Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման հայեցակարգ, ք. Վանաձոր» ծրագիրը: Ծրագրի փորձագետների կողմից նոր աղբավայր կառուցելու համար հավանության է արժանացել Քարաձոր համայնքի հարակից տարածքը:

Չսահմանված տեղերում և վայրերում աղբը թափելու համար Արզական,

¹⁷³ <http://shirak.gov.am/reports/>, ՀՀ Շիրակի մարզի 2013 թվականի սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարզպետի գործունեության մասին տարեկան հաշվետվություն

¹⁷⁴ http://www.arlis.am/Annexes%5C4%5CER10_13hav86.pdf Երևանի զարգացման 2014 թվականի ծրագիր

¹⁷⁵ Նույն տեղում

Բյուրեղավան, Գառնի և Սուլակ համայնքների ղեկավարների կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տույժեր¹⁷⁶:

Բնակելի և ոչ բնակելի սարածքների լիցենզիանում

2013թ. Երևան քաղաքում գովազդային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում բազմաբնակարան շենքերի մուտքերում փակցվել են շինությունների սեփականատերերի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկման պաստառներ: Կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների արդյունքում Երևանի վարչական շրջաններում համատիրություններ են միավորվել: Գույքագրվել է բազմաբնակարան շենքերի թվով 847 վթարային շքապատշգամբ՝ աշխատանքային ծրագրերում դրանք ընդգրկելու համար: Վերանորոգվել է 1262 շքամուտք: 2013թ. ընթացքում վերանորոգվել է 80547քմ հարթ և 58350քմ թեք տանիք, վերանորոգվել է 76 շքերթային պատշգամբ¹⁷⁷:

Ամբողջովին վերանորոգվել են Մասիս քաղաքի II թաղամասի N28 և N31 շենքերի տանիքները:

2013թ. տարեվերջին, Վանաձորի ավագանու և քաղաքապետի կողմից լուծարվեցին թաղամասային հիմնարկները և ձեռնամուխ եղան նոր համատիրությունների ստեղծման գործընթացին: Վանաձոր համայնքի համատիրությունների կողմից սպասարկվող բազմաբնակարան շենքերի սպասարկման վարձավճարների գանձման 2013թ. պլանային թիվը կազմում է 173,632,800 դրամ, փաստացի գանձումը կազմում է 135,632,576 դրամ՝ 78.12%: Վանաձոր համայնքի ֆինանսավորմամբ «Վանաձորի բազմաբնակարան շենքեր և բակեր» հիմնադրամի կողմից Վանաձոր քաղաքի բազմաբնակարան շենքերի շքամուտքերում 2013 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ տեղադրվել է թվով 324 ֆոտոէլեմենտով լուսավորության համակարգ: (2010-2013թթ. տեղադրվել է ընդամենը 2,500 համակարգ)¹⁷⁸:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով համայնքի համաֆինանսավորմամբ իրականացվել են Աշոցք համայնքի մանկապարտեզի մեկ մասնաշենքի հիմնանորոգման, ջեռուցման համակարգի անցկացման, Պեմզաշենի մանկապարտեզի շենքի վերանորոգման և գույքի ձեռք բերման աշխատանքները¹⁷⁹:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով և համայնքների համաֆինանսավորմամբ կառուցվել է Ոսկեպարի համայնքային կենտրոնը՝ 80,0 մլն դրամ արժեքով, կառուցվում են Վ.Կ.Աղբյուրի մանկապարտեզը՝ 80.0մլն. դրամ արժեքով, Ն.Կ.Աղբյուրի համայնքային կենտրոնը՝ 110.0 մլն դրամ

¹⁷⁶ <http://kotayk.gov.am/files/docs/6681.pdf>, ՀՀ Կոտայքի մարզպետի հաշվետվությունը 2013 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

¹⁷⁷ http://www.arlis.am/Annexes%5C4%5CER10_13hav86.pdf, ՀՀ Երևան քաղաքի ավագանու որոշումը հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

¹⁷⁸ <http://lori.gov.am/files/docs/6424.pdf>, ՀՀ Լոռու մարզպետի 2013 թվականի աշխատանքային գործունեության հաշվետվություն

¹⁷⁹ Նույն տեղում

արժեքով, Թեղուտի մանկապարտեզը՝ 102.0մլն դրամ արժեքով, և Ոսկևանի մանկապարտեզը՝ 120.0 մլն դրամ արժեքով: Նշված 4 օբյեկտների շինարարական աշխատանքները գտնվում են ավարտման փուլում¹⁸⁰: Վերանորոգվել են նաև Իջևանի թիվ 1 մանկապարտեզը, Գլիլջանի թիվ 4 մանկապարտեզի ջեռուցման համակարգը և Բագրատաշենի մանկապարտեզի տանիքը, Բերդի թիվ 2 մանկապարտեզը: Աղյուսակ 32-ում ներկայացված են 2013 թվականի դրությամբ ՀՀ բնակ-կոմունալ տնտեսության ամփոփ տվյալները:

Բնակարանների միայն 24.1 տոկոսն է կառավարվում համայնքների կողմից, իսկ մնացած մասը կառավարվում են համատիրության, հավատարմագրային և լիազորագրային կառավարիչների կողմից: Վերլուծելով քաղաքային և գյուղական համայնքներում գտնվող և համայնքների կողմից կառավարվող բնակարանների թիվը՝ պետք է փաստել, որ քաղաքային համայնքներում համայնքների կողմից կառավարվող բնակարանների տեսակարար կշիռը 19.9 տոկոս է, իսկ գյուղական համայնքներում համայնքների կողմից կառավարվող բնակարանների տեսակարար կշիռը 94.6 տոկոս է: Այսինքն քաղաքային համայնքներում համատիրությունների, հավատարմագրային և լիազորագրային կառավարիչների կողմից կառավարվող շենքերի տեսակարար կշիռը շատ ավելի մեծ է: Գյուղական համայնքներում բազմաբնակարան շենքերի բնակարանների ճնշող մասը կառավարվում է համայնքների կողմից:

Աղյուսակ 32. 2013 թվականի դրությամբ բնակ-կոմունալ տնտեսության ամփոփ տվյալները¹⁸¹

| | Բազմաբնակարան շենքերի բնակարանային ֆոնդ բնակարանների քանակը | Ընդհանուր մակերեսը 1000մ ² | Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի քանակը | Համատիրության, հավատարմագրային և լիազորագրային կառավարիչների կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի քանակը | Համատիրության, հավատարմագրային և լիազորագրային կառավարիչների կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի քանակը |
|-----------|---|---------------------------------------|---|---|---|
| Տող 1 | Տող 2 | Տող 3 | Տող 4 | Տող 5 | Տող 6 |
| Ընդամենը | 435 427 | 94 52 | 105 107 | 329 536 | 8 069 |
| Քաղաքային | 410 723 | 51 099 | 81 736 | 328 253 | Բացակայում է |
| Գյուղական | 24 704 | 43 553 | 23 371 | 1 283 | Բացակայում է |

Բացի այդ պետք է նկատել, որ ավելացել է համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակը՝ նախորդ տարվա 104456–

¹⁸⁰ <http://tavush.gov.am/reports/>, ՀՀ Տավուշի մարզում 2013 թվականին կատարած աշխատանքների և ներկայացված տնտեսական իրավիճակի մասին

¹⁸¹ <http://armstat.am/file/doc/99489208.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, Բնակարանային ֆոնդ

ից հասնելով 105107-ի: Քաղաքային համայնքներում այդ ցուցանիշը դրսևորել է աճի միտում՝ 81013-ից հասնելով 81736, իսկ գյուղական համայնքներում նվազման միտում՝ 23443-ից հասնելով 23371-ի:

Ջրամատակարարում և ջրահեռացում

2013 թվականին Երևան քաղաքում կատարվել են հեղեղատար (մակերևութային ջրերի հեռացման) ցանցի շահագործման բարելավման աշխատանքներ: Իրականացվել է անձրևընդունիչների, հորերի, խողովակաշարերի մաքրման 7951 գործողություն: Կատարվել է նաև հեղեղատար ցանցի ընդլայնում, կառուցվել և վերակառուցվել են 300մմ տրամագծով 455 գծմ հեղեղատար ցանց և անձրևընդունիչ հորեր¹⁸²:

2013 թվականի ընթացքում վերանոգրվել են Ավանի խմելու ջրագիծը, Հարթավան համայնքի պոմպակայանը, ինչպես նաև Արտենի, Նորաշեն Բազմադրյուր համայնքների խմելու ջրի ներքին ցանցերը:

USAID ֆինանսավորմամբ Արտենի համայնքի խմելու ջրի ցանցի հիմնանորոգման համար հատկացվել է 22 մլն դրամ: Նույն ջրագծի կառուցման համար 10 մլն դրամ է հատկացրել «Վորլդ Վիժն» կազմակերպությունը, իսկ համայնքը հատկացրել է 3 մլն դրամ:

2013 թվականի դրությամբ Դիլիջան և Բերդ քաղաքներում ջրամատակարարումն իրականացվում է բաց աղբյուրներից մաքրման կայանների միջոցով, Իջևան և Նոյեմբերյան քաղաքներում կապտաժներից, ինքնահոս և մեխանիկական եղանակներով՝ համապատասխանաբար 85% և 15% հարաբերությամբ¹⁸³:

Ջեռուցում

2013թ. մայրաքաղաքի բոլոր գրադարաններն ապահովվել են ջեռուցման համակարգերով: Ջեռուցվել են նաև Երևան քաղաքի ենթակայության 2 երաժշտական դպրոց և Ա. Գաբրիելյանի անվան արվեստի դպրոցը: 2012-2013թթ. ընթացքում ծրագրի նպատակների իրագործման համատեքստում ընտրվել է կենտրոնացված ջեռուցման համակարգին միացված ՏՇԿ սերիայի շենք, իրականացվել է շենքի տեխնիկական վիճակի գնահատում, ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի և համատիրության կողմից համատեղ բնակիչների շրջանում անց է կացվել հարցում, որի համաձայն շենքի բնակիչները համաձայնություն են տվել փորձնական ծրագրի իրականացմանը: Ստեփանավանի 4 մանկապարտեզներում տեղադրվել են ջեռուցման համակարգեր¹⁸⁴:

¹⁸² http://www.arlis.am/Annexes%5C4%5CER10_13hav86.pdf Երևանի զարգացման 2014 թվականի ծրագիր

¹⁸³ <http://tavush.gov.am/reports/>, ՀՀ Տավուշի մարզում 2013 թվականին կատարած աշխատանքների և ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

¹⁸⁴ <http://www.wvarmenia.am/am/adp/show/5>

Հասարակական տրանսպորտի և ճանապարհաշինություն

2013 թվականին սկսվել են Երևան քաղաքի կանգառներում էլեկտրոնային չվացուցակների տեղադրման աշխատանքները: Տեղադրվել է 21 չվացուցակ: Հաշվի առնելով քաղաքային վերգետնյա էլեկտրատրանսպորտի դերը ներքաղաքային ուղևորափոխադրումների ընդհանուր գործընթացում, այդ թվում բնապահպանական խնդիրների տեսանկյունից և կարևորելով դրա հետագա զարգացման անհրաժեշտությունը՝ նոր երթուղային ցանցով ավելացվել է տրոլեյբուսային երթուղիների քանակը՝ հասցնելով 10-ի: Շարունակվել են աշխատանքները մայրաքաղաքի ավտոբուսային հավաքակազմը համալրելու ուղղությամբ: Մասնավոր կազմակերպությունների կողմից ձեռք են բերվել և մայրաքաղաք ներկրվել 80 «Հունդաի» մակնիշի և թվով 10 «ՊԱՋ» մակնիշի նոր ավտոբուսներ, որոնք շահագործվում են ներքաղաքային երթուղիներում: Նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում անց են կացվել Երևանի ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիների նոր մրցույթներ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության իրականացվել են գործող երթուղիներում շարժակազմերի համալրման և փոխարինման աշխատանքներ¹⁸⁵:

Երևանի Մաշտոցի և Սայաթ-Նովայի պողոտաներում տեղադրված 7 կանգառասարահ փոխարինվել է նոր տիպի կանգառասարահներով, իսկ ապամոնտաժվածները տեղադրվել են այլ կանգառներում: ՀՀ ճանապարհային ոստիկանության հետ համատեղ ուսումնասիրվել է երթևեկության կազմակերպման վիճակը մայրաքաղաքի կենտրոնում: Ելնելով երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման նկատառումներից՝ էական փոփոխություններ են կատարվել Իսահակյան, Խորենացի, Ն. Չարյան փողոցների երթևեկության կազմակերպման սխեմաներում¹⁸⁶:

2013 թվականին իրականացվել են Գանձաքար համայնքի ներհամայնքային 1.0 կմ երկարությամբ ավտոճանապարհի վերանորոգման աշխատանքներ՝ 118.619 մլն դրամ արժեքի սահմաններում¹⁸⁷:

Դիլիջանի քաղաքի համայնքային բյուջեի հաշվին իրականացվել են Դիլիջանի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման, վերանորոգման, խճապատման, մայթերի և զազոնների վերականգնման-բարեկարգման, հենապատերի վերակառուցման, հեղեղատարների մաքրման, ճանապարհային նշանների տեղադրման, նշագծման աշխատանքներ՝ 88.723 մլն.դրամ գումարի սահմաններում¹⁸⁸:

¹⁸⁵ http://www.arlis.am/Annexes%5C4%5CER10_13hav86.pdf Երևանի զարգացման 2014 թվականի ծրագիր

¹⁸⁶ Նույն տեղում

¹⁸⁷ <http://tavush.gov.am/reports/>, ՀՀ Տավուշի մարզում 2013 թվականին կատարած աշխատանքների և ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

¹⁸⁸ Նույն տեղում

Կրթություն և մշակույթ

2013 թվականին Երևան քաղաքում հիմնանորոգվել է 29 մանկապարտեզ, կատարվել են լուսամուտների և դռների փոխարինման, տանիքների և սանհանգույցների վերանորոգման աշխատանքներ¹⁸⁹:

Արտաշատի N6, Հայանիստ, Նարեկ, Ավշար գյուղերի մանկապարտեզներում կառուցվել է ջեռուցման համակարգ: Ավարտվել է Այնթապ գյուղի նոր մանկապարտեզի շենքի կառուցումը¹⁹⁰:

Հուլիսի 4-ին Արմավիր և Մեծամոր քաղաքներում կազմակերպվեց պետական խորհրդանիշների օրվան նվիրված քայլեր՝ երիտասարդական կազմակերպությունների մոտ 400 անդամների և ուսանողության մասնակցությամբ: Երթի մասնակիցները քայլեցին Արմավիր և Մեծամոր քաղաքների կենտրոնական փողոցներով և հետո մասնակցեցին Մեծամորի մշակույթի տանը կազմակերպված համերգին՝ Հայաստանի պարի պետական անսամբլի մասնակցությամբ:

Հոկտեմբերի 8-ին Էջմիածին քաղաքում մեծ շուքով կազմակերպվեց «Էջմիածինի տուն» թատերականացված մասսայական տոնախմբությունը և շքերթը՝ քաղաքապետարանի թատերխմբերի, երգի-պարի համույթների, կրթամաշակույթային հաստատությունների և քաղաքի բնակչության մասնակցությամբ¹⁹¹:

Սևանի և Ֆրանսիայի Իզերի շրջանի Գրենորլ քաղաքների միջև կնքվել է քույր քաղաքների համագործակցության համաձայնագիր: Համագործակցությունը ընթանում է 3 ուղղություններով՝ տուրիզմի զարգացում, առողջապահություն և ֆրանկոֆոնիա: Քույր քաղաքների համագործակցության համաձայնագիր է կնքվել նաև Վարդենիսի և Ֆրանսիայի Իզերի շրջանի Ռոման քաղաքների միջև¹⁹²:

Հայաստանի կինոգործիչների միության կողմից հայտարարված «Հայկական կինոյի միամսյակի» շրջանակներում Գավառ, Մարտունի և Դամբարակ քաղաքներում կազմակերպվել են հայկական ֆիլմերի ցուցադրություններ:

«Իմ Հայաստան» համահայկական փառատոնի շրջանակներում Մարտունի և Սևան քաղաքներում կազմակերպվել են սփյուռքից ժամանած պարային համույթների համերգներ, իսկ Գավառ համայնքում դուդուկահարների համերգ:

Օյունջյան հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվել են Գյումրի քաղաքի արվեստի դպրոցի կառուցման աշխատանքները (փոխանցիկ 2014թ.), իսկ Յուքում ընկերության և Ամասիայի զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ՝ Ամասիայի մանկական արվեստի դպրոցի վերանորոգման աշխատանքները¹⁹³:

¹⁸⁹ http://www.arlis.am/Annexes%5C4%5CER10_13hav86.pdf Երևանի զարգացման 2014 թվականի ծրագիր

¹⁹⁰ <http://ararat.gov.am/files/docs/6505.pdf>, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Արարատի մարզի 2013թ. սոցիալ-տնտեսական վիճակի և մարզպետի գործունեության մասին

¹⁹¹ <http://armavir.gov.am/files/docs/6593.pdf>, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության 2013 թվականի տարեկան աշխատանքային գործունեության վերաբերյալ

¹⁹² <http://gegharkunik.gov.am/files/docs/6748.pdf>, ՀՀ Գեղարքունիաի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի հաշվետվությունը 2013 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին

¹⁹³ <http://shirak.gov.am/reports/>, ՀՀ Շիրակի մարզի 2013 թվականի սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարզպետի գործունեության մասին տարեկան հաշվետվություն

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից հատկացված 25,2 մլն. դրամով վերակառուցվել է Լոր գյուղի Հանո Սահյանի տուն-թանգարանը, իսկ 5,9 մլն. դրամով՝ Գորիսի Ա. Բակունցի տուն-թանգարանի համար կառուցվել է ջեռուցման համակարգ: Ազարակ քաղաքի արվեստի դպրոցի նորոգման և ջեռուցման համակարգի կառուցման նպատակով քաղաքի հիմնադրամի կողմից հատկացվել ու կատարվել են 19,4 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

Վերանորոգման աշխատանքներ են իրականացվել Քարահունջի, Նոր Աստղաբերդի, Գեղանուշի, Կապանի Վաչագան թաղամասի ակումբ-գրադարաններում¹⁹⁴:

Ակնադրյուր համայնքում գտնվող Վարդան Մամիկոնյանի կողմից տնկված ծառի մոտ յուրաքանչյուր տարի կազմակերպում են գորակոչիկներին բանակ ճանապարհելուն նվիրված «Վարդանանց կանչը» խորագրով միջոցառումներ¹⁹⁵:

Ներքին Ծաղկավանի, Այգեհովիտի, Գետահովիտի, Դիտավանի համայնքային գրադարանների աշխատակիցների համար կազմակերպվել են գործնական սեմինարներ: Մեծ շուքով նշվել է Իջևանի արվեստի դպրոցի 35-ամյակը: Իջևանի արվեստի դպրոցում սկսել է գործել երաժշտական գործիքների բաժինը, որտեղ սովորեցնում են սիրողական մակարդակով նվագել որևէ երաժշտական գործիք¹⁹⁶:

Առողջապահություն

2013թ. «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրի շրջանակում Երևանի ենթակայության 2 մանկական պոլիկլինիկաներում («Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» և «Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ-ներ) անցկացվել են ջեռուցման համակարգեր, ինչպես նաև փոխարինվել են պատուհանները (45900.0 հազ. դրամ՝ Երևանի բյուջե):

«Աջակցություն առողջապահական կազմակերպություններին բժշկական սարքավորումների ձեռքբերման համար» ծրագրով Երևանի ենթակայության մի շարք բուժհաստատություններ համալրվել են շուրջ 44 բուժսարքավորումներով, այդ թվում՝ ուլտրաձայնային հետազոտման սարք, ուլտրաձայնային հետազոտման սարք կարդիոտվիչով, աուդիոմետր, բիրոքիմիական անալիզատու և էլեկտրասրտագիր (70 000.0 հազ. դրամ՝ Երևանի բյուջե):

«Ձեզ համար, կանայք» խորագրով ակցիայի շրջանակում (մարտի 8-ից ապրիլի 7-ը) կանայք անվճար հիմունքներով օգտվել են Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների ծառայություններից: «Երևանյան ամառ» խորագրով ակցիայի շրջանակում (օգոստոսի 1-31-ը) բնակչությանը մատուցվել է անվճար բուժօգնություն սիրտանոթային և այլ հետազոտությունների գծով, անհրաժեշտության դեպքում՝ կատարվել են վիրահատություններ¹⁹⁷:

Սոլակ համայնքում բացվել է շուրջ 2570 բնակչի համար նախատեսված ամբուլատորիա: Կենտրոնը հազեցած է անհրաժեշտ բժշկական սարքավորումներով ու

¹⁹⁴ Նույն տեղում

¹⁹⁵ <http://tavush.gov.am/reports/>, ՀՀ Տավուշի մարզում 2013 թվականին կատարած աշխատանքների և ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

¹⁹⁶ Նույն տեղում

¹⁹⁷ <https://www.yerevan.am/edfiles/files/avagani10.12.13/86-N.pdf>

պարագաներով, կահույքով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Առողջապահության համակարգի արդիականացում» վարկային ծրագրով հիմնանորոգվել են Կոտայքի մարզի Գառնի, Ալափարս, Գեղաշեն համայնքների ամբուլատորիաները¹⁹⁸:

Գեղարքունիքի մարզի Վարդաձոր և Լիճք համայնքների բնակիչները ևս առողջության առաջնային պահպանման ծառայությունները կստանան ժամանակակից հարմարություններով և անհրաժեշտ գործիքներով ու պարագաներով հագեցած ամբուլատորիաներում¹⁹⁹:

Աղավնատուն և Սարդարապատ համայնքներում բացվել են նոր վերանորոգված բժշկական ամբուլատորիաներ:

«Հայաստանի առողջապահական համակարգի արդիականացում ծրագիր-2» հավելյալ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակում Աղավնատան և Հոկտեմբերի ամբուլատորիաները հագեցվել են առողջության առաջնային պահպանման ծառայության մատուցման համար նախատեսված անհրաժեշտ բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով: Դեռևս խորհրդային տարիներին կառուցված երկու ամբուլատորիաների շենքերը գտնվում էին անբարեկարգ վիճակում. չէին գործում ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգերը, վնասված էին տանիքը և հատակը: Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ նախաձեռնված նոր շենքերի կառուցման աշխատանքները մեկնարկել էին 2012թ., ավարտին հասցվել 2013 թ. հունիսին: Արդյունքում Աղավնատուն համայնքում կատարվել է շուրջ 53.8 մլն ՀՀ դրամի ներդրում (49.5 մլն ՀՀ դրամ՝ շինարարություն, 4.3 մլն ՀՀ դրամ՝ բժշկական սարքավորումներ, կահույք և պարագաներ), Սարդարապատ համայնքում՝ շուրջ 56 մլն ՀՀ դրամի ներդրում (51.7 մլն ՀՀ դրամ՝ շինարարություն, 4.3 մլն ՀՀ դրամ՝ բժշկական սարքավորումներ, կահույք և պարագաներ):

Աղավնատան ամբուլատորիան սպասարկում է Աղավնատուն, Ամբերդ, Դողս և Լեռնամերձ համայնքների շուրջ 6167 բնակչի, իսկ Հոկտեմբերի ամբուլատորիան՝ Սարդարապատ համայնքի շուրջ 5300 բնակչի:

Օգոստոս ամսին Նորաբաց համայնքում բացվել է համայնքի նորակառույց ամբուլատորիան: Գյուղի 2190 բնակչությանը սպասարկող ամբուլատորիայի նախկին շենքը կառուցվել էր դեռ 1940թ., վթարային վիճակում էր և չունեի կոմունալ տարրական հարմարություններ²⁰⁰:

Բաղրամյան համայնքում բացվեց ՀՀ կառավարության, Համաշխարհային բանկի առողջապահության բաժնի, ՀՀ առողջապահության նախարարության և Բաղրամյան համայնքի համատեղ ֆինանսավորմամբ կյանքի կոչված նորակառույց ամբուլատորիան: Նախկինում այն գտնվում էր Բաղրամյանի գյուղապետարանի առաջին հարկում՝ զբաղեցնելով 3 սենյակ:

Ոչ պետական միջոցներով, Համաշխարհային Բանկի վարկային ծրագրով, առողջապահության նախարարության ԾԻԳ-ի համագործակցությամբ և գյու-

¹⁹⁸ <http://www.aysor.am/am/news/2013/11/20/moh1/703190>

¹⁹⁹ <http://civilnet.am/2013/08/20>

²⁰⁰ <http://www.panarmenian.net/arm/news/167690/>

դապետարանների 5% համաֆինասավորմամբ կառուցվել և շահագործման են հանձնվել «Մայաթ-Նովայի ԱԱՊԿ», «Նոր Խարբերդի ԱԱՊԿ», «Նորաբացի ԲԱ» ՓԲԸ-ների տիպային շենքերը: Հոլանդիայի «Մենսենքինդերեն» բարեգործական հիմնադրամի միջոցով կառուցվել է Սիփանիկ գյուղի բուժման կաբարձական կետը²⁰¹: Ավարտվել է Վարդաձորի ԱԱՄԿ-ի շենքի հիմնանորոգումը:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից հատկացված 5,1 մլն. դրամի շրջանակներում աշխատանքներ են կատարվել Շաղաթ, Տոլորս, Խոտ, Սառնակունք, Գորայք և Քարահունջ գյուղական համայնքների բուժկետերի սանհանգույցի վերանորոգման ուղղությամբ²⁰²:

Գերզմանասների տաճարում

2013թ. շարունակում է խնդրահարույց մնալ համայնքների տարածքում գերեզմանատների պահպանման հարցը: Գերեզմանատների տարածքները ամեն տարի ընդլայնվում են՝ ստիպելով համայնքներին ավելի շատ հողատարածքներ հատկացնել այդ նպատակի համար: Այսպես 2013թ. սեպտեմբերի 10-ին Երևան քաղաքի ավագանին կայացրեց N47 որոշումը Երևան քաղաքում որոշ հողամասերի նպատակային նշանակության փոփոխության մասին: Ըստ այդ որոշման «Սիլիկյան», «Շահումյան-2», «Կենտրոնական» գերեզմանատների տարածքները ընդլայնվեցին համապատասխանաբար 28833.57, 33220.78 և 1859.95 քառակուսի մետրերով: Համաձայն այդ որոշման, առաջարկվում է գերեզմանատների հողերի օգտագործման, հատկազոտի հաստատման ընթացքում հաշվի առնել էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգ պահպանման հետ կապված հարցերը և իրականացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն: Այդ որոշման համաձայն, առաջարկվում է նաև փոփոխել գերեզմանատներին միավորվող հողերի նպատակային նշանակությունը և միավորվող հողերը դարձնել հատուկ պահպանվող տարածքներ²⁰³:

Տեղական ինքնակառավարման մարմինների վճարներ սահմանելու իրավասությունը

2013 թվականի ընթացքում ՏԻՄ-երի վճարներ սահմանելու իրավասությունը հիմնականում պայմանավորված է եղել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով: 2013 թվականի ընթացքում նվաճված առաջին երկու օրենքներում փոփոխություններ չեն կատարվել:

Այսպես, օրինակ, 2013 թվականին Երևան քաղաքի ավագանին կայացրել է N

²⁰¹ <http://ararat.gov.am/files/docs/6505.pdf>, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Արարատի մարզի 2013թ. սոցիալ-տնտեսական վիճակի և մարզպետի գործունեության մասին

²⁰² <http://syunik.gov.am/files/docs/5813.pdf>, Հաշվետվություն ՀՀ Սյունիքի մարզի 2013 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին

²⁰³ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=85396>, ՀՀ Երևան քաղաքի ավագանու որոշումը հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

90-Ն որոշումը՝ Երևան քաղաքային համայնքում տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին: Այդ որոշմամբ սահմանվեցին Երևանի վարչական տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար դրույքաչափերը՝ ըստ օբյեկտների մակերեսների՝ 50000-300000 դրամի սահմաններում²⁰⁴, իսկ Երևանի ՏԻՄ-երի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ ըստ հողամասերի մակերեսների յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 500 - 500.000 դրամ, գումարած 1500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 50 դրամ:

Սահմանվեց նաև մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար՝ մրցույթների և աճուրդների յուրաքանչյուր մասնակցի վճար՝ 10000 դրամ:

Երևանի ՏԻՄ-երի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար սահմանվեց վճար՝

1) կենցաղային աղբի համար՝ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 200 ՀՀ դրամ,

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 2500 ՀՀ դրամ²⁰⁵:

ՏԻՄ-երը նաև վճարներ են սահմանում համայնքի կողմից մատուցվող այլ ծառայությունների համար: Այսպես, օրինակ, 2013-ին Գյումրի քաղաքում մանկապարտեզների վարձավճարների չափը սահմանվել է 6000-8000 դրամ²⁰⁶:

Այնթապ համայնքի ավագանու որոշման համաձայն Այնթապի մտուր-մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար վարձավճարը սահմանվեց 5000 դրամ, իսկ Այնթապ համայնքում հաշվառում չունեցող յուրաքանչյուր երեխայի համար սահմանվեց 8000 դրամ²⁰⁷:

Քասախ համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 59-Ն որոշմամբ Քասախ համայնքի «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի ամսական ուսման վարձավճարը 2013 թվականի համար սահմանվեց ըստ գործիքների՝ 3000 – 4000 դրամի սահմաններում: Քասախ համայնքի «Արուսյակ» մտուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ամսական վճարի չափը 2013 թվականի համար սահմանվեց 7000 դրամ²⁰⁸:

2013 թվականին Երևան քաղաքում գործող համայնքային ենթակառուցվածքային մանկապարտեզները եղել են անվճար: Մնացած համայնքներում վարձաչափերը տատանվել են 4500-8000 դրամի շրջանակներում: Փետք է նաև փաստել, որ Երևանում գործել են նաև մասնավոր մանկապարտեզներ, որոնք եղել են վճարովի:

²⁰⁴ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=87181>

²⁰⁵ Նույն տեղում

²⁰⁶ <http://www.asparez.am/gyumri-hy/gyumri-kindergartens/>

²⁰⁷ <http://www.ayntap.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=7dfc8a3c-1e38-4766-af11-133c51a78177>

²⁰⁸ <http://www.kasakh.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=a1004be8-4d56-4c65-b277-df5cd94b396e>

7.2 Համայնքային ծառայությունների կառավարում

2013 թվականին համայնքային ծառայությունների կառուցվածքում շարունակում են գերակշիռ մնալ կրթության ծախսերը՝ 28.1 %, ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների ծախսերը՝ 22.0%, և տրանսպորտային ծառայությունների ծախսերը (21.8%) (աղյուսակ 33): Սակայն պետք է փաստել, որ տրանսպորտային ծառայությունների ծախսերի աչափսի մեծ տեսակարար կշիռը հիմնականում պայմանավորված է Երևան քաղաքի հանրային տրասպորտի ծախսերի մեծությամբ: Համեմատության համար կարելի նշել, որ Երևան քաղաքում տրանսպորտային ծախսերը կազմում են 21.6 մլրդ դրամ, իսկ մնացած համայնքերում միասին վերցրած 2.7 մլրդ. դրամ: Հանրային ծառայությունների բոլոր ծախսերի և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը կազմում է 3.54, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը կազմել է 3.60 կամ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերը կազմում են ընդհանուր համայնքային ծառայությունների ծախսերի 22%-ը, իսկ մնացած համայնքային ծառայությունների գծով ծախսերը՝ 78%-ը:

Աղյուսակ 33. Համայնքների բյուջեներում ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռները (հազար դրամ)

| | Ընդամենը համայնքներ | | Երևան քաղաք | | Ընդամենը քաղաքային և գյուղական համայնքներ՝ առանց Երևանի | |
|---|----------------------|---------------|---------------------|---------------|---|---------------|
| | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՄՆԵՐ | 111,443,784.2 | 100.0% | 68,121,545.3 | 100.0% | 43,322,238.9 | 100.0% |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 24,529,303.6 | 22.0% | 6,617,533.1 | 9.7% | 17,911,770.5 | 41.3% |
| 1. Տրանսպորտ | 24,340,850.8 | 21.8% | 21,641,654.4 | 31.8% | 2,699,196.4 | 6.2% |
| 2. Կապ | 0.0 | 0.0% | 0.0 | 0.0% | 0.0 | 0.0% |
| 3. Շրջակա միջավայրի պաշտպանություն | 10,787,970.4 | 9.7% | 7,148,100.4 | 10.5% | 3,639,870.0 | 8.4% |
| 4. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ | 10,043,125.4 | 9.0% | 6,847,124.7 | 10.1% | 3,196,000.7 | 7.4% |
| 5. Առողջապահություն | 171,374.9 | 0.2% | 96,345.7 | 0.1% | 75,029.2 | 0.2% |
| 6. Հանգիստ մշակույթ և կրթություն | 6,712,705.1 | 6.0% | 2,750,458.0 | 4.0% | 3,962,247.1 | 9.1% |
| 7. Կրթություն | 31,301,775.0 | 28.1% | 21,108,007.0 | 31.0% | 10,193,768.0 | 23.5% |
| 8. Սոցիալական պաշտպանություն | 3,556,679.1 | 3.2% | 1,912,322.0 | 2.8% | 1,644,357.1 | 3.8% |
| <i>Ընդամենը հանրային ծառայություններ (1+2+3+4+5+6+7+8)</i> | <i>86,914,480.6</i> | <i>78.0%</i> | <i>61,504,012.2</i> | <i>90.3%</i> | <i>25,410,468.4</i> | <i>58.7%</i> |
| Հանրային ծառայությունների ծախսերի և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը | 3.54 | | 9.29 | | 1.42 | |

2013 թվականին 2012-ի համեմատ մի փոքր նվազել է բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հարաբերակցությունը: Սակայն պետք է փաստել, որ 2013 թվականին ընդհանուր համայնքային ծախսերը աճել են ավելի քան 5 մլրդ. դրամով, ընդ որում՝ Երևան համայնքում բնակչությանը մատուցվող ուղղակի ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են ավելի քան 3 մլրդ. դրամով, իսկ մնացած համայնքների նույնանման ծախսերը աճել են ավելի քան 2 մլրդ. դրամով: Երևան քաղաքում բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հարաբերակցությունը կազմում է 9.29, իսկ բոլոր համայնքների մոտ այդ ցուցանիշը կազմում է 3.54, իսկ եթե նկատի առնվի բոլոր քաղաքային և գյուղական համայնքները, առանց Երևան քաղաքի, ապա այդ ցուցանիշը կազմում է 1.42 կամ, որ նույն է ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասնաբաժինը կազմում է 41.3%, իսկ 2012 թվականին այն կազմել է 40.3%: Հանրային ծառայությունների օպտիմալ կառավարման տեսանկյունից անհրաժեշտ է կրճատել համայնքների վարչական ապարատի ծախսերը, որին կարող է մեծապես նպաստել համայնքների խոշորացումը: Այս մոտեցումը ցայտուն արտահայտվում է Երևանի պարագայում, որի դեպքում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերը ի համեմատություն բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների ընդհանուր հանրագումարում կազմում են 9.7%, իսկ 2012-ին՝ 9.4%՝ նվազելով 0.3 տոկոսային կետով: Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բարելավմանը կարող են նաև մեծապես նպաստել համայնքների կարողությունների զարգացումը և անհրաժեշտ ֆինանսական միջոցներով ապահովվածությունը:

Եզրակացություններ և առաջարկություններ

2013 թվականին, նախորդ տարվա նման, Հայաստանի տեղական ինքնակառավարման բարեփոխումներում էական առաջընթաց չի գրանցվել:

2005թ. սահմանադրական փոփոխություններով նախատեսված օրենսդրական փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել: Տարվա ընթացքում այդպես էլ չընդունվեցին օրենքներ կամ օրենսդրական դրույթներ՝ համայնքների միացման կամ բաժանման սկզբունքների, կարգի և նոր ձևավորված համայնքներում ՏԻՄ-երի ընտրության ժամկետների սահմանման, միջհամայնքային միավորումների ձևավորման, համայնքային արժեթղթերի թողարկման և հյուրանոցային հարկի վերաբերյալ:

Առկա բոլոր պետական ծրագրային փաստաթղթերը (ՀՀ կառավարության ծրագիր, Կայուն զարգացման ծրագիր) պարունակում են գրեթե նույն դրույթները և հիմնականում արտացոլում են սահմանադրական փոփոխությունների օրենսդրական պահանջների ապահովումը:

2013-ին պահպանվել է ՀՀ օրենսդրությունում առկա թերությունը, այն է՝ տեղ-

ական հարկեր սահմանված գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերը շարունակել են սահմանված մնալ օրենքով, դրանց սահմանման իրավունքը, օրենքով նախատեսված շրջանակներում, չի վերապահվել ՏԻՄ-երին՝ ինչպես պահանջում է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան (հոդված 9.3):

2013-ին Հայաստանի վարչատարածքային բաժանման մեջ որևէ փոփոխություն չի կատարվել: Միայն իրականացվել են որոշ ծրագրեր՝ ուսումնասիրությունների մակարդակում:

Տեղական ինքնակառավարման միավորները՝ համայնքները, շարունակում են մնալ խիստ մասնատված և թույլ կարողություններով: Միջհամայնքային համագործակցության զարգացման առումով էական փոփոխություններ չեն գրանցվել: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2013-ին միջհամայնքային միավորումներ չեն ստեղծվել:

Համայնքների ֆինանսական անկախության մակարդակը շարունակում է մնալ ցածր, իսկ սեփականությունը՝ անբավարար և հնացած: 2013 թվականին ևս, ինչպես նախորդ տարիներին, պետական բյուջեին ամրագրվող հարկատեսակներից և պարտադիր վճարներից համայնքներին մասհանումներ չեն կատարվել:

Ընդհանուր առմամբ, համայնքները դեռևս շատ հեռու են վարկային շուկա մուտք գործելու հնարավորությունից: 2013թ. ևս համայնքները չեն թողարկել պարտատոմսեր:

2013թ. որոշ փոփոխություններ են կատարվել ՏԻՄ-երի իրավասությունների և լիազորությունների կազմում: Առաջընթաց է նկատվել տեղական ինքնակառավարման ոլորտում քաղաքացիական հասարակության մասնակցության օրենսդրական հիմքերի ձևավորման առումով:

2013թ., ինչպես և նախորդ տարիներին, ՏԻՄ-երի ընտրությունները կատարվել են բավականին թույլ մրցակցային միջավայրում, շատ դեպքերում նույնիսկ վերջինիս բացակայության պայմաններում: Քիչ թվով համայնքներում են ընտրվել համայնքի նոր ղեկավարներ: Համայնքների ղեկավարների շուրջ 3/4-ը Հայաստանի Հանրապետական կուսակցության ներկայացուցիչներ են: ՏԻՄ-երին օրենքով տրամադրվել են նոր իրավասություններ և լիազորություններ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում: Պարտադիր լիազորությունների իրականացման կարգեր չեն ընդունվել: Որոշ աշխատանքներ են կատարվել ավագանու ինստիտուտի զարգացման նպատակով: Հայաստանի ՁԼՄ-ները հիմնականում տեղաբաշխված են մայրաքաղաքում: Գեներերային հարցում 2013թ. դարձյալ լուրջ փոփոխություններ չեն նկատվել: Մարզերում ընտրովի պաշտոններում կանանց ներկայացվածությունը շարունակել է մնալ շատ ցածր: Երևանում կրկնապատկվել է ավագանու կազմում կանանց թիվը: Իսկ համայնքների աշխատակազմերում գեներերային անհավասարություն գրեթե չի նկատվել: Շատացել է պաշտոնական վեր կայքեր ունեցող համայնքների թիվը թե քաղաքային և թե գյուղական համայնքների շրջանում: 2013-ին Երևանի քաղաքապետարանին բաժին է հասել գաղտնիության և վատ աշխատանքի

խորհրդանիշ համարվող «ժանգոտ կողպեքը»: ՏԻՄ-երի ներկայացուցիչները շարունակել են ընդգրկվել «սև ցուցակներում»: 2013-ին Ֆրիդոմ Հաուսի գնահատականները չեն նվազել: 2013-ին շարունակվել են ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության և թափանցիկության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Համեմատելով ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքի ֆինանսական միջոցների համապատասխանության՝ Հայաստանի և Եվրամիության երկրների համապատասխան ցուցանիշները, տեսնում ենք, որ Հայաստանն առայժմ էականորեն զիջում է Եվրամիության երկրներին, մասնավորապես՝ երկրի հանրային ծախսերում և ՀՆԱ-ում համայնքների բյուջեների ծախսերի տեսակարար կշռի, բնակչության մեկ շնչին ընկնող՝ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի չափերով: Դա նշանակում է, որ 2013-ին Հայաստանում ապակենտրոնացման աստիճանը շարունակում է մնալ ցածր:

Չնայած այն իրողությանը, որ վերջին 5 տարիներին տարեցտարի զգալիորեն աճել են ՀՀ համայնքների բյուջեների՝ ինչպես եկամտային և ծախսային բացարձակ ցուցանիշները, այնպես էլ դրանց կատարողականները, ՀՀ համայնքների մեծամասնությունը դեռևս չի կարողանում ամբողջական ծավալով և լիարժեքորեն իրականացնել օրենսդրությամբ նրանց վերապահված բոլոր լիազորությունները, կամ որ նույնն է՝ համայնքային ծառայությունների մատուցումը, որի պատճառով վերջին 5 տարիներին ՀՀ բնակչության գերակշռող մասի կենսամակարդակը նկատելի դրական փոփոխությունների համարյա չի ենթարկվել:

2013-ին, ինչպես 2012-ին էր, ՀՀ բոլոր համայնքների բյուջեների եկամուտների/ծախսերի մեջ 60%-ից ավելին կազմում են միայն Երևան քաղաքի բյուջեի եկամուտները/ծախսերը: Իսկ բնակչության մեկ շնչին ընկնող՝ ՀՀ համայնքների բյուջեների (առանց Երևանի) եկամուտները/ծախսերը մոտ 2.8 անգամ ցածր են, քան Երևանի բյուջեի նույն ցուցանիշները:

2013-ին ևս, ինչպես նախորդ տարիներին էր, ՀՀ համայնքների (առանց Երևան քաղաքի) բյուջեների ըստ գործառական դասակարգման ծախսերի տեսակարար կշիռներն էականորեն տարբերվում են ինչպես ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների, այնպես էլ Երևանի բյուջեի ծախսերի տեսակարար կշիռներից ընդհանուր ծախսերում: Օրինակ, ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2013թ. բյուջեներում ընդհանուր բնույթի ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է և կազմում է ընդհանուր ծախսերի մոտ 43.7%-ը, ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեներում՝ 23.8%, իսկ Երևանի բյուջեում՝ ընդամենը 10.6%:

ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցություններն ընդհանուր ծախսերում վերջին 5 տարիներին փոփոխվել են տարբեր համամասնություններով: Եթե 2009-2011թթ. ժամանակահատվածում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում 19.2%-ից անշեղորեն աճել է՝ հասնելով մինչև 28.9%-ի, ապա 2012-2013թթ. ընթացքում այն դրսևորել է նվազման միտում՝ իջնելով մինչև 22.4%-ի:

2013-ին ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) համար հաշվարկված՝ ընդհանուր ծախսերում աշխատավարձերի և սոցիալական ապահովության վճարների տեսակարար կշիռների ցուցանիշները (ընդամենը՝ 36.2%) մոտ 4.8 անգամ բարձր են Երևան քաղաքի համար հաշվարկված նույն ցուցանիշներից (ընդամենը՝ 7.6%), որը հիմնականում պայմանավորված է երկու հանգամանքներով՝ համայնքների (առանց Երևանի) ու նրանց ենթակա կազմակերպությունների աշխատակազմերի աստիճանական ուժճացումով և համայնքների բյուջեների եկամուտների համընդհանուր անբավարարությամբ:

Համայնքներում գրեթե բոլոր որոշումների նախաձեռնողն ու փաստացի կայացնողը շարունակում է մնալ համայնքի ղեկավարը: Շատ համայնքներում ավագանին շարունակում է երկրորդական դեր խաղալ այդ հարցում:

Էլեկտրոնային կապի միջոցներից օգտվելու հնարավորությունների առումով համայնքներում շարունակվել է առաջընթացը, սակայն վիճակը դեռևս հեռու է բավարար լինելուց: Շատ համայնքներ չեն օգտվում ինտերնետային կապից: Դրանցից շատերում չկան հանրային իրազեկման այլ միջոցներ, ինչպիսիք են քերթերը, տեղական հեռուստատեսությունը: Բջջային կապ և ցուցատախտակ գրեթե բոլոր համայնքներում առկա են:

Համայնքային ծառայողների վերապատրաստումները 2013թ. նույնպես անցկացրել են մրցութային կարգով ընտրված կազմակերպությունները: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2013թ. վերապատրաստումները կազմակերպվել են ՏԻՄ-երի և համայնքային ծառայողների համար առանձին-առանձին:

2013թ. տարբեր միջազգային կազմակերպություններ շարունակել են գործունեություն իրականացնել Հայաստանի բազմաթիվ համայնքներում: Նրանց գործունեությունը շարունակում է անհրաժեշտ և պահանջված մնալ համայնքների համար: Նրանք սովորաբար գործում են՝ համագործակցելով ՀՀ կառավարության հետ, հաճախ՝ փոխհամագործակցում են միմյանց հետ, սակայն առավել արդյունքի հասնելու ոչ բոլոր հնարավորություններն են օգտագործվում:

2013թ. համայնքային ծառայությունների մատուցման ոլորտում ծավալում աշխատանքներ են իրականացվել մայրաքաղաքում: Երևան քաղաքին բաժին է ընկնում համայնքների ընդհանուր բյուջետային ծախսերի ավելի մեծ մասնաբաժին, քան մնացյալ բոլոր համայնքներին՝ միասին վերցրած: Այդպիսով, բավականին բարձր է Երևանի բյուջեում հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը: Մարզերում ընդգրկված համայնքներում ցածր է հանրային ծառայությունների ծախսերի և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը: Մարզերում ընդգրկված համայնքներում ծառայությունների մատուցման բնագավառում այս կամ այն չափով աշխատանքներ են իրականացնում հիմնականում քաղաքային և խոշոր գյուղական համայնքները:

Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ բարելավման և հետագա զարգացման կարիք ունեն մատուցվող բոլոր համայնքային ծառայությունները, որոնք շատ համայնքներում հեռու են բավարար լինելուց:

Վերը նշված եզրակացությունների հիման վրա կատարում ենք հետևյալ առաջարկությունները

Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման համար շարունակում է կարևոր մնալ բարեփոխումների ընթացքի արագացումն այդ ոլորտի բոլոր ուղղություններով: Խոսքը վերաբերում է ինչպես օրենսդրական դաշտի համալրմանը, այնպես էլ օրենսդրության փաստացի իրականացմանը: Մասնավորապես, անհրաժեշտ է ընդունել համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքների և միջհամայնքային միավորումների մասին օրինագծերը, «Ֆինանսական համահարթեցման մասին» նոր օրինագիծը և տեղական հարկերի առանձին հարկատեսակների մասին մշակված օրենքների նախագծերը, ինչպես նաև մշակել ու ընդունել համայնքային պարտատոմսերի թողարկման մասին օրենքի նախագիծը:

Նույնիսկ վերը նշված օրինագծերի ընդունումն օրակարգից չի կարող հանել Տեղական ինքնակառավարման զարգացման կամ ապակենտրոնացման ռազմավարական ծրագրի ընդունման հարցը: Դա հնարավորություն կտա մեկ փաստաթղթում ամրագրել Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի տեսլականը, դրան հասնելու ուղիներն ու քայլերի կատարման հաջորդականությունը և ժամկետները:

Անհրաժեշտ է ուղղել 2010թ. ընդունված տեղական հարկերի օրենսդրական փաթեթում թույլ տրված սխալը, այն է՝ գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերի սահմանման իրավունքն օրենքով սահմանված շրջանակներում վերապահել համայնքի ավագանուն:

Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացումն անհնար է առանց համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման: Այս հարցերը ևս շուտափույթ լուծում են պահանջում:

Անհրաժեշտ է պետական բյուջե մուտքագրվող հարկերից մասհանումների չափերն օրենսդրորեն ամրագրել ոչ թե յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով, այլ «Տեղական ինքնակառավարման մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներում:

ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման ֆինանսավորման աղբյուրների ու ծավալների ընդլայնման, ինչպես նաև համայնքների բյուջեների եկամուտների բազմազանության ապահովման նպատակով անչափ կարևոր է համայնքների ներգրավումը փոխատվական կապիտալի շուկա: Մասնավորապես, անհրաժեշտ է մշակել և ընդունել համապատասխան կարգեր՝ համայնքների կողմից առևտրային բանկերից և ֆինանսական հաստատություններից փոխառու միջոցներ վերցնելու մասին, համայնքային պարտատոմսեր թողարկելու մասին, մշակել և կիրառության մեջ դնել համայնքների վարկունակության գնահատման համակարգեր և գործիքներ:

ՏԻՄ-երի ընտրությունների առումով կարևոր է անցումը համայնքի ավագանիների ընտրությունների համամասնական ընտրակարգին: Շարունակում է արդիական

մնալ ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման կարգերի հստակեցման խնդիրը: Անհրաժեշտ է ընդլայնել ՏԻՄ-երի հրապարակայնությունն ապահովող գործիքների կազմն ու նման գործիքներ ունեցող համայնքների ցանկը: Կարևոր է հետևողական լինել տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության օրենսդրական դրույթները կյանքի կոչելու հարցում: Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել համայնքի ավագանու դերի հետագա բարձրացման նպատակով:

Հանրային ծառայությունների մատուցման ծավալները և որակը բարձրացնելու հաջողության գրավականը, առաջին հերթին, համայնքների ֆինանսական կենսունակության բարձրացումն է և ռեսուրսների օպտիմալ օգտագործումը: Այս համատեքստում, նախորդ տարիների նման, շարունակում են արդիական մնալ համայնքների խոշորացումն ու միջհամայնքային միավորումների ստեղծումը: Կարևոր է նաև համայնքների համար ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարավորությունների ընդլայնումը, մասնավորապես պետական բյուջեից նպատակային միջոցների, համայնքային վարկերի ներգրավման ինստիտուտների զարգացումը, ինչպես նաև՝ մասնավոր հատվածի հետ համագործակցության զարգացումը:

Հավելված 2. ՀՀ մարզերում համայնքների ղեկավարների և ավագանու կողմից 2013թ. կազմակերպված ընտրությունները²¹⁰

| Հ/հ | ՀՀ ՄԱՐԶ | | Ընդունելություն կազմակերպված համայնքների թիվը | | | | Համայնքի ղեկավարի մոտ | | Համայնքի ավագանու մոտ | |
|-----|-------------|------------------|---|------------|------------|------------|---------------------------------------|---------------------------------------|---------------------------------------|---------------------------------------|
| | Մարզ | Համայնքների թիվը | 1-ին | 2-րդ | 3-րդ | 4-րդ | Ընդունելություն համայնքի ղեկավարի մոտ | Ընդունելություն համայնքի ավագանու մոտ | Ընդունելություն համայնքի ավագանու մոտ | Ընդունելություն համայնքի ավագանու մոտ |
| | | | տեղաբնակից | տեղաբնակից | տեղաբնակից | տեղաբնակից | | | | |
| 1 | Արագածոտն | 114 | 114 | 114 | 114 | 114 | 24922 | 9509 | 8618 | |
| 2 | Արարատ | 97 | 97 | 97 | 97 | 97 | 25844 | 1714 | 1596 | |
| 3 | Արմավիր | 97 | 97 | 97 | 97 | 97 | 13958 | 3512 | 3261 | |
| 4 | Գեղարքունիք | 92 | 89 | 91 | 92 | 91 | 10925 | 2310 | 2211 | |
| 5 | Կոտայք | 67 | 67 | 67 | 67 | 67 | 7907 | 805 | 783 | |
| 6 | Լոռի | 113 | 94 | 93 | 91 | 89 | 5003 | 5556 | 5515 | |
| 7 | Շիրակ | 119 | 119 | 119 | 119 | 119 | 21314 | 2943 | 2943 | |
| 8 | Սյունիք | 109 | 108 | 109 | 109 | 40 | 9182 | 305 | 245 | |
| 9 | Վայոց ձոր | 44 | 38 | 44 | 44 | 44 | 2944 | 334 | 321 | |
| 10 | Տավուշ | 62 | 62 | 62 | 62 | 62 | 3319 | 451 | 294 | |
| | Ընդամենը | 914 | 885 | 893 | 892 | 820 | 125318 | 27439 | 25787 | |

²¹⁰ Լրբերյուրը՝ www.mfa.gov.am, 2013թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում ՀՀ համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կազմակերպված ընտրությունների մասնակցած քաղաքացիների թիվը

Հավելված 3. 2013 թ. ՀՀ մարզերում համայնքների բյուջեների հրապարակայնությունը²¹¹

| Հ/Կ | Մարզ | Համայնքների թիվը | Ցուցատախտակներին և տեսանելի այլ վայրերում տեղադրված | | | | Հետստատեսությանը հետաքրքիր | | | | Թերթերում տպագրված | | | | Ինտերնետային կայք էջում տեղադրված | | | |
|-----|-------------|------------------|---|--------------|--------------|--------------|----------------------------|--------------|--------------|--------------|--------------------|--------------|--------------|--------------|-----------------------------------|--------------|--------------|--------------|
| | | | 1-ին համայնք | 2-րդ համայնք | 3-րդ համայնք | 4-րդ համայնք | 1-ին համայնք | 2-րդ համայնք | 3-րդ համայնք | 4-րդ համայնք | 1-ին համայնք | 2-րդ համայնք | 3-րդ համայնք | 4-րդ համայնք | 1-ին համայնք | 2-րդ համայնք | 3-րդ համայնք | 4-րդ համայնք |
| 1 | Արագածոտն | 114 | 114 | 114 | 114 | 114 | 0 | 0 | 0 | 2 | 2 | 2 | 2 | 10 | 24 | 28 | 38 | |
| 2 | Արարատ | 97 | 97 | 97 | 97 | 97 | 1 | 1 | 1 | 4 | 4 | 4 | 4 | 97 | 97 | 97 | 97 | |
| 3 | Արմավիր | 97 | 97 | 97 | 97 | 97 | 26 | 27 | 27 | 39 | 39 | 39 | 39 | 97 | 97 | 97 | 97 | |
| 4 | Գեղարքունիք | 92 | 89 | 87 | 87 | 92 | 5 | 3 | 3 | 10 | 14 | 22 | 25 | 13 | 10 | 11 | 12 | |
| 5 | Կոտայք | 67 | 67 | 67 | 67 | 67 | 2 | 2 | 2 | 1 | 1 | 1 | 0 | 67 | 67 | 67 | 67 | |
| 6 | Լոռի | 113 | 113 | 113 | 113 | 113 | 3 | 5 | 3 | 4 | 4 | 3 | 3 | 6 | 6 | 9 | 18 | |
| 7 | Շիրակ | 119 | 119 | 119 | 119 | 119 | 18 | 4 | 14 | 4 | 3 | 2 | 2 | 119 | 119 | 119 | 119 | |
| 8 | Սյունիք | 109 | 109 | 109 | 109 | 109 | 5 | 0 | 0 | 1 | 6 | 6 | 1 | 5 | 6 | 7 | 7 | |
| 9 | Վայոց ձոր | 44 | 44 | 44 | 44 | 44 | 0 | 0 | 0 | 9 | 8 | 5 | 12 | 44 | 44 | 44 | 44 | |
| 10 | Տավուշ | 62 | 62 | 62 | 62 | 62 | 15 | 15 | 15 | 4 | 4 | 4 | 4 | 5 | 5 | 62 | 62 | |
| | Ընդամենը | 914 | 911 | 909 | 909 | 914 | 75 | 57 | 65 | 77 | 83 | 88 | 92 | 463 | 475 | 541 | 561 | |

²¹¹ Աղբյուրը՝ www.mta.gov.am, Անիտի տեղեկանքներ 2013թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում ՀՀ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և բախանցիվության վերաբերյալ

Հավելված 4. 2011-2013թթ. ՀՀ համախմբված բյուջեների բաղկացուցիչ մասերի փաստացի կատարողականները և նրանց տեսակարար կշիռները համախմբված բյուջեներում*

| Հ/հ | Բյուջեի տեսակը | 2011թ. փաստացի, մլրդ դրամ | Տեսակարար կշիռը 2011թ. համախմբված բյուջեում, % | 2012թ. փաստացի, մլրդ դրամ | Տեսակարար կշիռը 2012թ. համախմբված բյուջեում, % | 2013թ. փաստացի, մլրդ դրամ | Տեսակարար կշիռը 2013թ. համախմբված բյուջեում, % |
|-----|------------------------------|---------------------------|--|---------------------------|--|---------------------------|--|
| | Համախմբված բյուջե (1) | | | | | | |
| | Եկամուտներ | 906.1 | 100,0 | 975.3 | 100,0 | 1,101.7 | 100,0 |
| | Ծախսեր | 1,013.5 | 100,0 | 1,037.1 | 100,0 | 1,170.6 | 100,0 |
| | Դեֆիցիտ (-) այդ թվում` | -107.4 | | -61.8 | | -68.9 | |
| 1. | Պետական բյուջե | | | | | | |
